Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հերվարձենր

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1942

Ց 91.99-82
Խ-51

891.99.82 5988-55
5021



ՀԱՅԿԱԿԱՆ
ՍՍՌ
ՊԵՏՀՐԱՏ

БІБЛІОТЕКА
АН УРСР

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ АРМ. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2011-05

Մա՛հ գերմանական օկուպանտներին

891.99-82
Խ-51
սգ.

Խ Ի Զ Ա Խ Ն Ե Ր

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Գ ի ր ք ա ռ ա ջ ի ն

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ՝
ՀՐ. Գ Ր Ի Գ Ո Ր Յ Ա Ն Ի

2598-22

Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ԵՐԵՎԱՆ 1942

0 8 MAY 2013

71·956

Կազմը, Ֆրոնտիսպիսը, գլխազարդերը,
վերջնազարդերը եվ պորտրեները՝
նկարիչ Վ. Վ. ՍՈՒՐԵՅԱՆԻՆՈՎԻ

БІБЛІОТЕКА
АН ... СР

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՀ Арм. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5988-55

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հայրենական մեծ պատերազմի ռազմադաշտերում Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին ֆաշիստական հորդաների դեմ մարտնչում է նաև հայ ժողովուրդը։ Պատերազմի ամեն մի օրը ծնում է նորանոր խիզախներ, նորանոր հերոսներ, որոնք անձնազոհաբար կռվում են հանուն մեր սոցիալիստական հայրենիքի, հանուն մեր ազատության և պատվի։

Ներկա ժողովածուն մի փորձ է՝ տալու հայրենական պատերազմի ռազմաճակատներում հայ ժողովրդի խիզախ զավակների սխրագործությունների մոտավոր պատկերը։ Որպես առաջին փորձ, ժողովածուն կարող է ունենալ իր թերությունները, որոնք հաշվի կառնվեն և կվերացվեն մյուս գրքերի հրատարակության ժամանակ։

Անկասկած, կան հայրենական պատերազմում աչքի ընկած շատ հայ մարտիկներ և հրամանատարներ, որոնք ցավոք սրտի տեղ չեն գտել սույն ժողովածույում, որովհետև նրանց մասին թե կազմողը և թե հրատարակչությունը չեն ունեցել համապատասխան նյութեր, փաստեր, լուսանկարներ և այլն։

Հրատարակչությունը խնդրում է ընթերցողներին, գրել իրենց դիտողությունններն այս գրքի մասին, իսկ ռազմաճակատում գտնվող ընկերներին ուղարկել հրատարակչությանս ամեն տեսակի նյութեր հայրենական պատերազմի ճակատներում աչքի ընկած հայ մարտիկների և հրամանատարների մասին։ Այդ նյութերը հիմք կծառայեն հետևյալ գրքերը ավելի ամփոփ, լրիվ ու կատարյալ հրատարակելու։

Սույն ժողովածուն արդեն տպագրված էր, երբ ստացվեց լրացուցիչ նյութեր օդաչու Ն. Ստեփանյանի մասին, ինչպես նաև ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը Ստեփանյանին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու մասին. այդ պատճառով հնարավոր չեղավ այդ նյութերը օգտագործելու սույն ժողովածույում։

БІБЛІОТЕКА
АН УРСР

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՀԱՅ ԶՈՐԱՎԱՐՆԵՐ



1. Սովետական Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ՝
Մ. Ա. ԲԱՐՍԵՂՈՎ.
2. Գեներալ-մայոր՝
Բ. Ի. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
3. Գեներալ-մայոր՝
Խ. Ն. ԱԼԱՎԵՐԴՈՎ
4. Գվարդիայի գեներալ-մայոր՝ Ս. Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
5. Գեներալ-մայոր՝
Ա. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

БІБЛІОТЕКА
АН УРСР

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆ Է

Սովետական Միության բոլոր ժողովուրդները մի մարդու պես պայքարի են դուրս եկել ատելի թշնամու՝ հիտլերյան Գերմանիայի դեմ, որ հարձակվել է սովետական երկրի վրա: Ռազմաճակատում ուս-ուսի տված, քաջարի կերպով մարտնչում են սովետական մեծ երկրի բոլոր ժողովուրդների զավակները: Մեր բազմազգ պետությունը, Սովետական Միության բոլոր ազատ ժողովուրդները համակված են մի մտքով—կրծքով պաշտպանել մեր հիանալի հայրենիքը, ջախջախել և ոչնչացնել թշնամուն:

Հայ ժողովուրդը հաստատապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում: Հայրենական պատերազմի ճակատներում իրենց ցուցաբերած անձնուրաց անվեհերությամբ ու արիությամբ հռչակված անվեհեր մարտիկներ օդաչու Գազազյանի, մայոր Ապրեսյանի և հայ ժողովրդի ուրիշ շատ զավակների պանծալի անունները հայտնի են ամբողջ Սովետական Միությանը: Հայ ժողովուրդը, ինչպես և Սովետական Միության մյուս բոլոր ազատ և իրավահավասար ժողովուրդները, առավել խորապես զգացին մեր երկրի վրա կախված մահացու վտանգն այն պատճառով, որ նա իր բազմադարյան պատմության մեջ քանիցս

ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին: Նա գիտե, թե ինչ բան են կոտորածը, ավերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը՝ առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին:

Այդ պատճառով, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որ սկսել է մարդակեր Հիտլերը Սովետական Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մի մարդու պես ոտքի կանգնեց հայրենիքը պաշտպանելու: Սովետական Միության վրա ավազակային, ուխտադրուժ հարձակում գործելու լուրն ստիպեց զգայուն կերպով արթուն կենալ հայ ժողովրդի նաև այն զավակներին, որոնք ապրում են ՍՍՌՄ-ի սահմաններից դուրս: Նրանց ամբողջ սերը, նրանց ամբողջ համակրանքը Սովետական Միության կողմն է:

ԱՄՆ-ում ապրող հայերի մասսայական միտինգը սովետական դեսպանությանն ուղարկել է հետևյալ հեռագիրը. «Մենք՝ ամերիկահայերս, որոնց հայրենի երկիրը պաշտպանում է Կարմիր Բանակը, զգում ենք, որ պարտավոր ենք օգնելու Սովետական Միությանը նրա մղած պայքարում, մինչև որ ֆաշիզմը ոչնչանա ամբողջ աշխարհում»:

Ալեկոծվեց, ցնցվեց հայ ժողովուրդը: Այդ իսկ պատճառով այնքան կենդանի արձագանք գտավ օրերս մեր մամուլում հրապարակված դիմումը՝ հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչների դիմումը արտասահմանյան երկրների բոլոր հայերին:

Սովետական Միության ժողովուրդների մեծ ընտանիքում «որպես առասպելական փյունիկ մոխրից ու բոցից ծնունդ առավ մեր ազատասեր հայ ժողովուրդը,— ասված է այդ դիմումի մեջ,— Սովետական իշխանությունը մեր ժողովրդին փրկեց կործանումից և ֆիզիկական ոչնչացումից: Մեր ազնիվ աշխատանքով, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Սովետական Հայաստանը վերածվեց մի ծաղկած երկրի...»:

Ամբողջ աշխարհի հայերին կոչ է ուղղված.

«Թանկագին բարեկամներ, այս պահին, երբ մեր երկրի և ամբողջ մարդկության վրա կախվել է ահեղ վտանգը, մենք դիմում ենք համայն աշխարհի հայերին, մենք դիմում ենք բոլոր նրանց, ում համար թանկ է հազարամյակների կուլտուրական ժառանգությունը, ում համար սուրբ են ազատության և մարդասիրության վսեմ գաղափարները, բոլոր նրանց, ով-

քեր մտահոգված են մարդկության ապագայով, ովքեր սիրում են իրենց իսկական հայրենիքը՝ Միացրե՛ք ձեր ջանքերը՝ կան-խելու համար վերադարձը դեպի միջնադարը, կանխելու համար համաշխարհային կուլտուրայի ոչնչացումը, որ բերում է իր հետ ղազանացած ֆաշիզմը՝ մարդկության, գիտության և կուլտուրայի ոխերիմ թշնամին:

Մենք դիմում ենք ձեզ և կոչ ենք անում համախմբել ձեր բոլոր ուժերը՝ հանուն Սովետական Միության պաշտպանության, հանուն ամբողջ մարդկության խաղաղ և վտանգավոր թշնամու—ֆաշիզմի ոչնչացման»:

Այս կոչն անպատասխան չմնաց: Նա միավորում է այն բոլոր հայերին, որոնք պատրաստ են պայքար մղելու ֆաշիստական բռնակալությունը ոչնչացնելու համար:

Գերմանա-ֆաշիստական հրոսակախմբերը սովետական հողի վրա հարձակվեցին, որպեսզի Սովետական Միության ժողովուրդներին դարձնեն իրավազուրկ ստրուկներ, որպեսզի ավերեն և կողոպտեն մեր երկիրը, կործանեն Սովետական Միության ազատ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ազգային կուլտուրան և ազգային պետականությունը:

Այդ երբեք չի լինի: Այդ թույլ չեն տա սովետական երկրի ազատ ժողովուրդները: Հիտլերի դեմ ոտքի են կանգնել և կանգնում են բոլոր ազատասեր ժողովուրդները: Եվ ինչպիսի հուսահատ ջանքերի ու նենգ միջոցների էլ դիմի թշնամին, նրա բոլոր ծրագրերը հողմացրիվ կարվեն, նրա բոլոր հարվածները հետ կմղվեն: Թշնամին կջախջախվի վերջնականապես և անդառնալիորեն:

(«ՊՐԱՎԴԱ»-ՅԻ 1941 ԹՎ. ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ)

ՀԵՐՈՍ ԶՈՐԱՎԱՐԸ

Սովետական հայրենիքի պաշտպանության համար մղվող դաժան մարտերում Կարմիր Բանակի հայ զորավարների մեջ, Սովետական Միության Հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Միխայիլ Արտեմևիչ Բարսեղովը գրավում է իր ուրույն և պատվավոր տեղը: Հայ ժողովրդի արժանավոր քաջարի զավակի անունը մեր երկրում հայտնի դարձավ դեռևս քաղաքացիական պատերազմների տարիներին և մանավանդ այն օրերին, երբ սովետական զինված ուժերը՝ մեր հայրենիքի սրբազան սահմանների վրա կատարվող սպիտակֆինների սանձարձակ ոտնձգությունների վերջ դնելու համար անցան ֆիննական սահմանը:

Միխայիլ Արտեմևիչը ծնվել է 1899 թվին Լեռնային Ղարաբաղում, 11-ամյա տղան շատ շուտ ստիպված էր հրաժեշտ տալ հարազատ վայրերին, ծերունի բրուտ հորը: Չքավորությունը նրան ստիպեց թողնել դպրոցը և հեռանալ Միջին Ասիա: Սակայն այդ նոր վայրում՝ փայտեղենի պահեստների ու բամբակազտիչ գործարանների տերերի մոտ նրան սպասում էր ուժից վեր աշխատանքը: Նա այնտեղ էլ երջանկություն չգտավ և երբ սկսվեց ռևոլյուցիան, Միխայիլ Արտեմևիչը զենք վերցնելով, գնաց կռվելու նոր, երջանիկ կյանքի համար:

Միխայիլ Արտեմևիչ Բարսեղովը շատ է պատերազմել: Հրե-

տանային գիտության հետ նրա ծանոթությունն սկսվել է քաղաքացիական պատերազմի մարտերում; Եվ որքան հարստանում էր նրա մարտական փորձը, նա այնքան ավելին էր ուզում գիտենալ: Երբ քաղաքացիական պատերազմը վերջացավ, Բարսեղովը հրետանային գիտությունը յուրացնում էր պոլիգոններում, Ակադեմիայի լսարաններում ու լաբորատորիաներում:

Իր հայրենիքին, Լենինի—Ստալինի պարտիային անհունորեն նվիրված, բացառիկ քաջության, տոկունության, ուժեղ կամքի տեր մարդ, հրետանային գիտությանը հմուտ ու գերազանց գիտակ, կոմբրիգ Բարսեղովը կարմիր զորամասերի հետ միասին մտավ ֆիննական սահմանն ու անցավ վճռական մարտական գործողությունների: Սահմանն անցնելիս հզոր համազարկերով գընդակոծելով հակառակորդին՝ կոմբրիգ Բարսեղովը իբրև բանակի հրետանու հրամանատար, սպիտակֆինների նենգ մտադրություններին հակադրեց սովետական մարդկանց ուժն ու արիությունը: Կարմիր հրետանին պետք է գնա հետևակի հետ մեկտեղ, չնայելով ոչ մի բնական կամ ռազմական խոչընդոտի: Հրետանին պետք է մաքրի հետևակի ճանապարհը, իսկ եթե հարկավոր է՝ հետևակից էլ առաջ գնա: Այսպիսի խնդիր դրեց հրետանավորների առաջ կոմդիվ Բարսեղովը: Նա օրեր ու գիշերներ անց էր կացնում զորքերի մեջ, ղեկավարելով հրետանու գործողությունները, ուղղություն տալով նրանց, հեռացնելով դժվարությունները, զարգացնելով հաջողությունը: Մեքենայով, աերոսահնակով, ձիով, հաճախ էլ ոտով կոմդիվը մեկ զորամասից մյուսն էր շտապում:

— Պատերազմը հանգստանալու համար անհարմար ժամանակ է,— կատակում էր նա, երբ նրան առաջարկում էին հանգստանալ:— Պատերազմից հետո կհանգստանանք: Նրա խիզախությունը, նրա պահանջկոտությունն իր և մարտիկների նկատմամբ, նրան սիրելի էին դարձրել զորամասերում: Հրետանավորները լավ էին հիշում կոմդիվի ռազմական սիրելի ասացվածքը՝ «Հրետանավորի քրտինքով հետևակի արյունն է փրկվում» և դրանով ոգեշնչված գործում էին անօրինակ քաջագործություններ:

Չափազանց շատ են սովետա-ֆիննական պատերազմի մասնակիցների և մանավանդ հրետանավորների հիշողությունները քաջարի հրամանատար ընկ. Բարսեղովի կատարած հերոսական սխրագործությունների մասին: Ահա դրանցից մի քանիսը.

...: Կոմդիվ Բարսեղովը տեղեկություն ստացավ, որ հե-
տևակային դիվիզիաներից մեկի տեղամասում հարձակումը դան-
դաղ է կատարվում: Նա իսկույն դիմեց Լիպոլա գյուղը: Արագո-
րեն ծանոթանալով դրությանը, կոմդիվը կորպուսի հրետանուն
հրամայեց ուղղակի նշանառությամբ կրակ բանալ 150,8 բար-
ձունքի վրա, որի մոտ կանգ էր առել մեր հետևակը: Որոտաց
կորպուսի հրետանին: Բարձունքի վրա մեծ ԴՈՏ-ը քարուքանդ
արվեց: Սակայն նրանցից 20 մետր հեռու շարունակում էին գոր-
ծել կրակի կետերը: Ամրությունները քողարկող անտառից ու
սրահներից ֆինները գնդացիրներով գազանաբար կրակում էին:
Կոմդիվը գնդակների տարափի տակ բարձրացավ հենց նոր գրա-
ված գոտավոր բարձունքը:

— Առա՛ջ,— լսվեց Բարսեղովի հրամանը:

Գումարտակի ուղին մաքրված էր: Հրետանին, տանկերը,
հրանետները և հետևակը կարգավորված գործողությունների
շնորհիվ տիրեցին բարձունքին և համարձակ առաջ շարժվեցին:

... Ճանապարհն ընկած էր անտառների ու ճահիճների մի-
ջով: Հարկավոր էր անասելի սառնամանիքին, բուք ու բորանին
հրանոթներն անցկացնել սառած ճահճով: Ճահիճը չէր հպատակ-
վում, իսկ իրիկնամուտն արդեն ուժեղանում էր: Բայց ահա
այդտեղ է գալիս կոմդիվ Բարսեղովը:

— Կոմդիվ Բարսեղովն այստեղ է: Բարսեղովը եկել է: Այդ
լուրը կայծակի արագությամբ անցավ հրանոթից-հրանոթ: Հրե-
տանավորները ոգևորվեցին: Քանի որ այստեղ է կոմդիվը, նա
կօգնի: Մի շարք հրամաններ տալով, որով հեշտանում էին հա-
ուբիցային գնդի առաջշարժումը և վերադասավորելով դիվի-
զիոնների գնալու կարգը, հաուբիցային գունդը կարողացավ
հաղթահարել ճահիճները և առաջ անցնել:

— Չէ՛, նրա մասին ասելը քիչ է, թե կոմդիվ է,— ասում
էր հրանոթի հրամանատարը:

— Իսկ ո՞վ է նա, ընկեր հրամանատար:

— Արծի՛վ է, ա՛յ, թե ով է: Նրա հետ ուր ասես՝ կանց-
նես: Սպիտակֆինները խորամանկ են, իսկ մեր կոմդիվն ավելի
խորամանկ է...

Տրոնդսունդի ուղղությամբ մեր մի այլ դիվիզիան էր կռ-
վում: Սպիտակֆինները դիմադրում էին մոլեգնորեն: Նրանց դի-
մադրությանը օժանդակում էին մառախուղը, սառույցն ու անտա-
նային թակարդները:

Կոմդիվ Բարսեղովը գնաց այդ դիվիզիան: Այնտեղ զանգատ-
վում էին, որ դիվիզիային անհրաժեշտ է հրետանու օգնությու-
նը, իսկ հրետանին դեռ չէր էլ անցել սառույցը: Կոմդիվը գնաց
դեպի անցատեղը: Գիշերային քամին մինչև ոսկորներն էր թա-
փանցում: Թշնամու կրակոցների որոտը չէր դադարում:

— Ձեզ մոտ այդ ի՞նչ է պատահել,— հանելով հրանոթնե-
րին, հարցրեց Բարսեղովը հրետանավորներից:

— Հրամայված է գնալ, բայց վախենում ենք թե սառույցը
չդիմանա:

— Պե՛տք է դիմանա:

Եվ դուրս գալով սառցե դաշտը, կոմդիվը հրաման տվեց.

— Առա՛ջ:

Հրանոթները շարժվեցին: Կոմդիվի ներկայությունից խրա-
խուսված, հրետանավորները տասնապատկեցին ջանքերը և շու-
տով հրաձգային դիվիզիան ստացավ հրետանու հզոր օգնու-
թյունը:

... Կոմդիվ Բարսեղովի համառությունն ու հաստատակա-
մությունը հաղթեցին: Ո՛չ անտառը, ո՛չ ճահիճները, ո՛չ գրա-
նիտե ժայռերը, ո՛չ կրակային բազմաթիվ կառույցները չէին
կարող կասեցնել սովետական հրետանին: Նա շարունակ գնում
էր հետևակի հետևից և դիպուկ կրակով խորտակում էր սպի-
տակֆիններին: Դաժան մարտերում հրետանին հետևակի հետ
մեկտեղ մոտեցավ «Մաններհայմի գծի» հիմնական ամրություննե-
րին: Կարելական պարանոցում ֆիննական իշխանությունները
երկաթ-բետոնե ու գրանիտե-հողե բազմաթիվ հզոր ամրություն-
ներ էին կառուցել՝ թնդանոթներով ու գնդացիրներով: ԴՈՏ-երը
կառուցվել էին գերմանական մասնագետների ղեկավարությամբ
և անառիկ էին համարվում: Ռազմական գործողությունների
զարգացման մեջ հասավ մի նոր ու վճռական էտապ, որտեղ
վճռող էր սովետական հրետանու դերը: Ֆիննական կառուցում-
ների սխեման հետազոտելու գործին ձեռնամուխ եղան նաև հրե-
տանավորները: Հետախուզությունը կատարվում էր խոր ձյան
մեջ թաղվելով, սպիտակֆիննական ականանետների ու սնայպեր-
ների կրակի տակ: Կոմդիվը հրետանավորներին սովորեցնում էր
ԴՈՏ-եր հայտաբերելը: Քողարկման վերաբերյալ սողալով ձյան
վրայով, սառնամանիքին, մառախուղի ժամանակ, կտրող քամու
պահին, միշտ հանդիստ, նա սրատես աչքերով դիտում էր կաս-
կածելի բլուրներն ու անտառակները:

Վերջապես հետախուզվեց ֆիննական ամրությունների ամբողջ սիստեմը: Եվ ահա սկսվեց «Մաններհայմի գծի» ճեղքման նախապատրաստությունը: Պատմությանը ծանոթ չեն եղել այդպիսի ամրություններ ճեղքելու օրինակներ: 1940 թվականի փետրվարի 11-ի առավոտյան տոննաներով մետաղ թափվեց սպիտակֆինների պաշտպանության առաջավոր եզրի վրա: Խլացուցիչ սուլոցով օդն էին թռչում հողակույտեր, քարեր, գերաններ, բետոնի, գրանիտի և պողպատի վիթխարի կտորներ: Այսպես շարունակվեց 2 ժամ: Հրետանային փայլուն նախապատրաստությունը վերջացնելուց հետո, հերոսական 123-րդ դիվիզիան անցավ գրոհի: Անառիկ «Մաններհայմի գիծը» ճեղքված էր:

Հայրենիքը, սովետական կառավարությունը բարձր գնահատեցին խիզախ հայրենասերների մարտական ծառայությունները: ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով հրետանու գեներալ-լեյտենանտ Միխայիլ Արտեմևիչ Բարսեղովին շնորհվեց Սովետական Միության Հերոսի կոչում:

Սկսվեց հայրենական մեծ պատերազմը: Սովետական երկրի նշանավոր զորավարներից մեկը, գեներալ-լեյտենանտ Բարսեղովը իր զորամասերը նորից ահեղ մարտի տարավ մեր հողը ուխտադրժորեն ներխուժած գերմանա-ֆաշիստական վայրագ հորդաների դեմ: Հայրենական այս մեծ պատերազմում ավելի ուժեղ թնդաց հայ ժողովրդի արժանավոր զավակի փառքը: Բարձրագույն հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար և այդ ժամանակ ցուցաբերած արիության ու խիզախության համար ընկ. Բարսեղովը երեք անգամ պարգևատրվել է Կարմիր Դրոշի շքանշանով: Այժմ 7 մարտական շքանշաններ են զարդարում նրա քաջարի կուրծքը:

ԳԵՆԵՐԱԼ ՄԱՅՈՐ ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Սիսյանի երկու փոքրիկ գետերի միացման անկյունում գտնվում է հինավուրց Կիրակոսիկ գյուղը, որն այժմ կոչվում է Սիսքենդ: Ահա այս գյուղումն է ծնվել սովետական գեներալ Աշոտ Սարգսյանը 1903 թվին: Նրա մանկության առաջին տարիներն անց են կացել հայրենի լեռներում, սակայն դաժան իրականությունն ստիպեց նրանց ընտանիքին տեղափոխվել Բաքու, որտեղ հայրն աշխատում էր իբրև նավթագործ բանվոր: Աշոտը հազիվ 7 տարեկան էր, երբ սկսեց հաճախել Բաքվի հայոց ծխական դպրոցներից մեկը: Բախտը ժպտաց նրան: Նրա քեռին կապեր ուներ Մոսկվայի հետ, և մի գեղեցիկ օր նա վերցրեց փոքրիկ Աշոտին իր հետ, տարավ Մոսկվա և հաջողեց ընդունել տալ Լազարյան ճեմարանը:

Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներն էին: Աշոտը Լազարյան ճեմարանում սովորեց 3 տարի, անցնելով նախապատրաստական դասարանները: Վրա հասավ Հոկտեմբերյան ռևոլուցիան: Լազարյան ճեմարանը փակվեց: Աշոտը վերադարձավ Բաքու ծնողների մոտ:

Բաքվի համար տագնապալի օրեր էին: Աշոտի անհանգիստ, որոնող բնավորությունը մղում էր նրան դեպի իրադարձու-

5988-55

ՀԱՅԿ. ՍՍՌ ... ԳՐԱԴԱՐԱՆ ... ZUUՈՒ Арм. ССР ... им. А. Мясникяна ... Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

թյունների եռուն կենտրոնը, նա պատանեկան ողջ խանդավառությամբ նետվում է կրակի մեջ: Այնտեղ մարտեր էին մղվում Սովետական իշխանության համար: Եվ ահա մի օր հազիվ տասնհինգ տարեկան պատանին տնից չքացավ: Ծնողներն իզուր փնտրեցին նրան: Աշոտը չկար ու չկար: Երեք տարի ծնողները լուր չունեին նրանից, ճանապարհները փակվել էին, Անդրկովկասը դարձել էր անվերջ կռիվների, ազգամիջյան կոտորածների թատերաբեմ, տիրում էր սով ու քայքայում:

Այդ ամբողջ ժամանակ խիզախ պատանին կարմիր զորքերի հետ էր իբրև կամավոր: Բաքվից նա անցել էր Հայաստան, մասնակցել քաղաքացիական մարտերին: 1921 թվին Ղամարլուի կռիվների ժամանակ, դաշնակների սարքած ավանտյուրայի օրերին, փոքրիկ Աշոտը գոտուց նռնակներ կախած գտնվում էր մարտերի ամենաթեժ տեղը:

1921 թվի գարնանը հազիվ 18 տարեկան սիսիանցին արդեն բավական հմտություն էր ձեռք բերել ռազմական գործի մեջ: Մի խումբ կարմիր հրետանավորների գլուխն անցած, նա շտապեց Զանգեզուր դաշնակ ավանտյուրիստների մնացորդները լիկվիդացիայի ենթարկելու համար: Եվ ահա մի օր, հանկարծ, նույնպես անսպասելի, ինչպես չքացել էր, Աշոտը իր զինակիցների հետ միասին հայտնվեց հայրենի գյուղում, ուր վերադարձել էին ծնողները: Մայրը վախից թե ուրախությունից ուշաթափ եղավ: Աշոտենց տանը մեծ ցնծություն էր: Վերադարձել էր կորած-մոլորած որդին:

Համագյուղացիներն առաջարկեցին քաղաքացիական կռիվների պատանի հերոսին մնալ իրենց մոտ, աշխատել հայրենի գյուղում: Աշոտը կարճ ժամանակով աշխատեց Գորիսում, որպես Չեկայի լիազոր: 1922 թվին նա եկավ Երևան սովորելու պարտիական դպրոցում: Դասընկերները սիրով են հիշում ուշիմ, խիզախ, սրամիտ և լրջախոհ երիտասարդին, որն անդիմադրելի հակում ուներ դեպի զինվորական ասպարեզը, հատկապես դեպի հեծելազորը: Շատ շուտով Աշոտը տեղափոխվեց Մյասնիկյանի անվան զինվորական դպրոցը և նշանակվեց հեծելազորային բաժանմունքի քաղղեկ:

Սյունեցի ռազմիկի բացառիկ զինվորական ընդունակությունները գրավեցին պետերի ուշադրությունը, և 1925 թվին Աշոտն ուղարկվեց Մոսկվա սովորելու կենտգործկոմի անվան Կրեմլի ռազմական դպրոցում: 1927 թվին նա ավարտում է

Կրեմլի ռազմական դպրոցն այնպիսի փայլուն հաջողությամբ, որ իբրև բացառություն իսկույն նշանակվում է հեծելազորային էսկադրոնի հրամանատար, մինչդեռ այդ դպրոցն ավարտողները սովորաբար նշանակվում էին ավելի փոքր զորամասերի հրամանատարներ:

Աշոտն ի բնե ասես զինվորական էր, երևելի հեծյալ, կարգապահ հրամանատար և զարմանալի կազմակերպող: 1927 թվից նա Վաղարշապատումն էր, Հայկական հեծելազորային գնդի էսկադրոնի հրամանատարի պաշտոնում: Նրա էսկադրոնը միշտ առաջին տեղն էր բռնում բոլոր մրցությունների, արշավի, հրաձգության, ինչպես նաև ռազմական և քաղաքական այլ պարապմունքների մեջ: Էսկադրոնի հրամանատարը ոչ միայն գերազանց էր ռազմական գործում, նա հավասարապես հետաքրքրվում էր նաև ռազմական գիտությամբ, պատմությամբ և թեորիայով: Չնայած իր երիտասարդ տարիքին Աշոտը կուտակել էր բավական գիտելիքներ մարքսիզմ-լենինիզմի բնագավառում:

Աշոտը նաև հռետոր էր բառի բուն իմաստով, նա հավասարապես տիրում էր իր մայրենի լեզվին և ռուսերենին: Նրա արտասանած ճառերն էլեկտրականացնում էին աուդիտորիային, խանդավառում և հուզում նրան:

Աշոտ Սարգսյանը հազվադեպ խիզախ զինվորական էր, բացառիկ ընդունակություններով օժտված — այդպես են վկայում բոլոր նրան ճանաչողները, զինակիցները, ընկերները, պարզապես ծանոթները:

Վաղարշապատում Աշոտը մնաց մինչև 1932 թվականը: Այդ ժամանակվա ընթացքում նա միշտ գերազանց դուրս եկավ իր զորամասի մարտական և քաղաքական պատրաստության մեջ:

1932 թ. Սարգսյանին ուղարկեցին սովորելու Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում: Չորս տարի անց սյունեցի երիտասարդ ռազմիկը փայլուն հաջողությամբ ավարտեց ակադեմիան:

Աշոտն անհագ ծարավ ուներ գիտության, նա ուզում էր ամեն ինչ սովորել, ամեն ինչ գիտենալ: Արձակուրդների ժամանակ, երբ այցելում էր Երևան, նա թերթում էր Աճառյանի արմատական բառարանը, հետաքրքրվում էր Ռոմանոս Մելիքյանի անվան Երաժշտական կաբինետի աշխատանքներով, Կոմիտասի երգերով, հայ ժողովրդի պատմությամբ և գրականու-

թյամբ: Նա հմտացել էր ռուսերենի մեջ, որ դարձել էր նրա համար երկրորդ մայրենի լեզու, սակայն բնավ չէր մոռանում հայերենը:

Ակադեմիայի փայլուն ավարտականը նորից նրա վրա հրավիրեց բարձր հրամանատարության ուշադրությունը: Նա պարգևատրվել էր իր գերազանց ուսման համար, բարձր ցուցանիշներ տալով անխտիր բոլոր առարկաներից: Նրան առաջարկեցին մնալ ակադեմիայում որպես ասպիրանտ և դասախոս: Սարգսյանը առանձին ջանասիրությամբ ուսումնասիրել էր ստրատեգիան և տակտիկան, ռազմական պատմությունը և փիլիսոփայությունը, հմտացել անգլերեն լեզվին. սակայն զինվորական շարքերի առջևից արշավող խիզախ հեծյալի ոգին խոսում էր նրա մեջ: Նա նշանակվեց հեծելազորային առանձին բրիգադայի շտաբի պետ: Դա զինվորական բարձր պաշտոն էր, որ հին բանակում գրավում էին մինչև անգամ գեներալները, իսկ Աշոտը հազիվ 33 տարեկան էր: Հեծելազորային առանձին բրիգադան գտնվում էր Օրջոնիկիձե քաղաքում և կազմված էր Կովկասյան 25 ազգությունների պատկանող լեռնականներից: Այդ պաշտոնում Աշոտը մնաց 4 տարի, մինչև 1940 թվականը, երբ նա նորից այցելեց Հայաստան: Երևանում անցորդները հիացմունքով էին նայում չերքեզկա հագած հեծելազորի խրոխտ հրամանատարին, որի բարեձև իրանին զարմանալի կերպով սազում էր այդ մարտական շքեղ տարազը:

Գնդապետ Աշոտ Սարգսյանը 1940 թվին նշանակվեց Բլինովի անվան 5-րդ հեծելազորային դիվիզիայի շտաբի պետ: Դիվիզիան մասնակցեց Արևմտյան Ուկրաինայի ազատագրման կամպանիային և առաջինը մտավ Լվով քաղաքը: Այդ օպերացիայի փայլուն կազմակերպման համար գնդապետ Աշոտ Սարգսյանը պարգևատրվեց երկրորդ Կարմիր Աստղի շքանշանով (առաջինն ստացել էր քաղաքացիական կռիվներին մասնակցելու համար): Լվովում գնդապետ Սարգսյանը մի առ ժամանակ կատարեց դիվիզիայի հրամանատարի պաշտոնը: Շուտով նա ստացավ Կարմիր Բանակի գեներալ մայորի կոչումը:

Զինվորական այդ բարձր կոչումին Աշոտ Սարգսյանը հասավ 37 տարեկան հասակում: Կյանքով, եռանդով ու վճռականությամբ լի երիտասարդ սյունեցին իր բացառիկ ընդունակությունների շնորհիվ կարողացել էր գրավել բարձր հրամանա-

տարության ուշադրությունը: Ինչպես միշտ և ամենուրեք նրա հրամանատարության տակ գտնվող զորամասերը ռազմական և քաղաքական պատրաստության մեջ գրավում էին առաջին տեղը և հրամանների մեջ նշվում էին միշտ իբրև օրինակելի: Նա այժմ հեծելազորի գեներալ էր, սովետական փառապանծ հեծելազորի, որի հուշակն ու տրադիցիաներն ամենքին հայտնի են: Լեհաստանի կամպանիայում գեներալ Սարգսյանի ունեցած հաջողությունները ավելի ևս հաստատեցին այն վստահությունը, որ ուներ սովետական ժողովուրդն իր անվանի ռազմիկներից մեկի հանդեպ:

Գերմանական հորդաների անսպասելի հարձակման ժամանակ գեներալ Սարգսյանի զորամասը գտնվում էր Լվով քաղաքում:

Շուտով նրան հանձնվեց N մոտո-հրաձգային դիվիզիայի հրամանատարությունը: Գեներալ մայոր Աշոտ Սարգսյանը առաջիններից էր, որ կրեց իր վրա ֆաշիստական բանակների հարվածը: Նրա դիվիզիան դիմադրեց հերոսաբար և կործանիչ հարվածներ հասցրեց ատելի ոսոխին: Մի քանի ամիս շարունակ կատաղի, արյունահեղ մարտեր էին մղվում հարձակվող թշնամու դեմ, պաշտպանվում էր մինչև վերջին հնարավորությունը սովետական հողի ամեն մի մետրը: Գեներալ մայոր Սարգսյանի դիվիզիան գործում էր Արևմտյան ճակատում գեներալ լեյտենանտ Ռոկոսովսկու մոտոմեքենայացված միավորման կազմում: Ապագա պատմագիրը կհաղորդի այդ վիթխարի, դյուցազնական ճակատամարտերի հերոսավեպը, որոնց մասնակցել է հայ ժողովրդի խիզախ որդի, սյունեցի գեներալ մայոր Սարգսյանը:

Նա հենց սկզբից գտնվում էր առաջավոր պոստում, մարտերի ամենաթեժ, ամենադաժան հորձանքներում: Այդ ահավոր ընդհարումների մեջ նա ժամանակ էր գտել թղթի կտորի վրա մատիտով մի քանի տող գրելու կնոջը՝ նրան հանգստացնելու համար. «Ողջ եմ և առողջ, ամեն ինչ լավ է, եղիր միամիտ և հանգիստ, պանիկայի մի ենթարկվիր»:

Իր ընտանիքին ուղղած մի այլ նամակում նա գրում էր իր փոքրիկ 7-ամյա որդուն. «Էդիկ ջան, տղամարդ կաց և մամայի հետ ուրախ ու քաջ եղիր. Ֆաշիստներին վերջիվերջո ջախջախելու ենք»:

Սովետական գեներալի խոսքերը տոգորված են անսասան վստահությամբ, անհուն հավատով դեպի Կարմիր բանակի հզորությունը, դեպի ռուսական մարտիկի, հրամանատարի, պանծալի տրադիցիաներով պսակված ռազմականությունը, որը ցույց է տվել իրեն դարերից ի վեր, մարտնչելով թշնամական ահեղ ուժերի դեմ և միշտ հաղթական դուրս գալով իր երկրի անկախության և ազատության համար մղած պայքարից:

«Տղամարդ կաց և քաջ եղիր»— ահա գեներալ մայոր Սարգսյանի պատգամը իր որդուն, իր ժողովրդի բոլոր զավակներին, որոնք այսօր արիաբար պաշտպանում են մեր սրբազան հողը:

Գեներալ Աշոտ Սարգսյանն իր գիտակցական համարյա ամբողջ կյանքն անց է կացրել բանակում: Խաղաղ ժամանակի քրտնաջան, մանրակրկիտ և խստաշունչ պատրաստության մեջ, պատերազմի ահեղաշունչ, դաժան պայմաններում միշտ նա զգում և մտածում էր իբրև սովետական զինվորական, իբ հայրենիքի պաշտպան-ռազմիկ, որը պատրաստ է մինչև իր արյան վերջին կաթիլը տալ իր ժողովրդի ազատության համար:

Նա քաջ էր այդ բառի բուն իմաստով, խիզախ, արի ու վճռական: Նա պարզարյուն հանգստությամբ կշռադատում էր իրադրությունը նույնիսկ ամենակրիտիկական րոպեներին, երբ վճիռը կայացված էր, նա գործում էր արագ, ճշգրիտ և համառ:

Խաղաղ ժամանակ նա սիրում էր տրամաբանել, խոսել գիտուններով, հիշել փիլիսոփաներին,— գրողներին, իր արգումենտներն ուժեղացնելու համար: Սակայն պատերազմի դա մարտերի ժամանակ նրա տրամաբանությունը ստանում էր այլ բնույթ, դառնում էր մարտական, գործոն դիալեկտիկա, զինվորական խստագույն կարգապահության, հրամանները բացարձակ ճշտությամբ կատարելու հետ միասին մարտիկի բարոյական ոգու, նրա հայրենասիրության, անձնազոհության խանդավառ արթնացումով: Դրա համար էլ ուներ նա իր անզուգական զենքը, իր բոցավառվող խոսքը, կրակոտ պերճախոսությունը: Անձնական քաջության օրինակը, վճռականությունը, պողպատյա կամքը, դրան միացած էլեկտրականացնող, ոգեշնչող խոսքի ուժը—ահա այն բացառիկ ձիրքը, որ ուներ գեներալ-մայոր Աշոտ Սարգսյանը:

Սյունյաց աշխարհի համեստ մի գյուղից նա բարձրացավ մինչև Կարմիր Բանակի գեներալի աստիճանը, ինչպես իր նախնիները՝ գեներալներ Մադաթովը, Լազարևը, Տեր Ղուկասովը և ուրիշները բարձրացել էին ռուսական պանծալի բանակում:

Որպես աչքի ընկնող, փայլուն զինվորական գեներալ Սարգսյանի անունը միշտ նշվել է հանդիսավոր, հոբելյանական օրերին: Հայկական դիվիզիայի 10-ամյակի առթիվ նա սովետական կառավարության կողմից պարգևատրվեց Պատվո Նշան շքանշանով: Հոկտեմբերյան Սոցիալիստական Ռևոլյուցիայի 20-ամյակին նա ստացավ հոբելյանական զինվորական մեդալ: Երկու անգամ նա պարգևատրվել է Կարմիր Աստղի շքանշանով և ներկայացվել է Կարմիր Դրոշի շքանշանի: Իր զինվորական ծառայության ընթացքում գեներալ Սարգսյանը պարգևատրվել է մոտ 75 անգամ թանկարժեք նվերներով, մարտական զենքերով, Պատվոգրերով և այլն:

Գեներալ Սարգսյանն իր ազատասեր ժողովրդի հարազատ որդին է, Լենին-Ստալինի պարտիայի անձնվեր մարտիկ, որը բարձր պահեց իր նախահայրերի պատիվը, սյունյաց ազատագունդ հեծելազորի տրադիցիաները, Դավիթ Բեկի հայրենասիրական խիզախության և քաջության տրադիցիաները:

Նրա օրինակը թող խանդավառի հայրենիքի հերոս պաշտպաններին, որոնք վճռել են մինչև վերջին շունչը պաշտպանել իրենց պապերի սուրբ օջախը, իրենց մայրերի ու քույրերի պատիվը, իրենց ազատությունը 20-րդ դարի ճիվաղ սրիկաների դեմ:



ՀԵՐՈՍԸ

Հաճախ խոսում ու վիճում են այն մասին, թե ո՞վ կարող է հերոսանալ կռվի մեջ, հերոսն ի՞նչ հատկություններ պիտի ունենա, ի՞նչ խառնվածքի և բնավորության տեր մարդ պիտի լինի և վերջապես՝ ի՞նչ բան է ինքը հերոսությունը: Մի՞թե դա աներկյուղ կերպով դեպի թշնամին նետվելը չէ, կամ առանց վախի զգացումի՝ հակառակորդի կրակի տակ կանգնելը: Մի՞թե արիասրտությունն առհասարակ հերոսություն չէ:

Այդպիսի հարցերին մանրամասն բացատրություններ տալուց ավելի հեշտ կլիներ պատասխանել, օրինակ այսպես.

— Հերոսը՝ դա Սամվել Բարսեղյանն է, նայեցեք նրան, քննեցեք այդ մարդուն, ճանաչեցեք նրան և հասկանալի կլինի, թե ինչպիսի մարդ է հերոսը և ինչ բան է հերոսությունը...

Մի անգամ նրա մոտ էի: Երեկո էր: Նրա զորամասը պատրաստվում էր հարձակման: Եթե թշնամին համառեր և չթողներ իր դիրքերը, պետք էր նետվել այդ դիրքերի վրա, նրան այնտեղից դուրս նետել սվիններով: Ծանր խնդիր էր: Հրամանատարը հանգիստ, թվում էր թե սառն սրտով ստորաբաժանումների պետերին բացատրում էր նրանց անելիքը, պատասխանում նրանց բոլոր հարցերին, հետո կանչում ուրիշներին:

Կես գիշերն անց էր, որ զորամասի հրամանատարին մենակ թողեցին հանգստանալու: Նա պառկեց փափուկ խոտի վրա, շինելով ծածկեց իրեն, բայց երևում էր, որ քնել չի կարողանում: Կրկին նստեց ու կրկին բացեց քարտեզը:

— Ինչո՞ւ չեք հանգստանում,— հարցրի ես:

— Ինչպե՞ս հանգստանամ:

— Քնեցեք մի երկու ժամ:

Ժպտաց:

— Չե՛մ կարող քնել...

Երևում էր, որ հրամանատարը հուզված էր: Օրվա լարվածությունից նրա աչքերի գունատ փայլի մեջ դրոշմվել էր հոգնածությունը:

— Ինչո՞ւ քնել չեք կարողանում:

Կրկին ժպտաց ու հանգիստ, հանգիստ տոնով ասաց.

— Վախենում եմ... վախենում եմ որևէ փոքրիկ բան մոռացած լինեմ, աչքաթող արած լինեմ մի աննշան մանրամասնություն, որ հետո կարող է ծանր նստել մեզ վրա... Թշնամին ուժեղ է և խորամանկ, ահա թե ինչքան բներ ու ամրություններ ունի նա...

Ցույց տվեց քարտեզի վրա եղած նշումները: Ես, այնուամենայնիվ, զարմացած էի: Այդպես էր խոսում մի մարդ, որը միշտ քաջ էր եղել բոլոր կռիվների մեջ, որի զորամասն ավելի շատ հաղթանակներ էր տեսել, քան անհաջողություն: Շատ հարցեր տվի նրան այդ գիշեր, և տեսնելով նրա անհանգստությունը, չէի կարողանում բացատրել ինքս ինձ: Պարզ էր, որ հրամանատարը հուզված ու անհանգիստ էր: Բայց ես այդ օրը չհասկացա, որ դա այն բնական հուզմունքն է, որ ծնվում է պատասխանատվության զգացումից և լարում է միտքը, թռիչքներ է տալիս մարդու ստեղծագործական երևակայությանը: Ծայրահեղ հանդարտությունը, որ հասնում է անտարբերության, միշտ էլ աչքի է ընկնում մտքի ամլությամբ:

Լուսաբացին սկսվեց ճակատամարտը, մեկն այն ճակատամարտերից, որից թվում է թե դողում է երկիրը, ցնցվում է մթնոլորտը, այնպիսի ճակատամարտ, երբ երկու կողմն էլ որոշել են չպարտվել: Րոպեներ են լինում, որ թվում է թե հարձակման ձախողումն ակներև է, բայց մի պահ հետո ամրանում է հաջողության հավատը և կրկին հնչում են մարտիկների ուղմի բացականչությունները: Ոմանք ընկնում են թշնամու գնդակից նպատակի ճամբի վրա, ամեն ակնթարթի մեջ հերոսանում են շատ մարդիկ, առաջ նետվելով դեպի նույն նպատակը: Հաճախ գործողության պարզությունը կորչում է և ամեն ինչ վեր է ածվում ժխորի: Բայց կա մի ուժ, որ կարգի է բերում տարբերայնությունը, ընդհանուր օրինաչափության մեջ է դնում: Դա հրամանատարի միտքն է, նրա կամքը: Այսօր, այստեղ, այդ ուժը Սամվել Բարսեղյանն է: Նա իր հրամանատարական կետից

տեսնում է ծավալվող մարտը և ամեն մոմենտի մեջ արագ ու կտրուկ որոշումներ է ընդունում: Դեմքը երբեք չի այլայլվում, մկաններից ոչ մի ջղաձգություն: Հստակ, մեկին հաղորդվում են նրա հրամանները ստորաբաժանումից ստորաբաժանում, դասակից դասակ: Երբ պետք է լինում, նա դուրս է գալիս դիրքից, նետվում է դեպի այն թևը, որի վրա ճնշում է թշնամու ուժը: Շուրջը պայթում են արկեր ու բեկորներ ցրում օդի մեջ: Դեմքի առաջ շառաչում են պայթող գնդակները, ականները փոսեր են բացում գետնի վրա: Մարտիկները լսում են իրենց հրամանատարի ծանոթ ձայնն ու ոգի առնում: Հրամանատարն օգնական ուժեր է նետում թույլ թևերին, կենտրոնացնում թշնամու վրա կրակային միջոցների համագործողությունը: Թուլացած ստորաբաժանումն ամրանում, դառնում է սեղմված բռունցք և ամեհի ուժով ճամփա բացում իր համար: Հետո կրկին նա իր հրամանատարական կետումն է և հանգիստ, ինչպես եթե ոչինչ պատահած չլիներ, շարունակում է դիտել մարտադաշտն ու ղեկավարել: Ստորաբաժանումներն առաջ են գնում, ինքն էլ փոխում է իր դիրքը, առաջանում:

Իրիկնադեմին թշնամին հեռացավ գյուղից, տների ու փողոցների փոխարեն թողնելով մոխիր ու փոշի, այրելով ամեն ինչ, վերածելով մնացող ածխակույտերի: Հեռացավ գյուղից և պաշտպանության նոր գիծ բռնեց, ձգտելով դիմադրության ամուր գոտի ստեղծել: Սամվել Բարսեղյանն իր հրամանատարական կետը թշնամուց խլված գյուղը փոխադրեց:

Կես գիշերին մենք հրամանատարին էինք փնտրում: Հորիզոնը լուսավորվում էր մեր և թշնամու հրթիռներով: Փչչոցով երկինք էին բարձրանում տարբեր գույնի կրակներ ու ցրվելով թափվում էին ցած ծխածանի բոլոր գույներով: Ամեն գույնը նշան էր մի բանի և ամեն վայրկյան կրկնվում էին այդ ազդանշանները, կողմնակի մարդու համար գիշերը լցնելով անմեկնելի առեղծվածներով: Դժվարանում ես որոշել, թե ինչ վիճակ է տիրում, ինչ խարդավանքներ է նյութում թշնամին՝ գիշերվա մթությունից օգտվելով: Այդ ժամերին ավելի արթուն ու զգոն պիտի լինեն թե՛ հրամանատարը և թե՛ մարտիկը: Մենք իջանք Սամվել Բարսեղյանի ներքնահարկը, ուր իր շտաբի հետ տեղավորված էր նա: Իջանք ու զարմացանք տեսարանի վրա: Օգնականներն զբաղված էին հեռախոսային խոսակցություններով ստորաբաժանումների հրամանատարների հետ, իսկ Բարսեղյանը մեկնվել էր հատակին ու քնել: Քնել էր ամուր քնով, թեթև

խռմփոցներ արձակելով: Դեմքը թույլ լույսի տակ հանգիստ էր երևում, ինչպես պատանու դեմքը՝ բավարարված սիրո կնիքը ճակատին: Մեզ թույլ չտվեցին նրան արթնացնելու: Պետք է հրամանատարն արթնանա երկու ժամ հետո: Երրորդ գիշերն է, նա չի քնել: Ժամանակն անցավ իր բնական ընթացքով և արթնացավ նա ինքն իրեն, կարծես մի գաղտնի կապ միացրել էր ժամացույցի մեխանիզմի աշխատանքը քնած հրամանատարի զգացողության հետ, արթնացավ և առանց մեզ վրա ուշադրություն դարձնելու, հարցրեց իր շտաբի պետին.

— Դրության մեջ փոփոխություն կա՞...

— Մեր հետախույզները մոտեցան նրանց դիրքերին, կրակ արձակեցին և թշնամին պատասխանեց գնդացիրներով ահա այս կետերից...

Շտաբի պետը ցույց տվեց քարտեզը, որ հրամանատարը նայեց, նայեց ու վերադարձրեց նրան: Մենք մոտեցանք այնպես, որ նկատելի դառնանք, չնայած գիտեինք, որ նա վաղուց նկատել է մեզ: Նայեց մեզ ու հարցրեց.

— Հը, ի՞նչ եք անում:

— Ուզում ենք խոսել ձեզ հետ:

— Ինչ որ եղել է, տեսել եք, էլ ի՞նչ եք ուզում:

Թվաց թե պատասխանը չոր է: Ի՞նչ կարող ես անել, իր իրավունքն է: Բայց նա չվարվեց այնպես, ինչպես իր պատասխանի տոնն էր: Խոսեց նա մեզ հետ և լիապես բավարարեց մեր հետաքրքրությունը, որ ունենում են ճակատային թղթակիցներն այդպիսի օրերին:

Հետո մենք հարցրինք՝

— Ինչպե՞ս է, որ այդպիսի ներվային, լարված ժամանակ կարողացել եք քնել, այսինքն՝ նպատակահարմար եք համարել քնել:

— Ժամանակը ներվային կամ լարված չի լինում, — ասաց նա, — ներվային կամ լարված լինում են մարդիկ, ես ոչ ներվային եմ հիմա և ոչ էլ այնքան լարված և դրա համար էլ քնել եմ...

Իսկապես, նրա խոսելու եղանակը և հանգիստ շարժումները վկայում էին նրա սրտի կատարյալ խաղաղության մասին: Աչքերի մեջ կար գոհացած մի երջանկություն:

— Երրորդ օրն էր, որ չէի քնել, եթե այսօր էլ չքնեի, վաղը մարտը ղեկավարել չէի կարողանա: Քնելուց առաջ ես մտա-

ծել եմ թշնամու բոլոր խորամանկությունների մասին այս գի—
շերվա ընթացքում և որոշել, թե ինչ անակնկալների առաջ կա—
րող է կանգնեցնել նա մեզ: Նա կարող է ահա այսպիսի միջոց—
ների դիմել...

Նա վերցրեց քարտեզը շտաբի պետի ձեռքից ու նրա վրա
ցույց տվեց մեզ թշնամու ուժերի կրակային գծերի ու կետերի
դասավորությունը. Թշնամին կարող է փորձել, ահա ա՛յս, ա՛յս,
ա՛յս... Ուրիշ բան հնարավոր չէ:

Կրկին նա վերադարձրեց քարտեզը:

— Քնելուց առաջ ես հրամաններ եմ տվել, թե ո՛ր դեպքում
մերոնք ինչպես պիտի պատասխանեն նրանց, եթե արթուն էլ
լինեի, նույն հրամանները պիտի տայի, որ տվել եմ, իսկ հիմա
ահա արթուն եմ և պատրաստ՝ գործելու:

Նրա վերջին խոսքերի մեջ կար այնպիսի ինքնավստահու—
թյուն, որ հիացմունք էր պատճառում: Ես հիշեցի նրա անհան—
գստությունն ու մտքի լարվածությունը կռվից առաջ: Ինձ թվում
էր, թե հերոսը ճիշտ այդպիսին պիտի լինի: Սնապարծներն են
գործից առաջ անամեջ ազդարարություններ անում, իսկ գործո—
ղության ժամանակ կորցնում են իրենց գլուխը: Սխրագործու—
թյունների ընդունակ մարդիկ չեն կարող չմտահոգվել իրենց
ձեռնարկության հաջողությամբ: Հերոսությունը և՛ խելք է,
մտքի լարվածություն, և՛ լրջություն և՛, ի հարկե, քաջություն
անպայման:

Այդ հատկությունները օգնեցին Սամվել Բարսեղյանին օր—
օրի վրա աճելու որպես հրամանատար: Մի տարվա ընթացքում
մի քանի անգամ բարձրացան նրա կոչումներն ու պաշտոնները,
աճեցին նրա ընդունակությունները, ռազմական փորձը կուտակ—
վեց, միտքը սրվեց և նրան ասացին, դու կարող ես մի ողջ
միավորման հրամանատար դառնալ, դու ընդունակ ես դեռ շատ
աճելու զորավարի արվեստի մեջ, դու ընդունակ ես մեծ ծավա—
լի գործերի: Շատ հերոսական դեպքեր ու սխրագործություններ
նկատի ուներ բարձր հրամանատարությունը այդպիսի եզրակա—
ցության հանգելու, սխրագործություններ, որ ժամանակը եր—
բեք չի կարողանա ջնջել դեպքերին մասնակից ու ականատես
մարդկանց հիշողությունից: Ինչպե՞ս կարելի է մոռանալ, օրի—
նակ, Սամվել Բարսեղյանի ստորաբաժանման ճակատամարտը Շ.
ավանի մոտերքում: Ուժգին գրոհով նա հետ շպրտեց իրենց
դիրքերում ամրացած գերմանացիներին, ազատագրեց երկու
գյուղ: Երրորդ օրը թշնամուն օգնական ուժեր հասան, նա գզա—

ռի հավով տեխնիկա նետեց այդ բնագծի վրա և փորձեց ետ խլել
կորցրածը: Նա պղտոր ալիքների նման խփում էր մեր գրաված
դիրքերին, խփում էր իր ամբողջ ուժը հավաքած, ու փշրվելով
ամրություններին զարկվելուց, հետ գնում: Իր զորամասի մար—
տիկների գլուխը կանգնած, Բարսեղյանը ընդունում էր մարտը
ամեն ետ մղած գրոհից հետո ավելի ուժեղ զգալով իրեն, ավելի
զվարթանալով: Հակառակորդը կրակում էր, անընդհատ կրակ
տեղում մերոնց վրա: Կրակ էր թափվում նաև օդից, թանձր
փոշին ու ծուխը նստում էին մեր դիրքերի վրա, բայց երբ հա—
կառակորդը գալիս էր նոր գրոհի, կրկին դիակներ էր թողնում
ու հետ սողում: Եվ կրկին մարտունակ էին մնում հրամանա—
տարն ու իր հերոսները, նման Սասունցի Դավթին, որ Մսրա
Մելիքի նետած ամեն գուրզից հետո փոշու ամպերի միջից կան—
չում էր առնական ձայնով. «Կենդանի եմ, մեկ էլ արի»...

Թշնամու հակագրոհներից մեկը հետ շպրտելուց հետո, երբ
կրկին, ինչպես համարյա ամեն օր, քամին փչում էր արևելքից
ու գարշահոտը դեպի հակառակորդը տանում, հրամանատարն
ասաց իր մարտիկներին մեղմ, այնքան համակրելի ժպիտով:

— Տեսնո՞ւմ եք, հայրենի բնությունն էլ մեզ հետ է, նա
օգնում է մեզ, քամին սուլում է արևելքից...

Ժամանակն անզոր կլինի ջնջել մասնակից ու ականատես
մարդկանց հիշողությունից հրամանատար Սամվել Բարսեղյանի
մի հերոսական սխրագործությունն էլ, որ ավելի փայլուն գույ—
ներ տվեց նրա փառքին: Զորամասերը երկար ժամանակ պահել
էին իրենց գծամասերը, բայց թշնամուն հաջողվել էր առաջ
շարժվել թևերից: Բարձր հրամանատարության կարգադրու—
թյամբ պետք է ետ քաշվեինք նոր գծերի վրա: Մեր ետ գալը
պետք է ծածկեին մի քանի միավոր, անընդհատ կռվելով թշնա—
մու դեմ, սանձելով նրան, որ նա առաջ չշարժվի ոչ թե այն ա—
րագությամբ, որ ինքն է ցանկանում, այլ այն դանդաղու—
թյամբ, որ մեր կամքը պիտի թելադրի նրան: Բայց այնպիսի
դրություն ստեղծվեց, որ այդ ստորաբաժանումները հնարավո—
րություն չունեցան չվել թշնամու հետ: Պատերազմ է, անա—
կնկալներ ծագում են ամեն ժամ: Երեք օր շարունակ մարտի
ծանրությունն ընկած էր միայն Սամվել Բարսեղյանի միավորման
վրա: Պետք էր տեսնել իրեն՝ Սամվել Բարսեղյանին այդ մարտե—
րի մեջ: Մեր պատմական Արցախ գավառի լեռներում մեծացած
քաջի արծվենի հայացքից չէր վրիպում թշնամու ոչ մի խորա—

մանկ քայլը և խիղախի կամքն էլ երբեք չէր ընկճվում: Մի անգամ, այդ մանևրի երրորդ օրը նա նկատեց, որ թշնամու հետևակին կրակի տակ առած իր հրետանու մարտկոցին թևանցում է գերմանացի ավտոմատավորների մի վաշտ: Տեղանքն այնպես էին, որ հրետանավորները չէին նկատում բլուրի ետևից իրենց թևանցող հետևակայիններին և բոլների դանդաղությունը պատճառ կդառնար, որ ոչնչանան մերոնք ու հրանոթներն էլ թշնամուն մնան: Պետք էր ամենաարագ ու կտրուկ գործողություն գտնել: Բարսեղյանը որոշեց ոչ թե զգուշացնել նրանց՝ կապավորի միջոցով, այլ անձամբ այնտեղ հասնել և պատժել թշնամու հանդգնությունը: Նա ձին նստեց ու արծիվի պես դեպի մարտկոցը սուրաց: Նրա նժույգն իր խոլական վազքի մեջ ձգվում էր նետի պես, հպարտ իր խիզախ հեծյալով, որին տանում էր թռացերեն կրակի միջով: Հրամանատարին խփում էին գերմանացիներն ականաձիգներով ու հրետանու կրակով: Բայց նա ընկնելու համար չէր գնում, այլ հաղթելու: Հասավ նա մարտկոցին, երբ փոքրիկ բլուրի հետևից թևանցող գերմանական ավտոմատավորները մոտ էին իրենց նպատակին, հասավ և շուռ տալով հրանոթները, ուղիղ նշանառությամբ կրակն ուղղեց հետևակայինների վրա: Սովետական պանծալի հրետանին ոչնչացրեց ու ցրեց խորամանկության դիմող թշնամուն և շարունակեց իր հզոր կրակը ճակատից եկող խմբերի վրա:

Այդ մարտից դուրս եկավ Սամվել Բարսեղյանն իր սովորական համեստությամբ, առանց փքվելու, առանց հանդիսավոր կեցվածքներ ընդունելու, որը հատուկ է սնապարծներին:

Ասում են վատ է այն զինվորը, որ չի ձգտում գեներալ դառնալ: Սամվել Բարսեղյանը զինվոր է եղել, այսօր նա բարձր հրամանատար է, պսակված փառքով: Այդ ճանապարհը դյուրին ու հեշտ չէ: Բայց դա խիզախի հերոսի ճանապարհ է:

Ու դրա համար էլ, երբ խոսում են հերոսության մասին, հարցնում են թե ի՞նչ բան է հերոսությունը և ո՞վ կարող է հերոս դառնալ, ես ուզում եմ պատասխանել մարդկանց՝

— Ճանաչեցեք Սամվել Բարսեղյանին և ձեր հարցերի պատասխանները կգտնեք նրա մեջ...

Հոկտեմբեր, 1942 թ.

ՀԵՌԱՎՈՐ ԹՌԻՉՔՆԵՐԻ ՎԱՐՊԵՏԸ

Սրընթաց, բայց սահուն կերպով պոկվելով գետնից՝ կապիտան Գաբրիելյանի ծանր բեռնավորված մեքենան արագ սկսեց վեր սավառնել: Գիշերային մշուշով ծածկված քաղաքը մնաց ետևում: Ձմեռային ցուրտ, ներս թափանցող քամին սվսվում էր տրանսպորտային խոշոր ինքնաթիռի լուսամուտների մոտ:

Գաբրիելյանը մեքենան վարում էր սարքավորումներով: Նրանից ոչ հեռու, երկրորդ կառավարման ղեկի մոտ նստած էր երկրորդ պիլոտ և շտուրման մայոր Գեորգի Միխայլովիչ Ավալյանին: Ավալյանին պատկանում էր սովետական օդաչուների ավագ սերնդին: Օդաչուական կարյերան սկսելով դեռ ռևոլյուցիայից առաջ՝ Ավալյանին իր պրակտիկայի ընթացքում շատ բարդ ու դժվարին թռիչքներ էր տեսել, տեսել էր և բավական շատ մարդիկ, որոնք նրա հետ և նրա ղեկավարությամբ անում էին այդ թռիչքները՝ կատարելով պարտիայի և սովետական կառավարության ամենադժվարին առաջադրանքները:

Աճում ու ամրանում էր սովետական ավիացիան, աճում էին նրա մարդիկ՝ ստալինյան անվեհեր բազեները, հազարավոր այսպիսի փորձառու, հանդուգն օդաչուները, ինչպես իր կողքին նստած կապիտան Գաբրիելյանը: Գեորգի Միխայլովիչը սիրում էր այդ թիկնեղ, ամրակազմ, ուրախ ու ժպտացող աչքերով

մարդուն։ Ավալիանին անկեղծորեն հիանում էր նրա թռիչքային արվեստի, նրա համարձակության և վճռականության, ինչպես նաև հանդարտ ու վստահ կերպով մեքենան դեպի նպատակակետը վարելու վրա։

Մեծ բարձրություն ընդունելով՝ մեքենան մոտենում էր ճակատի գծին։ Պետք էր կտրել այդ գիծը՝ առանց մատնելու իրեն։ Ներքևում, մի քանի տասնյակ կիլոմետր տարածության վրա փռված էր հրդեհների մի շերտ, որը ձգվում էր դեպի գերմանական խոր թիկունք։ Անընդհատ բռնկում էին հրետանային կրակոցները։

Սովետական վառվող գյուղերի շերտի պատկերը հերոսական անձնակազմի սրտերը լցնում էր անհուն ատելությամբ դեպի գերմանական օկուպանտները, կոչ էր անում նրանց՝ սրբազան վրեժ լուծել հարազատ ժողովրդի տառապանքների համար։

Կապիտան Գաբրիելյանը մեծ արվեստով վարում էր մեքենան։ Թռչելով թշնամու օդանավակայանների կամ բնակավայրերի մոտից՝ նա անջատում էր մոտորները, որպեսզի թշնամու ձայնորսները չհայտնաբերեն իրեն։

Մի քանի ժամ էր, ինչ Գաբրիելյանի ինքնաթիռը գտնվում էր օդում։ Նա վստահ ու հմտորեն ճանապարհ էր հարթում դեպի արևմուտք։ Թշնամին ոչինչ չէր կասկածում։ Թռիչքը միանգամայն հաջող էր ընթանում։

Վերջապես մեքենան սկսեց մոտենալ նպատակակետին։ Ներքևում փռված էր մի մեծ քաղաք՝ անհամար լույսերի վառցույքով։ Գաբրիելյանն սկսեց վեր բարձրանալ՝ պատրաստվելով բեռը նետելուն։ Մեխանիկ Գուսևը և ռադիստ Ռյաբուշկինը հակերը մոտեցնում էին կաբինի հատակի մեջ գտնվող բացվածքին։

Գաբրիելյանն ազդանշան տվեց, ինքնաթիռի թևերն օրորվեցին և իրար հետևից ցած սլացան կապոցներ։

Բայց զարմանալի կերպով այդ կապոցները ոչ հրդեհ առաջացրին, ոչ էլ պայթյուն։ Դրանք ոչ հրկիզող, ոչ էլ ֆուգասային ռումբեր էին։ Բայց և այնպես անհամեմատ ավելի մեծ ուժ ունեցող պայթուցիկ նյութ էր դա։ Այդ նյութը ցած էր իջեցվում սպիտակ, խշխշան թղթի անհաշիվ թերթիկներով։ Դրանք 1941 թվի նոյեմբերի 7-ին, Կարմիր հրապարակում, ընկեր Ստալինի արտասանած ճառի թռուցիկներն էին։

Ցած գցելով բեռը՝ մեքենան վերադարձի ուղղություն ընդունեց։ Այդ միջոցին քաղաքում հանկարծ մարեցին լույսերը։

Ռումբն օդային տագնապ է այնտեղ։ Թշնամին վերջապես հասկացել է թե ինչ է պատահել։ Տասնյակ լուսարձակներ իրենց ճառագայթներով սկսեցին երկնքում փնտրել Գաբրիելյանի ինքնաթիռը։ Սկսվեցին զենիթային թնդանոթների անվերջ կրակոցների պոռթկումները։ Նրանք խփում էին կուրորեն՝ ինքնաթիռին ոչ մի վնաս չհասցնելով։

Շատ մեծ բարձրության հասնելով՝ ինքնաթիռը դիմեց դեպի իր բազան։

Այգեբացի մթնշաղի մեջ Գաբրիելյանը տեսավ Կարմիր մայրաքաղաքի ծանոթ շրջագծերը։

* * *

Ռաֆայելը, կամ ինչպես տանն են անվանում Ռաֆիկը ծնվել է 1909 թվին։ Նրա հայրը հայտնի բժիշկ պրոֆեսոր Գաբրիելյանն է։ Միջնակարգ դպրոցը վերջացնելուց հետո Ռաֆիկը մտել է ավիացիոն ինստիտուտը և 1933 թվին ավարտել է։ Ինստիտուտից հետո երկու տարի սովորել է ավիա-դպրոցում։ Երկար տարիներ աշխատել է քաղաքացիական ավիացիայում։

Հայրենական պատերազմը պայթելիս Ռաֆայել Հովնանովիչը մարտական պոստումն էր։ Պատերազմի հենց առաջին օրերից նա ստալինյան անվեհեր բազեների առաջին շարքերումն էր։

Մեծ ծառայություններ է մատուցել օդաչու Գաբրիելյանը պատերազմի ընթացքում։ Շատ անգամ նա փայլուն կերպով կատարել է Կարմիր Բանակի գլխավոր շտաբի մարտական հատուկ առաջադրանքները՝ հեռավոր թռիչքներ անելով թշնամու խոր թիկունքներում։ Զուր չէ, որ ընկերներն անվանում են նրան հեռավոր թռիչքների վարպետ։

Նամակներից մեկում կապիտան Գաբրիելյանը գրել է հորը՝ պրոֆեսոր Գաբրիելյանին.

«Սիրելի՛ հայրիկ... Ես պետք է կատարեմ մի չափազանց կարևոր առաջադրանք։ Կյանքս ընթանում է առաջվա պես։ Շատ եմ թռչում՝ բացառապես գիշերով... Ի՞նչպես էք ապրում։ Կարոտել եմ քաղցրիկ Երևանին»։

Ահա նա գրում է.

«Պատերազմի վախճանը դեռ հեռու է։ Հայրի՛կ, չես կարող պատկերացնել, թե պատերազմի ինչպիսի ճիզվիթական մեթոդ-

БІБЛІОТЕКА
АН УРСР

ներ են կիրառում գերմանացիները: Ոչ մի ժամանակ ես այնպիսի ատելություն չեմ տածել դեպի գերմանացիները, ինչպես հիմա: Ամեն մի թռիչք մի մեծ բավականություն է ինձ համար»:

* * *

Հայ ժողովրդի հերոս որդի կապիտան Գաբրիելյանը մեր մեծ հայրենիքի բոցաշունչ հայրենասերն է: Նա մեկն է այն բազմաթիվ, պանծալի ստալինյան բազեներից, որոնք պատրաստ են հանուն հայրենիքի մարտնչելու թշնամու հետ մինչև արյան վերջին կաթիլը: Նա սովետական օդաչուների այն ընտանիքից է, որոնց աճեցրել ու դաստիարակել է մեր մեծ առաջնորդ, հարազատ Ստալինը:

Կարմիր բանակի անվեհեր, կարգապահ ռազմիկ կապիտան Գաբրիելյանը միշտ էլ հաստատուն կերպով կանգնել է ու կանգնած է իր մարտական պոստում՝ ծառայելով հայրենիքին և հերոսական ժողովրդին:



ՀԵՐՈՍԱԿԱՆ ԿՈՄԴԻՎԸ

Բաքվի կոմունայի պայքարն էր ծավալվել իր տրագիկ վեհությամբ՝ հին դասակարգերի, հին աշխարհի դեմ: Այդ կռվող ռևոլյուցիոն բանակի շարքերումն էր և տասնինը տարեկան Սիմոն Զաքյանը: Դեռևս կիսագրագետ մի բանվոր, նա չէր կարող իմաստավորել համաշխարհային հսկայական այդ իրադարձությունը՝ Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիան, բայց նա իր դասակարգային զգացումներով լի էր աշխատավորության այդ մեծ դասի ներքին ըմբռնումով:

Այդ օրերին Սիմոն Զաքյանը կռվում էր հայ, ռուս, ադրբեջանցի, վրացի ընկերների շարքում, կռվում էր մարդկության ազատագրման և ժողովուրդների եղբայրության դրոշի տակ: Հետագայում նա այդ պայքարը շարունակեց և Հայաստանում, մասնակցելով քաղաքացիական կռիվներին՝ կոնտրռևոլյուցիոն դաշնակների դեմ և Կարմիր Բանակի շարքերով ոտք դրեց իրենց ազատագրած հայրենիքը՝ նոր, խաղաղ աշխատանքի համար:

Կա մի առանձին հմայք մեր սովետական այն մարդկանց մեջ, որոնց կյանքի և պայքարի արշալույսը՝ նրանց թարմ երիտասարդ տարիները զուգորդել են նոր բացվող սոցիալիստա–

կան ռևոլյուցիայի: Այդպիսի դեմքերից էր և Սիմյոն Զաքյանը: Այն անձնվիրությունը, հերոսությունը, որ հանդես էր բերել նա քաղաքացիական կռիվներում, տեղափոխեց իր հետագա աշխատանքի մեջ՝ Սովետական Հայաստանում: Թե՛ այստեղ, թե՛ իր կյանքի ամբողջ ընթացքում նա իր ձգտումներով, իր ընկերական ոգով պատկերանում է մեր առաջ որպես նոր, սովետական մարդու տիպար՝ իր լավագույն գծերով:

Սովորել... ահա այն զորեղ թրթիռը, որ շարժվում էր այդ տիպարի մարդկանց մեջ, երբ նրանք սրբում էին ճակատի քրտինքը և մի կողմ դնում հրացանը: Եվ Սիմյոնը մտնում է Երևանի հրամանատարական կուրսերը: Ավարտելուց հետո՝ շնորհիվ իր հայտնաբերած արտակարգ ընդունակությունների և աշխատանքի, մնում է այդ դպրոցում՝ նոր կադրեր պատրաստելու պատասխանատու հանձնարարությամբ: Նրա այդ տարիների ընկերները, որոնց հետ նա սովորել է կամ որոնց սովորեցրել է, ջերմ զգացումով են հիշում այդ վառվռուն երիտասարդին, որը ջանք չէր խնայում հետամնացներին օգնելու համար, որը հոգատար և սիրող ընկեր էր:

Հրամանատարական դպրոցից հետո մենք տեսնում ենք Զաքյանին Հայկական դիվիզիայի առաջին գնդի գնդացրային վաշտի հրամանատարի պաշտոնում: Այստեղ էլ Սիմյոնը մարմնացնում էր սովետական հրամանատարի գեղեցիկ հատկությունները—կատարում էր իր պարտականությունները գերազանցորեն, պահանջում էր նույնը իր վաշտի բանակայիններից, բայց միաժամանակ սիրելի ընկեր էր ամենքի համար:

Որտեղից էր ծագում այդ ազնիվ և դժվարին ներդաշնակությունը: Դրա գաղտնիքը նրանում էր, որ հրամանատար Զաքյանը օրինակ էր տալիս բոլորին իր արտակարգ աշխատանքով, իր կարգապահությամբ, համեստությամբ: Նա միշտ հոգում էր իր վաշտի բանակայինների մասին, միշտ օգնության էր հասնում բոլոր դիմողներին և իր հարաբերությունների մեջ միշտ բարձր էր պահում «ընկեր» կոչումը:

Վաշտի պարապմունքներն են. Սիմյոնին շրջապատել են կարմիրբանակայինները: Նա խոսում է գնդացրի մասին, ցույց է տալիս կրակելու ձևերը: Բացատրում է պարզ, հասկանալի ձևով: Նրա դասերն անմոռանալի են,— չէ՞ որ նրան «հրաձգային վարպետ» են անվանում: Սակայն Զաքյանը չէր բավարարվում միայն իր վարպետությամբ.— նա իր աշխատանքն այն-

պես էր տանում, որ իր վաշտն էլ գերազանց լինի հրաձգության մեջ: Եվ նա հասավ իր նպատակին,— շատ չանցած Սիմյոնի վաշտն աչքի էր ընկնում ոչ միայն գնդի, այլև դիվիզիայի մեջ: Այդպես էր նրա ծրագիրը—ոգևորել աշխատանքով բոլորին, առաջ քաշել ոչ միայն առանձին անհատներին, այլ ամբողջ կոլեկտիվը:

Կար և մի ուրիշ ձգտում Զաքյանի մեջ, որը նույնպես դասում էր նրան լավագույն աշխատավորների շարքը.— աշխատանքը նրա համար յուրահատուկ ստեղծագործություն էր: Նա շարունակ նախաձեռնողն էր գործը լավացնելու և դրա համար շարունակ դիտում էր գնդացիրն ու մտածում կատարելագործելու մասին: Իր այդ որոնումները նրան հասցրին մի կարևոր գյուտի՝ նա հնարեց այսպես կոչված «գնդացրային քանոնը», որն արժանացավ Սովետական Միության Պաշտպանության ժողկոմատի հավանությանը և գործադրության դրվեց գնդացրային զորամասերում:

Բայց Սիմյոն Զաքյանի մեջ ապրում էր սովետական աշխատավորի սովորելու անհագ տենչը. նա երբեք չէր բավականանում իր գիտեցածով, միշտ ձգտում էր առաջանալ, խորացնել իր աշխատանքը և դրա հետ՝ իր ուսումը, իր գիտությունը: Եվ ահա նրա կյանքում կատարվում է այն թռիչքը, որը մեր սովետական իրականության անծանոթ մարդուն կթվար արտակարգ և անօրինակ—նախկին կիսագրագետ բանվորն այնքան է բարձրանում, որ մտնում է Մոսկվայի՝ Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիան:

Ահա Զաքյանի սովորելու փառավոր ուղին...

Ինչ խոսք, որ Զաքյանի անխոնջ աշխատանքը, նրա նվիրվածությունը գործին միշտ ուշադրության էր արժանանում վերադաս օրգանների կողմից: Վաշտի հրամանատարությունից նա հետզհետե բարձրացավ գնդի, ապա դիվիզիայի հրամանատարության: Եվ այդ դիրքերի համար նա ուներ պատշաճ գիտելիքներ, ուներ փորձ, հեղինակություն և կարմիրբանակայինների համակրանքը:

Զինվորական ակադեմիան ավարտելուց հետո նա աշխատում էր Աբխազիայի մայրաքաղաքում՝ Սուխումիում, գնդի հրամանատարի պաշտոնում: Աբխազիայի ժողովուրդը արտահայտեց իր հարգանքը Սիմյոն Զաքյանին՝ ընտրելով նրան իր Գերագույն Սովետի դեպուտատ:

* * *

Հիտլերյան ավազակային հարձակումը հանկարծակիի չբերեց մեր մեծ Միության ժողովրդին։ Նա առաջին իսկ ահազանգից մի մարդու պես ոտի կանգնեց՝ դիմագրավելու բարբարոս հրոսակներին։ Կարմիր Բանակը սկսեց իր ջախջախիչ հարվածները բոլոր ճակատներում։ Սիմոն Զաքյանը, այդ կոփված մարտիկը նույնպես ռազմաճակատում էր՝ N զորամասի հրամանատարի պաշտոնով։ Նա իր զորամասն ընդունեց ռազմաճակատի մարտական պայմաններում։

Չափազանց լուրջ և պատասխանատու օրեր էին, և Սիմոն Զաքյանը լիովին արդարացրեց իր ստանձնած պաշտոնը։ Այլ կերպ լինել չէր կարող, քանի որ զինվորական էր նրա ամբողջ անցյալը։ Այն գերազանց հատկությունները, որոնք այնպես ցայտուն կերպով արտահայտվել էին՝ նախ քաղաքացիական կռիվների, ապա խաղաղ շինարարության տարիների ընթացքում, այստեղ՝ Հայրենական պատերազմի դաշտում տալիս էին նրան հերոսի կերպար։

Պատերազմի դաշտում էլ Զաքյանը նույն անձնվեր ու անդուլ աշխատողն էր, նույն կարգապահ և պարտաճանաչ մարտիկը, նույն հոգատար և սիրելի ընկերը, անվեհեր ու սառնասիրտ հրամանատարը։

Անգամ կռվի ամենաթեժ րոպեներին Սիմոնը երբեք խուճապային տրամադրության չէր ենթարկվում. նա սառնարյուն տալիս էր իր պարզորոշ հրամանները, որոնց մեջ հնչում էր կամքի ուժ և հաղթական շեշտ։ Թշնամու ռմբակոծության ժամանակ Զաքյանն անվախ անցնում էր գումարտակից գումարտակ, ծանոթանում էր մարտիկների հետ, մտերմաբար խոսում, խրախուսում, սիրտ տալիս բոլորին։ Սովորական կյանքի հետ զուգընթաց նա այդ զրույցներով ստեղծում էր մի ուրիշ անխզելի ընկերական կապ, միաձուլում էր ամենքին։ Նա դարձյալ «սիրելի Զաքյանն» էր թե՛ հրամանատարների և թե՛ բանակայինների համար։

Գնդապետ Զաքյանը, որպես սովետական արևի տակ աճած երիտասարդ հրամանատար, մեծ հմտությամբ էր ղեկավարում իր մարտիկներին, միշտ ձգտելով, որպեսզի իրեն հանձնված N զորամասը գերազանցորեն կատարի իր դերը։ Եվ նա հասավ իր նպատակին. ռազմաճակատում N դիվիզիան այլ զորամասերի հետ փառավոր հաղթություն տարան փետր-

վարի վերջերին և մարտի 13—16-ին ջախջախելով ռումինական 18-րդ հետևակ դիվիզիան և մեծ կորուստներ պատճառելով գերմանական 170-րդ ու 46-րդ հետևակ դիվիզիաներին։ Կռվի ամենակրիտիկական մոմենտներից մեկում Զաքյանը հրամայեց ավտոմատավոր բանակայիններին.

— Ո՛չ մի քայլ դեպի հետ. եթե անհրաժեշտ է՝ կմեռնենք հենց այստեղ...

Եվ թշնամին հետ մղվեց, մեծ կորուստներ տալով.— սպանվածների թիվը 6500-ից ավելի էր, մեծ էր և ռազմական ավարը։

Իր կորուստները լրացնելու նպատակով Հիտլերը շտապ կարգով Ֆրանսիայից արևելյան ճակատ տեղափոխեց գերմանական 22-րդ տանկային դիվիզիան, որը մարտի 20-ին վաղ առավոտյան կռվի ելավ մեր զորքերի դեմ։

Կատաղի ճակատամարտ էր։ Այդ օրը թշնամին երեք անգամ գրոհի դիմեց՝ բերելով հարյուրից ավելի տանկեր. բայց ամեն անգամ նա հանդիպում էր մեր մարտիկների զորեղ դիմադրության և ջախջախվելով հետ էր փախչում իր հալչող մնացորդներով։ Թշնամին թողեց կռվի դաշտում 47 տանկ, չհաշված մնացած ռազմական ավարը։ N զորամասը սերտ համագործակցելով այլ զորամասերի հետ այդ կռիվներում ցուցաբերեց մեծ քաջություն։ Զաքյանը շատ գոհ էր ու ոգևորված շնորհավորում ու խրախուսում էր հրամանատարներին ու մարտիկներին։

Սակայն թշնամին չէր կարողանում հաշտվել իր պարտության հետ։ Մի քանի օրից հետո նա նորից դիմեց գրոհի։

Դա Սիմոն Զաքյանի վերջին ճակատամարտն էր։

Ֆաշիստական զորքը հետզհետե ուժեղացնում էր մեր դիրքերի ռմբակոծումը. տասնյակ արկեր էին պայթում այն գետնափոր տնակի մոտ, որտեղ Սիմոն Զաքյանի հրամանատարական կետն էր։ Ինչպես և միշտ՝ նա այժմ էլ անձամբ հետևում էր ամեն մի դիրքին ու ղեկավարում։ Կռվի ամենաթեժ մոմենտին, նա դուրս եկավ գետնափոր տնակից, որպեսզի իր ներկայությամբ անձամբ ոգևորի մարտիկներին։ Բայց դեռ մոտակա բլինդաժին չհասած՝ վիրավորվեց թշնամու արձակած ականի բեկորներից։ Մարտիկները ձեռքերի վրա տարան իրենց սիրելի հրամանատարին մի ապահով տեղ։ Չնայած մահացու

վերքին՝ Զաքյանի ուսը դեռևս վրան էր: Նա կանչեց փոխ–գնդապետ Դանիելյանին, լսեց նրա զեկուցումը, ապա տվեց իր հրամանը.

— Ուժեղացրե՛ք հրետանու կրակը՝ դեպի ֆաշիստների դեմ. հանո՛ւն մեր մեծ հայրենիքի, հանո՛ւն մեր սիրելի Ստալինի, հառա՛ջ, դեպի հաղթությու՛ն...

Վերջին հրամանն էր դա...

...Մի քանի օրից Զաքյանի գնդերը խոնարհեցին իրենց դրոշները սիրելի հրամանատարի դագաղի առաջ... դժվար էին վերջին հրաժեշտի րոպեները: Ուղարկելով Սիմյոն Զաքյանի մարմինը Հայաստան՝ մարտիկները երդվեցին ավելի ուժ տալ զենքերին, լուծել սիրելի և անվեհեր հրամանատարի վրեժը:

Սիմյոն Զաքյանն ընկավ հերոսի մահով, պաշտպանելով մեր մեծ հայրենիքը ֆաշիստական ավազակներից, կռվելով ոչ միայն իր ժողովրդի, այլև ամբողջ առաջավոր մարդկության ազատության համար:

Հերոս հրամանատարի թաղումը Երևանում վերածվեց յուրահատուկ ժողովրդական ցույցի: Անթիվ շարքերով աշխատավորությունը հետևում էր նրա դագաղին, որն իրենց ուսերի վրա տանում էին մեր կառավարության և պարտիայի ղեկավարները:

Անմա՛հ է Սիմյոն Զաքյանը իր ամբողջ կյանքի անձնվեր աշխատանքով, իր հերոսական պայքարով: Սովետական Հայաստանը անջնջելի տառերով կգրի նրա անունն իր հերոսների շարքում:

ԿԱՄԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Փոխ–գնդապետ Անդրանիկ Սարգսյանը, ծնվել է 1906 թվին,
Զանգեզուրի Սիսիան շրջանի Աղքենդ գյուղում:
Պատանի հասակում, սիրելով զինվորական գործը, մի–
ժամանակ երբ սովետական հայրենիքի ջերմ հայրենասեր՝ կա–
մավոր կերպով մտավ Մյասնիկյանի անվան հայկական ռազմա–
կան դպրոցը, ուր հեծյալ խմբակում սովորեց մինչև 1927 թիվը:
Այդ թվին խմբակը ցրվեց:

Հետևյալ տարին ընկ. Սարգսյանը գնաց Թբիլիսի, ուր մտավ զինվորական միացյալ դպրոցը, որն ավարտելով նշանակվեց դասակի հրամանատար Սուխումի, 3-րդ Կովկասյան գընդում: Մինչև 1929—30 թիվը նա մնաց դասակի հրամանատար և գնդացրային էսկադրոնի պետ: 1930—33 թ. նա դասակի հրամանատար էր և ժամանակավոր հեծյալ դիվիզիոնի հրամանատար:

1933—35 թ. ընկ. Սարգսյանը նշանակվեց Կուրսկում կրտսեր հրամանատարներ պատրաստող զինվորական դպրոցի պետ: Ապա նա անցավ Նովոչերկասկ՝ կատարելագործվելու հրամանատարական կուրսերում:

1935 թվին ավարտելով Նովոչերկասկի կուրսերը՝ նա նշա–

նակվեց գնդի շտաբի պետի օգնական և էսկադրոնի հրամանատար:

1937 թվին ընկ. Սարգսյանը գտնվում էր Օստրով քաղաքում: 1937—40 թ. նա Ֆրունզեի անվան զինվորական ակադեմիայի ունկնդիր էր:

1940 թ. փետրվարի 4-ին ընկ. Սարգսյանը նշանակվեց շտաբի պետ կազակային N գնդի Ստալինի անվան կորպուսում և այդ պաշտոնում մնաց վեց ամիս:

Այնուհետև նշանակվեց N կորպուսի պետի տեղակալ և օպերատիվ բաժնի պետ Վիլնյուսում և այս պաշտոնը վարեց վեց ամիս: Ապա, դեռ պատերազմը չսկսված՝ ընկեր Սարգսյանը նշանակվեց Հյուսիս-Արևմտյան ճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետի օգնական: Այս պաշտոնումն էր, որ պատերազմն սկսվեց: Այնուհետև նա նշանակվեց մոտոհետևակի գնդի հրամանատար, ապա հեծյալ բրիգադի շտաբի պետ:

Այս բազմաթիվ պաշտոնները ցույց են տալիս այն բազմափորձ ուղին, որով անցավ ընկ. Սարգսյանը, ուր նա շփվեց ռազմական բազմապիսի զենքերի գործողությունների ու մարդկանց հետ, հմտացավ ռազմական ավելի լայն մասշտաբի գործերին:

***

Բարձրահասակ, ջլուտ, սլացիկ կազմվածքով երիտասարդ է ընկեր Սարգսյանը: Հեծելակի թեթև ու ճկուն շարժումները՝ ներդաշնակված միաժամանակ խիստ զուսպ և արտաքուստ հանգիստ խոսվածքով՝ տպավորում են մարդու: Զգում ես, որ գործ ունես դեռևս ոչ հասակավոր, բայց հավասարակշռված և փորձված զինվորականի հետ:

Սակայն այս բոլորի հետ միասին հրամանատարը հմուտ ստրատեգ է և կամային, վճռական մարտիկ:

Ընկեր Սարգսյանի բացառիկ զինվորական հատկությունները փորձվեցին և երևան եկան հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից:

Դա պատերազմի առաջին շրջանն էր, երբ Կարմիր Բանակն իր կրծքի վրա կրելով թշնամու դավաճանական հարվածի հանկարծակիությունը՝ տոգորված էր աննախընթաց մարտերի հա-

խուռն փորձությունների մեջ միաժամանակ և՛ կռվել, և՛ կազմակերպել հակահարվածը. իսկ երբ հարկավոր էր՝ սպառել թշնամու հարձակման թափի իներցիան, հասցնել ուժասպառման կետին:

Այն բոլոր մարտերը, որոնց մասնակցել է փոխգնդապետ Սարգսյանը, մանավանդ կազմակերպել է, իրոք որ խիստ ծանր եղան և խրատական:

Շատ մարտեր և դրանց մանրամասնությունները տալու ժամանակը կգա մի օր: Դրանք կմտնեն հայրենական պատերազմի ռազմական պատմության ստրատեգիական և տակտիկական խնդիրների ուսանելի օրինակների շարքերը:

Նրանք փայլուն օրինակներ են այն փաստերի, թե ինչպես մի հրամանատարի ձեռներեցությունը, սառնասրտությունը, ստեղծագործ միտքը կարող է հաղթանակ ձեռք բերել այն պայմաններում, երբ թվում էր թե տվյալ ճակատամասում բացի կռվից դուրս գալը ուրիշ իմաստություն չկար:

1941 թվի հունիսին և հուլիսին տեղի ունեցած դեպքերը Հյուսիս-Արևմտյան ճակատի մի հատվածում ցուցաբերում են ընկեր Սարգսյանի բացառիկ հատկությունները իբրև սառնասիրտ և իր ուժերին վստահ հրամանատարի:

Պ. քաղաքում հուլիսի 22-ին, երբ ընկեր Սարգսյանը Հյուսիս-Արևմտյան ռազմաճակատի հրամանատարի հրամանով օդային դեսանտներ ոչնչացնող զորամասի հրամանատար էր նշանակված, գերմանացիները օդային դեսանտ իջեցրին: Դեսանտը տեղի ունեցավ օդանավակայանում: Գերմանական կռվի ձևերին դեռ անսովոր բանակայիններն ու բնակչությունը լավ չէին յուրացրել թշնամուն դիմադրելու մի այլ զենքը—այն է չենթարկվել թշնամու պսիխիկ գրոհի տպավորությանը: Գերմանացիներն օդային դեսանտ իջեցրին մեծ աղմուկով և ստեղծեցին որոշ խուճապ բնակչության մեջ: Թշնամին տվյալ հատվածում ուներ և ռեալ առավելություն, այսինքն՝ թվով գերազանց ուժերով հարձակվեց:

Եվ ահա, չնայած սեփական ուժերի սակավության և մարտի հոգեբանական աննպաստ պայմաններին՝ ընկեր Սարգսյանն իր ձեռքի տակ ունեցած օդային դեսանտները ոչնչացնող ուժերով հարձակվեց աերոդրոմի վրա և ոչնչացրեց թշնամու դեսանտը:

Այս կռվում գերմանացիները կորցրին 2000 զինվոր և սպա: Պայմանները ծանր էին և օպերացիան դժվար: Դրությունը փրկվեց միմիայն շնորհիվ արագ վճռականության և ինքնավստահության:

— Մեծ նշանակություն ունի իրեն չկորցնելը,— ասում է ընկեր Սարգսյանը և սուր ժպտով նայում է աչքերիս.— որովհետև մարտ է, հանկարծակի հարվածներ շատ են պատահում՝ տանկերի, ինքնաթիռների և այլն: Իսկ գերմանացիները գիտեն աղմուկ բարձրացնել... իսկ պրովոկացիան քայքայում է թիկունքը: Դեռ նոր էր պատերազմը ծավալվում, հարկավոր էր թշնամուն փորձել, ճանաչել: Բարդ պայմաններ են ստեղծվում. առանց սառնասրտության ոչ մի վճիռ չի կարելի ընդունել: Տաքգլուխ վճիռը վնաս է տալիս, իսկ դա ազդում է զորամասերին:

Վերոհիշյալ շրջանի մարտերի ժամանակ բարձրագույն հրամանատարությունը խնդիր տվեց ընկեր Սարգսյանին՝ նկարագրել ճակատամասի տեղանքի մի բավական խառն իրադրություն: Դա խիստ կարևոր էր հետագա վճիռներ ընդունելու համար: Ներկայացնել կռվից դուրս եկած զորամասերի և մարտերի շարժումը, փոփոխվող պայմաններում ճշգրիտ իրադրությունը—օպերատիվ և ձեռներեցություն պահանջող գործ է: Այստեղ է, որ նկարագրողն անձամբ պետք կատարի խիզախ այցելումներ, անձամբ տեղեկանա այդ ժամերին ստեղծված իսկական դրության և սառնասիրտ եզրակացության արդյունքը ներկայացնի բարձրագույն շտաբին:

Ընկեր Սարգսյանն իբրև ներկայացուցիչ Հյուսիս-Արևմտյան ճակատի շտաբի՝ կատարեց այդ հանձնարարությունը և արժանացավ հատուկ շնորհակալության և ստացավ արծաթե սուր:

Մի ուրիշ մարտական գործողություն, որ ձեռնարկեց ընկեր Սարգսյանը, բացառիկ էր սկզբից մինչև վերջ:

Գերմանացիները կուտակելով մի մեծ մոտոմեքենայական զորամաս՝ չորս գիշեր առաջ էին շարժվում դեպի Գ. և Ն., նպատակ ունենալով մի շատ կարևոր կետ՝ Լ. քաղաքը: Նրանք առաջ էին մղվում Ն. գետափի խճուղով: Փոխգնդապետ Սարգսյանը, որ իր ձեռքի տակ ուներ միմիայն 67 մարտիկ՝

հրաման ստացավ կասեցնել այդ շարժումը: Եվ ընկեր Սարգսյանը, որ այդ ժամանակ գտնվում էր երկու հարևան բանակների մերձեցման մեջտեղի կետում (միշտ թույլ կետը նման դեպքերում)՝ պետք է ստեղծեր այդ դիմադրությունը: Պետք էր ոչ միայն լավ պաշտպանել այդ մերձեցման կետը, այլ անգամ հարձակվել, կարծել տալ թշնամուն, որ այստեղ մեծ ուժեր կան: Եվ ահա ընկեր Սարգսյանը ձեռնարկեց կռվից դուրս եկած զորամասերի մնացորդների հավաքմանը: Հավաքեց 1500 մարտիկ: Դեռ հարձակման գործողությունները չսկսած՝ հրամանատարը խոսեց մարտիկների հետ:

— Նայեցեք դեպի արևելք. ովքե՞ր են այնտեղ... Ձեր ծնողները, հարազատները, մեր մայրենի հողը: Դուք ռուսներ եք: Դուք գիտեք որ ռուս ժողովուրդը դեռ երբեք չի պարտվել: Անհաջողությո՞ւն: Դա ժամանակավոր է: Մի տեղ հաջող կլինի, մյուս տեղը անհաջող:

Հրամանատարը հանեց ռազմական կանոնագիրքը, և սկսեց կարդալ, կրկին բացատրել.

— Ամեն տեղ չի կարելի ուժեղ լինել:

Եվ ինչ. խոսքն ավելի վատ է, քան պատիժը: Մարտիկները ոգևորվեցին, շատերն արտասվեցին: Գունդը, որ հավաքված էր ռազմադաշտի այս և այն կետերից՝ դարձավ մարտական միավոր, ոգեշնչվեց և վճռեց գնալ անհավասար ճակատամարտ:

Գիշերը, ժամը 3-ին սկսվեց: Դա այն ժամն է, երբ գերմանական հրամանատարներն իրենց տալով կերուխումի՝ հանգստանում են:

Գիշերային հարձակումով գունդն անցավ գերմանացիների թիկունքը՝ արևմուտք, ջախջախեց նրանցից երկու գունդ, բոլոր թիկունքային հիմնարկները, քայքայեց նրանց պլանը— կենտրոնացնել ուժերը Լ.-ի ուղղությամբ:

Դա մի ճակատամարտ էր՝ երբ տեղնուտեղը մարտի ընթացքում ոչնչից ստեղծած մի գնդով, հաղթություն տարավ ընկեր Սարգսյանը իր վճռական գործողություններով և սոցիալիստական հայրենիքի ջերմ խոսքով:

Այս խիզախ և հաջող գործի համար ընկեր Սարգսյանը

Համամիութենական Գերագույն Սովետի կողմից պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով (1941, հուլիսի 25-ին):

Այնուհետև ընկեր Սարգսյանը, որպես դժվարին դրություններում հաջող գործող հրամանատար՝ նետվում է այլ ճակատամաս, ուր հարկավոր էր կազմակերպել զորամաս և մարտ վարել: Օգոստոսի 1-ին նա գտնվում էր Ն-ում, ուր կազմակերպեց հեծյալ դիվիզիա: Չպետք է մոռանալ, որ դա կրկին մարտական գործողությունների շրջանումն էր... Երկու ամիս պարապեց դիվիզիայի հետ և սեպտեմբերի 1-ին տարավ մարտի: Բ. քաղաքի մոտ մի քանի գիշերային հարձակումներով դիվիզիան ոչնչացրեց գերմանացիների տեխնիկան և կենդանի ուժը: Այդ մարտերն այն նշանակությունն ունեցան, որ դիվիզիան թույլ չտվեց գերմանական զորամասին, որը գրավել էր Օ.-ն՝ անցնել Տ.:

Ընկեր Սարգսյանն այս մարտում վիրավորվեց, բայց մարտից դուրս չեկավ:

Շնորհիվ հեծելազորի համարձակ գործողությունների՝ գերմանացիները կորցրին մեծ թվով սպանվածներ ու բնակավայրեր: Գերմանական հռչակավոր մի գեներալ կորցրեց իր տանկային ուժեղ մի զորամասը և չկարողացավ գրավել Տ-ն՝ ռազմական մեծ նշանակություն ունեցող այդ խոշոր բնակավայրը:

Մինչև 1942 թվի հունվարի 1-ը ընկ. Սարգսյանը մասնակցել է բազմաթիվ մարտերի: Հոկտեմբերի 27-ին (1941) նա երկրորդ անգամ վիրավորվեց ականադաշտում, զորքերի ղեկավարման ժամանակ:

Այնուհետև ընկեր Սարգսյանը գնաց Մոսկվա, հիվանդանոց: Ապաքինվելուց հետո նա կրկին վերադարձավ ռազմաճակատ:

***

Ընկեր Սարգսյանը փորձված զինվորական է, եռանդուն կազմակերպիչ, նվիրված պարտիական, հայրենասեր: Նա գործ է ունեցել բազմազան մարդկանց հետ, գտնվել է շատ բարդ մարտական պայմաններում, ձեռք է բերել ռազմական հոգեբանություն, գիտություն:

Սառը, հավասարակշռված դատողություն, ռազմագիտական հմտություն, վճռական, արագ գործողություններ, ջերմ հայրենասիրություն և արհամարհանք դեպի թշնամին ու մահը — ահա հատկություններ, որոնց տիրապետում է մեր հրամանատարը:

ԿՈՄԻՍԱՐԸ

N հրաձգային գնդի կոմիսարն անջատեց ռադիո ընդունիչը, տեղից վեր կացավ և անհանգիստ քայլերով սկսեց անց ու դարձ անել սենյակում: Նա նոր հենց լսեց հաղորդում Մոսկվայից՝ մեր հայրենիքի վրա գերմանացիների կատարած ուխտադրուժ հարձակման մասին:

Կոմիսարը դժվարանում էր կենտրոնանալ: Բազմաթիվ հախուռն մտքերը մեկը մյուսի ետևից սլանում էին նրա գլխով և նա չէր իմանում որի վրա կանգնել, որին տալ առաջնությունը: Մի բան պարզ էր, որ նրա տրամադրությունը խիստ բարձր էր, մարտական, աշխույժ: Նա արագ-արագ քայլում էր սենյակում, մերթ ընդ մերթ շփում ձեռքերը, ուղղում գոտին:

Ինչի՞ց սկսել: Ո՞ր խնդրի վրա ծանրանալ: Ի՞նչ պիտի անի հիմա իրենց զորամասը, ի՞նչպիսի հրաման է ստացվելու: Իսկ ի՞նքը: Ի՞նչ պիտի անի ինքը: Ահա վերջապես հասավ ժամը: Ժամ, որի մասին երկար տարիներ շարունակ ասվել է, խոսվել, գրվել: Հայրենիքը վտանգի մեջ է: Նենգ ու անարգ թշնամին սպառնում է մեր սիրասուն հայրենիքին, որին այնպիսի դժվարությամբ աճեցրել ենք մենք բոլորս: Ի՞նչ է անելու ինքը: Նստելու է և սպասելու մինչև որ հրամա՞ն ստացվի: Բայց

մինչև ե՞րբ, կամ ի՞նչպիսին է լինելու այդ հրամանը: Ո՛չ: Անհնարին է այդ: Օր առաջ դեպի ճակատ: Դեպի մարտի դաշտ: Այնտեղ, ուր վճռվում է երկրի բախտը: Էլ ո՞ր օրվա համար է ինքը կուտակել տասը տարվա զինվորական փորձ ու գիտելիքներ: Ինչո՞ւ համար է ինքն ավարտել Կարմիր Բանակի բարձրագույն ակադեմիան: Հիմա է, որ հայրենիքն ավելի քան երբեք պետք ունի նրա օգնությունը:

Այս մտքերը շիկացած երկաթի նման այրում էին նրա ուղեղը և նա չէր իմանում թե ինչ կերպ լուծի այդ հարցերը, լուծի ժամ առաջ, լուծի այնպես, ինչպես ինքն է կամենում:

Դուռը ծեծեցին: Կոմիսարը մի պահ սթափվեց: Հավաքեց իրեն: Իսկապես, ինչի նման է այդ: Ինքը տարվեց ինչպես մի դյուրաբորբոք կոմերիտական: Ո՞ւր է իր զինվորական սառնասրտությունը: Կլինի այնպես, ինչպես որ պետք է լինի: Երբ հարկավոր լինի—կկանչեն նաև իրեն: Իսկ նախօրոք ինչ կարիք կա ռոմանտիկայով տարվել: Կոմիսարը ժպտաց ինքն իր վրա. «Հայրենասիրության ռոմանտիկան դժվար է կանոնադրության շրջանակների մեջ զետեղել»—մտածեց նա, ապա դառնալով դեպի դուռը բարձրաձայն ասաց.

— Մտե՛ք:

Ներս մտավ մի ավագ քաղղեկ: Կոմիսարը շատ լավ էր ճանաչում այդ պատրաստված, վերին աստիճանի խելացի և անձնվեր քաղղեկին: Ճանաչում էր և սիրում:

— Լսեցի՞ք,— դիմեց նրան կոմիսարը, ակնարկելով պատերազմի մասին:

— Այո, լսեցի, ընկեր ավագ գումարտակային կոմիսար,— պատասխանեց քաղղեկը:

— Ուրեմն, կռվելու ենք...

— Այո, հարկ կլինի...

Ապա քաղղեկն ընդունեց զգաստ կեցվածք և զինվորական հատու լեզվով ասաց.

— Թույլ տվեք դիմել, ընկեր ավագ գումարտակային կոմիսար:

— Դիմեցեք:

Ավագ քաղղեկը հայտնեց, որ ինքը դիմում է բերել ներկայացնելու, որով խնդրում է թույլ տալ իրեն ռազմաճակատ մեկնելու:

Կոմիսարը նայեց նրան գորովալից հայացքով, ժպտաց և ասաց.

— Ուրեմն միասին կմեկնենք ճակատ...

— Պատրաստ եմ ծառայելու հայրենիքիս...

... Այսպես դիմավորեց հայրենական պատերազմի առաջին օրը ավագ գումարտակային կոմիսար Արես Հայրապետյանը:

Հետևյալ օրը երբ նա դիմում ներկայացրեց իրեն ռազմաճակատ ուղարկելու մասին, բանակի շտաբում նրան բացատրեցին, որ առայժմ պետք է սպասել, երբ հարկ լինի իրենց զորամասն ամբողջովին կմեկնի ճակատ:

Եվ ահա ամբողջ չորս ամիս կոմիսարը զորամասի բազմաթիվ մարտիկների, հրամանատարների ու քաղաշխատողների հետ միասին անհամբեր սպասել է այդ ցանկալի օրվան, մինչև որ սիբիրյան հրաձիգների դիվիզիան հրաման ստացավ մեկնելու ռազմաճակատ, պաշտպանելու կարմիր Մոսկվայի մատույցները գերմանա-ֆաշիստական գազազած բանդաների հարձակումներից:

***

Հոկտեմբերի 18-ին Սիբիրյան N հրաձգային դիվիզիան, որի կոմիսար էր նշանակված Հայրապետյանը, ժամանեց Տուլա:

Դա այն օրերին էր երբ մեր հայրենիքի մայրաքաղաքը— Մոսկվան գտնվում էր թշնամու անմիջական հարվածի տակ, երբ յուրաքանչյուր օրը կարող էր վճռել նրա բախտը:

Ֆաշիստական գեներալ Գուդերիանը Տուլայի շուրջը կենտրոնացրել էր իր տանկային ու հետևակային գլխավոր ուժերը, նպատակ ունենալով Տուլայի գրավումով ճեղքել Մոսկվայի պաշտպանական գիծը հարավում և արշավել մայրաքաղաքի վրա: Դրությունը չափազանց լուրջ էր և ծանր: Հարկավոր էր ոչ միայն կանխել գերմանացիների արշավանքը դեպի Մոսկվա, այլ և պաշտպանել Տուլան:

Եվ ահա սիբիրյան հրաձգային դիվիզիայի (դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Տերեշկով) առաջ մարտական խնդիր դրվեց՝ ինչ գնով էլ լինի կանգնեցնել և ապա հետ շպրտել գերմանացիներին Տուլայի տակ:

Հրամանատարության այդ մարտական առաջադրանքին դիվիզիայի մարտիկները պատասխանեցին միաձույլ վճռականությամբ.

— Մեռնել հայրենի Տուլայի համար, չթողնել գերմանացիներին առաջ անցնելու:

Գեներալ-մայոր Տերեշկովի և կոմիսար Հայրապետյանի ղեկավարությամբ, դիվիզիան նախօրոք կազմած ծրագրով անցավ գործողության: Տուլայի մատույցներում ծավալվեցին կատաղի և ծանր մարտեր գերմանա-ֆաշիստական ընտրովի զորամասերի դեմ:

Սիբիրցիները կռվի նետվեցին չտեսնված կատաղությամբ: Նրանք կռվում էին իրենց հոգու ողջ ատելությամբ ընդդեմ վայրագ թշնամու: Իրենց հմուտ հրամանատարների ղեկավարությամբ մարտիկները կռվի դաշտում ցուցաբերում էին կատարյալ հրաշքի օրինակներ: Դեկտեմբերյան դաժան սառնամանիքներին նրանք կռվի էին նետվում այնպիսի լարվածությամբ և արագությամբ, որ քրտինքն առվակների նման հոսում էր նրանց դեմքերից: Մերթ ընդ մերթ կռիվը վեր էր ածվում ձեռնամարտի և այն ժամանակ թշնամին մի անգամ ևս զգում էր ռուսական սվինի հարվածի ողջ թափն ու կատաղությունը: Թշնամին քայլ առ քայլ նահանջում էր, թողնելով կռվի դաշտում անհամար դիակներ, բազմաթիվ տանկեր, հրանոթներ, ավտոմեքենաներ և այլ ռազմամթերք:

Դեկտեմբերի 4—5-ին հիշյալ դիվիզիայի գնդերից մեկը Պետուխովի հրամանատարությամբ և կոմիսար Հայրապետյանի անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ, ճեղքելով թշնամու շղթան դուրս եկավ Կոլոդեզնայա գյուղի տակ, ուր կանգնած էր գերմանական ընտրովի զորամասերից մեկը՝ «Մեծ Գերմանիա» գունդը: Կատաղի և կարճատև մարտում «Մեծ Գերմանիա» գունդը հիմնովին ջախջախվեց: Գնդի շտաբը, շտաբի պետ Բրաուերի գլխավորությամբ գերի ընկավ մերոնց ձեռքը: Թշնամին թողեց կռվի դաշտում ահագին ավար և 1783 հոգի միայն սպանված:

Այդ ճակատամարտում առանձնապես աչքի ընկավ, ի թիվս այլ հրամանատարների, նաև կրտսեր լեյտենանտ Վիտկովսկին, որն իր դասակով աննկատելիորեն փակելով գյուղի գլխավոր ճանապարհը, գնդացրային կրակով ոչնչացրեց գյուղից դուրս եկող բոլոր ֆաշիստներին:

Հենց այդտեղ, Կոլոդեզնայա գյուղի տակ, թեժ կռվի մեջ ոտքից վիրավորվեց ինքը կոմիսար Հայրապետյանը: Սակայն չնայած վերքին, նա չհեռացավ մարտի դաշտից մինչև վերջ:

Նույնպիսի հերոսությամբ կռվեցին՝ Տուլայի պաշտպանության համար սիբիրյան հրաձգային դիվիզիայի մյուս բոլոր գնդերը: Մարտիկները ցուցաբերում էին խիզախության և հնարամտության չտեսնված օրինակներ: Նրանք հերոսաբար կռվում էին թշնամու գերազանց ուժերի դեմ, ջախջախում նրա տեխնիկան, ոչնչացնում կենդանի ուժը: Գերմանացիք շարունակ անցնում էին հակագրոհների, ամեն անգամ կռվի նետելով 50—60 տանկ: Սակայն մեր մարտիկներն առանց մի քայլ ետ նահանջելու, երբեմն իրենց խրամատների վրայով առաջ էին թողնում թշնամու տանկերը, իսկ հետո կտրելով տանկերը հետևակից՝ առանձին-առանձին ոչնչացնում էին թշնամու թե՛ տեխնիկան, թե՛ կենդանի ուժը:

5—6 կիլոմետր էր մնացել որպեսզի փակվեր Տուլան շրջապատող թշնամու օղակը երբ սկսվեց մեր զորքերի միահամուռ հակագրոհը: Թշնամուն չհաջողվեց իրագործել իր դիվային ծրագիրը: Այդ ծրագիրը խորտակվեց Կարմիր Բանակի հարվածների տակ: Թշնամին ոչ միայն չտեսավ Տուլան ու Մոսկվան, այլ և սոսկալի ջարդ ստանալով շպրտվեց հեռու դեպի Արևմուտք: Տուլայի տակ ջարդելով թշնամուն սիբիրյան հրաձգային դիվիզիան հետապնդեց նրան մինչև Կալուգա, ճանապարհին գրավելով հսկայական քանակությամբ ռազմավար: Կալուգան գրավելուց հետո, դիվիզիայի առաջ մի նոր խնդիր դրվեց՝ ինչ գնով էլ լինի գրավել Վարշավյան խճուղին, կտրել թշնամու կոմունիկացիաները: Հունվարի 17-ից մինչև փետրվարի 2-ը դիվիզիան գիշեր ու ցերեկ գրոհում էր թշնամու դիրքերը, մինչև որ փետրվարի 3-ին գրավեց խճուղին, հսկայական ջարդ տալով թշնամուն: Ամբողջ խճուղին ծածկված էր թշնամու դիակներով, փչացած տանկերով, ավտոներով և այլն: Փետրվարի 10-ին դիվիզիան գրավեց Յուխնովը:

Հայրենական պատերազմի պատմության մեջ միշտ վառ կմնան այն խիզախ մարտերը, որ Կարմիր Բանակը մղեց 1941 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Տուլայի տակ և ազատեց Տուլան թշնամու օղակումից: Այդ մարտերը ցույց տվին, թե ինչպես կարելի է հերոսաբար ու հմտորեն ոչ միայն կանգնեցնել, այլ և ետ շպրտել լկտիացած թշնամուն:

Տուլայի համար մղված այդ հերոսական մարտերում հսկայական ծառայություն է մատուցել սիբիրյան N հրաձգային դիվիզիան գեներալ-մայոր Տերեշկովի և ավագ գումարտակային կոմիսար Ս. Հայրապետյանի ղեկավարությամբ, որը և գրված է Բանակի շտաբից ընկ. Հայրապետյանին տրված բնութագրի մեջ: Սիբիրյան հրաձգային դիվիզիան իր մարտական ծառայությունների համար արժանացավ Գվարդիական կոչումին և պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով:

ՄԵՐՈՆՔ

Այս պատերազմը կվերջանա Հիտլերի կործանումով։ Կջախջախվեն նրա գազանաբարո բանակները և դարչնագույն ժանտախտից ազատագրված մարդկությունն իրեն հաշիվ կտա, թե ֆաշիստական խաժամուժի դեմ ուղղված սրբազան պատերազմում ո՞վ նետվեց առաջին շարքերը, ո՞վ դասալքեց, ո՞վ դավաճանեց համաշխարհային առաջընթացի գաղափարին և անցավ հիտլերյան ավազակապետների ճամբարը։

Եվ պատմության էջերում բոցեղեն տառերով կդրոշմվի հայ ժողովրդի անձնուրաց պայքարը, որ արձանագրում են այսօր բարեկամները հիացմունքով և թշնամիները՝ չարությամբ։

N ռազմաճակատի հրամանատարությունն իր հեռագրերից մեկում հաստատեց, որ մեր զորամասերը վճռական դեր խաղացին գերմանական 22-րդ զրահատանկային դիվիզիայի ջախջախման գործում։ «Կայսերական Գերմանիայի ֆելդմարշալ» ավազակ Գյորինգն իր ջարդարար հրահանգում գանգատվում է, թե հայերն անբարյացակամորեն են տրամադրված հիտլերյան Գերմանիայի հանդեպ։ Ժողովրդասպան ֆաշիստները դժգոհում են մեզանից։ Հայ ժողովուրդը պարծենում է դրանով։ Կարող ենք պատմել մանրամասնություններ նրանց 22-րդ զրահատանկային դիվիզիայի ջախջախումից։

Ռմբակոծված մի տան փլատակների մեջ գումարված է N զորամասի պարտիզան ակտիվի նիստը։ Զինվորական համազգեստները ձուլված են գորշագույն քարերի և հողակույտերի հետ։ Վերևից անընդհատ անցնող բազմաթիվ սավառնակները հազիվ թե նկատեն այդտեղ կուտակված բազմությունը։ Ճակատագծին մոտիկ անընդհատ տեղի ունեցող օդային ռմբակոծություններից դղրդում ու դողում է ամբողջ դաշտը։ Վերևում սկսվում է օդային մարտ։ Տասնյակ ինքնաթիռներ ճարպիկ ճախրումներով պտտվում են իրար շուրջ և մերթ ընդ մերթ վերևից լսվում է գնդացրային ցասկոտ կրակոց։

Նիստը շարունակվում է։ Արևավառ-արծվային հայացքների խաչաձև կրակի տակ խոսում է ընկ. Թ. Շահինյանը, նա՛, որ առաջիններից մեկը մտավ թշնամու պաշտպանության խորքը և կրնկակոխ հետապնդեց խուճապահար Ֆրիցներին մինչև այսօրվա բնագիծը։

— Ինձ հետ միասին հրամանատարական կետում կանգնած էր գեներալը,— շարունակում է նա՝ լոսեցու իր պարզ ու խելացի հայացքը հառած ժողովականներին։— Մենք հեռադիտակով հետևում ենք մեր ստորաբաժանումների հարձակմանը։ Իր ստորաբաժանումն աննման վարպետությամբ էր առաջ տանում հրամանատար ընկեր Սկոպովը։ Թշնամու խաչաձև կրակի տակ պառկելով և առաջ նետվելով՝ մեր ստորաբաժանումները հասան դրոհի բնագծին, առանց զոհեր տալու։ Գեներալը հիացմունքով էր նշում մեր զորամասի հարձակման թափն ու արվեստը։ Նա ցանկություն հայտնեց մի որևէ նշանավոր գրողի պատմել այդ օրվա իր տպավորությունները։ Այդ ժամանակ թշնամին անցավ հակագրոհի։ Նրա տանկային շարասյուները երևացին մեր առաջ և ձախ թևերից։ Սկսվեց կատաղի ճակատամարտը, որի մեջ աչքի ընկան բազմաթիվ մարտիկներ ու հրամանատարներ։ Նրանցից շատերն այստեղ են, ձեր շարքերում նստած... Այդ գերմանական 22-րդ զրահատանկային դիվիզիան էր, որ հենց նոր էր եկել Ֆրանսիայից։ Նրանց տանկերի մեծ մասը ոչնչացավ, իսկ տանկերի ետևից եկող գերմանական հետևակը գլխովին բնաջնջվեց։

Խոսքը տրվում է մարտյան ճակատամարտերում հռչակված քաղդեկ Պապիկ Ավալյանին։ Նա ոտքի է կանգնում։ Թիկնեղ, լայներես ու արծվաքիթ մի երիտասարդ։ Ավալյանը չի սիրում կամ չի կարող պատմել իր մասին։ Դեռ նիստից առաջ բլինդաժի մոտ նրան հարց տվինք.

— Պատմեցե՛ք, ընկե՛ր Ավալյան, ի՞նչ եք արել, որ ձեզ ներկայացրել են շքանշանի:

— Արել եմ այն, ինչ որ պարտավոր էի անելու,— պատասխանեց նա ամաչկոտ ժպիտով:

Նիստում ունեցած իր ելույթով նույնպես Ավալյանը բան չասաց իր մասին: Շտապում ենք բլինդաժները, որ խոսել տանք Ավալյանի մարտական ընկերներին:

***

Տեղատարափ անձրևի տակ խլրտում է հսկայական ռազմաճակատը: Անցնում են բեռնատար մեքենաներ՝ ցեխի հսկայական շերտեր սփռելով ճանապարհի այս ու այն կողմը: Մինչև ծնկները ցեխի մեջ՝ անընդհատ դեպի ճակատ են գալիս համալրումներ:

Մի կերպ գտնում ենք ստորաբաժանման հրամանատարական բլինդաժը: Անձրևաջուրը ներխուժում է գետնափորը, որի բնակիչներն ուրախ կատակներով են մղում բնության չարաճճի հակագրոհները: Թշնամու հեռաձիգ արկերը մնդատալով անցնում են վերևից և ինչ որ տեղ պայթում: Այդ ոչ մի ազդեցություն չի գործում այս մարդկանց վրա: Նրանք լսել են ավելի աչխույժ երաժշտություն...

Բլինդաժի մուտքից գլուխը ներս է մտցնում կանոնավոր, ամուր ղիմագծերով երիտասարդ մի բանակային և դեռ կուսացած պատվի է բռնում.

— Ընկե՛ր հրամանատար, թույլ տվե՛ք՝ «մարտիկ Արտավազդ Ալավերդյան», ներկայանում եմ ձեր հրամանով:

Դա այն Արտավազդն է, որի մասին խոսք եղավ պարտիական ակտիվում: Հրամանատարը նրան թույլ է տալիս ներս գալ և կանգնել իր ամբողջ հասակով: Բարեկազմ ու գեղեցիկ մի երիտասարդ: Սա այն Արտավազդն է, որ Ալավերդու պղնձաձուլարանում իբրև հալոցի վարպետ՝ իր ստախանովյան աշխատանքի համար չատ անգամ է պարգևատրվել արժեքավոր իրերով: Նա սովետական կուլտուրական բանվորի իսկական տիպար է: Ունի մանկավարժական կրթություն, կարդացել է մայրենի գրականությունը, հետակայել է Մոսկվայի մետալուրգիական ինստիտուտին, ընտրվել է Կոմսոմոլի Կենտկոմի անդամ: Եվահա Արտավազդը գալիս է Կարմիր Բանակ՝ պաշտ-

պանելու համար այն երջանկությունը, որ նա ձեռք է բերել տարիների քրտնաջան և ազնիվ աշխատանքով:

Մարտի 20-ին, գերմանական 22-րդ գրոհատանկային դիվիզիայի դեմ պայքարելիս Արտավազդի ստորաբաժանումը շրջապատվեց: Ետ դառնալու հնարավորություն չկար: Ստորաբաժանման հրամանատարը շարքից դուրս էր եկել: Մնացել էր երկու ընտրություն. դիմադրել մինչև հերոսական վախճանը կամ հանձնվել ֆաշիստներին՝ գերության մեջ ամոթալի մահով մեռնելու համար:

Այն ժամանակ խրամատից բարձրացավ քաղղեկ Պավլիկ Ավալյանը և իր լայն ու ամուր ծնոտների ամբողջ ուժով բացականչեց.

— Ոչ ոք չհանձնվի. կպայքարենք մինչև արյան վերջին կաթիլը: Ես ստանձնում եմ հրամանատարությունը:

— Եվ 30 հոգի Ավալյանի հրամանատարությամբ սկսեցին խրամատավորվել: Նրանցից մեկը միայն, մի փոքրոգի, ձեռքերը վեր բարձրացրեց և ուզում էր գերի հանձնվել: Բայց Արտավազդը նրան տեղն ու տեղը գնդակահարեց: Սկսվեց անհավասար ճակատամարտը: Շրջապատվածներն ունեն միայն մի գնդացիր: Հակառակորդն զգում էր, որ գործ ունի փոքրաթիվ ստորաբաժանման հետ, ուստի անցավ «հոգեկան գրոհի»: Գազլու էին ամբողջ հասակով կանգնած և անվարժ հայերենով ձայն տալիս.

— Մի՛ կրակեք... ձեզ բան չենք անի...

Հայ ժողովրդի հավատարիմ զավակները երեք անգամ ետ շպրտեցին հոգեկան հիվանդների այդ պարծենկոտ գրոհները: Գնդացրի սկավառակները վերջացան: Դրությունը դառնում էր տագնապալի:

— Ո՞վ հանձն կառնի գնալ և սկավառակ բերել,— հարց է տալիս Պավլիկ Ավալյանը:

— Ես,— պատասխանում է Արտավազդը և խրամատից դուրս սողում:

Հակառակորդի գնդացրային և ականանետային խաչաձև կրակի տակ նա սկսում է սողալ դեպի մեր հիմնական բնագիծը: Հակառակորդը նկատում է այդ համդուգն ձեռնարկությունը և ձգտում է ամեն կերպ խափանել՝ Արտավազդի վրա կենտրոնացնելով գնդացրային կրակը: Մահը սուլում է խիզախ երիտասարդի ականջի տակ: Բայց Արտավազդը նախորդ կռիվների ըն-

թացքում ձեռք է բերել հակառակորդի կրակից պաշտպանվելու հմտություն: Նա խաբս է տալիս, անշարժանում և ձևանում է սպանված: Հենց որ մեղմանում է կրակը, նորից սկսում է առաջ սողալ: Մահվան կատաղի շաչյունների տակ փորսող տալով՝ նա անցնում է մոտ 90 մետր տարածություն և արդեն հասնում է մեր պաշտպանության բնագծերին: Նա արդեն դուրս է եկել շրջապատումից, ազատված է: Նրա գլխով վայրկենապես անցնում է սիրելի կնոջ նամակը, որ վերջերս է ստացել: Երևակայության մեջ բոցավառվում է իր երկու տարեկան տղայի ժպիտը: Կինը գրում է, թե իրենք շատ լավ են ապրում և հպարտ են Արտավազդով: Նրանք հպարտ են... Արտավազդը կուզեր այդ վայրկյանին լինել նրանց կողքին, նայել նրանց հարազատ աչքերին և պատմել, նկարագրել իր այդ օրվա օրհասական փորսողը... Բայց հարկավոր է վերադառնալ շրջապատման մեջ մնացող ընկերների մոտ, հարկավոր է կրկնել դժոխային փորսողը, անցնել մահվան նույն ճանապարհով:

Եվ նա վերադառնում է ընկերների մոտ՝ բերելով վեց սկավառակ:

Նրանք հետ մղեցին էլի մի «հոգեկան» գրոհ: Միայն Արտավազդը հմուտ նշանառությամբ «քնացրեց» ինչպես ինքն էր արտահայտվում, տասը ֆաշիստ: Հակառակորդը մոլեգնեց, տեսնելով, որ չի կարող ընկճել փոքրաթիվ շրջապատվածների դիմադրությունը: Նրանց դեմ շպրտվեց մի տանկ: Ջոկի հրամանատար Վլաս Կարապետյանը, սովետական այդ երիտասարդ ուսուցիչը, Դեգտյարյովի գնդացիրը սեղմեց կրծքին և ուղղեց դեպի ֆաշիստական տանկի դիտանցքը: Գնդացրի կարճատև ճարճատումից հետո տանկը կանգ առավ: Տանկիստը խփված էր: Այնուհետև եկավ երեք տոննանոց հետախույզ ավտոմեքենան: Վլասն այդ մեքենան էլ խփեց:

Այդ ժամանակ սկսվեց հակառակորդի տանկային հակագրոհը: Շրջապատվածների ուղղությամբ գալիս էին 45 տանկ: Նրանք արդեն 25 մետր հեռավորության վրա էին: Օդը լցվեց ահռելի դղրդոցով: Մերոնք սկսեցին նռնակներ նետել տանկերի վրա՝ բացականչելով.

— Հանո՛ւն հայրենիքի, հանո՛ւն Ստալինի...

— Մեզ մի վայրկյան թվաց, թե այդ արդեն մեր վերջն է,— ծանր շնչեց Արտավազդը՝ վերհիշելով այդ օրհասական վայրկյանը:

Բայց այդ պահին սկսեցին որոտալ զորամասի ականանետները՝ հրետանու հրամանատար Բագրատ Դանիելյանի ղեկավարությամբ: Հակառակորդի տանկերը կանգ առան: Շրջապատվածների գլխի վրա երևացին մեր ռմբակոծիչները: Փրկության ձայնը որոտաց: Սկսեց երգել նաև մեր ստալինյան հրետանին, որից սարսափում էին ֆաշիստական տանկերն ու ականաձիգներն այնպես, ինչպես գազաններն են սարսափում անտառում առյուծի մռնչոցը լսելիս: Հակառակորդի տանկերը մասամբ այրվեցին, մասամբ հետ փախան: Շրջապատվածներն սկսեցին կրակել ու ոչնչացնել նրանց հետևակը: Շուտով երևացին նաև մեր տանկերը և ավարտեցին գերմանական զորքերի և տանկերի ջախջախումը: Պապիկ Ավալյանի ստորաբաժանումը դուրս եկավ շրջապատումից՝ տալով միայն մեկ զոհ և իր հետ բերելով ռազմավար ու գերիներ:

Սա մի դրվագ էր գերմանական 22-րդ զրահատանկային դիվիզիայի ջախջախման դյուցազնագրքից: Այստեղ երևացին (ոչ իրենց ամբողջ հասակով) մերոնցից միայն մի քանիսը: Բայց նրանք շատ են, բազմաթիվ են նրանց սխրագործությունները: Նրանց ոգևորում է այն պարզ գիտակցությունը, որ պաշտպանում են մեծ Սովետական Միությունը, հետևաբար՝ իրենց հայրենիքը, իրենց ազգային դարավոր կուլտուրան: Եվ իզուր չէ, որ կարճատև հանգստության պահերին զորամասի մարտիկները, քաղաշխատողներն ու հրամանատարները բլինդաժներում հավաքված, օրն ի բուն չլռող թնդանոթային դղրդոցների տակ երգում են հայ ժողովրդական երգերը՝ Սայաթ-Նովա և Կոմիտաս, Աշուղ Շերամ և Աշուղ Գրիգոր, Արարատի և Շիրակի երգերը...

Մերոնք այդ երգն են պաշտպանում:

1942—ապրիլ
Գործող բանակ

ՄԱԼԽԱՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Անկանխատեսելի մի բարձունք գրավելուց հետո գերմանական եֆրեյտոր Շերլոկին մերոնք վերցրին գերի: Հարցաքննության ժամանակ գերի եֆրեյտորը այսպիսի ցանկություն հայտնեց.

— Ես կուզենայի տեսնել երեք եղբայրներին: Առաջին անգամը չէ, որ նրանք չնչին ուժով մեր մեծաթիվ ստորաբաժանումները դուրս են շպրտում ամրացած կետերից...

Գերմանական եֆրեյտորի ցանկությունը չկատարվեց, որովհետև Մալխասյան եղբայրներն այդ պահին գտնվում էին մարտական խրամատներում: Բայց մենք հաճույքով մեր ընթերցողներին կծանոթացնենք մայոր Մուշեղ Մալխասյանի և նրա քաջ եղբայրների՝ Կարոյի և Հովիկի հետ:

Նրանք սասունցիներ են: Ահա Մուշեղը, խոշոր ու կլորկոտ աչքեր, ահագին սապատավոր քիթ, որ ստեղծված է կարծես աշխարհի գործերին անպայման միջամտելու համար: Անգամ կյանքի ամենաձախորդ պահերին նա անընդհատ ծիծաղում է՝ բաց անելով իր երկար և ամուր ատամները: Նրա ճաղատ գլուխը մի ժամանակ ծածկված է եղել խիտ գանգուրներով և ընդունակ իր վրա գրավելու ամենահպարտ գեղեցկուհու ուշադրությունը: Մուշեղը քայլում է թեթևակի կռացած, կարծես շարունակ պատրաստ՝ դիմագրավելու վտանգը: Կարոն հիշեցնում է Մուշեղին, բայց նա իր ավագ եղբոր մեղմացրած և ավելի տաշված արտահայտությունն է: Այլ է Հովիկը: Նա ամենից կրտսերն է, ամենից բարձրահասակն ու հաղթանդամը: Նրա դեմքը թախծոտ է և կենտրոնացած, գուցե Խալխին-Գոլում ստացած կոնտուզիայի հետևանքով: Նրա քայլերը զուսպ են և հայացքը հեռախույզ: Դա վագրի մեղմությունն է՝ հակառակորդի վրա հարձակվելուց առաջ: Մուշեղը չի սխալվել կրտսեր եղբորը հետախուզական ստորաբաժանման հրամանատար նշանակելով: Հովիկը գերմանացիների թիկունքից բնավ չի վերադառնում ձեռնունայն, առանց «բերանի»: Մեկ էլ տեսար՝ մի քանի օրվա բացակայությունից հետո՝ վերադառնում է նա մի որևէ Ֆրիցի ընկերակցությամբ, հետը քաղցր զրույց անելով: Մալխասյան չորրորդ եղբայրը՝ Անտոնը անցյալ տարի զոհվեց Լենինգրադի ճակատում: Նրա հետ դժբախտաբար մենք ծանոթ չենք եղել:

***

Մալխասյան ընտանիքի պատմությունը կարող է նյութ դառնալ մի այնպիսի վեպի, որի մեջ արտացոլվում է հայ ժողովրդի կյանքը քառորդ դարում: Գուցե երբևիցե մեզ հաջողվի գրել այդ վեպը: Առայժմ բավականանանք սխեմատիկ հիշատակումներով:

Մելքոն և Հերիքնազ Մալխասյանները զինված և զինելով իրենց տասը տարեկան Մուշեղին՝ փախչում են բռնակալությունից և ապաստանում Մարիուպոլ քաղաքում: Հայրը մահանում է: Ընտանիքը ցրիվ գալիս: Մուշեղը 15 տարեկան հասակում կամավոր կերպով մտնում է Կարմիր գվարդիա և մասնակցում քաղաքացիական կռիվներին: Այնուհետև Ամերկոմի որբանոցներում իրար գտնում են մայրն ու եղբայրները: Մուշեղի որբանոցային ընկերները հիացմունքով են նկարագրում նրա խիզախ և ընկերասեր բնավորությունը: Նա չէր կարողանում հաշտվել որբանոցային կիսաքաղց վիճակի հետ: Առավոտից մինչև երեկո նա իր անվրեպ «ռոգատկայով» թռչուններ էր որսում և կերակրում մտերիմ ընկերներին: Մուշեղը ոչ ոքից չէր վախենում, ո՛չ որբանոցային խոժոռ խնամակալներից, ո՛չ էլ փողոցային տուրուդմբոցների մեջ թրծված խուլիգաններից: Նա նրանց անխնա պատժում էր իր ընկերներին հասցրած ամեն մի վիրավորանքի համար: Մուշեղի բոցավառ աչ-

քերն ու սապատավոր քիթը հրազենի ներգործության էին ուննենում հակառակորդի վրա:

1922 թվին Մուշեղը դուրս եկավ որբանոցից և մտավ Երևանի հրամանատարական դպրոցը: Այդ օրվանից նրա կյանքն անխզելի կապերով միացավ Կարմիր Բանակին:

Հայրենական պատերազմը խթանեց ականավոր սնայպեր մայոր Մալխասյանին և նա ռազմական սանձակոծ նժույգի նման բարձրացրեց գլուխը և կրակոտ հայացքը հառեց Արևմուտքին: Նրա զորամասը դեռ Հայաստանումն էր: Մուշեղը հեռագրերով ռմբակոծեց Մոսկվայի ռազմական հիմնարկները: Խնդրում էր, որ իրեն անմիջապես ճակատ ուղարկեն: Վերջապես նրա խընդրանքը հարգեցին:

Բանակում և պարտիայի շարքերում Մուշեղը կոփվեց ու ձևավորվեց՝ ինչպես ձույլ երկաթը բլյումինգի մամլիչների մեջ: Պատանեկական հախուռն գծերն ազնվացան և կազմեցին բոլշևիկ հրամանատարի նրա բնութագիրը: Նա առաջվա նման խանդավառ է և անհկուն: Պատանեկական անզուսպ խիզախությունը տեղի է տվել փորձված ու չրջահայաց ռազմիկի արիությանը: Նրա ընկերասիրությունը խորացել և դարձել է անձնուրաց սեր դեպի սովետական հայրենիքը, դեպի Կարմիր Բանակը, դեպի իր անմիջական մարտիկները:

Ճակատում Մուշեղը գտավ իր եղբայրներին և նրանց հետ միասին անցավ հիտլերական հափշտակիչների դեմ ուղղված մոլեգին մարտերի դպրոցը: Ճակատից ուղարկած իր մի նամակում նա գրում է.

... «Հովիկը տանկեր կործանող գումարտակի հրամանատար է, իսկ Կարոն՝ կապավոր: Եղբայրներս ինձ խոսք են տվել, որ թույլ չտան իմ զորամասի թիկունքն անցնելու ֆաշիստական ոչ մի տանկի: Եվ նրանք բոլշևիկորեն կատարում են իրենց եղբայրական խոսքը: Ֆաշիստական տանկերը սարսափելի չեն Մամիկոնյան տոհմի զավակների համար—այս է մեր երեք եղբայրների նշանաբանը: Բարևիր մեր գրողներին և գիտնականներին՝ Ավետիք Իսահակյանին, Դերենիկ Դեմիրճյանին, Հայկ Գյուլիքևխյանին, Հրաչյա Աճառյանին և մյուսներին. ասա, որ մենք չենք խնայի մեր արյունը՝ պաշտպանելու համար սովետական արևի տակ վերածաղկած հայ ժողովրդի մեծ կուլտուրան...»:

***

Ռազմաճակատային շտաբում ավագ գումարտակային կոմիսար ընկեր Սարգսյանն ինձ հարց տվեց.

— Դուք ճանաչո՞ւմ եք մայոր Մուշեղ Մալխասյանին:

— Այո, ճանաչում եմ,— պատասխանեցի ես,— դուք ի՞նչ գիտեք նրա մասին:

— Նա իր երեք եղբայրների հետ միասին մեծ համբավ է վայելում այստեղ: Մուշեղ Մալխասյանը 50 մարտիկ վերցնելով իր հետ՝ գրավեց ականաձգային մի բարձունք, որ մեզ շատ գլխացավանք էր պատճառում: Նրա եղբայրներից մեկը հերոսաբար զոհվեց:

— Ո՞ր եղբայրը, Հովի՞կը, թե Կարոն...

— Ես նրանց չեմ ճանաչում, հաճախ կարդացել եմ նրանց մասին մեր ճակատի ամփոփագրերում և թերթում:

— Ախո՜ս...

Մենք միաժամանակ արտասանեցինք այս խոսքը և այնուհետև չխոսեցինք այդ մասին մինչև N զորամասի բլինդաժները: Քաղբաժնի պետ Սուրեն Թովմասյանի «կաբինետում» մեզ դիմավորեցին ուրախության աղմուկներով: Աղոտ լապտերի ծատակ փայլում էին հրամանատարների և քաղաշխատողների ծանոթ ու հարազատ աչքերը:

— Ձեզանից ո՞վ է տեսել մայոր Մուշեղ Մալխասյանին,— հարց տվի ես բարձրաձայն:

Մութ անկյունից դուրս ցատկեց զինվորական մուշտակի մեջ փաթաթված Մուշեղը՝ գոռալով իմ անունը:

— Կարոն սպանվեց,— ասաց Մուշեղն ինձ հետ գրկախառնվելուց և համբուրվելուց հետո,—իսկ ես մրսել եմ, այդ պատճառով էլ, տեսնո՞ւմ ես՝ դողացնում եմ:

Նա օգտագործում էր իր հիվանդությունը եղբայրական վիշտը աքողելու համար: Ես խնդրեցի, որ Հովիկի մասին էլ տեղեկություն տա: Նա հայտնեց, որ Հովիկն այժմ գտնվում է հետախուզության մեջ:

— Պատմիր, թե ի՛նչպես վերցրիր ականաձգային բարձունքը,— հարց տվի ես անհամբերությամբ:

— Եկ իմ գունդը, թող ուրիշները պատմեն,— խույս տվեց նա և սկսեց հարց ու փորձ անել ինձ, Երևանի մեր ընդհանուր ծանոթների մասին: Ես պատմեցի, որ բոլորն էլ լավ են,

բարևում են, որ ես հաճախ հանդիպում եմ Լյուբային և Ժանիկին, որ նրանք զանգատվում են միայն Մուշեղից ուշ-ուշ նամակներ ստանալու համար: Կնոջ ու երեխայի անունը լսելիս Մուշեղը դարձյալ հիշեց իր հիվանդությունը և սկսեց դողալ...

Թեև ես նրանից դուրս կորզեցի ականաձգային բարձունքի պատմությունը, բայց դա դուրս եկավ շատ չոր ու ցամաք: Մուշեղը չէր սիրում կանոնավոր պատմել: Մանրամասնությունները այնուամենայնիվ ուրիշներից իմացա:

Այդ բարձունքում ամրացած գերմանական մի դումարտակ երկար ժամանակ դիմադրում էր մեր զորամասերի կատաղի գրոհներին և խանգարում մեր առաջխաղացումը: Նրանք զինված էին ականանետներով, գնդացիրներով և ավտոմատներով: Ունեին նաև թնդանոթներ: Թշնամին լավ խրամատավորվել էր և քողարկվել: Աննշմարելի և անհայտ բներից նրանք ականների, արկերի և գնդակների կարկուտ էին տեղում մեր գրոհողների վրա: Անհրաժեշտ էր դուրս շպրտել նենգ թշնամուն իր կրակե բներից՝ առանց մեծ զոհեր տալու: Հրամանատարությունն այդ պատասխանատու խնդիրը դրեց մի շարք մարտերում արդեն հռչակված մայոր Մալխասյանի վրա:

— Կա՛, այս գիշեր գրավել ականաձգային բարձունքը,— ձգվեց Մուշեղը՝ իր կրակոտ աչքերը հառելով հրամանատարի դեմքին:

Նա առավոտից սկսեց տենդային նախապատրաստություն տեսնել: Նրա սիրելի մարտիկներից մեկը՝ վրացի լեյտենանտ Ռուռուշաձեն, որ այժմ բուժվում է զինվորական հիվանդանոցում, պատմում է.

— Մայորն ամբողջ օրն անընդհատ հեռադիտակով խուզարկում էր բարձունքը: Իզուր էինք խնդրում նրան, որ գեթ ճաշելու համար մի քիչ հանգստանա: Առանց հեռադիտակն աչքերից իջեցնելու՝ նա միայն կրծում էր չինելի գրպանը դրած սև հացը: Մայորը շատ էր սիրում նաև երկու հոգու. մարտիկ Հովհաննես Մկրտչյանին, որ մի գեղեցիկ ու քաջ հայ տղա էր և ադրբեջանցի մարտիկ Ալիմին: Նրանք երկուսն էլ մայորի թիկնապահներն էին:

Ալիմը չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ իր սիրելի հրամանատարը կատաղի ճակատամարտից առաջ պիտի սնվի

միայն ցամաք հացով: Ուստի մոտեցավ և մի կողմ թողնելով զինվորական ձևականությունը՝ ուղղակի բռնեց նրա թևից.

— Կարդաշ Մուշեղ, ախր կաշան սառչում է: Հրամայի՛ր, այստեղ բերեմ...

Մուշեղը մի վայրկյան միայն հեռադիտակը վար առավ աչքերից և կեղծ բարկությամբ նայեց Ալիմին.

— Ես քեզ համար «կարդաշ Մուշեղ» չեմ, այլ «ընկեր հրամանատար», ինձ մի՛ խանգարիր:

Ալիմը գլուխը թափահարեց և այլևս հրամանատարի հետ խոսելու համարձակություն չունենալով՝ դիմեց իր կողքին կանգնած Հովհաննեսին.

— Նա մեզ համար հրամանատար էլ է, եղբայր էլ, հայր էլ...

Հակառակորդի դիրքերը լավ տնտղելուց հետո Մուշեղն իր գնդի մարտիկներից ընտրեց ընդամենը հիսուն հոգի, քաջ և անձնուրաց այնպիսի տղաներ, որոնք պատրաստ էին հրամանատարի ետևից նետվել թեկուզ մահվան անդունդը: Նա այդ փոքրաթիվ զորամասը դասավորեց և ամբողջ գիշեր յուրաքանչյուրին բացատրում էր նրա անելիքը: Նախապես հրացանները լցված էին և նռնակները՝ պատրաստ: Գիշերով գաղտագողի մոտեցան թշնամու դիրքերին և հանկարծակի գրոհ տվին. գերմանացիները բլինդաժներից քնաթաթախ դուրս թռան և շփոթված սկսեցին փախչել այս ու այն կողմ: Նրանց գնդացիրները մերոնց այլևս չէին կարող վնասել, որովհետև մերոնք արդեն խառնվել էին նրանց հետ և անցել սվինամարտի: Իսկ նրանց ականաձիգները կարծում էին, թե մերոնք նոր են սկսել հարձակումը. ուստի խփում էին մեր զորքերի թիկունքը:

Մուշեղի աչքի առաջ մի հայ կարմիրբանակային սվինահարեց վեց գերմանացու: Մեկ ուրիշը նռնակ նետեց հակառակորդի բլինդաժը, որտեղից դուրս փախավ մի սպա: Նրանց հրթիռների լուսավորության տակ Մուշեղը նագանով գնդակահարեց շփոթված սպային: Մի ուրիշ բլինդաժից Մուշեղի վրա նետեցին նռնակների խուրձը: Մարտիկներից մեկը, մի սասունցի հսկա, վայրկենապես գրկեց սիրելի հրամանատարին ու մի կողմ նետեց՝ փրկելով նրա կյանքը, զոհ գնալով նռնակին: Հենց ռազմի դաշտում, ականների հրեղեն անձրևի տակ, Մուշեղը կատարեց իր ազատարարի փառավոր թաղումը—դրոշակի խոնարհումով և հրաժեշտի համազարկով:

Հերոսներ—5

— Ես նրա անունը չգիտեի, թեև դեմքը լավ էի ճանաչում,— ափսոսում էր Մուշեղը,— և դեռ մինչև այսօր էլ չեմ կարողացել պարզել: Բայց ինչ գնով էլ լինի՝ կիմանամ...

Կատաղի ճակատամարտը տևեց քսան րոպե, որի ընթացքում միայն Մուշեղը նագանով գնդակահարեց տասներկու գերմանացի: Հակառակորդը խուճապահար նահանջեց՝ կռվի դաշտում թողնելով յոթանասուն սպանված, տասնհինգ գերի և շատ ռազմավար:

Մենք տվինք երկու սպանված, երկու վիրավոր:

Խնդիրը կատարված էր փայլուն հաջողությամբ:

Ականաձգային բարձունքի գրավումը թնդաց ռազմաճակատում և բազմաթիվ տարբերակներով նկարագրվեց ճակատային թերթերում:

Մուշեղի կարծիքով սպանվածներից մեկն իր եղբայրն էր: Բայց նա երջանիկ թյուրիմացության մեջ էր: Թիկունքային զորամասերից մեկում մենք պատմում էինք մեր տպավորությունները ռազմաճակատից: Հավաքույթի վերջում մեզ մոտեցավ գեղեցիկ ու վայելչակազմ մի զինվորական և առաջարկեց իր ծանոթությունը:

— Դուք ինձ երևի մոռացել եք. ես Կարոն եմ՝ Մուշեղի եղբայրը:

— Կարո՞... բայց չէ՞ որ դուք սպանված եք:

Կարոյի սպանվածության մասին տարածված լուրը, ինչպես կասեր Մարկ Տվենը, չափազանցված էր: Նա վիրավորված է եղել ձեռքից, բայց չի սպանված: Նրա վերքն արդեն լավացել էր և Կարոն շտապում է վերադառնալ ճակատ իր մարտական ընկերների և եղբայրների մոտ՝ նորից վերականգնելու մեր ստորաբաժանումների հեռախոսային կապը, բլուրից բլուր սուրալով հակառակորդի խաչաձև կրակի տակ:

Ապրիլ 1942 թ.
Գործող բանակ



ՕՋԱԽԻ ՊԱՐԾԱՆՔԸ

Աշոտ Օհանյանը նստած սեղանի մոտ՝ դասերն էր պատրաստում: Այս տարի նա պետք է ավարտեր միջնակարգ դպրոցը և ուզում էր բոլոր առարկաներից գերազանց լինել:

Երբ լուծեց հանրահաշվական մի բարդ խնդիր՝ ուզեց մի քանի րոպեով թարմանալ: Դուրս գալով բակը՝ մի քանի անգամ հետ ու առաջ գնաց, բայց ոչ մի բանի վրա չկարողացավ կենտրոնանալ: Գետնից վերցրեց թթենու մի տերև, տրորեց մատների արանքում ու նորից մտավ սենյակը: Ի՞նչ պիտի աներ դպրոցն ավարտելուց հետո, ի՞նչ ապագա էր սպասում իրեն: Նա այս հարցով շատ էր զբաղվել, բայց դեռ որոշակի բան չէր ձեռնարկել: Սենյակ մտնելով նա մի պահ չկարողացավ վերստին զբաղվել դասերով: Մոտեցավ պահարանին, բացեց և ձեռքն ընկավ թղթերի մի կապոց: Ծանոթ թղթեր էին, կարդացել էր մի քանի անգամ. նկատել էր, որ հայրը՝ Մաթևոսը առանձին խնամք էր ցուցաբերում դեպի մի քառածալ թուղթ: Այժմ նա բացեց այդ թուղթը և կարդաց: «Դուք Հոկտեմբերյան ռևոլյուցիայի սկզբից չխնայելով ձեր ուժերը, կանգ չառնելով որևէ դժվարության առաջ՝ զենքը ձեռքներիդ պայքարեցիք հանուն սոցիալիզմի հաղթանակի»:

Հայրը քաղաքացիական կռիվներին մասնակցում էր իբրև

պարտիզան։ Նա այդ ուղերձն ստացել էր Բաղսովկայից։ Այո, հոր համար թանկ էր այդ հիշատակը։ Նա հիմա էլ դեռ ամուր է և պատրաստակամ՝ ամեն տեսակ դժվար աշխատանքի։ Եվ այժմ, երբ Աշոտը կարդաց այդ գրությունը, ամեն ինչ նոր իմաստ ստացավ նրա համար։ Նա կարծես արդեն որոշեց իր ապագան։ Մի երջանիկ մտքով տոգորված՝ նա նորից նստեց իր դասերը սովորելու։

Անցավ մի երկու շաբաթ և Աշոտը դպրոցից տուն վերադարձավ ուրախ տրամադրությամբ։ Պայուսակի հետ միասին սեղանին դրեց Պուշկինի գեղեցիկ միհատորյակը, մի քանի հատ լավ կազմած ընդհանուր տետր և մի թանկարժեք գրիչ։ Ապա վերցրեց մանդոլինան և սկսեց նվագել մի ուրախ՝ հայկական պարեղանակ։

Մայրը՝ Սաթենիկն ուշադիր նայեց իր տղայի բերած «Պուշկինին», տետրերին, գրչակոթին և հարցրեց.

— Նո՞ր առար։

— Նոր ստացա։

— Ո՞ւմից։

— Նվեր ստացա, մամա՛ ջան, նվեր,— պատասխանեց Աշոտը, մի քիչ իջեցնելով նվագի տոնը։

— Լավ սովորելու համար, հա՞, ապրե՛ս։

— Չէ, մայրի՛կ,— պատասխանեց Աշոտը մի կողմ դնելով մանդոլինան,— այս անգամ լավ կռվելու համար եմ ստացել։ Այս երկու շաբաթվա ընթացքում անընդհատ պատրաստվում էի, սովորում հրացանի մասերը, և այսօր նշանակետին խփեցի գերազանց։ Մեզ մոտ գերազանց նշան խփողին այսպես են գնահատում։

Մայրը խանդաղատանքով մոտեցավ, համբուրեց Աշոտի ճակատը և շնորհակալեց ճաշի պատրաստություն տեսնել։

Աշոտը նորից վերցրեց մանդոլինան և այս անգամ սկսեց նվագել մի հաղթական քայլերգ։

Այնուհետև հաճախ էր Աշոտը տուն գալիս՝ ծանրաբեռնված նվերներով։ Աշոտը վարժ ձեռքեր ուներ, հաճախ ազատ ժամերին գործի էր դնում սղոցն ու մուրճը։ Մեծ խնամքով նա պատրաստեց զրահանավի մի մոդել, ապա՝ լայնափող մի հրանոթ։

Հավասարակշռված երեխա էր։ Չէր սիրում հանկարծական բռնկումներ, ոչ էլ թախծում էր. միշտ ներքին ուժ էր

գտնում իր մեջ այս կամ այն անպատեհությունը հաղթելու սառնասրտորեն։ Մի անգամ միայն նա տուն եկավ ջղայնացած։ Տանը միայն փոքրիկ քույրը՝ Ելենան էր, որ վերադարձել էր դպրոցից ու տետրերն էր քրքրում։ Աշոտը մի պահ կանգնեց և խեթ նայեց քրոջը։ Ելենան հայացքը չէր բարձրացնում գետնից։ Աշոտը մոտեցավ քրոջը և ասաց.

— Նայիր աչքերիս։

Ելենան գլուխը բարձրացրեց, բայց չկարողացավ նայել եղբոր աչքերին։ Աշոտը տրորեց քունքերը և մի պահ լռությունից հետո ասաց.

— Ելենա՛, դու վատ բան ես արել։

Ելենան նկատել էր, որ իրենց դասարանցի 14-ամյա Արսենը ծխում է և անմիջապես գնացել էր Արսենի ծնողների մոտ ու հայտնել էր։ Ծնողներն էլ մի լավ ծեծել էին Արսենին։

— Բա ծխում էր,— ասում էր Ելենան արդարանալու համար։

— Իսկ դուք ընկերներով նրան չէի՞ք կարող նախազգուշացնել, որ վատ բան է անում. մի՞թե կարելի է թերագնահատել կոլեկտիվ ուժը։

Ելենան մատներն էր կոտրատում ու բան չէր գտնում ասելու։

— Այ, ես կանչեցի Արսենին, խոսեցի հետը, նա ինձ խոսք տվեց, որ այլևս չի ծխի։ Տե՛ս, Ելենա՛, մյուս անգամ այդպես բան չլինի, խաբար տանել բերելը լավ գործ չէ։ Ընկերների պակասությունները մենք պետք շտկենք։

Քիչ հետո տուն եկավ մայրը՝ Սաթենիկը. Ելենան հասկացավ, որ եղածն այլևս չպետք է հիշել։

Աշոտը տասնամյակն ավարտեց գերազանց։ Նա արդեն իր անելիքը որոշել էր։ Դիմում տվեց և ընդունվեց հրետանային դպրոց։

Սկսվեց նրա կյանքի նոր, ավելի հետաքրքրական շրջանը։ Նախ և առաջ Աշոտն իրեն ապահովեց հրետանուն վերաբերող գրականությամբ։

Դպրոցի հրամանատարությունը նկատեց, որ Աշոտն ընդունակ ուսանող է և ամենօրյա կոնկրետ հանձնարարություններով մարզեց նրան իբրև խիզախ մարտիկ։ Այն, ինչ Աշոտը սովորում էր թեորիապես, անմիջապես ստուգում էր գործնականում։ Կարճ ժամանակում նա գերազանցապես յուրացրեց հրա-

նոթի նյութական մասը: Ոչ մի պարապ րոպե չէր կորցնում նա, վերցնում էր գիրքը, ապա հրանոթի պանորաման, փականը, կամ մի այլ մասը և ժամերով ուսումնասիրում էր: Անցավ ժամանակ և Աշոտն ապացուցեց, որ հրաշալի տիրապետում է այդ հզոր զենքին: Ահարկու մեքենան այլևս ոչ մի գաղտնիք չուներ նրա համար: Նա հրանոթից կրակում էր գերազանց ճշտությամբ. ուսումնական դիվիզիոնի հրամանատարությունը մի քանի անգամ պարգևատրեց ընդունակ հայրենասերին:

Աշոտն իրեն կազմ ու պատրաստ էր զգում դիմագրավելու թշնամուն, երբ սկսվեց հայրենական մեծ պատերազմը:

Հարավ-Արևմտյան ճակատի մի մասում նա մարտկոցի հրամանատար էր:

Խիզախ երիտասարդը լցված վրեժով ու ատելությամբ դեպի թշնամին՝ նետվեց կռվի դաշտ: Նա գիտեր, որ իր երջանկության համար, երբ դեռ ինքը 4—5 տարեկան էր, պայքարել էր իր հայր Մաթևոսը, իբրև պարտիզան: Այսօր հերթն իրենն էր՝ պաշտպանելու իր ընտանիքի երջանկությունը, իր մորն ու քրոջը, իր սրբազան, բազմազգ հայրենիքը, որ սնել ու դաստիարակել էր նրան:

Նրա մարտկոցի բոլոր հրանոթները կրակում էին անվրեպ:

Նա մարտական խնդիր էր ստացել ոչնչացնել թշնամու կրակային կետերը, տանկային խմբավորումները, որ հնարավորություն տա մեր զորքերին գետն անցնելու:

Աշոտն անցնում էր հրանոթից-հրանոթ, խորհուրդ էր տալիս ինչպես վերացնել խափանումները և ոգևորում էր մարտիկներին: Սկսվեց թնդանոթաձգությունը: Աշոտի մարտկոցի ճշգրիտ գործողությամբ ոչնչացվեցին թշնամու կրակային կետերը և տանկային խմբավորումները: Մեր զորամասերն իրագործեցին իրենց առաջադրված խնդիրը: Սովետական հայրենասերի հրամանատարությամբ մեր հրետանին խառնեց թշնամու բոլոր հաշիվները:

Աշոտ Օհանյանի մարտկոցը շարունակում էր իր մարտական խնդիրը կատարել ճշտությամբ ու խիզախորեն:

Մի օր, երբ մարտկոցի անձնակազմը հանգստանում էր, գնդի կոմիսարը մոտեցավ Աշոտին և ջերմորեն սեղմեց նրա ձեռքը.

— Շնորհավորում եմ,— ասաց կոմիսարը և ցույց տվեց

«Պրավդա»-ի այն համարը, ուր տպված էր Գերագույն Սովետի Հրամանագիրը, որով ի թիվս այլոց, լեյտենանտ Աշոտ Օհանյանը գերմանական ֆաշիզմի դեմ մղվող կռվում հրամանատարության առաջադրանքները օրինակելի կերպով կատարելու և արիություն ու խիզախություն ցուցաբերելու համար պարգևատրվում էր Կարմիր Աստղի շքանշանով:

Ոչ միայն Աշոտը, այլև ամբողջ մարտկոցի հրետանավորները ուրախացան այդ երջանիկ լուրի համար: Անձնվեր լեյտենանտի հրամանատարությամբ նրանք մեծ կորուստներ էին պատճառում թշնամուն:

Աշոտն ընդունելով մարտական նվերը, երդվեց նոր ուժով, կորովով, մինչև իր վերջին շունչը կռվել անարգ թշնամու դեմ:

Ռադիոն Աշոտ Օհանյանի պարգևատրման լուրը հասցրեց Երևան: Մայրը՝ Սաթենիկը վերցրեց տղայի նկարը և ուրախության արցունքներով համբուրեց այն:

Նոյեմբերի 7-ի երեկոյան ընտանիքի բոլոր անդամները հավաքվեցին առատ սեղանի շուրջը: Հայրը՝ Մաթևոսը այդ հավաքն անվանեց խորհրդակցություն ի պատիվ Աշոտի. որոշեցին շնորհավորել Աշոտին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 24-րդ տարեդարձի առթիվ:

— Ելենա՛ ջան,— սկսեց մայրը,— գրիր ազիզ Աշոտիս, որ կաթս հալալ եմ անում իրեն. ասա՛, որ ես էլ հետ չեմ մնում հայրենիքի պաշտպանության գործում: Մեր բակում կազմել ենք հակաօդային պաշտպանության խմբակ: Ունենք պատգարակ, բակի բոլոր 30 կանայքս էլ սովորել ենք առաջին օգնության գործը. գիտենք, թե ինչպես պետք է հանգցնել հրդեհը: Պաշտպանական լավ աշխատանքի համար ինձ պարգևատրել են: Գրիր, որ մեր մասին բոլորովին չմտածի, թող քեֆը քոք պահի ու տղամարդավարի շարունակի կռվել:

Մորից հետո խոսք վերցրեց հայրը:

— Գրի՛ր, Ելենա՛, գրի՛ր Աշոտին, որ ես ինչպես 22 տարի առաջ պարտիզան էի, հիմի էլ զինվել եմ աշխարհազորում և, չնայած մազերս ճերմակել են, բայց դեռ բազուկներումս զորություն կա և պետք եղած ժամանակ թշնամին սաղ չի պրծնի ձեռքիցս: Դե էսօ՛ր նշանավոր օր է. մեր հարազատ Ստալինը էրեկ ու էսօր խոսել է. ոսկի խոսքեր են ասածը: Մենք կհաղթենք, դրանում համոզված ենք,— գրիր Աշոտին, որ գերազանց կատարի ընկեր Ստալինի պատվերը, ոչ մի խնայում

գերմանական ֆաշիստներին: Գրի՛ր, ուր էլ որ նա կռվելու լինի, Մոսկվայի մոտ, թե Ռոստովում, Սևաստոպոլում, թե Լենինգրադում, միևնույն է, նա միաժամանակ պաշտպանում է մայր Հայաստանը: Գրի՛ր, որ հեռու-հեռվից օրհնում ենք իրեն, ցանկանում ենք նոր հաջողություններ և բարի վերադարձ:

Նվենան լսեց բոլորը, ճշտությամբ գրի առավ ծնողների ասածը և ապա ավելացրեց.

— Վերջումն էլ կգրեմ, որ բոլորս սիրտ-սիրտ համբուրում ենք մեր օջախի պարծանքին, մեր սիրելի Աշոտին:





ԿԱՊԻՏԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ընդարձակ է կապիտան Գրիգոր Գրիգորի Խաչատրյանի ռազմական փորձը: Նա մասնակցել է հայրենական պատերազմի մի շարք մարտերին: Որպես շտուրման՝ նա հինգ մարտական թռիչք է ունեցել մեր հետախույզ ինքնաթիռներով—սավառնել է Վարշավայի վրա, մասնակցել է օդային մարտի, ցած գցելով մի թշնամու օդանավ:

Ջնայած իր երեսնամյա տարիքին՝ նա հարուստ փորձ ու ռազմական հմտություն է ձեռք բերել, ավարտելով սովետական ռազմական դպրոցը և Ֆրունզեի անվան ակադեմիան:

Ծնված լինելով բանվորի ընտանիքում, նվիրված լինելով սովետական հայրենիքին՝ պատանի հասակից Գրիգոր Խաչատրյանը որոշել է իր կյանքը նվիրաբերել հայրենիքի պաշտպանության սրբազան գործին:

Այս անգամ իր օգնականի հետ՝ Խաչատրյանը գտնվում էր դիտակետում, ուղղում էր հրետանու կրակը, դիտում էր հետևակի առաջխաղացումը և հրամանատարությանը տեղյակ էր պահում, թե ինչպիսի հաջողությամբ է հետևակը գրավում բարձունքի լանջերը: Բայց մեր հարձակվող հետևակի թևերում հանկարծակի երևացին թշնամու տանկային շարասյուներ: Նրանք առաջ էին շարժվում կատաղի արագությամբ և ուժգին

կրակով: Անհրաժեշտ էր այդ մասին անհապաղ տեղեկացնել հրետանային մարտկոցներին, անհրաժեշտ էր զեկուցել հրամանատարական շտաբին—սակայն հեռախոսային կապն անտեսանելի կերպով ընդհատվեց:

Մի քանի տասնյակ տանկերի հեղեղը մոտիկ տարածության վրա էր արդեն և սպառնում էր առաջխաղացող մեր զորամասերին ու մեր հրետանուն, որոնք դեռևս տանկերը չէին նկատել: Ճակատի ճեղքումը թշնամու տանկերի կողմից դառնում էր անխուսափելի:

— Պետք է վազել հրետանու մոտ: Դուրս բերել հրետանին դեպի դաշտ. ռմբակոծել ուղղակի նշանառությամբ...—ասաց Խաչատրյանը և թշնամու ականանետների մրրկային կրակի ներքո դուրս եկավ դիտակետից, վազեց դեպի հրետանային մոտակա մարտկոցը, օգնեց թնդանոթները բաց դաշտ դուրս բերելու:

Հրետանին ուղղակի նշանառությամբ ռմբակոծում էր գրոհող տանկերին, երբ նրանք արդեն 400 մետր հեռավորության վրա էին:

— Պետք է տեղեկացնե՛լ հրամանատարությանը: Պետք է վերականգնել հեռախոսային կապը:

Կապիտան Խաչատրյանի շուրջը պայթում էին ականներն ու ռումբերը, սուլում էին գնդակները, բայց նա վտանգի ենթարկելով իր կյանքը՝ վազեց հրամանատարական շտաբը: Հրամանատարությունը տեղյակ էր դարձված:

— Թույլ տվեք,— ասաց նա հրամանատարին,— վերցնել մի հեռախոսավար, վերականգնել գիծը և շարունակել դիտումը դիտակետից:

Հեռախոսագիծը վերականգնված էր և կապիտան Խաչատրյանն իր օգնականի հետ միասին շարունակում էր մարտը դիտելու և հրանոթների կրակն ուղղելու աշխատանքը:

Այդ ժամանակ մի շարք տանկերի հաջողվեց մեր պաշտպանության գիծը ճեղքել—նրանք թևանցեցին Խաչատրյանի դիտակետի աջ թևը և ահեղ թափով առաջ էին շարժվում, գալիս էին դեպի դիտակետը:

— Մինչև վերջ մնալ դիտակետում: Պահպանել կապը: Շարունակե՛լ դիտումն ու կրակի ուղղումը,— ասաց կապիտանն օգնականին:

— Կա, շարունակել դիտումն ու կրակի ուղղումը...

Եվ անմիջապես դուրս ցատկելով իր թաքստոցից՝ կապիտան Խաչատրյանը վազեց իրեն եկող տանկերին ընդառաջ:

— Կանգնե՛լ,— գոռաց նա մի խումբ կարմիրբանակայիններին, որոնք մի րոպե շփոթվել էին անակնկալ կերպով հայտնըված թշնամու տանկերի հանդեպ:— Մտնե՛լ խրամատները. Նռնակներդ պատրա՛ստ: Հակատանկային հրացաններով տանկի դիտակետին կրա՛կ... Ձեռքի գնդացիրներով ավտոմատավորներին կրա՛կ...

Կապիտան Խաչատրյանի հրամանները կատարվում էին:

Որոտացին համազարկերը, ճարճատեցին գնդացիրները: Տանկերը կանգ առան: Դիտակետը շարունակում էր աշխատել: Մեր հրետանու շիկացած ռումբերը թափվում էին թշնամու տանկային շարասյունի վրա:

Տանկային շարասյունը ցնցվեց և խուճապահար սկսեց հետ փախչել:

— Թշնամին նահանջելով՝ մեր ճակատամասում թողեց 13 տանկ,— զեկուցեց կապիտան Խաչատրյանն իր դիտակետից:

— Շնորհակալություն եմ հայտնում դիտակետի օրինակելի աշխատանքի համար,— ասաց հրամանատարը:

— Կատարում ենք մեր պարտքը հայրենիքի հանդեպ,— պատասխանեց կապիտանը:

***

Մի ուրիշ անգամ խլացուցիչ որոտում էր մեր հրետանին: Հրետանու մրրկային կրակի պաշտպանությամբ առաջ էին սլանում մեր տանկերը և հետևակը հավաքվում էր գրոհի սահմանագծում: Այս անգամ կապիտան Խաչատրյանն իր դիտակետից տեսնում էր, թե ինչպես ֆաշիստական տականքը դուրս է հորդում իր բլինդաժներից ու խրամատներից և հետ փախչելով տեղավորվում է պահեստային դիրքերում:

Ինչպես իր ափի մեջ, նա պարզ ու որոշ տեսնում էր մեր ամեն մի մարտիկին, ամեն մի տանկը, որոնք արդեն մագլցում էին այն բլուրի ստորոտներով, որտեղ խրամատավորված էր ֆաշիստական ոհմակը:

Բայց ահա մեր հետևակի առաջին շարքերը պառկեցին, նրանց հետևից պառկեցին ու գետնին փարվել սկսեցին և հաջորդ շարքերը: Մեր տանկերը հետևակից անջատվելով՝ քաշվեցին մեռյալ տարածությունը և գրոհի կուտակման սահմա-

նաղծում կանգ առան։ Հրանոթների որոտի ներքո կապիտան Խաչատրյանը չէր կարող լսել թշնամու գնդացիրների ճարճատյունը. սակայն նրա հմուտ աչքն իսկույն նկատեց գնդացրային բները, որոնք կրակ էին բացել մեր հետևակի վրա և ստիպել էին դադարեցնել առաջխաղացումը։

— Հետևակը՞ կանգ առավ, փռվում է,— զեկուցեց նա հրամանատարին,— կրակ են բացում թշնամու գնդացրային բները բլուրի ձախ կողմից, ժայռի մոտ։ Ականանետները գործում են բլրի հետևից։ Տանկերը դուրս գալով թշնամու կրակի տակից՝ քաշվում են դեպի գրոհի կուտակման գիծը...

Ի պատասխան նա լսեց հրամանատարի կարգադրությունը.

— Նստե՛լ տանկ։ Անմիջապես հասնե՛լ առաջին գիծը։ Մեր տանկերին հայտնե՛լ գնդացիրների տեղը։ Տանկերին հրամայում եմ՝ ճզմե՛լ գնդացրային բները։ Հետևակին՝ շարունակե՛լ առաջխաղացումը։ Կատարման մասին զեկուցել ինձ։

— Կա՛, ճզմել գնդացրային բները։ Շարունակել առաջխաղացումը։

Մի քանի վայրկյան անց՝ արհամարհելով վտանգը՝ պողպատե աժդահան ամբողջ թափով սլանում էր ուղղակի մարտի դաշտի միջով։ Հրամանն անհրաժեշտ էր տեղ հասցնել անմիջապես, փոքրիկ հապաղումն իսկ կարող էր ճակատագրական լինել։ Տանկը սուրում էր որպես մրրիկ, իր հետևից փոշու ամպեր բարձրացնելով։ Կապիտան Խաչատրյանը՝ կանգնած տանկի վրա՝ ավտոմատը մի ձեռքում պատրաստ պահած, մյուս ձեռքով նշանացի կոչ էր անում պառկած հետևակին, որ վեր բարձրանա և առաջ շարժվի։ Նրա ձայնն անլսելի էր հետևակի համար, սակայն նրա ձեռքի եռանդուն շարժումն ու սլացող տանկը խրախուսում, առաջ էին մղում հետևակի հետ մնացած ստորաբաժանումներին։

Դեմոնստրատիվ կերպով առաջ սլացող միայնակ տանկն իր վրա գրավեց թշնամու կրակային բոլոր միջոցները։ Տանկի առաջից ու կողքերից վեր էին խոյանում ծխի հսկայական սյուներ. մերթ պայթում էին ականներն ու ռումբերը, մերթ էլ սարսափեցուցիչ սուլոցով տանկի կողքից սլանում կամ տանկի զրահը ծեծելով՝ ռիկոշետում էին գնդացրային գնդակները։

Տանկը սլանում էր։

Ահա՛, ահա՛ արդեն մոտ է հրամանատարական գլխավոր տանկին. մնացել է միմիայն հինգհարյուր մետր...

Բայց ռումբի խլացուցիչ պայթյունից ցնցվեց տանկը և իր ընթացքն ընդհատեց։ Տանկի ցնցումով և օդային ալիքով մի կողմ շպրտվեց կապիտան Խաչատրյանը և ծածկվեց հողի շերտով։ Տանկի թրթուրները ջարդվեցին։ Տանկն այլևս չէր կարող առաջ շարժվել։

Ցնցումից և գետին զարկվելուց պտտվեց կապիտանի գլուխը, աչքերը մթնեցին։ Սակայն վայրկենապես նա ուշքի եկավ, բնազդորեն սեղմեց ավտոմատը և լսելի ձայնով շշնջաց.

— Ուշացա... ուշացա...

Նա արագ հետ տվեց իր վրայի հողը, ստուգեց ատրճանակն ու նռնակները, նայեց իր շուրջը, տեղանքը որոշեց և փոքրիկ մի փոսով առաջ սողաց դեպի տանկային սյունաշարը։

— Պատրաստվել գրոհի՛։ Ճզմե՛լ գնդացրային բները,— կարգադրեց տանկային սյունաշարի հրամանատարը՝ իմանալով Խաչատրյանից գնդացրային բների տեղը և այդ բանը տեղեկացնելով յուրայիններին։

— Կա՛, ճզմել գնդացրային բները։

Տանկերը պատրաստվեցին գրոհի։

Իսկ կապիտան Խաչատրյանը թշնամու կրակի ներքո արդեն սողում էր դեպի հետևակի հրամանատարը՝ հրամանը նրան հաղորդելու համար։ Կապիտանի բերած հրամանը բերնեբերան հաղորդվեց հետևակի շղթաների միջոցով։

Դղրդացին մեր հրանոթները, տանկերն առաջ շարժվեցին, վեր ելավ հետևակը։

Թշնամու հրետանուց գրնդոցով եկող ռումբերը պայթում էին կապիտան Խաչատրյանի կողքին, երբ նա վազքով ու ցատկումներով, ընկնելով և բարձրանալով հետ էր սլանում դեպի իր դիտակետը։

Շնչասպառ ներս ընկնելով դիտակետի թաքստոցը՝ նա տեսավ իրեն փոխարինելու մնացած ընկերոջ հիացմունքով լի, բայց մտահոգ դեմքը.

— Ինչպե՞ս ես, չե՞ս վիրավորվել...

— Կապվիր հրամանատարի հետ,— պատասխանեց Խաչատրյանը և գլխի բացասական շարժումով հասկացրեց, որ չի վիրավորվել։

Ձեռքն առնելով հեռախոսափողը՝ կապիտանն ակամա ուշ դարձրեց իր կեղտոտված շինելին և ձեռքի վճռական շարժումով թափ տվեց շինելի վրայի հողը։

Այդ վայրկյանին նրա շրթունքները քաշվեցին գոհունակության ժպիտով, խակ փոշիով, մրով ու հողով ծածկված նրա դեմքի վրայից մանրիկ առվակներով ցած էր հոսում քրտինքը: Նրա սաղավարտի տակ, գորշ դեմքի վրա փայլում էին սև, լուրջ ու կենտրոնացած աչքերը:

— Թույլ տվեք զեկուցել,— ասաց նա,— հրամանը հասցված է ըստ պատկանելույն: Հարձակումը շարունակվում է: Կապիտան Խաչատրյանը գտնվում է դիտակետում:

Նրա շրթունքները ժպտում էին: Քրտնքի առվակները ցած էին հոսում կապիտանի դեմքը ծածկող փոշու, հողի և մրի խիտ շերտի միջով: Կասկայի տակ փայլում էին նրա սև ու ծիծաղկոտ և միևնույն ժամանակ մտազբաղ աչքերը...

Հրամանատարությունն ըստ արժանվույն գնահատեց Խաչատրյանի սխրագործությունը:

Մի քանի օր հետո Խաչատրյանը լսեց վերադաս հրամանատարության կարգադրությունն իրեն մի խոշոր զորամասի հրամանատար նշանակվելու մասին:

— Կաշխատեմ արդարացնել այդ վստահությունը,— ասաց նա,— մա՛հ ֆաշիստներին:

Այդ պարզ և համեստ պատասխանի մեջ զգացվում էր հավատ դեպի մեր հաղթանակը և պատրաստակամություն մինչև արյան վերջին կաթիլը պայքարելու սրբազան սոցիալիստական հայրենիքի համար:



ՎԱՂԱՐՇԱԿԸ

Հայ ժողովրդի ծոցից դուրս եկած սովետական մարտիկ էր նա:

Սիրում էր գեղածիծաղ Սևանի ափին գտնվող իր հայրենի գյուղը—Օրդակլուն:

Սիրում էր իր հոգու պես պարզ ու զուլալ Սևանի լիճը, որպես հարազատ մոր և սնունդ տվողի:

Թշնամու հանդեպ նրա սիրտը գիտեր փոթորկել ու լեռնանալ փրփրադեզ ալիքների նման. Հարազատի հանդեպ նրա հոգին լի էր գգվանքով, ինչպես իր հայրենիքի ջինջ ու արևաշատ երկինքը:

Նա այդպիսի ջերմ սիրով էր լցված նաև դեպի սովետական երկրի ամեն մի անկյունը, նրա հոգուն թանգ էր մեր երկրի ամեն մի թիզ հողը, որը պաշտպանելու համար հայրենական պատերազմի ռազմադաշտերում նա ոչնչացնում էր ֆաշիստական բորենիների ոհմակը:

— Այստեղ նույնպես մարդիկ կռվել են հանուն երջանիկ կյանքի, կոլխոզներ են կազմակերպել, ինչպես մենք մեր Օրդակլու գյուղում,— ասում էր Վաղարշակ Ղարիբյանը:

Տեսնելով ֆաշիստական բարբարոսների կողմից ավերակների վերածված մեր գյուղերը, նա ավելի էր բոցավառվում ա-

տևությամբ դեպի թշնամին, նրա մեջ ավելի էր բարձրանում սերը սովետական մարդու, հարազատ, ֆաշիստական հորդաները ոչնչացնող մարտիկի նկատմամբ:

Այդ սերն զգում էին ստորաբաժանման բոլոր մարտիկները:

Որպես հմուտ ականանձիգ, Վաղարշակը վարպետորեն տիրապետում էր զենքի մի քանի տեսակներին: Հանգիստ ժամանակ նա ընկերներին խնամքով վարժեցնում էր զենքի տիրապետմանը, իսկ կռվի պահին օգնում էր նրանց:

Նրա բարձր հասակը, լայնեղ ու ամրակուռ ուսերը, սև ու փարթամ հոնքերի տակից պողպատի պես փայլող ծիծաղկուն աչքերը, նրա զվարթ և ուշադիր վերաբերմունքը դեպի ընկերը, Վաղարշակի հետ անխզելի կապերով կապել էին բոլոր մարտիկներին: Նրանց մեջ առաջ էին բերել վստահություն, հավատ դեպի այս վիթխարի լեռնցին. կռվի ամենավտանգավոր միջոցին հանկարծ լսվում էր նրա անունը.

— Վաղարշա՛կ,— ձայն էին տալիս մարտիկները՝ օգնության կարիք զգալիս:

— Վաղարշա՛կ,— կանչում էին նրան թշնամու կրակի տակ ընկած վիրավորները:

— Ջանե՛,— բացականչում էր Վաղարշակը,— մի՛ վախի... գալիս եմ, հա՛ա՛...

Նա հանձնարարում էր իր երկրորդ համարին, որ կրակը չարունակի տված նշանացույցով և գնդակների ու արկերի դղրդոցի տակ վազքի արագությամբ թաքստոցից թաքստոց ցատկելով՝ վազում էր վիրավոր ընկերոջ մոտ:

Վաղարշակի հսկա կերպարանքը թեքվում էր ընկերոջ վրա. նրա շրթունքները հանգիստ ու վստահ կերպով խրախուսանքի սոսքեր էին ասում վիրավորին, նրա ջուրջուրող հայացքից ջերմությամբ էր լցվում վիրավորի սիրտը:

Վաղարշակն արագությամբ կապում էր վերքը, ցույց էր տալիս դեպի սանիտարական կայանը գնալու ուղին, իսկ ինքը, վայրկենապես կրկին հայտնվում էր ականանետի մոտ:

— Վաղարշա՛կ,— հնչում էր կանչը մի ուրիշ կողմից:

— Ջանե՛,— արձագանքում էր Վաղարշակի հուժկու և սրտաբուխ պատասխանը և նա անմիջապես վազում էր մի ուրիշ ընկերոջ, մի ուրիշ վիրավոր մարտիկի մոտ:

Շատ ընկերների վերքերն է կապել ու կռվի դաշտից դուրս ուղարկել օրդականշանակիր Վաղարշակը:

Բայց այդ ժամանակամիջոցում երբեք չի դադարել նրա ականանետի դիպուկ կրակը, որը հեղեղի նման թափվում էր թշնամու գլխին:

Խիզախ, հմուտ, սիրառատ մարտիկի անունը հայրենական պատերազմի այս ճակատում դարձել է սիրված անուններից մեկը: Մարտիկներին խրախուսում են լեռնական հերոսի սրտից բխած պարզ ու ժողովրդական բացականչությունը—Ջանե՛... գալիս եմ...

Այս սրտաբուխ բացականչության մեջ սաղմ խտացած է մեր կարմիր մարտիկների փոխադարձ նվիրվածությունը, դեպի հայրենիքն ունեցած անսահման սերը ու անձնազոհության վեհ գիտակցությունը:

Դրա համար էլ Վաղարշակի մասին խոսք բացելիս, մարտիկները հպարտությամբ ու հիացմունքով են կրկնում նրա առնական կոչը, որպես բոլորի սրտից բխած խրախույս.

— Ջանե՛... մի վախի, գալիս եմ, հաաա...

Գործող բանակ
1942 թ. ապրիլ





ԱՊՐԵՍ ՍԱՐՈՅԱՆ

Գարնանային կանաչով ծածկված բլրի վրա ամենուրեք փորված են խրամատներ ու բլինդաժներ, առանձին խրամատների միջից իրենց դնչիկներն են դուրս ցցել գումարտակային ականանետները. գումարտակը դեռ շարունակում է փորփրել բլուրը և իր ժամանակավոր գետնափոր ապաստարաններն ընդարձակել այստեղ, ուր նա տեղավորվել սկսեց մի քանի ժամ առաջ:

— Մեր ականանետային գումարտակը գրավում էր այ, այսպիսի մի բլուր,— պատմում է N զորամասի հրամանատարը և ցույց է տալիս այն բլուրը, որի վրա մենք նստած ենք:

— Առավոտյա տասից թշնամին մրրկային կրակ էր բացում: Տանկերը փորձում էին բլուրը շրջանցել, սակայն մեր գումարտակին հաջողվեց մնալ իր դիրքերում և թշնամու 12 տանկերը ջարդվեցին մեր տեղամասում: Երբ գիշերը վրա հասավ՝ մենք առաջ շարժվեցինք ու առավոտը կռվով նոր դիրքեր գրավեցինք:

— Իսկ ո՞ւր է Սարոյան Ապրեսը,— հարցնում եմ նրան,— մենք եկել ենք Ապրեսին տեսնելու:

— Նա դեռ սանիտարական գումարտակումն է,— պատասխանում է լեյտենանտ Վասիլի Իվանովիչը,— այս երկու օրերս

դուրս է գրվելու և վերադառնալու է իր ստորաբաժանումը: Վիրավորվելուց հետո թեկուզ մեկնել չցանկանալով—հենց այստեղ էլ առողջանում է:

— Գուցե կարելի է խոսել կռվում նրա հետ եղած ընկերների հետ,— հարցնում եմ ես:

Փոքր հետո հավաքվում են կռվում Սարոյանի հետ եղած ընկերները:

— Երբ ես եկա այս վաշտը,— պատմում է վաշտի քաղղեկ Արտաշեսը,— և հանդիպեցի Սարոյանին՝ առաջին իսկ հայացքից ինձ դուր եկավ նրա վճռական ու համակրելի դեմքը: Նրա հայացքում կարդացվում է աննկունություն: Միջահասակ է, սև աչք ու հոնքով, ժպտուն աչքերով, իսկ պաշտոնական գործի ժամանակ՝ լուրջ: Կարգապահ մարտիկի սքանչելի օրինակ է նա:

***

Ապրես Սարոյանը բանակ էր եկել լեռնային Զորագյուղից— նա այժմ ականաձիգ է, իր ստորաբաժանման կոմերիտական կազմակերպիչը, նրա խոսքն ու ագիտացիան ընկերների շրջանում լինում էին կարճ:

Խիզախ էր նա, բնավորությամբ հետևողական:

— Կարգապահությունը հեշտացնում է մարտը, կարգապահությունը զոհերի թիվը կրճատում է մարտում,— ասում էր Սարոյանը:

Եվ ահա նա ներկայացավ իր սիրած այդ ճշմարտությունը գործով ապացուցելու համար:

Թշնամու տանկերը ճգնում էին շրջանցել բլուրը, որի վրա գտնվում էր զորամասի ականանետային դասակը: Ապրեսն իր ականանետով ոչնչացնում էր տանկերի հետևից եկող թշնամու հետևակը և ճշտությամբ կատարում հրամանատարի ցուցումները:

Հանկարծ Սարոյանը լսեց հակառակորդի ռումբերի մոտիկ պայթյունը դասակի գրաված տերիտորիայում: Եվ երբ մրրկային կրակից հետո Ապրեսը գլուխը վեր բարձրացրեց, տեսավ, թե ինչպես երկու մարտիկ խրամատներից դուրս են հանում դասակի հրամանատարին:

Ապրեսի սիրտը ճմլվեց:

Հրամանատարը շարքից ելել էր:

Կրակի ժամանակ թշնամու տանկերն ու հետևակը կարողացել էին առաջ շարժվել. դրությունը դարձել էր կրիտիկական — ականանետային դասակի շրջապատումն անխուսափելի էր: Իսկ ականանետների կրակը դառնում էր ջղային, շտապ, անկանոն, պատահական,— ականաձիգների մեջ շփոթություն և ընկճվածություն էր առաջ բերել հրամանատարի շարքից հանվելը:

— Դասակի հրամանատարությունն ինձ վրա եմ վերցնում: Լսե՛ք հրամաններս,— գոռաց Սարոյանը հանկարծակի պատասխանատվություն զգալով իր ընկերների ամբողջ կոլեկտիվի համար:

Դասակը լսեց Սարոյան Ապրեսին:

Դասակը ենթարկվեց:

— Խնայե՛լ ականները, կրակել միմիայն ճիշտ նշանառությամբ, ոչնչացնե՛լ տանկերի հետևից եկող հետևակը:

Սարոյան Ապրեսը համաձայնեցնում էր իր կրակը մեր հրանոթների ու հետևակի գործողություններին: Նա վերադասավորեց ականանետային կետերը՝ թշնամու ընդհուպ մոտեցած ուժերին ավելի էֆեկտիվ կրակի տակ առնելու համար, խոսքով ու ցուցումներով նա խրախուսում էր ամբողջ դասակը և անձամբ ղեկավարում դումարտակային մի ականանետի կրակը: Դասակն այդ օրը թշնամու գրոհները հետ մղեց իր տեղամասում և ամուր պահեց իր դիրքերը:

Իսկ գիշերը մյուս զորամասերի հետ միասին Ապրես Սարոյանն իր ականանետային դասակով առաջ շարժվեց ու համառ կռիվներով նոր դիրքեր գրավեց:

***

Կատաղի էին մի քանի օր տևող այդ կռիվները, համառ ու անհողդողդ էր Ապրես Սարոյանն իր դասակի հետ:

Բայց կռիվներից մեկի ժամանակ, երբ նա իր դիրքից դուրս էր նայում թշնամու կրակային կետերը որոշելու համար՝ մի սուր ցավ զգաց իր գլխի վրա, ականջի տակ ավտոմատի գնդակները. հազիվ կարողացավ կանգնել ոտքի վրա:

— Ապրե՛ս,— ահով բացականչեց կողքին կանգնած մարտիկը և հասավ որ օգնի նրան:

— Կարգի՛մ, ոչի՛նչ,— հուզված, բայց կիսակատակի տոնով՝ պատասխանեց Ապրեսն ու ձեռքը դեպի վիրավոր գլուխը տանելով՝ լրջորեն շարունակեց.— թշնամու գնդացիրները դառնում էին երկաթուղային բուդկայից հիսուն քայլ դեպի աջ: Նշանառությունը վերցրու և երկու ականով ստուգիր:

Ականաձիգները պատրաստվում էին կրակելու:

Ապրեսն զգաց, որ դեպի գլուխը տարած ձեռքն ու ամբողջ երեսը ողողվեցին ջերմ հեղուկով, նա տեսավ, թե ինչպես իր կրծքի վրա և դեպի ծնկներն է հոսում կարմիր արյունը:

— Ա՜ռ,— ասաց Ապրեսը,— մեկնելով իր բինտը:

Մարտիկն արագությամբ վերքը կապեց, սակայն արյունը շարունակում էր ծծվել բինտի մեջ և կաթիլ առ կաթիլ հոսում էր Ապրեսի այտերի վրա:

Ականանետները կրակում էին: Կատաղի կռիվը շարունակվում էր:

— Անհրաժեշտ է գնալ սանդումարտակ,—պնդեցին մարտիկները:

— Ոչի՛նչ, կանցնի:

— Է՛, անպայման անհրաժեշտ է,— ասացին նրանք ու երկու մարտիկ ուզեցին Ապրեսին թևանցուկ դուրս քաշել խրամատից:

Զգալով, որ ինքն այլևս դժվարությամբ է դիմանում՝ Ապրեսը որոշեց համաձայնել դիրքից հեռանալու:

— Միայն թե ոչ մի մարդ,—ասաց նա կտրուկ,—ես ինքս, բոլորդ մնացեք դիրքում: Օգնություն կուղարկեմ խակույ: Անհրաժեշտ է անպայման ոչնչացնել գնդացրային բունը:

Գնդակները վզզում էին Ապրեսի շուրջը, ականները պայթում էին նրա մոտերքը, իսկ գլխի ծանր վերքից արյունաքամ եղող մարտիկը սողում էր դեպի մոտակա շտաբը:

Ահա նա ցած իջավ հրամանատարական խրամատը: Նրա դեմքն ու զգեստներն արյունով էին ծածկված. դժվար էր նրան ճանաչել: Նա իր արնաշաղախ ձեռքերով պատվի առավ.

— Թույլ տվեք ներկայանալ, ընկե՛ր հրամանատար.— ականանետային N առորաբաժանման մարտիկ Ապրես Սարոյան, վարում էի դասակի հրամանատարի պարտականությունները... անհրաժեշտ է ուղարկել ինձ փոխարինող... Թույլ տվեք ինձ մեկնել սանդումարտակ. վիրավորված եմ գլխից:

Մինչև վերջ չլսելով Սարոյանի խոսքերը՝ հրամանատարն անմիջապես կարգադրեց, որ դիրքից կրակող մարտիկներից մեկը դուրս գա:

— Օգնե՛լ, մինչև սանդումարտակ հասցնել ընկեր Սարոյանին:

Մարտիկը տեղից բարձրացավ:

— Կա, հասցնել մինչև սանդումարտակ:

Բայց Ալբես Սարոյանը ձեռքով բացասական նշան արավ.

— Ո՛չ, թույլ տվեք, ընկե՛ր հրամանատար, վտանգավոր է, մարտիկն ինձ ուղեկցելիս կարող է վիրավորվել... իզուր տեղը...

— Ոչ մի վիրավորվել,— ասում է Ալբեսի խոսքերից վիրավորված մարտիկը,— գնանք,— և ցանկանում է թևանցուկ անել:

— Թույլ տվեք, ընկե՛ր հրամանատար,— կրկին պատվի առնելով դիմում է Սարոյանը,—մարտիկն այստեղ, կռվում ավելի կարևոր է: Ինքս կարող եմ մենակ... շատ եմ խնդրում, ընկե՛ր հրամանատար:

Ալբեսի վերջին խոսքերն ասված էին այնպիսի վճռականությամբ ու թախանձանքով, որ հրամանատարը մերժել չկարողացավ:

Նա հիացմունքով նայեց Ալբեսի արյունաներկ դեմքի վրա փայլող վճռական ու թախանձագին աչքերին և իր աչքերը լցվեցին հիացմունքի ու կարեկցության արցունքներով: Հրամանատարը տիրապետեց հուզմունքից խեղդվող ձայնին ու ինքն իրեն զսպելով՝ հանգստությամբ ու քնքշությամբ ասաց.

— Լավ... միայն թե զգո՛ւյշ...

Շրապնելների ու գնդացիրների կրակի տակ Ալբես Սարոյանը դուրս սողաց հրամանատարական շտաբից դեպի սանդումարտակ:

***

— Հիմի ո՞նց է, առողջանո՞ւմ է,— հարցնում է խոսակիցներից մեկը:

— Ալբեսը մեռնող պտուղ չի,— կատակում է Ալբեսի ընկերներից մեկը,— նա իր մորն ու փոքր եղբորը գյուղում խոսք է տվել, որ ֆաշիստներին ջարդելուց հետո սաղ-սալամաթ հետ պիտի դառնա գյուղը:

— Դիմացկուն, առողջ տղա է,— շարունակում է մի ուրիշը,— ոչ մահն է վրան առնում, ոչ ցավը. պատմում են, որ գլուխը վիրահատելու ժամանակ շարունակ աչքերը բացած ու

անշարժ նայելիս է լինում գթության քրոջ աչքերին: Գթության քույրը կարծում է, որ վիրահատվողի ուշքն է գնացել. անհանգստանում է: Երբ վիրահատությունը վերջացնում են, գթության քույրը շտապ հարց է տալիս Սարոյանին, որ տեսնի ուշքը գլխի՞ն է, թե ոչ:

— Անունդ ի՞նչ է,— հարցնում է նա:

Սարոյանը հանգիստ պատասխանում է.

— Ալբես է, քույրի՛կ ջան...

— Վո՛ւյ,— ուրախացած բացականչում է քույրը,—Ալբես եղբայր ջա՛ն, շա՛տ ապրես... ո՞նց դիմացար ցավին, ձեն չհանեցիր:

— Շատ կապրեմ, քույրի՛կ ջան, շա՛տ...— պատասխանում է Սարոյանը ժպտալով,— էնքա՛ն կապրեմ, մինչև որ աշխարհիս երեսին է՛լ ֆաշիստներ չապրեն:

— Հայ թե տղա՛ է...

Ու Սարոյան Ալբեսի ընկերներն այնպիսի գոհունակությամբ են ժպտում, որ ասես այս հետաքրքիր արկածների ու խոսակցության հերոսը հենց իրենք են ու այս սրամիտ խոսակցությունները՝ կապված Ալբես անվան հետ, հենց իրենց է վերաբերում:

Նայում ես նրանց մաքուր ածիլված, արևակեզ ու հողմածեծ դեմքերին ու տեսնում ես, որ Սարոյանի վստահությունն ու հավատն ապրում է նրանցից ամեն մեկի մեջ:

Իրո՞ք այդպես է ասել Ալբես Սարոյանը իր վիրահատության մոմենտին թե չէ, այդ չի կարևորը. կարևորն այն է, որ նրա խրամատի ընկերներից յուրաքանչյուրի հոգում ամուր է այն հավատը, որ իրենք էլ, ինչպես Ալբեսը, կապրեն այնքան, մինչև որ ամբողջ աշխարհի երեսին այլևս չապրի ֆաշիզմը, մինչև որ իրենք վերջնականապես ոչնչացնեն այն:

Ահա այժմ, հենց նոր կռվից դուրս գալով և ժամանակավոր հանգստի համար այս գարնանային խոնավ բլուրի վրա ֆաշիստական անգղներից աննկատելի մնալու համար կայարաններ փորելով են զբաղված անհաշիվ Սարոյաններ. Նրանք ի մի են բերում իրենց կռվի փորձը, կռվում աչքի ընկած իրենց ընկերների հերոսությունն են պատմում, հիշում են պարծանքով, և այդ պանծալի ընկերների շարքում է Մարտունու բարձր քերից դեպի սոցիալիստական հայրենիքի պաշտպանության

դաշտն իջած կորիճ կոմերիտականը, հայրենական պատերազմի համեստ, բայց խիզախ մարտիկ-Ապրես Սարոյանը:

Իսկ այնտեղ, մի փոքր առաջ փռված բլրաշարքի վրա՝ թնդանոթների անընդհատ աղմուկով օդն են թնդացնում սովետական հայրենիքի անթիվ Սարոյաններն ու մեր գլխի վրայով դեպի առաջին գիծը, դեպի թշնամու թիկունքը, դեպի արևմուտք են թռչում մեր ստալինյան բազեների հախուռն երամները:

Նրանց հզոր հնչյունն ավելի է ամրապնդում մեր մարտիկների հավատը.

—Այո, կապրենք, որպեսզի ֆաշիզմը չապրի երկնքի տակ: Կապրենք, որպեսզի չապրեն մարդկային կյանքի և երջանկության գիշատիչ բորենիները:



ՀԵՐՈՍՆԵՐԻ ԾՆՈՒՆԴԸ

Երբեք մարդու հոգու առաքինություններն այնպես արագ չեն ծաղկում, ինչպես իր հայրենիքի համար անարգ թշնամու դեմ կռվի ելնելիս: Հայրենական պատերազմը մարդ-քաղաքացու համար մի սքանչելի փորձություն է, որ ռենտգենյան ճառագայթների պես բացում ու կարդում է այն բոլոր լավն ու վեհը, որ նա ունի իր մեջ և ինքն էլ չի տեսնում ու գիտակցում:

Տարիներ շարունակ մայր երկիրը դաստիարակում է իր որդիներին, տալիս է նրանց իր խոհերն ու մտածումները, իր գաղափարներն ու ուժը, սովորեցնում է նրանց իր պատմությունն ու ներշնչում իր գեղեցիկ երազանքներն ապագայի հանդեպ: Այդ ամենը, այսպես ասած՝ միջին մարդու մեջ չես տեսնում ու շոշափում խաղաղ ժամանակ, պարզ օրերին: Դրանք մայրական կաթի նման լուծվում են նրա արյան ու գիտակցության մեջ ու դառնում անտեսանելի, ինչպես մոր կաթը: Բայց երբ սկսվում է ամպրոպն ու փոթորիկը, փթթում են այդ բարձր առաքինությունները, ինչպես ալպյան գոտու կանաչ ապրիլյան անձրևներից հետո:

Մեր այսօրվա կյանքը լի է այդպիսի օրինակներով:

1.

… Նա խաղաղ ժամանակ ինստիտուտներում գիտություններ էր սովորել երկրագործության մասին: Մշակում էր հողն ու քննում նրա գաղտնիքները: Նա բարձր ձայնով չէր գոռում իր սիրո մասին դեպի հայրենիքը, կուրծք ծեծելով երդումներ չէր անում, ոչ ոք նրանից չէր լսել գեղեցիկ խոսքերով զարդարված հանդիսավոր խոստումներ: Նա աշխատում էր, համեստ ու նվիրված էր իր գործին: Երբ երկրի վրա հարձակվեցին թշնամիները՝ նա զենք վերցրեց ու ճակատ եկավ միլիոնների հետ միասին, կրկին լուռ, առանց աղմուկի, սուրբ պարտքի լրիվ գիտակցությամբ, ինչպես ճշմարիտ ուխտավոր: Մեր թերթի ընթերցողներից շատերը կճանաչեն գյուղատնտես Դավիթ Ավետիսյանին, որ աշխատում էր Սիսիանի շրջանում: Իսկ այսօր արդեն պարտավոր են ճանաչել նրան ամենքը, նա արժանի է երգվելու բանաստեղծների կողմից, ինչպես երգվել են մեր նախնի Դավիթները:

Ռազմական տաղանդը ծաղկեց նրա մեջ հանկարծ, աննկատելիորեն, «միջին» մարդը դարձավ հերոս, դարձավ հիացմունքի ու ակնածանքի առարկա:

Առաջին փառավոր հաջողությունները, որ ունեցավ նա թշնամու դեմ մղած կռիվների մեջ, չշշմեցրին նրան: Զսպվածներքին լրջությունը նրան սովորեցնում էր ողջախոհություն մարտավարության մեջ, սովորեցնում էր հնարամտություն, համառություն, դառն ձախողություններից չհուսահատվելու հոգեկան արիություն:

Պատմել բոլոր գործերի մասին, որ կատարել է քաջ Դավիթը, հնարավոր չէ. հիշենք միայն երկու անմոռաց դրվագ նրա մարտական գործունեությունից:

… Զորամասը գրոհում էր թշնամու վրա համազարկերով, նռնակներով ու ականներով, դուրս քշում նրանց գյուղերից, կրակի ու բոցերի միջից ազատում կանանց և երեխաներին, փրկում մարդկանց կյանքն ու պատիվը: Մեր ստորաբաժանումներից երեքը, որոնցից մեկի հրամանատարը Դավիթ Ավետիսյանն էր, ճեղքելով թշնամու պաշտպանության գոտին, ուժգին կերպով մեխվեցին նրա մարմնի մեջ, հասան նրա թիկունքը:

Իջավ երեկոն: Օրվա ճակատամարտերը մեղմացան: Գերմանացին գիշերվա մթից վախենում է, ինչպես սատանան լույսից:

Պետք է մինչև լուսաբաց նրան պարտության մատնել: Բայց ամեն ինչ կռվի մեջ չի լինում այնպես, ինչպես նախօրոք գծում ես թղթի վրա: Թշնամու միտքն էլ է գործում: Վատ է այն ռազմիկը, որը չի ձգտում կռահել թշնամու խարդախությունները և միայն իր գծումներով է տարվում:

Ավետիսյանն առաջարկեց վերջին անգամ հետախուզությամբ ստուգել թշնամու ուժերի դասավորությունը, ապա նոր գործողության որոշում ընդունել: Հետախուզությունը գործեց: Վերադարձավ: Պարզվեց, որ գերմանացիները կտրել են ստորաբաժանման թիկունքը և մերոնց անջատել գլխավոր ուժերից: Մերոնք ուրեմն շրջապատման մեջ էին: Կես գիշերին դիրքերի մեջ հավաքվեցին ստորաբաժանումների հրամանատարներն ու քաղաքական ղեկավարները՝ խորհրդակցելու ելքի մասին: Եղան զանազան առաջարկներ, բոլորն էլ բանական ու համոզեցուցիչ, բայց բոլորն էլ ուզում էին Դավթի խոսքը լսել:

— Դուք ի՞նչ կասեիք, ավա՛գ լեյտենանտ,— դիմեց նրան ավագ քաղղեկ Ցանովսկին:

Դավիթը մի պահ լռեց: Թվում էր, թե նոր է որոշում ասելիքը:

— Ես առաջարկում եմ,— սկսեց նա ծանր ու դանդաղ.— առաջարկում եմ թույլ տալ ամբողջ պատասխանատվությունն ինձ վրա վերցնելու…

Ասաց նա այնպիսի տոնով, որ ցույց էր տալիս, թե նա վաղուց է մտածել նախքան այդպիսի որոշում ընդունելը: Բոլորը թեթև շունչ քաշեցին: Նրանք ճանաչում էին Դավթին: Դա առաջին փորձությունը չէր: Եթե նա, Դավիթը հավատում է գործին, ուրեմն անհաջողություն չի լինի: Միաձայն հավանության արժանացավ նրա առաջարկը: Գիտե՞ք, թե ինչ է նշանակում այդպիսի րոպեին ցանկանալ պատասխանատվությունն իր վրա վերցնել… Դա հերոսության սկիզբն է:

— Այսպիսով ընդհանուր հրամանատարը ես եմ,— ասաց նա.— Բոլորն ինձ են ենթարկվում. ուրախ կլինեմ, որ մեր շարքերում ոչ մի վախկոտ չգտնվի:

Եվ նա շարադրեց իր առաջին հրամանը: Չպետք է հետ դառնալ ու կռվի բռնվել թիկունքն անցած գերմանացիների հետ: Նրանք սպասում են դրան և պատրաստվել են: Նրանք կարծում են, թե մենք դա միակ ելքը կհամարենք: Այդ դեպքում բոլոր կողմերից էլ կփակեն մեզ, մենք կընկնենք խաչաձև

հարվածների տակ: Պետք է թիկունքն անցած թշնամուն թողնել իր պլանների վրա հիանա մի քանի ժամ և շարունակել հարձակումն առաջ: Նրանք չեն կարծում, թե հնարավոր է այդպիսի խիզախության դիմել: Մենք մեր դիմացն եղողների հետ հաշիվները կմաքրենք, ձախ կողմից կճեղքենք, դուրս կգանք մեր թիկունքն անցածների թիկունքը: Լուսաբացին, երբ նրանք դեռ նոր պիտի պատրաստվեն գործողության, մենք կայծակի պես կպայթենք նրանց գլխին...

Ամեն ինչ կախված կլիներ մարդկանց քաջությունից: Նա այդ բանը բացատրեց ոչ միայն հրամանատարներին, այլև բոլոր կարմիրբանակայիններին:

— Եթե պիտի մեռնենք՝ լավ է քաջությամբ մեռնենք, քան թուլություն ցույց տանք թշնամուն...

Ամենքն էլ երդվեցին լինել այնպես, ինչպես Դավիթն է պահանջում: Գիշերվա սև խավարի մեջ ստորաբաժանումները տեղից շարժվեցին: Առաջնորդում էր Դավիթն իր զորքին՝ հաջող ելքի կատարյալ հավատով: Թշնամին հանկարծակիի եկավ, երբ սկսվեց գիշերային հարձակումը: Գյուղացիները նրանց ոչնչացնում էին համազարկերով, նռնակներով, հրացանների կոթերով փշրելով գանգերը, սվինով խոցելով, դաշույնով մորթելով կանաչ հագուստների մեջ սարսափից դողդողացող «արիացիներին»: Թշնամին գլուխը կորցրել էր և չէր հասկանում, թե ինչ է տեղի ունենում: Խոզի նման կռնչում էին սվինահարվող գերմանացիները: Դավթի խումբը ձախ կողմից գերմանացիների ոռնոցների ու անեծքների միջով ճեղքեց դուրս եկավ, ճանապարհին թողնելով թշնամու դիակներն ու կեղտոտ արյունը: Ֆաշիստական գերմարդու տխմարները ճղճղոցով լաց էին լինում:

Հիմա արդեն պետք էր թիկունքն անցածներին պատժել, ցույց տալ, որ նրանց այդ բլից-ավանտյուրան խորտակիչ է հենց իրենց համար: Դավիթը մի քանի խիզախների ուղարկեց հետախուզության և հրետանավորների հետ կապ հաստատելու:

Լույսը բացվում էր, բարի լույս՝ մերոնց համար և դժոխք՝ գերմանացիներին: Լեռնային հեղեղի պես ուժգին նրանց վրա թափվեց Դավթի խումբը: Թշնամու գլխի վրա շառաչում ու պայթում էին մեր հրետանու արկերը, երկինք թռցնելով ֆաշիստական գարշելի մարմինների կտորտանքները: Թշնամին փախուստի դիմեց: Սովետական գյուղացիների սապոգները

տրորում էին հիտլերական սպաների մունդիրներն ու նրանց դիակների վրայով առաջ գնում: Այդ գիշեր և առավոտ կռվի դաշտում փռվեց գերմանական մարդակերների մոտ երեք հարյուր դիակ, կռվի դաշտում մնացին տասնյակ վիրավորներ և շատ-շատերն էլ իրենց վերքերը լիզելով, արյան հետքեր թողնելով ձյան վրա՝ փախան դեպի իրենց խոր թիկունքը: Դրանցից շատերի հետևից հասնում էին Դավթի զինվորներն ու մահ պարգևում:

Դժվար էր ասել, թե ով աչքի ընկավ այդ հերոսական կռվի մեջ: Բոլորն էլ կռվում էին չտեսնված քաջությամբ, մոլուցքով, փոթորկված կրքերով, հարբած՝ հայրենիքի սիրով և սրբազան ատելությամբ նրա թշնամիների դեմ: Կռվում էին, ինչպես ինքը՝ Դավիթը:

Գրոհը թշնամու վրա՝ շարունակվեց:

... Մի ուրիշ անգամ, ամուր պահելով իր գծամասը՝ Դավիթը պարզեց, որ թշնամին գրոհի է պատրաստվում իր վրա:

— Շատ լավ, եկե՛ք,— ասաց նա ինքն իրեն և իր քաղղեկին կանչեց խորհրդակցելու: Թշնամու ուժերը երեք անգամ գերազանցում էին իր ստորաբաժանմանը: Բայց դա ոչինչ չէր նշանակում: Մեկը կարող է տասի դեմ էլ գնալ, եթե քաջ է: Գիշերով Դավիթը հրամայեց դիրքեր փորել, մեծ ու խոր դիրքեր: Երբ մի երկու ժամ հետո հրամանն արդեն կատարված էր, և երբ արդեն սկսել էին քողարկել թարմ հողը, Դավիթը հրամայեց.

— Քողարկումը կատարել վատ...

— Ինչպե՞ս թե.

— Պարզ, ռուսերեն լեզվով եմ ասում, քողարկումը կատարել վատ, թողնել դիրքերի առաջ թարմ հողը...

Շատերն այնուամենայնիվ չհասկացան, բայց հրամանատարի անձամբ ստուգեց բոլոր դիրքերը, ճշգրտորեն կատարել տվեց իր հրամանը:

— Այժմ առաջ գնալ հարյուր մետր տարածություն դեպի թշնամին, իսկ այս դիրքերը թող այստեղ մնան:

Կատարվեց այդ հրամանն էլ:

— Փորել նո՛ր դիրքեր, արա՛գ, խո՛ր, լա՛վ...

Վերջին հրամանն էլ կատարվեց:

— Քողարկել այժմ այնպես, որ հինգ մետր հեռավորությունից էլ ոչինչ չերևա...

Ողջ գիշեր մարդիկ աշխատեցին: Խիստ հոգնեցին:

— Հանգստանալ՝ երկու ժամ հետո թշնամուն դիմավորելու համար, այս հանգստությունը փրկում է մեր կյանքը և մահ է թշնամու համար,— ասաց Դավիթը:

Խամրեցին աստղերը պարզկա երկնքում: Լուսաստղն էլ դունաթափվեց: Թշնամին աշխուժացավ: Հին դիրքերի միջից Դավթի զինվորներից մի քանիսը, որոնց նա այնտեղ էր թողել, մի քանի րոպե ուժեղ կրակ բացեցին թշնամու վրա և դուրս գալով դիրքերից՝ առաջ սողացին ու յուրայիններին հասան: Թշնամին այնպես էլ հավատաց, թե հին տեղումն են ամրացած մերոնք: Հեռադիտակներն առհասարակ շատ են խաբում գերմանացիներին: Ինչե՞ր ասես, որ չեն տեսնում նրանք հեռադիտակների փողերից... Երևի խնդացին օբեր-լեյտենանտները, որ բոլշևիկներն իրենց դիրքերը քողարկել չգիտեն: Ու սկսեցին ահեղ կրակ: Կրակում էին հին դիրքերի վրա: Արկերի ու ականների բեկորները շառաչով սղոցում էին օդը:

Դավթի զինվորները հանգիստ նստել են նոր, ավելի ապահով դիրքերի մեջ: Կռիվների մեջ կոփված կորյունների մի խումբ էր դա, որոնցից ամեն մեկը բերել էր իր հետ իր ժողովրդի ուժն ու հավատը՝ ուզբեկների, թուրքմենների, վրացիների, ադրբեջանցիների, ռուսների, հայերի հավատն ու ուժը: Ամեն մեկն իր ժողովրդի պատգամն ուներ իր սրտում: Թշնամին գործում էր կատաղի: Կրակն ու ծուխը պատել էր չուրջը: Քար ու քանդ էին եղել հին դիրքերը: Արկերի ու ականների բեկորներից ճարճատում էին մոտիկ ծառերի ճյուղերն ու բներից տաշեղներ թռչում, սուլելով օդի մեջ: Այդպես տևեց մի քանի ժամ: Թշնամին կարծեց, թե մերոնցից այլևս ոչինչ չի մնացել կենդանի ու մարտունակ: Այն ժամանակ հիտլերյան հետևակն ու ավտոմատավորները դիմեցին գրոհի: Գերմանացիները գալիս էին իրենց սիրած մեթոդով, «պսիխիկ» գրոհով, որ միայն նրանց հուսահատական ջղաձգության նշանն է: Գալիս էին մի քանի հարյուր մարդ, ամբողջ հասակով, երթային քայլերով: Լսվում էր նույնիսկ հրամանատարի կոմանդան: Գալիս էին և ոչ ոք կրակ չէր բացում: Տիրում էր մի ծանր լռություն: Այդպիսի ժամանակ պետք է ունենալ ամուր ու հանգիստ ջղեր, արի սիրտ, քաջ ոգի: Իսկ Դավիթն ու իր զինվորներն ունեին այդ բոլորը:

Տարածությունը թշնամու գոռոզ շարքերի և դիրքերում

հաստատուն կամքով սպասող մերայինների մեջ գնալով կարճանում էր: Ահա արդեն հարյուր հիսուն մետրի վրա են, ահա արդեն հարյուր մետր դարձավ տարածությունը: Ոչ ոք չի փորձում կրակել: Սպասում են Դավթի հրամանին: Եթե ինքը չի սկսում կրակել, ուրեմն հրամայում է լուռ մնալ: Հանգիստ շնչելով, սպասում են ծանր գնդացիրների մոտ գնդացրորդները, պատրաստ ամեն ակնթարթ գնդակների կարկուտ թափելու թշնամու վրա, պատրաստ սպասում են սնայպերները՝ ամեն վայրկյան ձգելու ձգանը, պատրաստ են գրպանների արկերը, լիմոնաձև նռնակները:

Ահա նրանք վաթսուն մետրի վրա են: Երևում են նույնիսկ սպայական աստիճանների նշանները: Լսվում է քայլերի թընդյունը:

— Լավ են գալիս...

Ասում է Դավիթն ինքն իրեն ու սկսում առաջին համազարկը: Դա ազդանշանն էր: Գործեցին մեկեն բոլոր հաստոցավոր ու ձեռքի գնդացիրները, միաժամանակ կրակ սկսեցին բոլոր հրաձիգներն ու սնայպերները: Թափվում էին գերմանացիներն ինչպես չորացած հասկերը կարկուտից: Շարքերը երերալով դեռ առաջ էին գալիս: Կրակն ուժեղ էր փոթորկից էլ, թշնամին դիակներ էր թողնում իր հետևից, բայց դեռ առաջ էր նայում: Արդեն երեսուն մետրի վրա էին: Այդ ժամանակ ահեղ թնդյուններով պայթեցին կանաչ շինելավորների վրա ձեռքի կլոր նռնակները: Հիտլերականները ցրիվ եկան: Շատերը հետ դարձան ու փախչել սկսեցին: Գերմանական զինվորի փախչելու ընդունակությունն այնուամենայնիվ չի գերազանցում գնդացրային գնդակների արագությանը:

— Ուժե՛ղ, ուժե՛ղ կրակ,— հրամայում է Դավիթը:

— Ավելի՛ ուժեղ...

Անհետացան հիտլերականների գոռոզ շարքերը, կենդանի մնացածները խոհեմություն համարեցին դիակների պես փռվել գետնին, հուսալով ազատվել կրակից: Գտնվեցին պնդաճակատներ էլ նրանց մեջ, որ դեռ առաջ էին գալիս: Դրանք մի քանի սպաներ էին, որ ընկան նախքան դիրքերին հասնելը, իսկ մի համառ ֆաշիստ սպա, ճարպոտ փորին ավտոմատի կոթը դրած, անկանոն կրակ շաղ տալով դեռ գալիս էր: Դավիթը վերցրեց բազմեցի քաղղեկ Պողոսյանի ձեռքից դեռ չլցված պոչավոր նռնակն ու այնպես դիպուկ, այնպես ուժգին նետեց նրա

վրա, որ նռնակը կպավ հաստլիկի քունքին ու նա ընկավ իր մահը գտնելով հսկայի հարվածից:

Ոչ մի գերմանացի չկար ոտքի վրա կանգնած, դժվար էր որոշել թափվածներից որն է սպանված, որը՝ կենդանի: Բայց հենց որ մեկը տեղում խլվլում էր, այնտեղ թափվում էին գնդակները: Պետք է թույլ չտալ ոչ մի փախուստ փորձի կրակ բանալ մերոնց վրա: Ի՞նչ անել հիմա,— մտածում էր ամեն մարտիկ ու սպասում հրամանի:

Դավիթն անհրաժեշտ համարեց, որ ստորաբաժանումը հետ գնա դեպի հին դիրքերը, տարածությունը լայնացնելու համար, որ գերանդին լավ վերցնի կոնը և լոսերը փակեն գետնին: Մարտիկներն իրենց զենքերով ետ սողացին, իսկ ինքը երկու քաջի հետ միասին գնդացրային կրակով ստիպեց թշնամուն չշարժվել տեղից, պառկած մնալ: Երբ արդեն խումբն ամրացել էր հին դիրքերում, Դավիթն իր հաղթական ուսերին դրեց գնդացիրն ու ինքն էլ այնտեղ հասավ: Այլևս կրակ չէր տեղում գերմանացիների վրա: Սկսեցին շարժվել: Բայց նրանք չէին կարողացել գլխել, թե ինչ տեղի ունեցավ: Զգացին միայն ինչ-որ փոփոխություն: Մտածեցին երևի նրանք, որ փամփուշտներ չեն մնացել այլևս մերոնց մոտ: Մեկ-մեկ սկսեցին ոտքի կանգնել: Ոմանք հետ էին փախչում, ոմանք առաջ էին գալիս հուսահատ ոռնոցներով: Իսկ կրակ դեռ չկար: Բոլոր կենդանի մնացածներն արդեն ոտքի վրա էին:

Փոթորկալի կրակը երկրորդ անգամ հանկարծակիի բերեց նրանց: Գնդացիրները փռում էին գետնին, ինչպես գերանդին՝ վարժ հնձվորի ձեռքում՝ կարճ դադարից հետո: Թշնամին այդ օրը կրեց լիակատար պարտություն:

Այսպես է գործում ահա այն մարդը, որ կրում է մեր ազգային հերոսների փառավոր անունը, այսպես է գործում մեր նոր քաջ Դավիթը: Նրա մարտական կյանքի ամեն մի օրն ունի սքանչելի հերոսություններ:

Հիմա Դավիթը մեզ հետ չէ: Նրան ասացին. «Դու գյուղատնտեսական գիտություններ ես սովորել ինստիտուտում, այժմ գնա ռազմական ակադեմիայում սովորելու, քո մասին լսելով այդպես է կարգադրել բարձր հրամանատարությունը»...

Մենք նրան սիրով ճամբու դրինք: Գնաց նա իր խիզախությանն ու հերոսական ոգուն գումարելու ռազմական բարձր գիտությունը: Մի քանի ամիս հետո կվերադառնա նա և կկռվի

թշնամու դեմ որպես մեկն այն տաղանդավոր ռազմիկ հերոսներից, որ ամեն օր, ամեն ժամ ծնվում են հայրենական պատերազմի ահեղ բոցերի մեջ...

2.

...Նա բարձրահասակ է, հաղթանդամ, թխահեր, մեծ ու խելացի աչքերով: Ասենք ի՞նչ եմ նկարագրում Բարթուղին, երևանցիներից ո՞վ չի տեսել նրան, ո՞վ չի հիշում մեր համաքաղաքացու պարթև հասակը:

Ահա նա վերադառնում է մարտից: Բարի տանտիրուհին ուրախ դիմավորում է նրան: «Կովկասցին» բարևում է, հանում դաշտային պայուսակը, որ նման չի սովորական հրամանատարական պայուսակներին, արձակում է ատրճանակը, որ նման չի մեր ատրճանակներին, սանրվում է, իսկ երբ նստում է ճաշի, բացում է դաշտային ծալովի դգալն ու պատառաքաղը: Նրա մոտի իրերից յուրաքանչյուրն ունի իր հետաքրքրական պատմությունը, որոնցով զբաղվելը մեզ հեռու կտաներ: Բարթուղ Պետրոսյանը պահում է այդ իրերը և հետո էլ կպահի՝ որպես սուվենիրներ հայրենական պատերազմից:

Դժվար է գրել Բարթուղի մասին օչերկի սեղմ շրջանակներում: Վեպի ժանրը միայն կարող է նկարագրել նրա լրիվ կերպարը, եթե հարկավ շնորհքով օժտված հեղինակ փորձի այդ բանն անել: Մեր խնդիրը համեստ է՝ տասնյակ դեպքերից ընտրել մի երկուսը և պատմել դրանց արտաքինը, գործողությունը, այն էլ արագ, թռուցիկ՝ հոգեբանական հարուստ նյութը թողնելով վաղվա հեղինակին...

... Դա դեռ աշնան օրերին էր, երբ մենք ժամանակավոր անհաջողությունների դառն զգացմունքները կուլ տալով՝ ետ էինք գալիս դեռ: Գալիս էինք ամեն թիզ հող պաշտպանելով մեր արյունով ու կյանքով, թշնամին սողում էր առաջ իր սեփական դիակների վրայով: Ահա այդ ժամանակ մի անգամ Բարթուղը խնդիր ստացավ իր հետ վերցնել մի դասակ, անցնել թշնամու թիկունքը և համարձակ գործողություններով խանգարել նրան հարձակման դիմելու, օգնել մեր զորամասի ստորաբաժանումներին հակագրոհների դիմելու: Գիշերով Բարթուղը վերցնելով իր հետ քաջերի մի դասակ, զինված ծանր ու ձեռքի գնդացիրներով, անցավ թշնամու թիկունքը: Մինչև լու-

տագեմ նա պարզեց իրերի դրությունը: Լուսաբացին վարպետորեն քողարկվելով արևածաղիկների արտի մեջ՝ նա թույլ տվեց, որ գերմանական գումարտակն առաջ անցնի իրենց մոտից: Գումարտակը գնում էր լրացնելու ճակատում կռվող գերմանացիների նոսրացած շարքերը: Գնդացիրները տարբեր տեղերում էին կրակի կետեր ընտրել: Հրամանատարն սպասում էր հարմար մոմենտին: Հասավ այդ մոմենտը և Բարթուղը հրամայեց. «Կրակե՛լ...»:

Ճարճատեցին գնդացիրները տարբեր ուղղություններից: Գերմանացիները խուճապի մատնվեցին: Դա նրանց անհասկանալի էր թվում. չէ՞ որ դեռ հեռու էին կրակի գծից: Գեբբելսյան զառանցանքներն այն ժամանակ նոր ճակատ եկող գերմանացուն երևի ճշմարիտ էին թվում, թե ռուսները միայն նահանջում են... առաջին համազարկից մի տասնյակից ավելի ֆաշիստ ընկավ: Զանազան կետերում քողարկված գնդացիրներից տեղացող կրակն այն տպավորությունն էր ստեղծում, թե շատ են մերոնք և շրջապատել են նրանց: Գերմանացիները թվով 25—30 անգամ գերազանցում էին սովետական խիզախ հայրենասերներին: Դասակի հրամանատար Ալյոշա Սաղաթյանը թողնում էր հիտլերականներին մոտենալ մինչև 65—70 մետր և բառացիորեն հնձում էր նրանց գնդացիրով: Ավելի մոտ թողնելը շատ հունձ կտար, բայց շուտ կմտնեին գաղտնիքը, նպատակահարմար չէր: Այդպես էր պատվիրել ավագ լեյտենանտ Բարթուղ Պետրոսյանը:

Կռիվը տևեց տասներեք ժամ: Թշնամին հարկադրված եղավ հրաժարվել այդ օրը գրոհից այդ գծամասի վրա:

Իջավ մութ, անձրևային գիշերը: Անվեհերները դուրս եկան թշնամու թիկունքից, այդ կռվի ընթացքում անարգ կյանքից զրկելով մոտ 120 գերմանական զավթիչի: Մերոնցից հերոսի սրբազան մահով ընկան միայն հինգ հոգի:

Մի քանի օր հետո Բարթուղն ստացավ մի նոր, ավելի դժվարին մարտական խնդիր: Հանձնարարվեց նրա ստորաբաժանմանը մինչև ատամները զինված թշնամու՝ թվով գերազանց ուժերի դեմ երկու օրվա ընթացքում պաշտպանել N անտառի եզրը: Գիշերով իր ստորաբաժանման հետ դիրքեր փորեց նա, ամրացավ նրանց մեջ ու քողարկվեց: Առավոտյան սկսվեց մարտը: Անընդհատ կրակում էին թշնամու հրետանին ու ականանետները, երկնքից անվերջ ռումբեր էին թափում ֆաշիստական

ռմբակոծիչները, կործանիչներն իջնում էին ցած, գնդացիրներից համազարկեր թափում այնտեղ, որտեղ սովետական զինվորներն էին ամրացել: Ահեղ աղմուկից գետինը ցնցվում էր, ինչպես երկրաշարժից: Հրետանու, ականանետների և ավիացիայի ինտենսիվ գործողություններից հետո, ֆաշիստական հետևակը գնաց գրոհի: Բայց նրան դիմավորեցին մեր քաջերը չտեսնված կրակի փոթորկով: Ֆաշիստներն ստիպված եղան նահանջել: Մյուս օրն ամեն ինչ կրկնվեց նույնությամբ և սովետական դյուցազունները ոչ մի քայլ չնահանջեցին: Այնուհետև ֆաշիստական տաք գլուխները մի քիչ սառեցին, իրենց հաշիվ տվին ու լռեցին այդ հատվածում: Մի քանի օր հետո, երբ էլի կրկնեցին, արդյունքն էլ նույն կերպ կրկնվեց: Մերոնք կպել էին հողին և պոկ չէին գալիս: Երկու օրվա փոխարեն Բարթուղի ստորաբաժանումը տասներկու օր պահեց իր գծամասը և օգնեց հրամանատարությանը լուծելու զորամասի առաջ դրված մարտական խնդիրները:

Նույն այդ օրերին էր, որ գիշերով դարան պահելով թշնամու թիկունքում, նա գերի բռնեց մի հիտլերական զինվորի: Գերին կծկվում էր հսկայակերպ հրամանատարի հայացքի տակ, անհասկանալի լեզվով խնդրում, որ իր կյանքը խնայի: Երբ թարգմանեցին, Բարթուղը բարկացավ ու իր մեծ թաթով բռնելով նրա ծոծրակից, բարձրացրեց օդի մեջ: Ֆաշիստը ոտքերը թափահարում էր, ինչպես կախաղանից կախվածը: Դրեց գետնին:

— Իսկ դուք խնայո՞ւմ եք, հա՞, սրիկանե՛ր...

Այդ խոսքերին հետևեցին Կարնո բարբառի ընտիր բառերն էլ, որ պատերազմում գործածել կարելի է, բայց թղթի վրա չեն գրում:

— Руски незнай, руский незнай!

Թոթովում էր հիտլերական ավազակը:

— Ես հայերեն եմ խոսում, ոչ թե ռուսերեն,— պատասխանում էր Բարթուղը,—... Եթե սիրտդ էդ է, ինչո՞ւ ես կռվում...

— Незнай руски, незнай,— կրկնում էր սարսափած ֆաշիստը:

Այդ օրերին մի հերթական ճակատամարտի մեջ Բարթուղն առնական ձայնով քաջության էր կոչում իր զինվորներին: Ֆաշիստական սնայպերի գնդակը կպավ նրա ոտքին: Այստեղ հերո-

սուԹյուն գործեց ղանղեզուրցի սերժանտ-սնայպեր Մովսես
Գալստյանը: Իսկ Թե ինչպես, հետո, երբ կխոսենք նրա մա-
սին...
Բարթուղը երկար չմնաց հիվանդանոցում: Հինգ օր հետո
նա այնտեղից դուրս փախավ և հասավ իր ստորաբաժանմանը:
Զինվորները ցնծությամբ ընդունեցին իրենց ավագ լեյտենան-
տին:
— Ես սիրում եմ ձեզ, ընկերներ, չեմ կարող առանց ձեզ
ապրել, սովորել ենք իրար հետ միասին կռվել Թշնամու դեմ,
կարոտեցի ձեզ, եկա, ձեր կյանքը Թանկ է ինձ համար...
Ուրիշ անգամ Բարթուղն այդպիսի խոսքեր չէր ասում իր
մարտիկներին: Հաճախ ավելորդ են խոսքերը, երբ զգացմունք-
ները ամեն մարդ էլ կարդում է: Այս անգամ կարոտն սաս-
տիկ էր: Դա հասկանալի զգացմունք է պատերազմում բարեկամա-
ցած մարդկանց համար:
— Ձեր կյանքն էլ մեզ համար է Թանկ, ընկե՛ր հրամանա-
տար, լավ կլիներ կարգին բուժվեիք:
— Ոչինչ, արդեն օպերացիա են արել, կապել, կռվի մեջ
կլավանա, այնտեղ պառկելն ու սպասելը ծանր էր ինձ համար,
չունչս կտրվում էր...
Նա ինքն էլ դուցե չմտածեց, Թե ինչքա՛ն մեծ բարոյական
ազդեցություն կունենա այդ վարմունքն իր զինվորների վրա:
Երբ հետևյալ օրը նա պատահմամբ լսեց նրանցից երկուսի խո-
սակցությունը, նոր հասկացավ. նրանցից մեկն ասում էր.
— Մեր հրամանատարն այնպիսի մարդ է, որ վիրավոր
ոտքով եկավ կռվելու, մենք ուրեմն պիտի արժանի լինենք
նրա բանակայիններ կոչվելու, այդպիսի մարդու ղեկավարու-
Թյան տակ միշտ կհաղԹես...
Եվ նրանք հետագա բոլոր կռիվների մեջ Բարթուղի մար-
տական, անդավաճան օգնականները դարձան, նրա հետ միասին
գործեցին շատ քաջություններ, որոնց մասին ամեն օր գրում
էին զինվորական ԹերԹերը, խիզախ արծիվներին կոչելով
«Петросянцы»...
Ահա այդ սխրագործություններից մեկը:
Թշնամին լուսադեմին պաշարեց Պ. գյուղը, որը հանձնված
էր Բարթուղի ստորաբաժանման պաշտպանությանը: Գերմանա-
ցին եկավ գողի պես, ամարդի, ինչպես միշտ, բայց անակնկա-
լի բերել չկարողացավ: Վայրկենապես մեր քաջերը պատրաստ-
վեցին կռվի: Կռիվը տաքացավ: Հրամանատարն այնտեղ էր,
ուր ամենից վտանգավոր էր: Մի գնդացրորդ սպանվեց Թշնա-
մու գնդակից: Երկու գերմանացի վազեցին, բռնեցին գնդացիրն
ու քաշ տալով սկսեցին տանել: Բարթուղն այդ տեսավ: Կռվի
սկզբից նա ոչ մի հրացան չէր Թողել Թշնամուն, հիմա գնդա-
ցի՞ր տա: Դա խայտառակություն կլինի:
— Զումպան, փրկի՛ր գնդացիրը,— հրամայեց նա ուղեկ-
ցին և ինքն առաջ վազեց նրանից,— որի իմ
քաջ սնայպերին ու ինքն առաջ վազեց նրանից,— որի իմ
հետևից...
Գերմանացիներից մեկն ընկավ Զումպանի դիպուկ կրակից,
իսկ մյուսը, որ սպա էր, Բարթուղի նետած նռնակի պայԹյու-
նից փշրված գանգը Թողեց սադավարտի մեջ, իսկ մարմինը
կտոր-կտոր եղավ: Միակ բանը, որ անվնաս էր մնացել հիտ-
լերյան սպայից, նրա ատրճանակն էր, որ ահա, քիչ առաջ
Բարթուղն արձակեց իր վրայից... Բայց մենք խոստացանք նրա
իրերի պատմությամբ չզբաղվել...
Գերմանացիների այդ օրվա ավանտյուրան ողբալի ար-
դյունքներ ունեցավ նրանց համար: Նրանք ցանկանում էին ա-
վար տանել մեր գնդացիրը, Թողեցին իրենցը, Թողեցին նաև
ականներ, հրացաններ, փամփուշտներ, ռազմապարագա, Թողե-
ցին 47 սպանված և 60 վիրավոր:
Այս բոլոր դեպքերը, այսպես ասած, մարտական անցյալ
են այսօր Բարթուղ Պետրոսյանի համար: Դրանից հետո եկան
հայրենական պատերազմի նոր, փառավոր օրեր, հասավ արդար
հատուցման ժամը, արդար վրեժխնդրության ժամանակը: Հայ-
րենական պատերազմի ամեն մի մասնակից ցնծությամբ դիմա-
վորեց նոր շրջադարձը, լի սրտով դիմավորեց ժողովրդի ու բա-
նակի առաջնորդի հրամանը պաշտպանական պատերազմից հար-
ձակման անցնելու մասին: Մի երեկո հավաքելով իր ստորա-
բաժանման բոլոր բանակայիններին ու հրամանատարներին՝
խոսեց Բարթուղը իր սովորական, հանդիստ տոնով. «Վաղը
հարձակման ենք գնալու: ՅոԹ ամիս էր, սպասում էինք այս
օրվան: Դժվար կլինի հարձակումը, Թշնամին ամրացել է իր
դիրքերում, բայց մեր պարտքն է՝ կամ մեռնել, կամ դուրս
քշել նրան դիրքերից: Ես պատրաստ եմ մեռնելու հայրենիքի
համար, ես մահից չեմ վախենում. ո՞վ է ինձ հետ»...
— Բոլո՛րս, բոլո՛րս—ձայնեցին ամեն կողմից մարտիկները:
— Բոլորս էլ ձեզ հետ կլինենք...

Դա էլ հենց համարվեց մխինդը՝ հարձակումից առաջ:
Բարթուղը բացատրեց ամեն մեկի խնդիրը, ամեն մեկի հետ
առանձին զրույց արեց, սրտագին զրույց: Մյուս օրն առա-
վոտյան սկսվեց հարձակումը: Պետրոսյանի ստորաբաժանման
խնդիրն էր՝ դուրս քշել գերմանացիներին Ռ. ավանից և գրավել
այն: Թշնամին կառուցել էր պաշտպանության ամրություններ:
Ամբողջ տեղանքը գտնվում էր հրետանու, ականանետների և
դնդացրերի կրակի տակ: Պետք էր գրոհի գնալ բաց տարածու-
թյունների վրայով: Ոչինչ սարսափելի չթվաց մարտիկներին:
իրենց հրամանատարի պես արհամարհելով մահը՝ նրանք կրակի
ու արկերի պայթյունների միջով հասան թշնամու դիրքերին:
Հնչեց հրամանատարի հուժկու ձայնը, որ առյուծի մռնչոցի
պես հասավ բոլոր մարտիկներին, հասավ նաև թշնամուն:
— Հանո՛ւն հայրենիքի, հանո՛ւն Ստալինի, առա՛ջ, ա-
ռա՛ջ...
Բոլորը խոյացան դեպի թշնամին, կրկնելով կոչը: Գերմա-
նացիները սարսափում են սովետական զինվորների ձայնը լսե-
լիս, նրանք դողում են, երբ հայրենիք և Ստալին բառերը կան-
չելով՝ դեպի իրենց են վազում Կարմիր Բանակի մարտիկները:
Հիտլերականները դուրս փախան իրենց ամրացված դիրքերից՝
թողնելով դիակներ, զենքեր և ցավից ու վախից ճչացող վիրա-
վորներ: Գրավելով թշնամու ականանետները՝ Պետրոսյանական-
ները դարձրին դրանք ֆաշիստների դեմ ու հարյուր ական ար-
ձակեցին, մերոնք նրանց դեմ դարձրին նաև նրանց դնդացրե-
րը...
Խնդիրը կատարվեց ճշգրտությամբ: Թշնամին թողեց այդ
փոքրիկ հատվածում դիակների կույտեր: Ոչ մի զավթիչ սպան-
ված չէր միայն մի գնդակով, այլ մի քանիսից էր ընկել: Մե-
րոնք բոլորն էլ կռվում էին հերոսաբար, մարդկանց դեմքն
այրվում էր կրակով: Միայն կոմերիտական Խուրժիլովը ձեռքի
գնդացրով ոչնչացրեց 18 ֆաշիստ, սնայպեր Զումպանը՝ 15,
Խայդալովը՝ 8: Ստորաբաժանումը թշնամուց ավար վերցրեց 2
ծանր և 3 ձեռքի գնդացիր, 2 թնդանոթ, երկու ականանետ,
հակատանկային զենք, ռազմամթերք:
Այդ օրն ամեն մեկը գոհ մնաց իրենից, որովհետև բոլորի
գնդակներից էլ հայրենիքի թշնամիներ էին ընկել, որից՝ շատ,
որից՝ քիչ:
Գոհ էր իր գործողությունից նաև Բարթուղ Պետրոսյանը,

նրա գլխարկն ու հագուստները ծակծկվել էին գնդակներից ու
ականների բեկորներից, բայց նա կենդանի ու առողջ էր մնա-
ցել և որ գլխավորն է, պատվով էր կատարել իր խնդիրը:
Երբեք նա իրեն այնքան երջանիկ չէր զգացել ինչպես այդ օրը:
Հոգին երգում էր, քնքուշ երգեր էր երգում սիրո և հայրենիքի
մասին: Հենց այդ ժամանակ ճակատային նամակաբերը մատու-
ցեց նրան մի փոքր ծրար՝ ծանոթ ձեռագրով: Հուզմունքից դո-
ղաց հերոսը: Բացեց նամակը: Տողերը խառնվում էին իրար:
Մի պահ փակեց աչքերը: Ահա հարազատների կերպարանքները,
երեխաների՝ Մայիսի, Մարտիկի, Կիմիկի, Մելսի, ահա սիրելի
կնոջ՝ Քնարիկի մտերմական ժպիտը: Նա տեսնում էր երևակա-
յության աչքերով նաև իր նորածին Սամվել որդուն, որի առա-
ջին ճիչը դեռ չէր լսել:
Նա նամակը կարդաց արագ, կլանեց միանգամից: Հիշողու-
թյան մեջ մնացին առանձին մտքեր ու նախադասություններ:
Ապա կրկնել սկսեց սկզբից:
Նամակը երկար էր: Կինը խնդրում էր հայտնել, թե ո՛ր
օրը և ո՛ր ժամին է վիրավորվել ամուսինը, որ իմանա, թե
այդ օրն ու այդ ժամին, այդ րոպեին ինչով էր զբաղված ինքը
և ինչ էր մտածում:
«Հուզված է եղել նամակը գրելիս...»— մտածեց Բարթուղը
և ինքն էլ տարվեց հիշողություններով: Հայրենի երկիրը,
մտերիմ ընկերներն իրեն չեն մոռանում, հիշում են: Բարևել
են Ավագը, Գարեգինը... Ինչպե՜ս արագ անցավ ժամանակը,
անցել է քսաներկու տարի, բայց թվում է, թե երեկ էր, որ
նրանք միասին, զենքը ձեռքներին կռվում էին նույն այս օրվա
գործի համար, կռվում էին հանուն հայ ժողովրդի ազատու-
թյան, հանուն բոլշևիկյան հաղթանակի: 18—19 տարեկան
պատանիներ էին այն ժամանակ... Հիշողությունները տարան
նրան մինչև մանկությունը, Էրզրում քաղաքը հիշեց կրկին՝
ցավագին հիշողությամբ աղոցագործի այն ընտանիքի ողբերգու-
թյունը, որ տասնյակ հազարների ողբերգությունն էր... Այդ
ընտանիքի ծնունդն է ինքը: Վերջին քսան-քսանհինգ տարվա
կյանքն անկանոն երազի պես անցավ նրա մտքի էկրանի վրա-
յով:
Այդ ժամանակ մոտեցավ նրան շտաբի աշխատակիցն ու
զեկուցեց.

— Ընկեր ավագ լեյտենանտ, զորամասի հրամանատարը
հրամայեց, որ հենց հիմա ներկայանաք իրեն...
Երեկոյան հայտնի դարձավ մարտիկներին, որ իրենց հրա-
մանատարին փոխադրում են այլ զորամաս, նրա հրամանատա-
րության տակ են դնում մի քանի անգամ ավելի մեծ ստորա-
բաժանում: Մարտիկներն ուրախացան հրամանատարի հաջողու-
թյան համար, բայց տխրեցին, որ պետք է բաժանվեն: Եվ ճամ-
բու դրին նրան գնդայրային հանդիսավոր համազարկ արձա-
կելով, հանդիսավոր սալյուտով: Բարթուղի համար էլ դժվար
էր բաժանումը: Գիտեր, որ նրանցից որին էլ ինքը դեպի ակն-
հայտ մահ ուղարկեր, կգնային: Այո՛, նա դաստիարակել էր
անձնվեր դյուցազուններ: Դրանցից մեկն էր ահա Մաթևոս
Դավթյանը, որի մասին այժմ տեղն է, որ պատմենք...

3.

... Քաջ տղա է Սյունյաց աշխարհի փառապանծ հերոսների
արժանավոր ժառանգ սերժանտ Մաթևոս Դավթյանը: Իր ժո-
ղովրդի անունն ու պատիվը նրա համար ամենից բարձր, թանկ է
և ավելի թանկ, քան կյանքը: Եվ նա այդ պատիվը միշտ անա-
ղարտ է պահում ամենադաժան կռիվների մեջ՝ գերմանական
զավթիչների դեմ: Անվախ է Դավթյանը, խիզախ է ու կայծակ-
նային, ինչպես հայրենի լեռների արծիվը: Նա տիպարն է այն
նոր մարդու, որին խաղաղ ժամանակ փնտրում էին գրողները
երգելու և հաճախ չէին գտնում: Ամենասքանչելի հատկությու-
նը նրա մեջ սերն ու նվիրվածությունն է դեպի ընկերը, դեպի
հրամանատարը: Դա դեպի հայրենիքն ունեցած սիրո արտահայ-
տություններից մեկն է: Մշտական ձգտում՝ օգնել ընկերոջը,
պաշտպանել հրամանատարին կռվի մեջ, մշտական արթնու-
թյուն՝ կանխելու թշնամու հարվածը, համառ ու անկոտրում
կամք՝ ծանր կռիվների մեջ— ահա՛ Մաթևոս Դավթյանի այն
հատկությունները, որ օգնեցին նրան ռազմի վարպետության
հասնելու դարչնագույն վայրենիներից մեր կյանքը, մեր պա-
տիվն ու արժանապատվությունը, մեր հայրենիքը պաշտպանելու
վեհ ու սրբազան գործի մեջ:
... Ֆաշիստական սնայպերի գնդակից ոտքից վիրավորվում
է ավագ լեյտենանտ Բարթուղ Պետրոսյանը: Սերժանտ Դավ-
թյանը սողում է նրա մոտ, արագ կապում վերքը: Դա տևում
է մի քանի րոպե:

— Դու հանդիստ եղիր, ընկե՛ր հրամանատար,— ասում է
նա,— չեմ թողնի գերմանական շները քեզ մոտենան... միայն
մի քիչ սպասիր, հանգստացիր... սպասիր ինձ...
Ու անհետանում է թփերի մեջ: Գետնին ծեփված, սողում է
նա առաջ, սողում է մացառների միջով, ծածկվում թմբերի
տակ: Շունչ է առնում, մի վայրկյան հանգստանում, լարում
իր սուր լսողությունը՝ համազարկերի միջից որսալու թշնամու
սնայպերի ընդհատ-ընդհատ կրակոցները: Ու կրկին սողում է,
սողում է նրա կրակոցի ուղղությամբ: Երբ արդեն մոտ է,
զգույշ զննում է այն կասկածելի փոսն ու թումբը, թփերն ու
ճյուղերը, որ կարող են թաքստոց լինել թշնամու սնայպերի
համար: Երկար է զննում, ապա նշմարում է թաքնված ֆաշիս-
տին, որ պատրաստվում էր նշան բռնել...
Արագանում են Մաթևոս Դավթյանի սրտի զարկերը...
Ո՞ւմ վրա էր նա նշան բռնել, ո՞ւմ հարազատ, սիրելի կյանքի
վրա: Այդ ո՞ր կյանքն էր, որ փրկվեց ու անվնաս մնաց ծա-
ռայելու համար սիրեցյալ մայր հայրենիքին... Ետ սողալիս,
այդ մասին էր մտածում Դավթյանը: Նա չէր կարող որոշել,
թե ում է փրկել մահից, բայց այն գիտակցությունը, որ ինքը
գործեց այնպես, ինչպես պետք է գործել, որ մի ակնթարթ
շուտ հասավ և կանխեց հիտլերական սնայպերին, դիպուկ
գնդակով փշրելով նրա գանգը, այդ գիտակցությունը ուժ ու
թև էր տալիս նրան: Ինչքա՜ն ազնվանում է մարդու հոգին,
երբ խղճի ձայնը կշտամբանքի փոխարեն խրախուսում է. «Դու
կատարեցիր քո պարտքը, լավ կատարեցիր»... Մարդու հոգին
լցվում է վեհ զգացմունքներով, զգում ես քեզ հսկա, ամուր
կանգնած քո մայր հողի վրա: Այդպիսի զգացմունքներ Դավ-
թյանը շատ անգամ է ունեցել և ուներ այդ օրն էլ:
— Հիմա կարող ենք քեզ սանգումարտակ տանել, ընկե՛ր
հրամանատար,— ասաց նա վերադարձին:
Պետրոսյանը ոչինչ չհարցրեց նրան: Հասա՞վ սերժանտն իր
նպատակին, թե չէ: Հրամանատարը ճանաչելով իր քաջին՝ գի-
տեր, որ եթե Դավթյանը վերադարձել է, ուրեմն կատարել է
այն, ինչ ուզում էր կատարել: Դա երևում էր նաև նրա ու-
րախ, երջանկությունից շողացող դեմքից: Ինքը Դավթյանն էլ
ոչինչ չզեկուցեց: Կարծես դա առօրյա, սովորական ու հասկա-
նալի բան էր, որ լինում է ու պիտի լինի:
Եղավ մի օր էլ, որ ստորաբաժանումը շրջապատման մեջ

ընկավ: Թշնամին պատրաստվում էր սեղմելու օղակը, նա դիրքավորումների վրա տանկեր էլ էր բերելու: Օդից ուժեղ ռմբակոծություն սկսվեց: Ստորաբաժանումն զգաց հակառակորդի թվական ու տեխնիկայի գերակշռությունը, պատրաստվեց հերոսական դիմադրության:

— Մի խիզախի գործողությունը կարող է մեր պատվի հետ միասին փրկել նաև մեր կյանքը. ահա հերոսություն ցույց տալու հնարավորություն: Ո՞վ է ցանկանում ինքը լինել այդ հերոսը...

Պետք էր թշնամու գնդացրային ու ավտոմատային կրակի տակ գտնվող միակ բաց ելքից գնալ կապվել մեր զորամասի հետ, հայտնել թշնամու ուժերի, նրա կրակային կետերի ու դիրքերի դասավորության մասին և մերոնց կրակի օգնությամբ ճեղքել շրջապատման օղակը: Գերմանացիներն այնպես էլ ցանկանում էին, որ մերոնք դիմեն այդ փոքրիկ ելքին ու ոչնչանան:

Դեռ հրամանատարը չէր ավարտել իր խոսքը, որ Դավթյանը բացականչեց.

— Ես եմ ցանկանում, ընկե՛ր հրամանատար, խնդրում եմ թույլ տալ ինձ գնալու...

Նա միակը չեղավ: Բոլորն էլ ցանկություն հայտնեցին: Բայց հրամանատարն այդ պատիվն արժանացրեց նրան, ով առաջինն էր ցանկություն հայտնել:

Եվ գնաց համարձակը: Գնդակները թռչում էին շուրջը, առատ անձրևի կաթիլների պես շատ, ծակում էին հագուստները, գլխից վայր գցում գլխարկը, պայթում էին դեմքի առաջ. Թշնամին արձակում էր նաև պայթուցիկ գնդակներ, որոնք սուլելով անցնում էին ոտքերի միջով: Կռվի մեջ չեղած մարդուն դա կարող է անիրական թվալ. ինչպես է, որ ոչ մի գնդակ չի կպչում, անհավատալի չէ՞,—կհարցնի նա...

Բայց մենք չշեղվենք պատմությունից:

Կրակների փոթորկի միջով անցավ հանդուգն սյունեցին և վերահաստատեց զորամասի հետ խափանված կապը: Մինչ թըշնամին պատրաստվում էր սեղմել հարձակման օղակը, դղրդաց մեր հրետանին, շառաչեցին ականները... Զարդ ու փշուր եղավ «օղակը», մասերի կույտի վերածվեց: Ստորաբաժանումը հնարավորություն ստացավ ազատորեն գործողություն ծավալելու: Մարտից հետո ընկերները սերժանտին ձեռքերի վրա առան ու վեր-վեր թռցրին:

Մի ուրիշ անգամ կռվի թունդ ժամանակ Դավթյանը հրամանատարից թույլտվություն խնդրեց ձեռքի գնդացրով՝ սողալով թշնամու թիկունքն անցնել:

— Գործի՛ր,— ասաց Պետրոսյանը:

Այդ բանը չիմացան և չտեսան հրամանատարներից ու մարտիկներից շատերը: Նրանք միայն մի ժամ հետո հանկարծ թշնամու թիկունքից գնդացրային համազարկ լսեցին և տեսան, որ գերմանացիներն հանկարծակիի գալով, խառնվեցին իրար: Դա արդեն խուճապի նշան էր նրանց մեջ, որ ոգի ներշնչեց մերոնց. բայց ո՞վ է այնտեղ գործում, չէ՞ որ մեզնից ոչ մի զորամաս չկա այնտեղ:

— Դա սերժանտ Դավթյանն է գործում,— ասաց հրամանատարը:

Իսկ նա, սերժանտ Դավթյանը գործում էր տեղ-տեղ: Գնդացրի մի համազարկին մյուսը հետևում էր մի քանի րոպե հետո միայն: Ինչո՞ւ է այդպես լինում, ինչո՞ւ ավելի արագ ու վճռական չի գործում, մտածում էին շատերը: Բայց, չնայած դրան, գերմանացիների խուճապը կատարյալ էր: Գաղտնիքը պարզվեց հետո: Հետո դա պատմում էր ինքը սերժանտ Դավթյանը: Նա ցանկացավ տպավորություն ստեղծել, որ գերմանացիները կարծեն, որ ոչ թե մեկ, այլ շատ գնդացիրներ են անցել իրենց թիկունքը և այլևս իրենց համար փրկություն չկա, «կապու՛տ»... Ու, այդ պատճառով էլ մեկ-երկու համազարկից հետո փոխում էր տեղը, սողալով անցնում հիսուն, հարյուր մետր հեռու ու այնտեղից սկսում, որպեսզի քիչ հետո էլ մի այլ տեղից համազարկ արձակի: Այդպես ապահով էր նաև իր համար: Ու նա հասավ իր նպատակին, հիմարացրեց օբեր-թալանչիներին ու տխմար եֆրեյտորներին: Թշնամին այդ օրը նույնպես պարտություն կրեց, կորցնելով 85 զինվոր և երկու սպա:

Այդ դեպքից շատ օրեր չանցան, երբ Դավթյանին բախտ ընկավ մի նոր հերոսությամբ փառքով պսակել իր անունը:

Լավ զինված թշնամին, մոտ երկու վաշտի չափ, երեք կողմից հարձակվեց ստորաբաժանման մարտական պաշտպանության վրա, որ գտնվում էր սերժանտ Դավթյանի հրամանատարության տակ: Գերմանացին որոշել էր հանկարծակիի բերել, անակնկալ հարվածով ոչնչացնել մարտական պաշտպանությունը և խլել Ն. գյուղը, որ նախորդ օրը վերցրել էինք մենք:

Դավթյանի ջոկի քաջերը պատրաստվեցին պատասխան-կրակ բաց անելու: Չրխկացին փականակները, ժապավենները պատրաստվեցին ձգվելու: Բայց հնչեց սերժանտի հրամանը.

— Ոչ մի կրակ, չկրակել, թողնել սրիկաներին մոտ գան և ոչնչացնել բոլորին մինչև վերջինը, ոչ մի քայլ հետ չենք գնալու...

Նրանք ընդամենը... հինգ հոգի էին: Հինգ գյուղացու, սնված, մեծացած մեր պարտիայի գաղափարներով, ինչպես կորյունն՝ իր առյուծ մոր կաթով: Հինգ հերոս, մոտ 300 վայրենացած գերմանացու դեմ: Բայց նրանցից ոչ մեկը չմտածեց հետ քաշվելու մասին: Նրանց աչքերի առաջ էին հերոսական քսանութի կերպարանքները, որոնք չդողացին ահեղ տանկերի դեմ անգամ: Սերը դեպի հայրենիքը ուժեղ է կրակից ու մահից:

— Կռվել մինչև օգնություն ստանալը,— ասաց Դավթյանը: Գերմանացիներն այն ժամանակ կարող են գրավել մեր այս դիրքերը, երբ մեր դիակներն ընկած լինեն այստեղ...

Դա ընդհանուր որոշում եղավ: Հինգն էլ ճանաչում ու սիրում էին իրար: Շատ դժվար տեղերում էին եղել միասին, դժվար մարտերի մեջ, բայց միշտ էլ հաղթանակով էին դուրս եկել: Հավատում էին, որ այս անգամ էլ չեն պարտվի:

Գերմանացիներին այնքան մոտ թողեցին, որ շատ էր հարմար հնձի համար: Ու մեկեն սկսեցին գնդացրային համազարկեր տեղալ: Փռվեցին դիակները: Շարքերը խառնվեցին իրար: Դա ծանոթ, կրկնված տեսարան էր: Գերմանացու զոռոզ կեցվածքը վայրկենապես փոխվում է, երբ անհողդողդ ուժի ու կրակի է հանդիպում: Տատանվող շարքերն առաջ էին գալիս օրորվելով: Բայց երբ տեսան, որ ընդամենը մի քանի հոգի են սովետական քաջերը, ուժ առան:

— Ռուս, կապո՛ւթ, կապո՛ւթ,— ոռնում էր մեկը: Որպես պատասխան հնչեցին Դավթյանի լիաբերան հիշոցները. ընկերները չէին հասկանում, թե ինչ է ասում սերժանտը, բայց գիտեին, որ արժանի պատասխան են այդ խոսքերը գերմանացիների համար, որ ասում է նա մայրենի լեզվով:

Ֆաշիստներն առաջ էին գալիս, թեև տասնյակ դիակներ էին ընկել արդեն: Բայց ահա վերջացան փամփուշտները: Հերոսներից երկուսն էլ ծանր վիրավորված են: Մի վայրկյան

սարսուռ անցավ Դավթյանի մարմնով: Բայց նա ակնթարթային արագությամբ իրեն գտավ:

— Կապո՛ւթ, կապո՛ւթ,— լսվեց վերջին անգամ գերմանացու ձայնն ու խլացավ նռնակի պայթյունի մեջ: Այնուհետև այդ ձայնն այլևս չէր լսվում: Երեքն սկսեցին իրար հետևից նռնակ նետել թշնամու կույտերի մեջ, ոչնչացնել գորշնագույն ավազակներին: Բայց, ահա մնացին երկուսը: Ուրեմն՝ պետք է գործել ավելի եռանդուն, լարել, լարել ուժերը, մի ակնթարթի դանդաղությունը կարող է բերել մահ ու պարտություն:

Դավթյանը թշնամու վրա նետեց տասներեք նռնակ և երբ հուսահատորեն ձեռքը տարավ վերջին նռնակին՝ զարմանքով տեսավ հանկարծ, որ գերմանացիներն սկսեցին խուճապով փախչել: Լսեց մարտական ընկերների ուրախ ձայնը—օգնությունն էր հասնում: Պայծառ, երջանկության ժպիտը երևաց նրա դեմքին: Ու նա նետեց վերջին նռնակը թշնամու վրա...

Այսպես էր գործում երիտասարդ սյունեցին, Դավիթ բեկի հայրենակից՝ սովետական հերոսը: Վերջին մեր հարձակման ժամանակ նա, ինչպես միշտ, գնում էր առջևից և քաջարի ընկերներին գրոհի տանում հայրենիքի թշնամիների վրա: Գերմանացին փախչում էր մեր ուժի առաջ, փախչում էր սարսափած Մեծ Սովետական Միության բոլոր ազգերի լեզուներով լսվող բացականչություններից: Հայ ժողովրդի հին, հզոր ու նվիրական լեզուն հնչում էր գրոհի գնացող նրա որդիների բերանում, հնչում էր ազատագրական մեծ կռվի մեջ անմահ լեզուն այն ժողովրդի, որ իր հազարամյա կյանքի ընթացքում երբեք սուր չի բարձրացրել խաղաղասեր և արդարագործ հարևանի վրա և երբեք գլուխը չի խոնարհել ուժեղի ու բռնակալի առջև:

Մաթևոս Դավթյանն այժմ բուժվում է վերքից: Շուտով կվերադառնա նա դեպի շարքերը և կրկին կկռվի սովետական հրաշք գյուղացու նման:

... Ահա այսպես են ծնվում հերոսները: Ճշմարիտ է, նրանց ծնունդը տեղի է ունենում փոթորիկների ու ամպրոպների մեջ, տեղի է ունենում դժվարին, ծանր երկունքով, բայց ծանր երկունքից ծնվածն էլ ուժեղ է լինում: Ասում են, երբ երկնում է մայր առյուծը, նրա մռնչոցից դողդողում են դաշտ ու անտառ, հերոսական, սրբազան երկունքով՝ առյուծն առյուծ է ծնում...

* * *

Վերջացնում եմ երկարապատում իմ նամակը: Ուզում եմ շատ–շատ նամակներ գրել Հայաստան, պատմել մեր սիրելի հայ ժողովրդին նրա որդիների քաջագործությունները: Բայց դեպքերն այնքան կայծակնային արագությամբ են հաջորդում իրար, որ մինչև գրում, վերջացնում ես, տեղի են ունենում նոր, ավելի հրաշալի բաներ և ափսոսում ես, թե ինչու չսպասեցիր դա էլ ավելացնելու նամակիդ մեջ: Բայց դրանից հետո էլ նորն է ծնվում ու այսպես շարունակ: Հենց հիմա, երբ վերջացրի այս նամակը, հասավ ինձ իմ պաշտոնակիցը և հայտնում է, որ քաջ մայոր Սամվել Բարսեղյանի զորամասը հերոսական գրոհներով առաջ է գնում, գրավել է նոր գյուղեր, ոչնչացրել է 450 ֆաշիստական զինվոր, գերի է վերցրել 29 հոգի և շատ ռազմամթերք: Առաջինը՝ ազատագրված գյուղն են մտել ավագ քաղղեկ Գրիգորյանը, դարձյալ խիզախ հրամանատար Բարթուղ Պետրոսյանի ստորաբաժանումից...

Ես սրանով ընդհատում եմ ու շտապում այնտեղ: Ինձ այնտեղ է մղում իմ պարտքը:

28 II. 1942 թ.
Գործող բանակ





ՍՆԱՅՊԵՐԸ

1.

Գյուղի զանգակատանը թառել էին երկու վայրի գորշափետուր աղավնի և իրար թև էին կպցնում: Հանկարծ մի արձակված քար վզզալով անցավ թռչունների մոտով: Աղավնիները թափահարեցին թևերը և թռան:

— Թռա՜ն, Սե՛րոբ, թռա՜ն...,— այս ու այն կողմից աղմկեցին գյուղի երեխաները, որ հավաքված եկեղեցու ցանկապատի մոտ՝ ինչ որ բանի էին սպասում:

Մի բարձրահասակ պատանի հանդարտ քայլերով մոտեցավ եկեղեցու պատին, հենվեց և սկսեց դիտել, թե ինչպես են զույգ աղավնիները պտույտներ գործում օդում, զանգակատան շուրջը: Պատանին ձեռքին «Գեկո» սիստեմի հրացան ուներ:

— Չի՛ կարող, չի՛ կարող, հենց գլուխն է գովում,— կանչեց ցանկապատի մոտ հավաքվածներից մեկը, որին ընկերներն իր դանդաղկոտության պատճառով «չչմած Գևոր» էին կանչում:

Սերոբը (այդպես էր հրացանավոր տղայի անունը), առանց ուշք դարձնելու ընկերների խոսքերին, մեկ անգամ էլ խաղաղ, անվրդով նայեց վեր և վստահ շարժումով բարձրացրեց հրացանը և ուղղեց ճախրող աղավնիներից մեկի կողմը:

Կրակոց...

Աղավնին, մի ակնթարթ կարծես արձանացավ օդում և ապա ծանր քարի պես ընկավ գետին, զարմանքից ապշած երեխաների ոտների մոտ:

— Տո, չշմա՛ծ մանուշակ, ինչ էիր ձենդ ականջդ գցել, խոմ խփե՞ց տղան: Ասաց ու արեց,— վրա թափվեցին Գևորի վրա ընկերները:

— Տղե՛րք, Սերոբն իսկական սնայպեր է,— ասաց Աղասը:

«Սնայպեր»...

Այսպես էլ մնաց Սերոբի անունը գյուղում: Անցան տարիներ, աղվամազը կոշտացավ Սերոբի դեմքին, նա մեծացավ, առնականացավ ուստա Հայրապետի տղան, բայց «սնայպեր» անունը մնաց ու մնաց: Այդպես էին կանչում նրան թե՛ երեխաները և թե՛ վաթսունն արդեն բոլորած ալեզարդ ծերունիները: Նույնիսկ մայրն իր տղային իսկական անունով չէր կոչում:

— Հայրապե՛տ, սնայպերս ուշացավ...

— Սնայպե՛ր, մի հորթին էս կողը քշիր...

— Սնայպե՛ր ջան, բոյդ մատաղ...

Սերոբը չէր առարկում իր նոր անվանը և նույնիսկ կարծես այդ խոսքի մեջ իրենց համագյուղացիների սերն ու քնքշությունն էր զգում, նրանց համակրանքը դեպի երիտասարդ վորոշիլովյան հրաձիգը, որն իրավամբ իրենց շրջանում ամենալավ, դիպուկ կրակողն էր համարվում: Սերոբը միաժամանակ հիանալի որսորդ էր: Օրերով կկորչեր իրենց հայրենական անտառում: Սիրում էր նա թափառել սարում, ժամերով թաքնվել ժայռերի մեջ, սպասել որ ահա մի քարածերպի վրա տեսիլքի պես կերևա վայրի այծը: Սիրում էր նա աշնան իր «Թոփլան» շան հետ թափառել անտառում, լսել ոտքերի տակ չորացող տերևների անուշ խշխշոցը և փնտրել հեռավոր անտառախորշերում փնթփնթացող արջին:

Երբեք Սերոբն առանց որսի տուն չէր վերադառնա: Եվ երիտասարդ որսորդի բնավորությունն օր-օրի հղկվեց: Նա դարձավ ավելի համբերատար, դիմացկուն, ճարպիկ, իսկ անհամար գիշերներն անցկացրած հայրենի անտառներում և սարերում, մենակ թափառումները—նրան ավելի սրտոտ ու անվախ դարձրին:

Անցան տարիներ...

Երջանկությունը և ուրախ կյանքը շենացրեց ուստա Հայրապետի տունը: Թե՛ ուստան և թե՛ տղան կոլխոզում առաջավորներ էին: Ամուսնացավ Սերոբը և մի տղա ունեցավ:

Այսպես անվրդով, խաղաղ անցնում էին նրանց օրերը: Բայց պատերազմի ահեղ լուրը ցնցեց նրանց:

Սովետական մեծ երկիրը ելավ խարդախ թշնամու դեմ, որ մութ գիշերով սողոսկել էր ավազակի պես հայրենի հողը: Եվ միլիոնների հետ մեկտեղ Կարմիր Բանակ գնաց նաև Սերոբ Հայրապետյանը: Գնաց հպարտ, հայրենիքի սերը սրտում, մի սուրբ երդումով—վրիժառու լինել ոսոխից:

Երբ ուստա Հայրապետը բանակ էր ուղարկում որդուն, կանգնեց տեղում, ուղղեց մեջքը, մոտեցավ համբուրեց տղային և ասաց.

— Գնա՛, որդի՛, հայրենիքը քեզ կանչում է, գնա՛ սուրբ պարտքդ կատարիր, թե ուզում ես մեր սարերը ծաղկեն, մեր անտառներն ու դաշտերը կանաչեն, մեր գետերն ու աղբյուրները ուրախ քչքչան ու որդիդ էլ ազատ, երջանիկ մեծանա, վիշտ ու ցավ չտեսնի—գնա՛ մեր հողը պաշտպանիր զուլում թշնամուց: Թե պետք գա, ես էլ եմ քո քամակից գալու: Քա՛ջ եղիր, որդի՛ս, սիրտդ միշտ պինդ պահիր: Աչքդ սուր, ձեռքդ կտրուկ—դե սնայպեր անունդ բանակում էլ բարձր պահիր:

Իսկ մայրը սրբելով աչքերը, գրկեց որդուն և ասաց.

— Սե՛րոբ ջան, սնայպե՛ր ջան, քեզ լավ մտիկ արա:

Համագյուղացիները նրան ճանապարհ դրին մինչև իրենց գյուղի ծայրը, համբուրեցին, բարի ճանապարհ մաղթեցին:

— Սե՛րոբ, էդ քո սուր աչքով գյուլլախորով կանես թշնամուն...

Հայրենական մեծ պատերազմի օրերին Սերոբ Հայրապետյանը բանակ գնաց: Հենց առաջին ամսին, նա իրենց վաշտում ամենալավ կրակողն էր և Սերոբին սնայպերների դասընթաց ուղարկեցին: Վերադարձավ դասընթացից գերազանց գնահատականով: Ծնողները նամակ ստացան Սերոբի ընկերներից—նրանք գրում էին, որ նրանց որդին իրենց վաշտի լավագույն սնայպերն է, մարտական և քաղաքական ուսման գերազանցիկ: Շուտով Սերոբ Հայրապետյանը ճակատ մեկնեց:

2.

Պառկած է սերժանտ Հայրապետյանն իր թաքստոցում։

Ցուրտ է։ Ձախ կողմում, ուղիղ ծովի վրա, խոժոռադեմ բարձրանում են քարաժայռերը։ Պառկած է Հայրապետյանը, սեղմած կրծքին իր սնայպերական հրացանը։ Արդեն գարնան առաջին օրերն են։ Արթնանում է հողը—հարազատ երկրի հողը։ Նա սեղմվում է հողին, իսկ ձախ կողմից բացվում է ծովի կապույտ հարթությունը, մաքուր, հստակ, ինչպես գարնան ջինջ առավոտը։ Երկու ամիս է ինչ Հայրապետյանը թեժ կռիվների մեջ է։ Նրա հաշվում գրված է 22 ոչնչացված գերմանական և ռումինական զինվոր և սպա։ Իր զորամասում նա արդեն հայտնի մարդ է, սիրված ու հարգված արիության և անվրեպ կրակի համար։ Նրա սրատես աչքերի և գերազանց կրակի մասին խոսում էին ամենքը։ Հայրապետյանի կրակից ճանճը չի ազատվի, ուր մնաց ոջլոտ ֆրիցները, կամ ռումինական չփլաղները։

Հայրապետյանը մի փոքր բարձրացրեց գլուխը։ Դիմացը փռված է հարթավայրը։ Այնտեղ է թշնամին, արյունարբու ոսոխը թաղվել է հողի մեջ՝ վախկոտի պես։ «Թե տղամարդ եք՝ դուրս եկեք է՛, ձեր բներից»— շշնջում էր ինքն իրեն Սերոբը և ամուր սեղմում սիրելի հրացանը։ Չորս կողմը լռություն է։ Կռվի ժամանակ լինում են այսպիսի պահեր։ Տարօրինակ է ռազմադաշտում լռությունը։ Թվում է, թե վերանում ես մի այլ աշխարհ, սկսում ես երազել, աչքիդ առաջ են գալիս հարազատներդ, ընկերներդ, գուցե և մտքով սլանում ես տուն, բայց դա կարճ է տևում, մի որևէ կրակոց, կամ պայթյուն սթափեցնում է քեզ և իր ամբողջ հասակով կանգնում է քո առաջ պատերազմը, դաժան, խիստ ու անողոք, և դու նորից ամբողջապես լրջություն և ուշադրություն ես դառնում...

Պառկած է Հայրապետյանն իր թաքստոցում։ Գարնանն արթնացած հողի ծանոթ բուրմունքը մի պահ նրան, մտքի թևերով թռցնում է իրենց հայրենական դաշտերը, իրենց տունը, հարազատների մոտ։ Ո՞վ գիտի հիմա ինչ են անում մայրը, հայրը, կինը. տղան երևի արդեն վազում է և իր թոթով լեզվով բլբլացնում... Ծովից փչող սառը քամին սուլոցով անցավ նրանց դիրքերի վրայով։ Հանկարծ Հայրապետյանի ականջին հասավ մի հեռավոր աղմուկ։ Նա ականջը սեղմեց հողին։ Ոչինչ չկա...

Սնայպերի արծվային աչքերով նա զննեց հարթավայրը։ Ոչինչ չկա։ Ապա հայացքով չափեց նոսր ամպերով պատած երկինքը։ Աղմուկը վերից է։ Սերոբի սուր լսողությունը որսաց օդանավի մոտորի ծանոթ հնչյունը։ Բայց մերո՞նք են, թե՞ թշնամինն է... Նա նորից ամբողջապես լսողություն դարձավ։ Նա արդեն մոտորի աղմուկով կարողանում էր տարբերել օդային ավազակներին։ «Թշնամի՛ն է»—որոշեց Հայրապետյանը և շրջվեց կողքի վրա, հարմարեցնելով իր հրացանը։

— Օ՛դ, օ՛դ...,— հնչեց տագնապի ազդանշանը։

Չանցած մի քանի րոպե առաջավոր պաշտպանական գծի վրա, ամպերից ավազակի պես դուրս սողացին թշնամու երեք ռմբակոծիչներ։ Լսվեցին ռումբի պայթյուններ։ Թշնամին ռմբակոծում էր առաջավոր դիրքերը։ Որոտացին մեր զենիթային հրանոթները, պատնեշող տեղատարափի կրակը շփոթություն առաջացրեց թշնամի անդղների մեջ։ Բայց այս ի՞նչ է։ Հայրապետյանն ուղղվեց տեղում։ Թշնամու մի օդանավ սկսեց ցածրանալ իրենց դիրքերի վրա։ Նա պտտվում էր դիշակերի նման նրա գլխավերևում և ցածրանում։

— Ա՛, գնդացրից է սրիկան ցանկանում խոսել... Տեսնենք,— ասաց Հայրապետյանը, արագ շրջվեց մեջքի վրա, համբուրեց իր սնայպերական հրացանը և ուղղեց դեպի վեր։ Իսկ թշնամին ցածրանում էր։ Սերոբը հանգիստ, կենտրոնացած, չափեց տարածությունը և ուղղեց օպտիկական նշանացույցը։ Հայրապետյանի սրտում անհուն վրեժն էր խոսում։

— Չե՛ս ազատվի, ավազա՛կ,— գոռաց նա։

Այդ պահին իրենից ձախ հնչեց հրամանատարի ձայնը.

— Թշնամու սավառնակին, կրա՛կ...

Հայրապետյանը գիտեր, որ դա իրեն է վերաբերում։ Բայց նա չէր շտապում։ Այդ պահին թշնամին կրակեց գնդացրից։ Գնդակները սուլելով Հայրապետյանից շատ մոտիկ՝ խրվում էին հողը։ Սերոբը չշփոթվեց և որսալով հարմար մոմենտ, երբ թշնամական օդանավը համարյա ուղղահայաց գտնվում էր իր վերևում, քաշեց ձգանը։ Երեք գնդակ արձակեց նա։ Հանկարծ օդանավը թեքվեց ձախ, ապա նորից աջ և վիրավոր թռչունի նման, ուղղությունը կորցրած գնաց դեպի ծովը։ Պոչից քուլա-քուլա բարձրացավ ծուխը, ապա լսվեց մի ուժեղ պայթյուն, կրակ ժայթքեց և օդային ավազակը քիթը դեպի ներքև, գահա-

վլխժեց դեպի ծովի սառը գիրկը, իսկ մյուս երկուսը ետ դարձան և բռնեցին փախուստի ճամբան:

— Կա՛, ընկե՛ր հրամանատար,— գոռաց ամբողջ ձայնով մնայլեր Հայրապետյանը և ուրախությունից սկսեց համբուրել իր սիրելի հրացանը:

— Աղունակը ծովն ընկավ,— ասաց Սերոբը,— գնացե՛ք, ոջլոտ ֆրիցնե՛ր, էն մի աշխարհում գուցե աստված ձեր մեղքերին թողություն տա...

Հայրապետյանը ետ նայեց: Դեպի իրեն է սողում հրամանատարի ադյուտանտը: Մոտենալով Սերոբին, ադյուտանտը ձայնեց պառկած տեղից.

— Ընկե՛ր Հայրապետյան, ձեր քաջության և դիպուկ կրակի համար հրամանատարը շնորհակալություն է հայտնում ձեզ:

— Ծառայում եմ Սովետական Միության,— հնչեց Հայրապետյանի խրոխտ ձայնը,— смерть немецким оккупантам!

1942 թ.



ՎԵՐՋԻՆ ՆՌՆԱԿԸ

Սովետական հասարակ մարդիկ, ամենախաղաղ պրոֆեսիայի տեր մարդիկ պաշտպանելով իրենց հայրենի Լենինգրադը, իրենց օջախներն ու ընտանիքները՝ ցուցաբերում են անվեհերության ու համառության հիանալի օրինակներ, լուրջ կորուստներ պատճառելով թշնամուն:

Հերոսական բազմաթիվ այլ օրինակների թվում, մեծ քաղաքի պաշտպանության պատմության մեջ կմտնի նաև 11 կամավորների սխրագործությունը, որը տեղի ունեցավ Կ. գյուղի պաշտպանության ժամանակ:

Լենինգրադի համալսարանի ֆիզիկական ֆակուլտետի ասպիրանտ, Ստալինյան թոշակառու Կասպարովը գլխավորում էր այդ 11 խիզախներին:

Խմբակը, որի հրամանատարն էր Կասպարովը, հրաման ստացավ ծածկել մեր զորամասի նահանջը դեպի նոր գիծ, որից հետո բեռնատար մեքենաներով ետ դառնալ յուրայինների մոտ:

30 ժամ անդադար 11 անձնվեր մարտիկները հերոսաբար պաշտպանվում էին հակառակորդի գերազանց ուժերից: Խնայելով ռազմամթերքը՝ նրանք թշնամուն թույլ էին տալիս մոտենալու կարճ տարածության վրա, իսկ հետո դիպուկ կրակով դուրս էին հանում նրանց շարքից:

Երբ դիմադրելն այլևս աննպատակ դարձավ, երիտասարդ գիտնական Կասպարովը չուզենալով գերի ընկնել թշնամու ձեռքը՝ վերջին նռնակով պայթեցրեց իրեն: (ՏԱՍՍ)

***

Գասպարյան Արամը հինգ տարի էր, ինչ թողել էր հայրենի այգեստան և արևշատ գյուղը և ուսանում էր Լենինգրադում: Առաջին իսկ օրերից նա իր վրա գրավեց դասախոսների և պրոֆեսորների ուշադրությունը:

Ընկերները բարձր էին գնահատում Գասպարյանի ուժերը, դժվարին պահին դիմում նրա օգնությանը, և եթե նրա մասին խոսք էր լինում, ասում էին. «Գասպարյանը տաղանդավոր տղա է»:

***

Ուսանողական միտինգ էր: Ամենքի դեմքին կար խոր վրդովմունք, անսովոր հուզում ու ցասում: Ամբիոնից բարձր ու հնչեղ ձայնով խոսում էր պարտկոմի քարտուղարը:

— ...Հանու՛ն հայրենիքի, հանու՛ն ազատության, հանու՛ն մարդկության բարօրության:

Գասպարյանն առաջինն էր, որ ճառախոսից հետո գրավեց ամբիոնը: Նրա հայտնվելը բեմի վրա՝ ծանոթների մեջ զարթնեցրեց անչափ հետաքրքրություն: Նա բեմի վրա բոլորովին այլ մարդ էր երևում: Նրա ձայնի մեջ խոսում էր մի ներքին ուժ, վառվում էր մի առանձին հուր: Սկզբում խոսում էր կամաց, բառերը նրա շուրթերից դժվարությամբ էին դուրս գալիս, ապա հետզհետե բարձրացնում էր ձայնը, ամեն մի բառ առանձին հնչում.

— ... Հիմա թշնամու հետ մենք պիտի խոսենք գնդացրի, նռնակի, թնդանոթի, տանկի լեզվով: Ես այսօրվանից ինձ հայտարարում եմ հայրենիքի զինվոր... կամավոր գնում եմ բանակ...,— կարճ կապեց Գասպարյանը և ցած իջավ:

Նրան հետևեցին ուսանող-ուսանողուհիները: Ամեն մեկն աշխատում էր առաջին հերթին ինքը դրվել կամավոր:

***

Այն դասակը, որի մեջ էր Գասպարյանը, կռվում էր Լենինգրադի մատույցներից մեկում: Գիշեր ու ցերեկ անընդհատ որոտում էին թնդանոթները և ժայթքում ծուխ ու բոց: Հոշոտված գետինը դողդողում էր: Շառաչյունով արմատահան էին լինում հինավուրց կեչիները, կամ հրկիզող ռումբերից, արկերից ճարճատյունով բոցավառվում: Ամենուրեք արճիճե տեղա-

տարափ կարկուտ: Մերթ ուռաներով խրամատներից դուրս եկան: Կռիվն անողոք էր ու համառ: Գրոհեցին հակառակորդի վրա: Ծուխ, ցեխ, ջրի ցայտքեր, սվինամարտ: Սայթաքում էին, ընկնում, նորից բարձրանում: Հարվածում էին հրացանի կոթով, սվինով խոցում: Երբեմն հրացանները նետում, իրար էին հասնում, բռնում կոկորդներից, ատամները կրճտացնում: Գասպարյանը մի ֆաշիստի խեղդելուց հետո՝ գրոհեց առաջ: Երեկոն ավելի էր կախում իր խոժոռած ու մռայլ հոնքերը: Թշնամին նոր ուժեր ստացավ: Ավելի կատաղի սկսեց գործել նրա հրետանին: Տրվեց հրաման՝ ոչնչացնե՛լ հակառակորդի կրակային կետերը:

Ցեխի ու ջրի միջով սողում էին ավագ լեյտենանտը և նրա կողքից Գասպարյանը: Ֆաշիստական սպան ատամները կրճտացնելով անդադար գոռում էր.

— Կրա՛կ, կրա՛կ...

Թնդանոթը ծառերի ետևից անդադար որոտում էր և ժայթքում բոց ու ծուխ: Միմյանց հետ օդ թռան երկու նռնակ: Թնդանոթը ցեխի, հողի և ծառերի տակ ծածկվեց: Նորից թռչող նռնակներ: Արմատահան եղած, ջարդված ծառերի, հողի, մետաղի, հոշոտված դիակների կույտ: Բացվեց սև, լայն խոռոչ: Ամեն ինչ վերջացած էր: Գասպարյանն ու լեյտենանտը սողալով ավելի մոտեցան միմյանց, նայեցին իրար, ժպտացին.

— Արդեն, ընկե՛ր լեյտենանտ,— ասաց Գասպարյանը:

— Да! ապա շունչ քաշելով՝ պատասխանեց լեյտենանտը,— դե, գնանք...

***

Մառախուղ էր ու մութ: Ուղղությունը կորցրել էին: Գնում էին ջարդված ծառերի, արմատահան եղած թփերի, հողաթմբերի միջով: Գնդացիրները թափում էին կրակե կարկուտ: Իրենց զորամասը բավական հեռու էր: Գիշերը խորանում էր: Մի բան էր նրանց հայտնի, որ իրենք գտնվում են թշնամու թիկունքում: Հանկարծ լսեցին տապալվող կեչիների ճարճատյուն: Դեպի ճակատ էր շտապում ֆաշիստական մի տանկ: Ըստ երևույթին ինչ-որ պատճառով նա ետ էր մնացել իր ընկերներից և աճապարում էր հասնել նրանց: Գասպարյանի և լեյտենանտի պայուսակների մեջ ընդամենը մնացել էր չորս նռնակ: Լեյտենանտն իսկույն փնջեց նռնակները, Գասպարյանն

իր գոտիով կապեց դրանք և վերցնելով նռնակների փունջը՝ մի փոքր առաջ սողաց, տանկի ուղղությամբ պառկեց: Լեյտենանտը քաշեց ատրճանակը և նրանից մի փոքր հեռու, ծառի տակ կանգնած պատրաստ սպասում էր: Տանկը վայրենի աղմուկով մոտենում էր, մերթ այս կողմն էր թեքվում, մերթ՝ այն: Գասպարյանը մի երկու անգամ տեղը փոխեց՝ հարմարվելով տանկի ընթացքին: Տանկը ջարդում, տապալում էր կեչիները և կատաղի մոլուցքով ընթանում առաջ: Բարձրացավ Գասպարյանի գլուխը, ձեռքերը ձգվեցին հորիզոնական, առաջ թռավ նռնակների կապոցը: Ցնցող որոտ, և լռեցին տանկի վայրագ աղմուկն ու կեչիների ճարճատյունը: Տանկը անշարժացավ, ինչպես մարմնից պոկված գլուխը: Լեյտենանտը, որ այդ ամենին ականատես եղավ, հրճվալից բացականչեց.

— Բրավո՜ Գասպարյան, Սասունցի Դավթի ցեղից է...

Իսկ Գասպարյանը ցեխի մեջ կորած, թրջված գլուխը թաքստոցից հանեց և ակնապիշ նայելով խափանված տանկին, հայերեն ասաց.

— Դե՛ հիմի առաջ գնա...

Լեյտենանտն շտապեց դեպի տանկը և քիչ հեռու կանգնեց՝ ատրճանակը ձեռքին պատրաստ: Գասպարյանը նույնպես տեղից վեր կացավ: Նրանք անթարթ նայում էին անշարժ տանկին: Լսվեց մետաղյա թխկոց և տանկի աշտարակից բարձրացավ մի գլուխ: Նա ահաբեկված նայեց շուրջը: Քիչ հետո տանկի միջից դուրս եկան չորս հոգի: Լեյտենանտը և Գասպարյանը ատրճանակներով գրոհեցին առաջ: Փախստ տանկիստները սարսափահար խուճապի մատնվեցին: Երկուսն ընկան, իսկ մյուս երկուսը իրար հրելով ցանկանում էին մտնել տանկի մեջ: Նրանցից մեկը շուռ եկավ և ատրճանակը կրակեց:

— Ուշ է, սխալվում եք, պարոնա՛յք,— գերմաներեն ասաց Գասպարյանը և ավելի առաջացավ:

Փախստներից մեկն անգամ կիսով չափ մտել էր տանկի մեջ, բայց ձգվեց, դեպի ետ թեքվեց և ընկավ ցած: Գասպարյանը շուռ եկավ, ուզում էր իրենց հաղթանակի լուրն ավետել, բայց լեյտենանտն ընկել էր... Գասպարյանին թվաց, թե իր ողնաշարը մեջտեղից ջարդվեց: Նա շտապեց դեպի լեյտենանտը: Վրա հասավ գրկեց.

— Ընկե՛ր լեյտենանտ, ընկե՛ր...

— Գասպարյան, Ну! դու... դու աշխատի՛ր՛իր քո կյանքը փրկ... շտապիր, իմ մասին մի՛ մտածիր...

Գասպարյանը գրկեց իր լեյտենանտին: Շոշափեց, դտավ վերքը: Լեյտենանտը կրծքի աջ կողմից վիրավորվել էր: Նրան շուռ տվեց, նստեցրեց, մեջքը շոյեց, արյուն չկար:

Գասպարյանը պայուսակից հանեց վիրակապը:

— Շտապի՛ր, գնա՛, ինձ թո՛ղ,— կրկնում էր վիրավոր լեյտենանտը:

— Ոչ, ընկե՛ր լեյտենանտ, դուք այստեղ չեք մնա,— ասաց Գասպարյանը և շապիկը ճեղքելով, դտավ վերքը, կապեց:

Քիչ հետո նա մոտեցավ տանկին, մտավ ներս, լուցկի վառեց, այնտեղից հանեց նռնակներ և պայթեցրեց տանկը:

***

Լեյտենանտին շալակած հրե օղակի միջով գնում էր Գասպարյանը: Գնդակները սուլելով ընկնում էին նրա չորս կողմը: Լեյտենանտը կրկնում էր այս խոսքերը.

— Թողե՛ք ինձ, դուք արդեն արդեն ուժասպառ եք լինում, ես այդ զգում եմ, ձեր կյանքը փրկեցեք...

— Ոչ, այդ չի լինի,— այս ասելով ավելի ամուր էր բռնում լեյտենանտի ձեռքերը և ուժ տալիս ոտքերին:

Կամաց-կամաց տաք հեղուկով թրջվում էր Գասպարյանի մեջքը: Նա կարծում էր, որ քրտինքից է. արդեն չորս-հինգ կիլոմետր կտրել անցել էր: Զգում էր, որ մոտենում է յուրայիններին, բայց դեռ ոչ մի նշան չէր երևում: Նա մի արկի ձաղարի մեջ վայր դրեց լեյտենանտին: Վիրավորը ջուր էր ուզում, ավելի էր նվաղում: Գասպարյանը ձեռքը տարավ դեպի մեջքը, որ սաստիկ թրջված էր: Շոշափեց. հեղուկը մածուցիկ էր: Ի՞նչ, ուրեմն լեյտենանտի արյունը չի՞ կանգնել: Հավանական է: Դրանից է, որ նա թուլանում է: Նա թողեց վիրավորին և ձագարից դուրս եկավ: Հիսուն, վաթսուն քայլ գնաց առաջ. կանգնեց և լսողությունը լարած այս ու այն կողմն էր նայում: Նրա ականջին հասան շշուկներ: Քայլեց դեպի շշուկների կողմը, մոտեցավ: Նրա ականջին հասան ինչ-որ բառեր:

— Մերոնք են,— ինքն իրեն ասաց Գասպարյանը և քայլերն արագացրեց:

Քիչ հետո նա կանգնեց երեք սանիտարի մոտ:

— Շտապեցե՛ք, այստեղ վիրավոր ընկած է մեր լեյտե-

ճանոց, չո՛ւտ... և ինքն առաջ անցնելով, նրան հետևեցին սա-նիտարները:

***

Գասպարյանը սանիտարներին հանձնելով վիրավոր լեյտե-նանտին, նրանցից բաժանվեց: Նա աշխատում էր ինչ գնով էլ լինի հասնել իր դասակին: Նա ուղղություն էր վերցրել գյու-ղակը: Գիտեր, որ այդտեղից բաժանվեց ընկերներից: Հետզհե-տե բացվում էր պղտոր այգը: Կռիվը թեժանում էր: Ծխի ամ-պերը դանդաղ հալվում էին խոնավ օդի մեջ: Գասպարյանը խիստ հոգնած էր: Նա կուզեկուզ երբեմն սողալով, երբեմն չորեքթաթ գնում էր խոտերի, թփերի միջով: Հանկարծ նրա դեմ դուրս եկան ֆաշիստական մի ութ-ինը զինվոր: Գաս-պարյանը դիրք մտավ: Ֆաշիստներն ուզում էին օղակել մե-նավոր մարտիկին: Նա գործի դրեց հրացանը: Երկու գնդակով շարքից հանեց երկու ֆաշիստի: Ձախ ուսը ուժգին ցնցվեց և ձեռքը դանդաղ ու թուլացած՝ թողեց հրացանը: Որքան ուժ ուներ, ատամները սեղմելով փորձեց հրացանը գործի դնել, բայց ձախ ձեռքը նրան չենթարկվեց: Ֆաշիստները սողում էին առաջ և օղակը սեղմում: Զայրույթով հրացանը դրեց ոտների արանքը, փակաղակը դուրս քաշեց իր տեղից և շպրտեց մի կողմ: Շատ մոտիկ պայթեցին մի երկու նռնակ: Ծխի մեջ կո-րավ: Մի երկու փոքրիկ բեկոր կպել էին ծնոտին ու աջ այտին: Դեմքի և աչքերի ցեխը, արյունը միակ ձեռքով սրբեց, քաշեց ատրճանակը: Մնացած չորս փամփուշտն էլ միմյանց հետևից պարպեց կողքից մոտեցող երկու ֆաշիստ զինվորի վրա: Մեկը վիրավորվեց, մյուսն անշարժ մնաց տեղում: Նա արյունաքամ էր լինում: Ատրճանակը նույնպես դարձավ Գասպարյանին ան-պաշտպան: Նա պառկեց գետնին, ինչքան ուժ ուներ սեղմվում էր հողին: Գնդակները սուլում էին նրա գլխի վերևով, ընկնում այս ու այն կողմ: Ֆաշիստներին թվաց, թե նա արդեն սպան-ված է: Աջ ձեռքով ամուր բռնել էր նռնակը: Լսում էին սո-ղացողի ձայներ: Քսան քայլ էր բաժանում նրան իր թշնամի-ներից: Գլուխը պոկեց գետնից, նետեց ևս մի նռնակ, պայու-սակից հանեց մնացածները: Նա տեղից բարձրացավ, մի պահ դողաց, ուժերը հավաքեց և գրոհեց մնացածների վրա: Թռավ և երկրորդ նռնակը: Նրանք փախան: Փախչողները, երբ նկա-տեցին օգնության հասնող նոր զինվորներ, կանգ առան և

սրտապնդվելով ետ դարձան: Անօգնական վիրավորի սիրտն այրվում էր, շուրթերը պապակում էին:

Նա թևով սրբեց արյունոտ դեմքը: Աչքերը, որոնք վառ-վում էին տենդով, լի էին և՛ կյանքով, և՛ սիրով, և՛ կարո-տով...

— Ո՛չ, շնե՛ր, դուք ինձ կենդանի չեք բռնի... Եկեք, որ-քան ուզում եք եկեք, չեք սարսափեցնի... և գորովով նայեց վերջին նռնակին, որի մեջ էր և՛ իր փրկությունը, և՛ մահը:

— Այսպես... ամե՛ն ինչ վերջացավ...

Խոր շունչ քաշեց, արյունաքամ կրծքից պոկվեց վերջին հառաչը: Օդի մեջ նռնակի հետ բարձրացավ միակ ձեռքը, թա-փով իջավ և ոտների տակ մի ահեղ պայթյուն լսվեց:

Ֆաշիստները Գասպարյանի փոխարեն գերի վերցրին մի սև խոռոչ...



ՓԱՌՔ ՀԵՐՈՍԻՆ

Կարմիր Բանակի հավատարիմ, հայրենիքից սիրված քաջարի մարտիկներից է Ամբիոս Կուրղինյանը: Այդ հերոսական կերպարանքի բնութագիրը թերևս կլինի թերի և դժգույն, եթե մի հետադարձ հայացք չգցենք նրա կյանքի դժվարին ուղու վրա:

Նա ծնվել է 1901 թվին, հինավուրց Շիրակի Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում:

Հենց մանուկ հասակից նա հակված էր դեպի ռազմական գործը: Հափշտակությամբ լսում էր գյուղացիների, իգիթների շուրջը հյուսված ժողովրդի անմահ պատմությունները: Նրա համար բանակը, ռազմական գործը անհաս ու կախարդական բարձունք էր: 1921 թվին, Հայաստանում սովետական իշխանության հաստատելու հենց առաջին ամիսներին երիտասարդ Ամբիոսը մտնում է Կարմիր Բանակի շարքերը:

1928 թվին Կուրղինյանն ընդունվում է Լենինի—Ստալինի անպարտելի պարտիայի մեջ:

Անցան տարիներ: 1939 թիվ: Սպիտակֆինների դեմ մղված հերոսական մարտերին մասնակից է լինում Ամբիոսը: Նա հրամանատարության կողմից ստանում է մարտական խնդիր՝ ոչնչացնել հակառակորդի կրակակետերը: Կարմիր մարտիկները

Կուրղինյանի առաջնորդությամբ կռվի են նետվում հանուն հայրենիքի, հանուն առաջնորդի: Այս մարտում մայոր Կուրղինյանը դրսևորում է իր ռազմական կարողությունները: Կառավարությունը նրան խիզախության համար շնորհում է մեդալ:

Հայրենական արդար պատերազմը մայոր Կուրղինյանի մեջ նոր ավյուն ու խանդավառություն է առաջ բերում: Նա իրեն նետում է նոր եռանդով, անսասան հավատով դեպի փոթորկոտ մարտերը:

Այդ մասին վկայում է նրա սերժանտներից մեկը՝ Մնացական Հաջարյանը:

— Մայոր Կուրղինյանի ստորաբաժանումն ստացել էր մարտական առաջադրանք,— պատմում է սերժանտ Հաջարյանը,— հակառակորդին դուրս շպրտել ամրացված բնագծից և թույլ չտալ անցնելու Դ. գետը: Մարտը կատաղի էր: Ամբիոսն իր քաջարի մարտիկների գլուխն անցած գրոհեց համառ ու գազազած թշնամուն... Նա սարսափ էր ազդում թշնամու վրա, իսկ իր հարազատներին, մարտիկներին լցնում անվախության, ոգևորության բորբոքուն հրով...

Նա այդ մարտում սակավաթիվ մարտիկներով ջախջախեց հակառակորդի ավելի քան մեկ գումարտակ, վերցրեց բազմաթիվ գերիներ ու ռազմավար...

Այն պահին, երբ գերմանական հրոսակը կոշմարի պես ծանրանում էր հերոս Օդեսայի վրա և իր ուժերը կենտրոնացրել էր այդ ուղղությամբ, քաղաքի հերոսական պաշտպանների շարքերում էր մայոր Կուրղինյանը:

Հրամանատարությունը քաջարի մայորին հանձնել էր մի շատ կարևոր և պատասխանատու բնագիծ: Թշնամու և ոչ մի չար ու կատաղի ուժ չկարողացավ իր նպատակին հասնել: Մայորն իր մարտիկների հետ ժայռի նման անսասան մնաց: Կուրղինյանը վիրավորվեց, բայց ընկերներին և մարտը չթողեց, մինչև վերջը կռվեց ինչպես վայել է հերոսին:

Այս բոլորի համար հայրենիքը նրա կուրծքը զարդարեց ամենամեծ պարգևով՝ Լենինի շքանշանով:

***

Կուրղինյանը շուտով առողջացավ: Հայրենիքը նրան նորից կանչում էր դեպի ռազմադաշտ: Նա անցնում է իր սիրելի և

անձնազոհ մարտիկների գլուխը։ Մարտիկները նրան ընդունում են մեծ խանդավառությամբ ու ոգևորությամբ։ Ինչպես առյուծ մայրն իր կորյունների հետ նետվում է թեժ կռվի մեջ։ Այս անգամ նրան հանձնվել էր ավելի դժվարին ու պատասխանատու բնագիծ։

Համառ ու կատաղի մարտում հերոսի մահով ընկավ Կուրղինյանը։ Նա ընկավ հայրենիքի անկախության, ազատության, պատվի համար։ Սովետական ժողովուրդը նրան հուշարձան կկանգնեցնի իր մեծ սրտում, գալիք սերունդները երախտագիտությամբ գլուխ կխոնարհեն այդ հուշարձանի առաջ...



ԱՐՏԱՇԵՍ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԱՇԻՎԸ

Նա պառկել էր բլրակի կատարից մի փոքր ներքև, հաճարի արտում, հեռադիտակն աչքերին։ Դիմացը երևում էր գետը, կապույտ անտառը և անտառից այն կողմը պայթյուններից առաջացող դեղնավուն ծխի փոքրիկ քուլաներ։ Մեզ ասացին, որ նա Արտաշես Հակոբյանն է, հռչակավոր սնայպերը։ Մենք պառկեցինք նրա կողքին։

Դեռ առաջին մարտերում երևան եկավ Արտաշեսի սնայպերական տաղանդը։ Դա տեղի ունեցավ հետևյալ կերպ. օպտիկական նշանացույցի միջով Հակոբյանը նկատեց, թե ինչպես իրենից ավելի քան ինը հարյուր մետր հեռավորության վրա, բլրի գագաթին կանգնած է մի հաստլիկ, ըստ երևույթին բարձրաստիճան սպա և ձեռքով թափահարում, կարծես դիրժյորություն է անում մարտկոցներին։ Արտաշեսին թվաց, որ հաստլիկ սպայի այդ ձեռքն է, որ արկեր է տեղում իրեն՝ Արտաշեսի և իր ընկերների վրա։ Նա լսեց, թե ինչպես իր շուրջը պայթեց արկը, թե ինչպես հառաչեց վիրավոր ընկերը։ Բորբոքվեց նրա սիրտը, կովկասցու ջերմ, դյուրաբորբոք սիրտը։ Բայց նա նշան էր առնում հանդարտ, խնամքով, ինչպես հրաձգարանում։ Օպտիկական նշանացույցի միջով նա տեսավ, թե ինչպես գեր սպան վայր ընկավ ու ձեռքերը փռեց։

— Կա՛,— ասաց Արտաշեսն ինքն իրեն,— առաջին։

Այսպես սկսվեց Արտաշես Հակոբյանի հաշիվը։ Անողո՛ք հաշիվ։

Հետադիտակ՝ թշնամուն տեսնելու և հրացան՝ թշնամուն հարվածելու համար— ահա՛ այն ամենը, ինչ հարկավոր է Արտաշեսին։ Նա ընտրում է միայն ամենակարևոր նպատակակետերը— սպաներ, գնդացրորդնե՛ր, հրետանավորներ։ Կրակելուց հետո, օպտիկական նշանացույցի միջով նա երկար դիտում է, թե չի բարձրանում արդյոք զեռունը։ Համոզվելով, որ թշնամին սպանված է, նա որոնում է մի նոր նպատակակետ և շշնջում ինքն իրեն.

— Տասնհինգերորդ... կա՛...

(«Պրավդա»)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՎԱԿԸ

Կրտսեր սերժանտ Սարգիս Ղազարյանին մենք հանդիպեցինք մի փոքրիկ անտառում, N գնդի հրետանային դիրքերում։ Առջևում փռված էր բաց դաշտը։ Հիանալի քողարկված հրանոթները կրակում էին հարձակվող թշնամու վրա։

— Ընկե՛ր հրամանատար,— մտահոգված հայտարարեց Ղազարյանը,— երեք ժամում ես արձակել եմ հարյուր քառասուն մեկ արկ...

— Այդ դեպքում մի փոքր սպասեցեք, թող հրանոթը հանգստանա,— ասաց հրամանատարը։

Այդ միջոցին մեզանից մի քանի քայլ հեռու անդուր ոռնոցով պայթեց հակառակորդի ականանետից արձակված ականը։ Ամենքն էլ անմիջապես պառկեցին գետնին։ Առաջինի հետևից պայթեց երկրորդ ականը, նրա հետևից երրորդը։

— Ես գնամ, ընկե՛ր հրամանատար,— ասաց Ղազարյանը և, թեթև ոտքի թռնելով, վազեց դեպի հրանոթը։

Երեկոյան մենք նորից հանդիպեցինք Ղազարյանին։

Նա ձին նստած, սլանում էր գյուղական փոշոտ ճանապարհով։ Ձիերը սանձերը կրծելով, արագ վազքով դուրս բերեցին թնդանոթները և սլացան առաջին հրանոթի հրամանատարի հետևից։

Նոր կրակային դիրքերում, քողարկելով հեռախոսակայինները վերախմբավորումը՝ հրանոթներն ուղիղ նշանառությամբ գնդակոծում էին հարձակվող թշնամուն։

Այդ կրակի պաշտպանության տակ մեր հետևակն անցնում էր նոր բնագծեր։

Սպանվեց նշանառուն։ Ղազարյանը կանգնեց նրա տեղը։ Հետո թշնամու գնդակը խոցեց արկեր մատուցողին։ Բայց դեռ մնում էր մի քանի արկ։ Ղազարյանն ինքը մոտեցնում էր արկերը, ինքը լցնում հրանոթը, ինքը նշան բռնում, ինքը հրաման տալիս՝ «կրա՛կ» և ինքն էլ կրակում էր։

Բայց ահա մնացել է միայն մեկ արկ։ Մարտական անձնակազմի մարտիկներն անշունչ ընկած էին հրանոթի մոտ։ Ղազարյանը գլխից պոկեց վիրակապը, որը սահելով իջնում էր աչքի վրա։ Նա պարզ տեսնում էր թշնամիների կապույտ-մոխրավուն համազգեստները։ Ղազարյանը հրանոթը լցրեց վերջին անգամ։ Ապա կռացավ և գետնից պոկելով հողի մի կոշտ, հապալասու թփուտների հետ միասին, նետեց թնդանոթի երախը, հետո բահով փորելով գետինը, թնդանոթի փողի մեջ լցրեց դարձյալ բավականաչափ հող։ Որոտաց վերջին կրակոցը։ Հրանոթը փչացած էր։

Թշնամիներն ըստ երևույթին որոշել էին խիզախ հրետանավորին կենդանի բռնել։ Բայց երբ մոտեցան Ղազարյանին այնքան, որ արդեն կարող էին բռնել նրան, նա նետեց նռնակը։ Նռնակը պայթելով ոչնչացրեց թշնամու մի քանի զինվոր։ Զոհվեց նաև Սարգիս Ղազարյանը՝ հայ ժողովրդի պանծալի զավակը, որը մինչև վերջին շունչը կարելական ռազմաճակատի լճերում ու անտառներում պայքարում էր հանուն սովետական հայրենիքի, իր արևաշող Հայաստանի պատվի ու ազատության համար։

(«Իզվեստիա»)

ՍԵՐԺԱՆՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Նրան բախտ է վիճակվել ութ ամիս անընդհատ ռազմաճակատի շատ հատվածներում մասնակցել գերմանա-ֆաշիստական բանդիտների դեմ մղած մեր բանակի ահեղ մարտերին։ 22 տարեկան, բարձրահասակ, թիկնեղ ու կենսաթրթիռ մի երիտասարդ է նա, որի դեմքը պղնձի գույն ունի, իսկ խոհուն, խաժ աչքերը ձգողական ուժ։ Հազար-հազարների այն կորովի, ձգողական ուժն է նրա աչքերում, որոնք անսահման նվիրվածությամբ իրենց կյանքը չեն խնայում հայրենիքի պաշտպանության համար։ Նրա կուրծքը զարդարում է Կարմիր Աստղի շքանշանը։

* * *

Կապավոր-ռադիստ սերժանտ Ազատ Մանուկյանն առաջին անգամ ՕՎ—12 ռադիոկայանը վերցրած, զորամասի հետ դեպի արևմուտք էր շարժվում, դեպի Վիտեբսկ։ Նրանց զորամասը գնում էր օգնելու իր եղբայրներին։

Ֆաշիստական ագրեսորները Վիտեբսկում դեսանտ են իջեցնում։ Սերժանտ Մանուկյանի ռադիոկայանն աշխատում է կայծակնային ալիքով և հաղորդում՝ «դեսանտ իջեցրին»։

Սովետական հեռահար հրանոթները թեժ գործողության մեջ են մտնում ու ոչնչացնում օդում ճոճվող ֆաշիստական սարդերին։ Թշնամին կատաղելով՝ նոր գրոհի է դիմում։ Հանկարծ

թշնամու բազմաթիվ ինքնաթիռներ գիշատիչ անգղների պես գալիս, երկինքը մթագնում են: Սովետական բազեները հասնում են նրանց ետևից և հարյուրավոր ինքնաթիռներ բախվում-գոտեմարտ են մղում օդում: Սերժանտ Մանուկյանը մի փոսի մեջ պատսպարված՝ աչքերը երկինք հառած՝ հաղորդում է հեռախոսով կռվի ընթացքի մասին: Ծխի հաստ շերտը տարածվել է, կապում ու կուրացնում մարդու տեսողությունը—չեն երևում ինքնաթիռները: Միայն հուժկու թնդյունն է դղրդացնում երկինքը, գետինը:

Ֆաշիստներն օդային այդ մարտը տանուլ տվին:— Վիտեբսկի ճանապարհները ծածկվեցին ֆաշիստական խորտակված ինքնաթիռների բեկորներով: Թշնամու սիրտը կրծում է նենգության որդը. նա չի կարող հանգիստ ունենալ, ինչ գնով ուզում է լինի պետք է մղվի առաջ, կամ նրան սպասում է խայտառակ նահանջ: Եվ ահա ճիգեր է թափում, նոր ուժեր բերում, Վիտեբսկի ճանապարհը տանկերով կտրում:

Գնդի հրամանատարը, սառնարյուն ու հավասարակշռված մայոր Ելիսեևը հավաքում է ամենքին և հայտնում իր մարտական հակիրճ հրամանը:

— Ընկե՛ր մարտիկներ, հանո՛ւն հայրենիքի, հանո՛ւն Ստալինի, պետք է ճեղքենք թշնամու օղակն ու առաջ անցնենք:

Ելիսեևի հրամանը օրենք էր իր զորամասի մարտիկների համար: Սովետական ռազմիկների մրրկանման ալիքը պատռեց թշնամու կրակային պատնեշն ու առաջ անցավ:

Մարտերի ընթացքում երբեմն անխուսափելի են դառնում ցնցող անակնկալները. և ահա Մանուկյանն իր ռադիոկայանից անբաժան՝ մարտական խնդիր էր կատարում— լարված ուշադրությամբ լուրեր էր հաղորդում զորամասից-զորամաս, երբ ռադիոալիքները խզվելով կտրատվեցին ու կորան անորոշ տարածության մեջ:

— Ո՛չ ոք չի ընդունում, ոչ ոք չի լսում... շշնջաց Մանուկյանը: Եվ պահ մի սարսռաց, երբ տեսավ մնացել է մենմենակ՝ ֆաշիստական օղակման մեջ:

Սարսափի շշմեցուցիչ պահը միայն մի քանի րոպե կարողացավ սովետական մարտիկի հոգում իշխել, այնուհետև նա սառնասրտությամբ որոշեց դուրս պրծնել այդ օղակումից և գնալ իր զորամասին հասնել:

Նրա զորամասը, որ խիզախորեն ճեղքել էր թշնամու օղակն

ու նոր գծերը գրավել, հույսը կտրեց իր ռադիստից, ենթադրելով, որ զոհ է գնացել թշնամու գնդակին:

***

Ռադիոկայանից, ինչպես իր սրտի հատորից բաժանված, նա մենակ գնում էր խճճված ու խիտ անտառի միջով: Ֆաշիստական բունկերները վխտում էին անտառում: Ահա հետևից հասնում են երկուսը և անակնկալի բերելով՝ գերի վերցնում նրան: Մանուկյանը հեռատեսություն ունենալով՝ նախապես այրել էր իր մոտ գտնվող բոլոր փաստաթղթերը, միայն իր համար ամենանվիրական կոմերիտական տոմսի առաջին թերթիկը պոկել, ոլորել էր խնամքով և պահել բլուզի կարերի մեջ: Գերմանացի զինվորները նրան տարան հրամանատարական կետը: Նա հուզված էր սաստիկ, ե՞րբ էր այդ չափ տառապալից ապրումներ ունեցել: Ո՞ւր են տանում, հարցաքննելո՞ւ. բայց չէ՞ որ նա նրանց գոհացնող պատասխաններ չունի: Հուզմունքի դողը զսպելով և ունկնդրելով իր հոգու հուսադրող ձայնին՝ նա զգաստացավ:

Երբ նրան ներս տարան մի զարմանալի հանդարտություն համակեց նրան: Խոհուն, արհամարհող աչքերով նայեց դեմը ցցված չեկ, նոսր մազերով, դեղնած երեսով սպային, որը գիրությունից փնչացնում էր: Սպայի աջ ձեռքի բթամատի և ճկույթի միջով կախված էր մտրակը, որի ծայրը վերջանում էր երկծալ, հաստ կաշիով: Զանգ տվին և շուտով կանչեցին թարգմանչին:

Գերմանացի բութ սպայի հարցերը ռուսերեն կրկնում էր նույնքան բթամիտ թարգմանիչը:

— Ռո՛ւս, ասա մեզ ո՞րտեղ է ձեր դիվիզիան, գունդը, տանկերը...

Տաքարյուն հայ տղայի արյունը գլուխը խփեց. նա մի անհանգիստ շարժում կատարեց և մեջքը դարձնելով դեպի նրանց՝ «հիմարներ, ինձ դավաճանի տեղ եք դրել դուք» մտածեց նա ու դիմադրելու մի ահռելի ուժ լեռնացավ նրա հոգում:

— Ոչ, ես ոչինչ չգիտեմ ու չեմ հասկանում,— պատասխանեց նա ուսերը ցնցելով: Թարգմանչի տեղացող հարցերին Մանուկյանը նույն լակոնական պատասխանն էր տալիս,—ո՛չ, ես ոչինչ չգիտեմ...

Գերմանացի սպան մռնչում էր, սպիտակ ոսկեկար ուսադիրները զայրույթից ցնցվում էին:

Սպան դիմեց բռնության, կանգնեց տեղից և ձեռքի մտրակը գործի դնելով՝ սկսեց կատաղորեն հարվածներ իջեցնել Մանուկյանի մեջքին: Մանուկյանի մեջքը փայտացավ, աչքերը մթնեցին, բայց նա ոչ մի բառ դուրս չթողեց բերանից, ասես ի ծնե համր լիներ:

Գերմանացի սպան զինվորին հրամայեց նրան տանել, 3 օր առանց հացի ու ջրի թողնել, ապա նորից բերել քննության:

Մանուկյանին նետեցին սուր մեխերով պատած մի նեղ խցիկի մեջ: Որ կողմը դառնում էր, մեխերը ծակծկում էին նրա մարմինը: Մեռնե՞լ, օ՜, ո՛չ, նա չէր ուզում: Հանկարծ նրա մեջ մրրկի թափով մոլեգնեց ազատության կարոտը, ապրելու բուռն տենչանքը:

— Ապրե՛լ եմ ուզում, կռվե՛լ ու հաղթե՛լ,— շշնջաց ու թեքված գլուխը բարձրացրեց հպարտորեն:

Մի քանի ժամ անընդհատ այդ զարհուրելի խցիկում նրան թողնելուց հետո, գերմանացի ժամապահը դուրս բերեց այնտեղից ու տարավ սոճու անտառը:

Ի՞նչ նոր տանջանքներ էին սպասում: Մանուկյանը չէր կարողանում պատկերացնել: Սոճու ստվերախիտ անտառն ասես ուժ ներշնչեց քաղցից ու ծարավից թուլացած նրա մարմնին:

Մի՞թե նրան բերին անտառ կյանքի և բնության հրապույրներով գայթակղեցնելու համար, որպեսզի հետո խոստովանեցնեն ամեն բան: Ո՛չ, երբե՛ք. նա սարսռում էր այն մտքից, որ կարող է հայրենիքին թեկուզ մազաչափ. վնաս հասցնող մի շշունջ, մի բառ թողնել իր բերանից:

Մանուկյանը կծկվեց մի ծառի տակ՝ մտքերի մեջ խորասուզված, իսկ ժամապահը ավտոմատը գրկած գնում էր գալիս:

Զովաշունչ անտառը խշշում էր, քամին սվսվում ականջի տակ: Մերթ մոռանում էր նա, որ ինքը գերության մեջ է, հիշում էր հարազատներին ու հազար թև առած՝ ուզում էր թռչել դեպի հայրենի դաշտերն ու աղբյուրները:

Աչքի տակով նայեց զինված գերմանացուն ու որոշեց քնած ձևանալ: Սկսեց խռմփացնել: Իսկ ժամապահը գնում էր գալիս ու լսում կալանավորի անկանոն խռմփոցը: Մանուկյանն աչքի տակով հետևում էր ժամապահի ամեն մի շարժումին, իսկ ժամապահը հետզհետե համոզվելով, որ իրեն հանձնված գերին

խոր քուն է մտել՝ իրեն ավելի ազատ զգաց և երևի ինչ որ կարիքների համար բավական հեռացավ նրանից:

Հանկարծ մի այնպիսի ուժ եկավ Մանուկյանի վրա, որ ինքն էլ չիմացավ թե ինչպես պոկվեց տեղից ու ճարպիկ ոստյուններով սուզվեց անտառի խորքը: Հետևից կրակեց ուշացած գերմանացին, բայց ոչ մի գնդակ նրան չկպավ:

Մանուկյանն ազատվելով ֆաշիստների ճանկերից, գտավ իր զորամասը, իր մարտական ընկերներին:

***

Վիտեբսկի մոտ ֆաշիստական հորդաների դեմ մղված մարտերում անօրինակ խիզախություն և կարգապահություն ցուցաբերելու համար, N դիվիզիան, Պաշտպանության Կոմիտեի հրամանով վերանվանվեց գվարդիական: Գվարդիական դիվիզիան թարմ ուժերով համալրվելուց հետո շարժվեց դեպի Ուկրաինա: Այդ դիվիզիայում էր հավատարիմ զինվոր սերժանտ Աշոտ Մանուկյանը:

Նիկոլաևսկում կապի պետը իր մոտ կանչեց Մանուկյանին և մարտական խնդիր տվեց.

— Դու պետք է գնաս երկրորդ գումարտակը և իմանաս քանի՞ կապավոր, հեռախոսային ապարատ, լարային կծիկ և ի՞նչքան զինամթերք կա այնտեղ:

Մանուկյանն իրեն հատուկ աշխուժությամբ, ժպիտը դեմքին պատասխանեց.

— Կա՛, ընկե՛ր պետ:

Մինչև 2-րդ գումարտակը ճանապարհը կարճ էր, բայց վտանգավոր, նա պետք է անցներ թշնամու ուժեղ կրակի տակից:

Մանուկյանն ավտոմատը և հեռախոսային սարքավորումը վերցրած գնաց գծի ուղղությամբ: Ձեռքի ապարատը շուտ-շուտ մոտեցնում էր գծին, ստուգելու համար, կապը հո կտրված չէ՞: Խիզախ կապավորը անցնում էր կրակոցների միջով: Ճանապարհին մի քանի տեղով կտրված գիծը հանգուցեց և զգուշությամբ՝ մերթ սողեսող—մերթ թռիչքային քայլերով մի կերպ մյուս գումարտակը հասավ:

Ստանալով անհրաժեշտ տեղեկությունները՝ Մանուկյանը բռնեց վերադարձի ճանապարհը: Արդեն ուշ էր, շուտով գիշերը վրա հասավ, Մանուկյանը ճանապարհը կորցրեց, մոլորվեց ան-

տառում: Նոր փորձություն: Նա գտնվում էր թշնամու թիկունքում: Որքան էլ ծանր էր կացությունը, բայց և այնպես նա չշփոթվեց: Մի քանի րոպե կանգնած մտածում էր՝ ինչ անել. ապա որոշեց սպասել մինչև առավոտ:

Գերմանացիները հրթիռներով լուսավորում էին անտառը: Հսկա անտառը մերթ շողում էր կախարդական ցոլքով, մերթ խավարում կորչում: Մանուկյանն առանց երկար ու բարակ մտածելու՝ բարձրացավ մի եղևնու կատարն ու իր մոտ գտնվող ավտոմատն ու նռնակները պատրաստ պահեց: Եթե հարկ լինի՝ պետք է կռվել, մտածեց նա:

Հրթիռները դեռ երկար ժամանակ շարունակում էին անտառը և շրջակայքը լուսավորել: Այդ ժամանակ Մանուկյանը հետախույզի սրատես աչքով նկատեց թշնամու զորաշարժը. հետևակը քաշվում էր, գնդացիրներ ու հակատանկային թնդանոթներ էին տանում դեպի գյուղի ծայրամասը: Դրանք կարևոր տեղեկություններ էին, հարկավոր էր շուտով հասնել գումարտակ: Նա անհանգիստ էր: Ողջ գիշերը հսկա անտառում մեն-մենակ, երամից հետ ընկած թռչունի պես նա կպել էր ծառի կատարին ու սպասում էր լուսանալուն:

Մտքերը թռչում էին հեռուները. նա հիշեց իր մանկությունը. ծնողների միակ որդին էր. բնիկ ղարսեցի, ծնվել էր գնացքի մեջ—1920 թվին, Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու փոթորկալի օրերին, չքավոր ընտանիքում:

Մինչև լուսաբաց մտքերի ծովն ընկղմված՝ նա մնաց ծառի վրա: Լուսադեմին ուզում էր ծառից իջնել, երբ սողավարը կպավ հրացանի մետաղյա փողին ու խոր լռության մեջ գրնգոց արձակեց:

Ըստ երևույթին այդ ձայնը լսելի դարձավ գերմանացի ավտոմատավորին, որը գտնվում էր 50—60 մետր հեռավորության վրա:

Նա կրակ բացեց Մանկուլյանի ուղղությամբ: Մանուկյանը նպատակ չուներ կռվի մեջ մտնելու և առանց երկար վարանելու ծառից թռավ մի մոտակա փոսի մեջ:

Անհամբեր կապավորը հենց որ ուզում էր գլուխը բարձրացնել, շուրջը նայել, նենգ գերմանացին տրկտրկացնում էր ավտոմատը: Բավական ժամանակ մի փոս տեղ պատսպարվելուց հետո, վերջապես նա դուրս եկավ այդտեղից և սկսեց ուղղակի վազել: Նրա ետևից ուժեղ կրակ բացեցին. Նա ստիպված էր

պառկել գետնին ու սողեսող առաջ գնալ: Հանկարծ երազի պես ականջին դիպավ մի ծանոթ ձայն, որ կանչում էր.

— Առա՛ջ, մարտիկնե՛ր, առա՛ջ...

Նա չհավատաց իր ականջներին ու մի քանի վայրկյան լռությունը լարեց—նորից հնչեց քաղցրաղողանջ ձայնը.

— Առա՛ջ, ընկերնե՛ր, առա՛ջ...

Մոռացած քաղց ու հոգնածություն, սրտի ուրախ թրթռոցով նա վազեց դեպի ձայնը:

Այդ սովետական մարտիկների մի զորախումբ էր, որ հայտնաբերել էր թշնամու բները և գալիս էր դրոհի:

Գոռացին՝ ո՞վ ես...

Նա պատասխանեց.

— Ձեր եղբայրն եմ,— ու հայտնեց պարոլը: Մանուկյանը դրկախառնվեց ընկերների հետ և խնդրեց իրեն տանել լեյտենանտի մոտ:

Մի քանի րոպեից նա պատիվ առնելով կանգնեց գումարտակի հրամանատարի առաջ.

— Ընկե՛ր ավագ լեյտենանտ, ձեր մարտական առաջադրանքը կատարված է, վերադարձին մութը վրա տվեց, ճանապարհը կորցրի, բայց մի կերպ եկա ձեզ գտա: Այժմ լսեցեք մի քանի ռազմական տեղեկություններ թշնամու թիկունքից: Թշնամին այս կողմում թողել է ընդամենը 30—50 հետևակ, մի քանի տանկ, ականանետ և ավտոմատավորների հիմնական ուժը շարժել է դեպի արևմուտք. այստեղ նա միմիայն խաբս է տալիս:

Սովետական զորամասերը դրոհեցին դեպի արևմուտք և թշնամու զորքերի մի մասին ջարդեցին, մի մասին էլ ցրիվ տվին:

Ավագ լեյտենանտը և գնդի կոմիսարը գովեցին—քաջալերեցին Մանուկյանին, որ օգնեց իրենց թշնամու իսկական ուժերն ի հայտ բերելու և ջախջախելու:

***

Մանուկյանը նոր մարտական առաջադրանք ստացավ՝ N բնագծի կտրված հեռախոսային կապը վերականգնելու: Նա պետք է անցներ ռազմական նշանակություն ունեցող մի կամուրջից, որին խփում էին երկու կողմից՝ սովետական և գերմանական հրետանին:

Երկու կողմից տեղացող կրակի կարկուտի տակ փորսող-

գնալով՝ համարձակ կապավորը հանգուցում էր արկերից կտրված լարերը: Հանկարծ վզզալով նրան շատ մոտիկ պայթեց մի արկ: Օդի ուժեղ ալիքը Մանուկյանին գլորեց կամուրջի տակ, ուր նա անզգա վիճակում մնաց մինչև լույս: Միայն առավոտն աչքերը բացեց և տեսավ իրեն ջրի մեջ՝ ամբողջովին թրջված:

Սթափվելով նա առաջին հերթին, շոշափեց հեռախոսալարը և համոզվելով, որ առայժմ գիծն անվնաս է, վերադարձի ուղին բռնեց: Զննելով տեղացող կրակին, նա թռիչքային քայլերով, եկավ հասավ իր գումարտակը:

Այդ օրը չնայած թեժ մարտերին Մանուկյանը գնաց ամենավտանգավոր կետերը և հինգ-վեց անգամ վերականգնեց հեռախոսային կապը, թույլ չտվեց ոչ մի վայրկյան գիծը խափանվի:

***

Ռուսական ցուրտ ձմեռն էր իշխում տափաստաններում: Սպիտակ ձյունով ծածկված էր բնությունը, գյուղերը, քաղաքները: Ձյունն ամեն տեղ պատանք էր հյուսում հայրենի հողն ասպատակող ֆաշիստական մարդակերների համար: N գվարդիական դիվիզիան ահեղ մարտեր էր վարում թշնամու դեմ՝ մայրաքաղաքի պաշտպանության համար: Մոսկվայից 60 կիլոմետր հեռու էր կրակային գիծը:

Կապի պետը դիվիզիայի հավատարիմ մարտիկներից մեկին՝ սերժանտ Մանուկյանին և երկու ռուս կապավորների մարտական առաջադրանք տվեց՝ գնալ 3-րդ գումարտակը և պարզել, թե ինչո՞ւ գիծը վատ է աշխատում: Երեքով ճանապարհ ընկան, նրանց առաջնորդում էր Մանուկյանը:

Կապավորներից մեկը հարյուր մետրի վրա գիծը միացրեց և մնաց այնտեղ գիծը պաշտպանելու համար: Իսկ Մանուկյանն իր մյուս ընկերոջ հետ ճանապարհը շարունակեց:

Նրանք պետք է անցնեին մի բլրի վրայով, իսկ թշնամու հրետանին ռմբակոծում էր բլուրը: Գնում էին ձյուների մեջ թաքնվելով, սողեսող: Մանուկյանը հանկարծ նայեց, տեսավ ընկերը կողքին չէ:

— Ֆեդյա՛, ինչո՞ւ ես հետ մնում...

Պատասխանի փոխարեն լսվեց մի խուլ տնքոց:

Մանուկյանի խաժ աչքերը վշտից պղտորվեցին, բայց առանց շփոթվելու, ընկերոջ վիրավոր ոտքը փաթաթեց վիրակապով, ապա զգուշությամբ պառկեցրեց ձգվող հեռախոսալարի մոտ, որպեսզի կտրվելու դեպքում գեթ կարողանա առողջ ձեռքերով գիծը միացնել:

— Ֆեդյա՛, կաց այստեղ, իսկ ես վերադարձին քեզ կվերցնեմ:

Ի՜նչ հարազատ, ի՜նչ հուսադրող էր Մանուկյանի հայացքը: Ֆեդյան վերքի ցավը մոռացած ժպտաց.

— Դու գնա, Մանուկյա՛ն, մարտական առաջադրանքը կատարիր, իսկ ես այստեղ կսպասեմ քեզ:

Մանուկյանը մենակ շարունակեց ճանապարհը: Մի քանի կետերում կտրված լարը նա արագ վերականգնեց և վերջապես հասավ երրորդ գումարտակը: Այստեղ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հավաքեց, համապատասխան կարգադրությունները արեց կապն անխափան պահելու համար և ապա հեռախոսով կապվեց իր գումարտակի պետի հետ:

— Ընկե՛ր պետ, ձեր առաջադրանքը կատարված է, թույլ տվեք վերադառնալ և վիրավոր ընկերոջս վերցնել ինձ հետ:

Պետը չմերժեց նրա խնդրանքը:

Սաստիկ սառնամանիք էր, գետինը ծածկող ձյան հաստ շերտը համարյա բոլորովին սառել էր: Մանուկյանը մտահոգված էր իր ռուս ընկերոջ վիճակով—արդյոք չի՞ սառել, արդյոք կենդանի՞ է: Մտածում էր նա ու սառած ձյունի վրայով արագ սողում:

Երեկոյան դեմ նա վերջապես սողեսող հասավ բլրին:

— Ֆեդյա՛, Ֆեդյա՛ այստեղ եմ,— կամացուկ կանչեց նա:

Ֆեդյան ընկերոջ տաք շունչն զգալով իր դեմքի վրա, երակներում դարձյալ ջերմություն զգաց, ձեռքերը փաթաթեց նրա պարանոցին, քաշում էր համբուրելու՝ երախտագիտության բուռն զգացումով տոգորված:

—Ֆեդյա՛, հարկավոր է այստեղից շուտ հեռանալ,— ասաց Մանուկյանը:

Ինչպես տանել վիրավոր ընկերոջը: Նա արձակեց իր կաշե գոտին և հրացանի փոկը: Այդ երկուսն իրար միացնելով մի օղակ արավ և Ֆեդյայի մեջքն անցկացրեց. իսկ փոկի մյուս ծայրը օղակով կապեց իր մեջքին:

— Դե՛, Ֆեդյա՛, ամուր պահիր քեզ և քո հրացանը, այժմ սողալու ենք...

Մանուկյանը գնում էր փորսող, հետևից քարշ տալով ընկերոջը: Քանի գնում, ասես ուժերն ավելանում էին, այդ սաստիկ ցրտին ոչ թե մրսում էր, այլ քրտնել էր: Այդպես նա մի կիլոմետրից ավելի ճանապարհ կտրեց և ընկերոջը բերեց հասցրեց հրամանատարական կետ: Ցեղկայի կյանքը փրկված էր. Նա բառեր չէր գտնում իր անհուն շնորհակալությունը հայտնելու համար: Դրա ամենապարզ և անմիջական արտահայտությունն այն եղավ, որ Ցեղյան պինդ համբուրեց Մանուկյանին:

***

Մարտական առաջադրանք ստանձնած, ավտոմատը ուսին, գնում էր նա սաղարթախիտ անտառի միջով: Մայրամուտ էր. երեկո: Շուրջը տերևներն էին քամուց շշնջում, անտառն ասես լցվել էր դավերով:

Հանկարծ նա նկատեց, որ տասնհինգ մետր հեռու... գերմանական երկու ավտոմատավոր, մեջքը դեպի իրեն, գծի վրա ապարատը դրած լսում են:

— Հիմա գլուխը ծոցը կուղարկեմ ձեզ,— ասաց Մանուկյանն ու ավտոմատը բացեց: Նրանցից մեկը գլորվեց գետին, իսկ մյուսը ուզեց տեղը փոխել: Այդ ժամանակ Մանուկյանի գլխում մի միտք ծագեց՝ մյուսին բռնել կենդանի, դա գործին ավելի շատ օգուտ կբերի:

Մինչ գերմանացին պատրաստվում էր նռնակը շպրտել Մանուկյանի վրա, վերջինս նրան ժամանակ չտվեց, շեշտակի արագությամբ նետվեց նրա վրա ու ձեռքերը բռնեց: Գերմանացին ճզմվեց նրա հսկա մարմնի ծանրությունից: Նա գերմանացու ձեռքերը ոլորեց ետև ու հեռախոսալարով ամուր կապեց:

Մանուկյանը վերցրեց սպանվածի փաստաթղթերը, նրանց ավտոմատները և գերի զինվորին առաջ գցած՝ դիմեց դեպի հրամանատարական կետը:

Գնում էին միևնույն ճանապարհով՝ ինքը և զինաթափված թշնամին, որը ժանիքները հանած բորենու պես խեղճացել էր: Մանուկյանը նայում էր այդ մարդանման գազանին և լցվում անսահման ատելությամբ, ուզում էր հենց տեղն ու տեղը ոչնչացնել, բայց զսպում էր իրեն. «Հարկավոր է, կենդանի բերան է»:

Հրամանատարական կետում նստած էին գնդի հրամանատա-

րը և շտաբի պետը: Նրանք սկսեցին հարցաքննել գերմանացի զինվորին, թե ո՞րտեղ են նրանց տանկերը, հետևակը և ո՞րտեղ է կենտրոնացված նրանց հիմնական ուժը:

Թշնամու բերանը օգնեց թշնամու ռազմական պլանը ի հայտ բերելու:

Լուսաբացին սովետական մարտիկները գրոհի նետվեցին և գրավեցին կարևոր բնագծեր՝ ջախջախելով ու ցրիվ տալով այդտեղ կուտակված գերմանական զորամասերը:

***

Մի քանի օր անց, գիշերվա ժամը 12-ին, երբ օդում վզզում էին գնդակները և սուրացող արկերը պատառոտում գետինը, սովետական մի ճարպիկ կապավոր լարային կոճը թևն անցկացրած՝ հայտնվում էր մերթ այստեղ, մերթ այնտեղ ու կտրված հեռախոսային գիծը միացնում: Դա սերժանտ Մանուկյանն էր:

Մեծ հաճույք էր ստանում նա, երբ լսում էր թե ինչպե՛ս լարերի միջով, ջրի նման քչքչալով նորից անցնում են ձայնի ալիքները. սիրտը թունդ էր առնում ուրախությունից: Շշնջում էր մեկուսի՝ մերոնք, մերոնք լսում են իրար... Հենց այդ ժամանակ կողքին խլացուցիչ որոտով պայթեց մի արկ: Նա անզգա ընկավ գետին, լարային կոճը ձեռքերում սեղմած:

... Մանուկյանն աչքերը բացեց և տեսավ իրեն Մոսկվայի հիվանդանոցներից մեկում, լուսավոր, խաղաղ պալատում, ձյունի պես սպիտակ անկողնակալին պառկած: Հաճելի դեմքով երիտասարդ քույրը հարցնում էր.

— Ի՞նչ ես ուզում, Մանուկյա՛ն:

Հիվանդը ջուր խնդրեց, Ջրի փոխարեն քույրը նրա շուրթերին սառը կաթով լի բաժակը մոտեցրեց. Նրան վիրահատել էին, արկի բեկորները հանել ազդրից և ոտքը վիրակապով փաթաթել:

... Մի որոշ ժամանակ անց նա դուրս գրվեց հիվանդանոցից և այժմ գտնվում է արևավառ իր երկրում՝ Երևանում: Նա շարունակում է բուժել վիրավոր ոտքը, լավ է զգում իրեն՝ հոգատար ծնողների և հարազատների շրջանում:

Նա շարունակ հիշում է իր ընկերներին, սիրում է նրանց,

չի մոռանում շեկ մազերով, բարի, խաղաղ դեմքով Ֆեդյային, որի կյանքը փրկել էր ամենածանր պահին։

Ռուս ընկերների հետ նա նետվում էր ահեղ մարտերի մեջ, անվախ անսասան, որովհետև ուներ մի վեհ ու պայծառ նպատակ, որ կոչվում է «Հաղթանակ՝ հանուն ազատության և հայրենիքի», մի ազնիվ նպատակ, որի առջև ի չիք են դառնում ու մոխրանում ամեն մի վտանգի դող ու մահվան սարսափ։ Ահա թե ինչու հայրենական պատերազմի անդրոր մասնակից, շքանշանակիր մարտիկ սերժանտ Աշոտ Մանուկյանը ծանր վիրավոր վիճակում էլ չի կորցնում իր հոգու արիությունը։ Նա փոթորկուն աչքերը չեշտակի հառում է դեպի իր հայրենիքի անափ հեռուները և կրկնում համոզված տոնով.

— Մոտենում է ժամը, շուտով հաղթանակը մերը կլինի...



ԿԱՐՄԻՐԲԱՆԱԿԱՅԻՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Կռվի ժամանակ ծանր վիրավորվեց այն զորամասի գնդացրորդը, որի թևերից մեկում կռվում էր կոմունիստ-կարմիրբանակային Սարգսյանը։ Վրա հասավ երեկոն, բայց գնդացրային և հրացանային կրակը չէր դադարում։ Թշնամին շրջապատում էր կարմիրբանակայիններին։ Զորամասին հրամայված էր՝ դրավել նոր դիրք և հակահարված տալ թշնամուն։

Սարգսյանը, որ կատաղի կրակ էր տեղում հակառակորդի վրա, չնկատեց, թե ինչպես հետ քաշվեցին իր ընկերները և թե ինչպես ինքն ընկավ թշնամու շրջապատման մեջ։

Ռումինա-գերմանական զինվորները մոտենում էին այն կետին, որտեղ պաշտպանվում էր Սարգսյանը։ Հարկավոր էր անմիջապես հեռանալ։ Բայց ինչ անել վիրավոր գնդացրորդի հետ։ Սարգսյանը նրան դրեց իր ուսերին և փորսող տալով հետ քաշվեց դեպի ձորակը։ Այնտեղ նա շտապ կերպով կապեց գնդացրորդի վերքը և ասաց.

— Արագ կերպով գնա դեպի թիկունք, իսկ ես կծածկեմ քո նահանջը։

Հազիվ էր գնդացրորդը ծածկվել անտառում, երբ հակառակորդի հաստոցային գնդացիրն սկսեց գնդակոծել ձորակը։ Ոչ մի հնարավորություն չկար ոչ միայն առաջ շարժվելու,

այլ և տեղից վեր կենալու: Առուն, որի մեջ պառկած էր Սարգսյանը, ապահով չէր. նրա եզրը շարունակ փշրվում էր գնդակների հարվածներից:

— Կմեռնեմ, բայց գերի չեն վերցնի,— ասաց Սարգսյանն ինքն իրեն և դադարեցրեց կրակը:

— Թող թշնամին կարծի, որ սպանված եմ,— որոշեց նա,— և դուրս գա բաց տեղ:

Սարգսյանի ենթադրությունն արդարացավ: Տասնմեկ զինվոր ու մի սպա բարձրացան ցորենի արտի միջից:

Նա իր ձեռքն ամուր սեղմեց ավտոմատ հրացանին: Գերմանացի սպան գնում էր զգուշությամբ, շուրջը նայելով: Նրա հետևից խմբովին գնում էին զինվորները: Թողնելով, որ մի քանի քայլ առաջ գան, Սարգսյանը կրակ բացեց ավտոմատից: Գնդակների առաջին իսկ տարափից սպան գետին փռվեց: Երկրորդ տարափը հնձեց նրա արբանյակներին: Բոլոր փախստներն էլ ոչնչացվեցին:

Խիզախ մարտիկը դուրս եկավ թաքստոցից, իր հետ առավ թշնամու հաստոցային ու ձեռքի գնդացիրները և ուժեղ կրակի տակ ավարը հասցրեց զորամասի հրամանատարությանը:

(«Իզվեստիա»)

ՃԱԿԱՏԱՅԻՆ ԳԻՇԵՐՆԵՐ...

Լուռ են ու անշարժ բելոռուսական անտառները:

Գիշերը խաղաղ է և այնքան լուսավոր, որ խճուղու վրա երևում է ճանապարհամերձ խոտերի ստվերը և վաղուցվա ցողի արծաթագույն կաթիլները հաճարի բարձր հասկերի վրա: Հին կամրջի տակ մեղմ կարկաչում է գետակը, լսվում է գիշերային թռչունի կանչը, բարձրահասակ եղևնիները մեղմ օրորում են իրենց կատարները և թվում է, թե ոչ մի կենդանի արարած չկա անտառային և ճահճային այս վիթխարի տարածություններում:

Հետախույզի սուր լսողությունը միայն կարող է որսալ ձիու սանձի ձայնը, թրթուրաձև անիվների պատահական աղմուկը և ժամապահների խուլ, կամացուկ խոսակցությունը— փոխականչը: Հսկայական զորամասեր են տեղավորված անտառներում: Սակայն չեն երևում ոչ ավտոների լույսեր, ոչ ծխախոտի կրակներ: Փտած ծառաբներին կպած լուսատտիկները, նույնիսկ այս պայմաններում թվում են անտեղի: Միայն հորիզոնի վրա, ուր վառվում են ֆաշիստների հրկիզած գյուղերը, երևում են տագնապալի կարմրավուն բոցեր: Դա միակ լույսն է, որ գիշերները նկատում են զինվորները:

Ժամերով կարելի է նայել այդ սոսկալի հրացոլքին...

Կես գիշերին մոտ էր, երբ ավագ սերժանտ կոմերիտական Անտոնյանի ջոկը դուրս եկավ հետախուզության: Հարկավոր էր իմանալ հակառակորդի ուժերի դասավորությունը և գտնել ու բերել «լեզու»:

Զինվորներն անցան բացատը: Կտրելով խիտ թփուտները՝ նրանք մոտեցան գետափին: Մոտակա բլրի վրա, կարմրավուն հրացոլքի տակ հազիվ նշմարվում էին խրճիթների շրջագծերը: Այնտեղ է գտնվում թշնամին, այնտեղ նա թալանում է ու ավերում կոլխոզային գյուղերը:

Անտոնյանը երկու հետախույզ ուղարկեց առաջ: Սակայն նրանք դեռ գետափ չէին հասել, երբ գիշերային հանգիստն ու խավարը խանգարվեց կրակոցներից: Գնդակները սուլելով անցան գետնին պառկած զինվորների վրայով: Կրակում էին գերմանացի սնայպերները: Հակառակորդը քնած չէր: Հարկավոր էր վերադառնալ: Բայց զինվորները չվերադարձան:

Հետախույզները մի նախասիրած ձև ունեն—սողալով լի մի ձև—զգույշ անցնել թշնամու թիկունքը: Շտաբներում եղած քարտեզների վրա այդ ուղին նշանակվում է փոքրիկ սլաքով: Իրականում այդ ուղին բարդ է և դժվարին: Կոմերիտական Անտոնյանն իր ջոկի հետ միասին հաջողությամբ քողարկվելով՝ երկու ժամ անդադար գտնվում էր գերմանական զորամասերի թիկունքում, պարզելով նրանց դասավորումը, հաշվելով հրանոթներն ու կրակային կետերը: Հետախույզների քայլն այնքան կամացուկ էր և զգույշ, որ նրանք լսում էին, թե ինչպես գետափնյա թփուտներում խռմփում են քնած գերմանացիները: Դա գերմանացի զինվորների ու սպաների մի ամբողջ խումբ էր:

Առանց մի գնդակ արձակելու հետախույզները շրջապատեցին և ոչնչացրին ֆաշիստական խումբը:

Անտոնյանի ջոկը վերադարձավ իր զորամասը, երբ լուսինը դեռ մայր չէր մտել: Խիզախ հետախույզները զորամասի շտաբը բերին «լեզու»—մի գերմանացի սպա և 11 զինվոր:

(Կոմ. Պրավդա»)

ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲԱԶԵՆ

Ամեն մի մարդու կյանքում լինում են այնպիսի մոմենտներ, որոնք երկար տարիներ որոշում են նրա բախտը, նրա հետագա ամբողջ գործունեության ուղղությունն ու բնույթը:

Այդպես էլ Նելսոն Ստեփանյանի կյանքում եղավ. պլաների մոդելին առաջին անգամ ծանոթանալը եղավ այն սահմանը, որից հետո նոր կյանք սկսվեց նրա համար: 1928 թվին 15-ամյա Նելսոնը հափշտակվեց ավիացիայով, անբացատրելի սեր տածելով նրա նկատմամբ: Պատանուն հրապուրում էին կապույտ երկնակամարը, օդային անսահման տարածությունները, ուր մարդը թամբելով պողպատե թռչունին՝ սլանում է դեպի վեր, դեպի հեռավոր բարձունքները: Ավիացիայի սերը նրա մեջ պատվաստեցին պիոներական միջավայրը, գրքերը, որ ագահաբար կլանում էր մեր պատանին: Տղայի հոգեկան ու մտավոր զարգացմանը ուշադրությամբ հետևող հայրը և մանկավարժները չէին կարող չնկատել Նելսոնի անզուսպ և անհաղթահարելի հակումը դեպի ավիացիան: Այդ հակումը երևան էր գալիս նաև նրանով, որ նա պատրաստում էր ինքնաթիռի մոդելներ և ընկերների հետ միասին բաց էր թողնում դեպի Երևանի կապույտ երկինքը, և երկար դիտում էր, թե ինչպես է պտտվում օդում իր իսկ ձեռքով կառուցած պլաները:

Միջնակարգ դպրոցն ավարտելուն պես Ն. Գ. Ստեփանյանը մտնում է ավիացիոն դպրոցը և 1935 թ. ավարտում գովասանագրով: Դրանից հետո Ստեփանյանն իր բոլոր ուժերը նվիրում է սովետական ավիացիային: Մի քանի տարի շարունակ նա աշխատում է որպես հրահանգիչ և պատրաստում է օդաչուների երիտասարդ կադրեր: Լինելով քաղաքացիական օդատորմիղի օդաչու՝ նա թռել է տասնյակ հազարավոր կիլոմետրեր: Ինչպես բոլոր ստալինյան բազեները, այնպես էլ Նելսոնը անխոնջ կերպով պատրաստվում էր առաջիկա մարտերին, գիտենալով, որ թշնամու դեմ տեղի ունենալիք մարտերում հարկավոր է օժտված լինել օդաչուական բարձր վարպետությամբ, անվեհեր ու համառ լինել առաջադրված մարտական խնդիրը կատարելու մեջ:

Եվ ահա, երբ հունիսի 22-ին գերմանա-ֆաշիստական ճիվաղները ուխտադրուժ կերպով հարձակվեցին սովետների երկրի վրա, հենց նույն օրը Նելսոն Ստեփանյանը նշանակվեց գործող բանակում, կանգնեց հայրենիքի պանծալի պաշտպանների շարքերում: Զորամաս գալով՝ Ստեփանյանը հայտարարեց. «Քանի դեռ իմ մեջ բաբախում է սիրտը, իմ սրբազան պարտքն է մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել սիրելի հայրենիքը, մեր սքանչելի սովետական ժողովուրդը, մեր բարգավաճ քաղաքներն ու գյուղերը: Իմ տեղը հայրենիքի պաշտպանների առաջավոր շարքերումն է»:

Նելսոն Ստեփանյանի ցանկությունը շուտով կատարվեց: Հրամանատարությունը նրան ուղարկեց այնտեղ, ուր պահանջվում էին ամենախիզախ ու քաջարի մարդիկ:

Զորամաս գալուն պես Նելսոն Ստեփանյանը մոբիլիզացիայի ենթարկեց իր բոլոր գիտելիքները, կամքն ու եռանդը՝ արագ ու մանրամասն կերպով ուսումնասիրելու մարտական ինքնաթիռը և նրա բարդ սպառազինությունը: Ամենակարճ ժամանակամիջոցում մարտական մեքենան հնազանդ և ահեղ զենք դարձավ նրա ամուր ու հմուտ ձեռքերում:

Ստեփանյանի արտահայտիչ դեմքը, նրա սև ու խոշոր աչքերը, որոնք փայլում էին անսպառ եռանդով ու քաջությամբ, ցույց էին տալիս անվեհեր հայրենասերի բնավորությունը: Կրտսեր լեյտենանտ Ստեփանյանը գերմանական զավթիչներին ոչնչացնում էր Հարավ-Արևմտյան ճակատում՝ Օդեսայի մոտ: Մարտական թռիչքներից մեկի ժամանակ վիրավորում են Ստե-

փանյանին, բայց այդ բանը թանգ է նստում ֆաշիստական գիշատիչին: Ստեփանյանին հաջողվում է հարվածել թշնամուն, որն իր ինքնաթիռով միասին ցած է գլորվում և ջարդ ու փշուր լինում:

Շուտով Ստեփանյանին փոխադրում են Լենինգրադի ճակատ, որտեղ նա մինչև այժմ հերոսաբար կռվում է քաջարի բալթիկցիների շարքերում, գերմանական գիշատիչներից պաշտպանելով Լենինգրադը:

Ստեփանյանի օդաչուական կենսագրության մեջ քիչ սխրագործություններ չկան: Նրա կուրծքն այժմ զարդարված է Լենինի և Կարմիր Դրոշի շքանշաններով, և նա արդեն կապիտան է:

Օդաչուական բարձր վարպետությամբ օժտված և թշնամու նկատմամբ անզուսպ ատելությամբ համակված Ստեփանյանի սխրագործությունների մասին բազմիցս գրել են «Պրավդա»-ն, ռազմաճակատի մամուլը: «Մրրկահավ», «Օդաչու-բոլշևիկ», «Հայ ժողովրդի պանծալի զավակը»—ահա այսպիսի վերնագրերով են լույս տեսել հոդվածներ և ակնարկներ Ստեփանյանի մասին:

Սակայն գրոհային Ստեփանյանի սքանչելի հատկությունները առանձնապես փայլուն և լիակատար կերպով երևան են եկել Լենինգրադի պաշտպանության համար մղվող մարտերում: Ստեփանյանը մշուշապատ Բալթիկը և Լենինի մեծ քաղաքը սիրում է նույն ջերմությամբ, ինչպես ջերմությամբ՝ իր հարազատ Երևանը:

Գրոհող օդաչու Ն. Ստեփանյանը Բալթիկի բազմաթիվ հերոսներից մեկն է: Նա N գրոհային ստորաբաժանման բոլշևիկների մարտական ղեկավարն է:

Դեռ չի եղել մի դեպք, որ Ստեփանյանը չկատարի մարտական առաջադրանքը: Ուզածդ եղանակին նա օղակը բերում-կանգնեցնում է ճիշտ նպատակակետի վրա և գրոհողների ամբողջ կրակային հզորությամբ հարձակվում է սրիկա ֆաշիստների վրա: Գրոհից դուրս գալուն պես նա հավաքում է իր օղակը և դրանից հետո միայն վերադառնում իր կայանը:

Լենինգրադի ճակատում ընկ. Ստեփանյանը կատարել է հարյուրից ավելի մարտական թռիչք: Նրա համարձակ և հուժկու հարվածներից ոչնչացել են հազարավոր հիտլերականներ, ջարդ ու փշուր են եղել թշնամու ավելի քան 85 տանկեր, ավելի

քան 250 գնդիրթային հրանոթներ, 500 ավտոմեքենաներ, սայլեր և այլն:

Ստեփանյանի մարտական սխրագործությունները գիտե ոչ միայն Կարմրադրոշ Բալթիկը, այլև ամբողջ երկիրը:

Ահա Ստեփանյանի բազմաթիվ սխրագործություններից մեկը: Մի անգամ Ստեփանյանն օղակի հետ միասին գրոհեց գերմանացիների պաշտպանության առջևի բնագծի վրա: Ճնշեցին կրակային կետերը և հրամանատարի ետևից բռնեցին վերադարձի ճանապարհը: Այդ ժամանակ Ստեփանյանին, որ դեռ կրտսեր լեյտենանտ էր, թվաց, թե գրոհողներից մեկը հեռացավ մի կողմ և գնաց դեպի թշնամու թիկունքը: Ստեփանյանը գնաց նրա ետևից: Շուտով նա հասկացավ իր սխալը: Նա գրոհող ինքնաթիռի տեղ էր ընդունել մեր կործանիչներից մեկը, որոնք ռմբակոծելու էին եկել հակառակորդի երկաթուղային գնացքը: Ստեփանյանը կայարանին մոտեցավ այն ժամանակ, երբ «Բազեները» արդեն գործում էին, բայց գրոհողի տեսակետից նրանց աշխատանքը չէր կարող խիստ արդյունավետ լինել: Եվ Ստեփանյանը գրոհի նետեց իր մեքենան: Նա խորտակեց գնացքը, շարքից դուրս հանեց շոգեքարշերը և քարուքանդ արեց երկաթուղու պաստառը: Միքանի «Մեսսերշմիտ» փորձեցին հարձակվել նրա վրա: Բայց նրանք անկարող էին ճեղքելու մեր «Բազեների» պաշտպանությունը:

Կամ թե ահա վերցնենք մի ուրիշ էպիզոդ. Ձմեռվա մի օր Ստեփանյանը կատարեց հակառակորդի պաշտպանության առջևի գծի հետախուզություն, որն արտասովոր է իր համարձակությամբ ու հանդգնությամբ: Կատարելով հիմնական առաջադրանքը՝ գրոհող ինքնաթիռները վերադարձան իրենց օդանավակայանը: Ռազմաճակատի գծի վերև Ստեփանյանը արագ թափ ընդունելով՝ խոյացավ թշնամու դիրքերի վրա: Միայն մոտ տասնհինգ մետր բարձրության վրա օդաչուն կատարեց խուզող թռիչք: Նա լավ տեսնում էր, թե ինչպես գերմանական ավտոմատավորները վախկոտությունից թաքցնելով իրենց գլուխները՝ կուրորեն կրակում էին խիզախ ինքնաթիռի վրա: Ստեփանյանը դիպուկ կրակով դուրս էր բերում ֆաշիստներին խրամատներից, հանգիստ և խնայողաբար ծախսելով փամփուշտները:

Ինքնաթիռը սլանում էր ծրագծող գնդակների տեղատարափի տակ: Օդաչուն զգում էր, թե ինչպես երբեմն ցնցվում է

մեքենան: Հարթակների և զրահի վրա անընդհատ տեղում էին խոշոր տրամաչափի գնդացրի գնդակներ, բայց քաջարի օդաչուն շարունակում էր հետախուզությունը, արհամարհելով վտանգն ու մահը: Այսպես նա թռչելով անցավ ռազմաճակատի ամբողջ գիծը: Խնդիրը կատարված էր փայլուն կերպով:

Լինելով հիանալի բարեկամ ու ընկեր՝ Ստեփանյանը վայելում է իր այն մարտական ընկերների սերը, որոնց հետ միասին թռիչքներ է կատարում թշնամու վրա: Նրա մոտիկ ընկերներն են ավագ լեյտենանտ Մ. Գ. Կլիմենկոն, լեյտենանտ Ա. Ս. Պոտապովը, կապիտան Ա. Ա. Կարասևը և ուրիշներ, որոնք նույնպես պարգևատրված են Սովետական Միության շքանշաններով: Գրոհող օդաչուներն ունեն միայն մի նպատակ և մի ցանկություն—անխնա ջախջախել թշնամուն:

Պարտիական կազմակերպության պահանջկոտ քարտուղար և մարտիկների ու հրամանատարների կարիքների նկատմամբ զգայուն վերաբերմունք ցուցաբերող Ստեփանյանը մեծ հեղինակություն է վայելում: Մարտական առաջադրանքների համար թռիչք կատարելիս նա իր անձնական օրինակով քաջություն, խիզախություն և թշնամուն ջախջախելու ընդունակություն է դաստիարակում օդաչուների մեջ:

Ներկայումս Ստեփանյանը համատեղության կարգով կատարում է նաև մի այլ պատասխանատու և բարդ աշխատանք—նա էսկադրիլիայի կոմիսարի տեղակալն է:

Դեռ շատ սխրագործություններ կկատարի շքանշանակիր օդաչու Նելսոն Ստեփանյանը: Նրա, ինչպես և ամբողջ սովետական ժողովրդի, հաղթանակի կամքն անընկճելի է: Հայ ժողովրդի պանծալի զավակ Նելսոն Ստեփանյանը, որին դաստիարակել է Լենինի—Ստալինի պարտիան, բարձր է պահում իր հայրենիքի պատիվը:

ԿԱՊԻՏԱՆ ԼԵՎՈՆ ԹԱԹՅԱՆԸ

Կաղուլ քաղաքը գտնվում է արագահոս Պրուտ գետի աջ ափին: Գիշերները, երբ գետի կողմից փչում էր սառը քամին, օրորվում ու խշշում էին գետափնյա եղեգները և բալենիների բարակ ճյուղերը մեղմիկ երերվում էին քամուց:

Այն տունը, որտեղ ապրում էր կապիտան Թաթյանը, գտնվում էր պարտեզի խորքում: Ամառային խաղաղ գիշերներին կապիտանը նստում էր բաց լուսամուտի առաջ, ամբողջ կրծքով շնչում էր գետից փչող խոնավ բուրմունքը և ծխելով գլանակը՝ մտածկոտ ականջ էր դնում ջրերի կարկաչին:

Երբեմն մտքերը նրան շատ հեռու էին տանում: Նա մտովին տեսնում էր իր անցած ճանապարհը՝ Երևանից մինչև Կաղուլ, Հայաստանից մինչև Բեսարաբիա: Նա տեսնում էր ֆիննական ձյունածածկ անտառները, որտեղ իր մարտիկների հետ միասին ջախջախում ու հողմացրիվ էր անում սպիտակ-ֆիննական բանդաները, հիշում էր իր մարտական ընկերներին, որոնք փառահեղ մահով ընկել էին պատերազմի դաշտում, հիշում էր իր վաշտերի ահեղ գրոհները, որոնց առաջ ոչինչ չէր դիմանում...

Եվ ահա այժմ աշխատում է նա Կաղուլ քաղաքում, որը փռված է Պրուտ գետի ափին:

Կապիտանը գնդի շտաբի պետ էր նշանակվել:

Նա իր կյանքից ավելի հայրենիքն էր սիրում: Դրա համար էլ գիշեր ու ցերեկ պաշտպանական ամրություններ էր կառուցում գետի այս ափին և իր մարտիկների սրտում դեպի հայրենիքի թշնամիները բորբոքում էր ատելության սրբազան հուրը:

Ծրագրելով հարձակվել մեր երկրի վրա՝ գերմանացիները մտադիր էին մի թռիչքով անցնել Պրուտ գետը: Նրանք թռան, բայց փոխանակ սովետական ափն ընկնելու, ընկան գետի ալիքների մեջ: Կապիտան Թաթյանի մարտիկները մրրկային գնդակոծությամբ հետ էին շպրտում գրոհող գերմանացիներին, որոնք հարյուրներով թափվում էին գետի մեջ և Պրուտի ջրերը ներկվում էին նրանց կեղտոտ արյունով:

Գերմանացիները լաստակամուրջներ էին կառուցում: Բայց տանկերով ու հետևակով ծանրաբեռնված այդ կամուրջները սովետական հրետանու հուժկու հարվածներից հօդս էին ցնդում: Իրար ետևից ձախողվում էին գետն անցնելու բոլոր փորձերը: Դրանից կատաղած ֆաշիստական մարդասպանները դաժան ռմբակոծության էին ենթարկում գետի սովետական ափը: Պատահում էր, որ երկու ժամ անընդհատ գերմանական սավառնակները ռումբեր էին թափում սովետական մարտիկների դիրքերի վրա, որից գետինը տակն ու վրա էր լինում: Ենթադրելով, որ այլևս ոչ ոք չի կարող իրենց խանգարել՝ գերմանացիները նորից սկսում էին լաստակամուրջներ անցկացնել գետի վրա: Կապիտան Թաթյանի մարտիկները թույլ էին տալիս, որ ֆաշիստները հասնեն մինչև գետի մեջտեղը, որից հետո նրանց վրա էր պայթում հրետանային փոթորիկը և լկտի սրիկաներին իրենց կամուրջների հետ միասին գետի փրփրաբաշ ալիքների մեջ խեղդում:

Ֆաշիստ գավթիչների արյունից կարմրել էին Նվիրական Պրուտի ջրերը: Այդ արյան մեջ խեղդվում էին հազարավոր զինվորներ ու սպաներ, գետի հատակն էին գնում տասնյակ տանկեր, թնդանոթներ ու ավտոմեքենաներ, հարյուրավոր ձիեր ու ձիավորներ, բայց ֆաշիստական ճիվաղները նոր զումարտակներ էին առաջ նետում:

Կապիտան Թաթյանն արդեն վիրավորվել էր, բայց ոչ մի քայլ չէր հեռանում իր պոստից: Չնայած տանջալի ցավերին, նա շարունակում էր սառնասրտորեն ղեկավարել մարտը և նորանոր հարվածներ հասցնել գերմանական արյունաքամ եղած զորամասին: Իր ռազմական հմտության, սառնասրտության ու կրակային կետերը վարպետորեն դասավորելու ընդունակության շնորհիվ՝ կապիտանը կարողացավ պահպանել սկզբնական դիրքերը, արյունաքամ անելով թշնամուն և թույլ չտալով, որ անցնի գետը: Թաթյանի գունդը դիրքերը պահպանեց այնքան ժամանակ, մինչև Կարմիր Բանակի հրամանատարությունն առաջարկեց հետ քաշվել նախօրոք պատրաստված դիրքերը:

Գերմանական զավթիչների դեմ այսպես սկսեց իր կռիվը հայ ժողովրդի արժանի զավակը: Պրուտի ափերին թշնամուն հասցրած Թաթյանի ջարդերը պսակեցին նրա անունը անթառամ փառքով: Նրա կուրծքը զարդարվեց Կարմիր Դրոշի շքանշանով:

***

Սկսվեց Օդեսայի պաշտպանության հերոսական էպոպեն. Լևոն Թաթյանը նշանակվել էր գնդի հրամանատար: Նրա գնդի մարտիկներն ու հրամանատարներն ատելի թշնամու դեմ կռվում էին հերոսաբար, մինչև արյան վերջին կաթիլը: Նրանք անվախ ու համարձակ գրոհում էին զազրելի հափշտակիչների զորամասերի վրա, տրորում նրանց, ավերախողխող անում և կործանիչ հարվածով հետ շպրտում պաշարված քաղաքի մատույցներից:

Այդ ահեղ գրոհների ժամանակ, իր անձնական խիզախությամբ մարտիկներին ոգևորում էր գնդի հրամանատարը: Մարտերի ամենաթեժ պահերին, երբ թվում էր, թե մեր մարտիկներն արդեն ճզմվելու են գերմանացիների բացարձակ գերակշռությունից, ատրճանակը գլխավերևում ճոճելով առաջ էր նետվում գնդի հրամանատարը, նրա հետևից մի մարդու պես սրընթաց սլանում էր գունդը՝ ճանապարհին ընկճելով փախչող գերմանացիներին:

Ռազմաճակատի գիծն արդեն մոտեցել էր քաղաքի արվարձաններին: Ֆաշիստական հեռահար հրետանին դաժան ու անմիտ ռմբակոծություն էր ենթարկում գեղեցիկ Օդեսայի կենտրոնա-

կան մասը: Գերմանացիներն օրվա մեջ 7—8 գրոհ էին ձեռնարկում, բայց զարնվելով հերոս պաշտպանների գրանիտյա դիմադրությանը՝ արյունոտված ու ջախջախված հետ էին շպրտվում: Առանձնապես դաժան ու արյունահեղ մարտերը չէին դադարում Թաթյանի զորամասերի պաշտպանության հատվածում: Այդ հատվածում մի գիշեր գերմանացիները կատաղի գրոհ ձեռնարկեցին: Դեռ լույսը չէր բացվել, երբ թշնամու մարտկոցները Թաթյանի դիրքերի վրա տեղատարափ կրակ բացին: Հետո գրոհի նետվեց հետևակը: Գերմանացիները թվական գերակշռություն ունեին: Նրանք հարձակվում էին մի քանի ալիքով:

Գնդի հրամանատարը հանգիստ ու անվրդով անցնում էր խրամատից-խրամատ և ջերմ ու մտերիմ խոսքերով ոգևորում իր մարտիկներին: Հրամանատարի հանդարտ կեցվածքը տեսնելով՝ մարտիկները սրտապնդվում էին:

Թաթյանի մարտիկները գնդացրային հուժկու կրակով հնձեցին հարձակվող ֆաշիստների առաջին շարքերը: Նրանց հետևի շղթաների մեջ խփեց մեր հրետանին: Շղթաները ցիր ու ցան եղան: Բայց հարձակումը ոչ մի վայրկյան չէր թուլանում: Գերմանացիները սկսեցին ականանետներով գնդակոծել պաշտպանվող տարածությունը: Միաժամանակ ֆաշիստներն առաջ նետեցին իրենց տանկերը, որոնց հետևից վազում էին ավտոմատավորների խմբերը: Այդ ժամանակ գնդի հրամանատար Լևոն Թաթյանն արդեն վիրավորվել էր դեմքից, բայց առաջվա նման շարունակում էր ղեկավարել մարտը: Նա հրամայեց տանկերը առաջ թողնել և թևերից խփել ավտոմատավորներին ու նրանց կտրել մեքենաներից: Գնդացրային ուժեղ կրակը պառկեցրեց ավտոմատավորներին: Տանկերն առաջ անցան: Բայց առջևում նրանց խփեցին հակատանկային հրանոթներով նռնակներով ու հրկիզող շշերով: Մեքենաներից հինգը բոցավառվեցին: Մնացածները շփոթված հետ դարձան: Չնայած դրան, գերմանացիներն անթիվ զոհեր տալով առաջ էին խցկվում: Նրանք այնքան մոտ էին, որ կարմիրբանակայինները պարզ տեսնում էին ավազակների հարբած դեմքերը: Գնդի հրամանատարը, որ արդեն վիրավորվել էր երրորդ անգամ, կանգնեց իր վիթխարի հասակով և խրոխտ ձայնով որոտաց.

— Առա՛ջ, ընկերնե՛ր, գրոհի՛. հանու՛ն հայրենիքի, հանու՛ն Ստալինի... և ատրճանակը գլխավերևում թափահարելով՝ նետ-

վեց թշնամու վրա։ Կարմիրբանակայինները կարծես դրան էին սպասում։ Խրամատներից դուրս թռչելով, սվինները առաջ պարզած՝ թռան գերմանացիների շարքերի մեջ ու սկսեցին կոտորել նրանց։ Գերմանացիների շարքերը սասանվեցին, ահն ու սարսափը տիրեց նրանց և նրանք միմյանց ոտնատակ անելով փախուստի դիմեցին։

Գերմանացիների գրոհը ձախողվեց, իսկ կալի դաշտը ծածկվեց նրանց զինվորների հարյուրավոր դիակներով։

Բայց... գնդի հրամանատարը մահացու կերպով վիրավորվել էր։

Երբ սանիտարները փորձում էին նրան տանել, նա ցավից ատամները սեղմելով՝ բարձրացրեց իր արյունոտված գլուխն ու հրամայեց կանչել կոմիսարին։

— Կոմիսա՛ր, պահպանի՛ր գունդը,— խիստ ու հանդիսավոր ձայնով ասաց նա,— ես հեռանում եմ ձեզանից, բայց իմ սիրտը ձեզ հետ է...

— Ընկե՛ր հրամանատար, Լյովա՛, սիրելի՛ս... կոմիսարը գրկեց իր խիզախ ընկերոջ սևահեր գլուխը, սեղմեց կրծքին, փորձեց նայել նրա խոշոր ու սև աչքերին, բայց այդ աչքերն այլևս չէին տեսնում նրան։ Կոմիսարը զգուշությամբ ցած դրեց հրամանատարի գլուխն ու ոտքի կանգնեց։

Նրա աչքերը լիքն էին արտասուքով, իսկ սիրտը՝ վրեժի անսահման ցասումով։

***

Գեղածիծաղ Լոռին էր նրա ծննդավայրը, ծառազարդ Կիրովականում էր մեծացել նա, անտառախիտ ձորերում և աղմկոտ գետերի ափերին անցկացրել իր մանկությունն ու պատանեկությունը։ Սովետական Լոռին էր սնուցել ու աճեցրել իր հարազատ զավակին, սովետական ժողովուրդն էր խնամել ու դաստիարակել իր հերոս մարտիկին և այդ ժողովրդի պատիվը, ազատությունն ու անկախությունը պաշտպանելու համար հայրենական պատերազմի մարտադաշտերում հերոսի մահով ընկավ կապիտան Լևոն Թաթյանը։

Կանցնեն տարիներ, բայց երբեք չի մոռացվի գնդի հրամանատար կապիտան Լևոն Թաթյանի պայծառ անունը։

Նրա խիզախությունն ու անվեհերությունն անջնջելի տառերով դրոշմված են բոլոր նրանց սրտերում ովքեր կապիտանի հետ միասին մարտնչել են ռազմաճակատում, ծանր օրեր են ապրել նրա հետ միասին և հիմա հողմացրիվ են անում ֆաշիստական սրիկաներին։

Նրա անձնվեր պայքարը և հերոսական մահը անմահ կպահեն նրա անունը մեր ժողովրդի սրտում։



ԼԵՅՏԵՆԱՆՏ ՄԱՔՍԱՊԵՏՅԱՆ

Ես ուզում եմ պատմել այն միլիոններից մեկի մասին, որոնք աննկատելի, համեստ, սակայն խորապես գիտակցված անձնվիրությամբ մարտնչում են հանուն հայրենիքի։

Այդ միլիոններից մեկն է հայ ժողովրդի ազնվասիրտ որդի, լեյտենանտ Համլետ Մաքսապետյանը, որը 1939 թվից սկսած արթուն կերպով կանգնած է սովետական հայրենիքի պաշտպանության դիրքերում։

***

Նա հասակակից է Սովետական Հայաստանին, ծնվել է 1920 թվին նրա մայրաքաղաքում։ Նրա ծնողներն ու նախնիքը ապրել են Բզնունյաց ծովի ափին, Վասպուրականի հնադարյան մայրաքաղաքում, ուր բարձրանում է ուրարտական արձանագրություններ կրող վիթխարի ժայռը։ Համլետի աչքերը բացվեցին սովետական աշխարհում, նա մեծացավ ու դաստիարակվեց կոմերիտմիության շարքերում։ Նախնական կրթությունն ստացավ Լենինականում, ապա սովորեց Թբիլիսիի կապի տեխնիկումում, իբրև հեռագրական տեխնիկ-մեքենավար։

Սակայն տեխնիկ-մեքենավարի մեջ վառ կերպով ապրում էր գրականության սերը։ Դեռևս գրեթե մանուկ, 12 տարեկան

Համլետը շարադրում էր պատմվածքներ իր ժողովրդի կյանքից։ Մինչև այսօր էլ ընտանիքը խնամքով պահում է Համլետի 1932 թվականի աշակերտական բլոկնոտը, որի առաջին էջը կրում է «Քայքայված ընտանիքի վերջին շառավիղը» վերնագիրը։

Աշակերտական այդ շարադրությունը հուզիչ է իր նայիվությամբ, սակայն այնտեղ մենք տեսնում ենք ուշիմ, լրջախոհ պատանու միտքը, որ թերևս զարգացել է ժամանակից վաղ, իսկ գրեթե անսխալ ուղղագրությունը ցույց է տալիս իր մայրենի լեզվին լավ տիրապետելը, որքան այդ հնարավոր է 12 տարեկան հասակում։ Չէ՞ որ նա համարյա երեխա է, փոքրիկ Համլետը, որ պատրաստվում է ընդունվել կապի տեխնիկումը և սովորել ռուսերեն։

Եվ ահա նա ավարտեց տեխնիկումը։ Նա այժմ լավ գիտե ռուսերեն, գրում է միանգամայն գրագետ ու գեղեցիկ։ Եվ մեքենավար տեխնիկը Լենինականում մի առ ժամանակ աշխատելուց հետո մեկնում է Մոսկվա՝ ընդունվելու համալսարանի... գրական ֆակուլտետը։

Նա տասնինը տարին դեռ չի լրացած։ Սպիտակ-ֆինները սպառնում են մեր հայրենիքի հյուսիսային սահմաններին՝ հերոսական Լենինգրադին։ Երկիրը կանչում է իր որդիներին։ Գրական ֆակուլտետը մնում է իբրև ապագայի մի շողուն հեռանկար։ Համլետը Կարմիր Բանակի շարքերումն է։ Կապի տեխնիկ-մեքենավարը պատրաստվում է դառնալու մարտական մեքենայի մեքենավար, որովհետև այդ է պահանջում հայրենիքը։ Համլետը տանկիստ է, նա պատրաստվում է համառորեն, անդուլ, տիրապետելու մարտական մեքենաները վարելու արվեստին։ Նա դառնում է սոցիալիստական մրցության կոմերիտական նախաձեռնողներից մեկը։ Բանակային թերթը նշել է այդ իր էջերում։

Համլետ Մաքսապետյանը գրավել էր առաջին տեղը իր ընկերների մեջ, որոնք սիրում էին նրան եղբայրական սիրով, վարվում նրա հետ իբրև ավագի, թեև իրենց հասակակից էր այդ հայաստանցի լրջախոհ պատանին։ Սակայն նրա մեջ նկատում էին կամքի ուժ, սառնարյունություն, անթեքելի վճռականություն, հատկություններ, որոնք ակամա իրենց են ենթարկում շրջապատողներին։ Նրան լսում ու հարգում էին, զգում էին կարծես նրա մեջ ապագա հրամանատարին։

Սակայն բոլոր հատկություններից, որ համակրելի էին

դարձնում երիտասարդ տանկիստին, ամենից ավելի գրավիչ էր նրա համեստությունը: Ակամա մի տեսակ ցավ է պատճառում մեզ, երբ փորձում ենք կարդալ նրա նամակների տողերի արանքում, նրա հակիրճ խոսքերի մեջ տեսնել նրա ռազմաճակատային գործերը: Նա իր մասին համարյա ոչինչ չի պատմում: Մայրը և «միակ քույրը», ինչպես գրում է իր նամակներից մեկում, գիտեն միայն, որ իրենց Համլիկն արդեն ստարշինա է, գորովանքով նայում են նրա երկու լուսանկարին՝ ուղարկված Հյուսիս–Արևմտյան ճակատից «ԲԳԿԲ գերազանցիկի» նշանը կրծքին:

Համլիկն իր երիտասարդական ամբողջ ավյունով կռվեց սպիտակ–ֆինների դեմ, և երբ հաղթանակով վերջացավ սովետական ժողովրդի պայքարը Մաններհայմի ոհմակների դեմ ու մեր հայրենիքին հյուսիսից սպառնացող վտանգը մի առ ժամանակ վերացավ, երիտասարդ հայրենասերը նորից մտածեց ուսման մասին, այս անգամ արդեն ոչ թե գրական ֆակուլտետում, այլ զինվորական ակադեմիայում, որտեղ հրամանատարությունն առաջադրել էր նրա թեկնածությունը:

1941 թվի հունվարի 29 թվակիր նամակում, մաքուր ռուսերենով Համլիկը գրում է իր փոքրիկ քրոջը.

«Բարև, թանկագի՛ն Մինուշ:

Ստացա քո նամակը: Իմ հարցերին դու պատասխանում ես ոչ լրիվ: Օրինակ, չես գրում՝ պարապո՞ւմ ես ֆիզկուլտուրայով, թե ոչ: Ֆիզկուլտուրան քեզ անհրաժեշտ է: Նա կփոխի քո առողջությունը:

Քիչ ես կարդում ռուսերեն գրքեր: Պետք է ավելի շատ կարդալ: Հայ գրականությունից էլ չպետք է հետ մնալ:

Սիրելի՛ս, հիշեցրու մայրիկին, որ նա ուղարկի իմ դիպլոմը և ծննդականը. դրանք ինձ հարկավոր են խիստ շտապ... Նամակիս պատասխանը գրիր անմիջապես, համբուրում եմ քեզ: Քո եղբայր Համլիկ»:

Դիպլոմը և ծննդականը հարկավոր էին զինվորական ակադեմիա ընդունվելու համար: Խաղաղությունը թվում էր մի պահ վերահաստատված, պետք է անցնել լուրջ ու քրտնաջան աշխատանքի, ֆիննական ռազմաճակատի փորձն իմաստավորել ռազմական գիտության տվյալներով:

Սակայն ամբողջ աշխարհը բռնված է նոր համաշխարհային պատերազմի բոցերով: Երիտասարդ հայրենասերն արդեն տվել

էր դժվար քննություններ և ուզում էր ակադեմիայի պարապմունքներն սկսվելուց առաջ վերադառնալ հայրենիք, միքանի օրով տեսնել իր սիրելիներին. վաղո՜ւց չէր տեսել: Տոմսն արդեն գրպանումն էր: Նրան ժպտում էր առաջիկա քաղցր հանդիպման հեռանկարը: Ահա նա տեսնում է հարազատ վայրերն ու դեմքերը, վաղաժամ սպիտակած մազերով մորը, 25–ամյա ստաժով մանկապարտեզի վարիչին, վառվռուն դպրոցական, նուրբ քրոջը, որի աչքերը միշտ ժպտում են ասես:

1941 թվականի ամառն էր: Նորից դեպի ռազմաճակատ, դեպի Լենինգրադի պաշտպանության դիրքերը:

Ռազմաճակատից նրա առաջին նամակը կրում է 1941 թվի հուլիսի 7–ի թվականը: Միքանի տողով նա հանգստացնում է մորն ու քրոջն իր մասին չմտածելու, սակայն ինքն անհանգստանում է ուրիշների համար. «Սիրելի մամա ու Մինուշ, ես լավ եմ, առողջ,— գրում է նա,— առայժմս կարող եք իմ մասին չանհանգստանալ: Ես վախենում եմ Ժիրայրի ու Արտյոմի համար, նրանք եթե նամակ չեն գրում, կամ սպանված են, կամ գերի են ընկել. դու գրել էիր որ Ժիրայրը Բելոստոկումն է, այդ մասին Երանուշին իհարկե ոչինչ չասես»:

Գործող բանակից հապճեպ գրած իր այս առաջին երկտողով Համլիկը այնուամենայնիվ հարցնում է մորը. «Գրիր թե ինչ եք անում, ինչով եք զբաղված, ինչպես եք օգնում մեզ ֆաշիզմին հաղթելու համար: Ավելի երկար գրելու հնարավորություն չունեմ: Շատ ու լավ աշխատանք, համբուրում եմ ձեզ: Ձեր Համլիկ»:

Համլիկը կանոնավոր կերպով նամակներ է գրում գործող բանակից: Օգոստոսի երեքին ռուսերեն լեզվով գրված իր նամակում նա իր սիրելիներին հրճվանքով հաղորդում է ուրախալի մի լուր իր կյանքում կատարված մի մեծ իրադարձության մասին.

«Մամա, այսօր ինձ համար բերկրալի օր է, ամենաբերկրալի օրն իմ կյանքում: Ես ընդունվեցի ՀամԿ(բ)Պ շարքերն իբրև թեկնածու, կարող ես շնորհավորել ինձ»:

Նա հպարտությամբ է գրում իր նամակներից մեկում. «Ես Լենինգրադի պաշտպաններից եմ, սիրում եմ Լենինգրադը, իմ ընկերներս նույնպես: Եվ ինչքան ֆաշիստ շները ցանկանան ման գալ մեր բուլվարներով ու Նևայի պրոսպեկտով, ճաշել մեր ռեստորաններում, մեր թատրոններում իրենց գազանային ներ–

կայացումները դնել—ոչինչ դուրս չի գա, դուրս կշպրտենք ֆաշիստական ռազմի մեքենան մեր հայրենիքից, կոչնչացնենք բոլորին: Պի՛նդ կաց, համբուրիր Մինուշին»:

Մարտերը համառ են ու կատաղի, Համլիկը հաճախ ժամանակ չի գտնում մի քանի տող գրելու: Նա դառնում է մեծ իրադարձությունների, պատմական նշանակություն ունեցող վիթխարի մարտերի կենտրոնում, երբ ամեն րոպե նրա կյանքը կախված է մազից: Միլիոնավոր սովետական մարդիկ կուրծքը դեմ տված ֆաշիստական հորդաներին իրենց արյունով պաշտպանում են Լենինի նվիրական քաղաքը: Համլիկը այդ միլիոններից մեկն է և այդպես էլ գրում է իր մի երկտողում.

«Ես դեռ ողջ եմ, ինձ նման միլիոններ դեռ կան, ֆաշիստներին կքշենք, մեր մայրերին, քույրերին ու հայրենիքը կպաշտպանենք»:

1941 թվի օգոստոսի 27-ի նամակում Համլիկը հանկարծ հաղորդում է, որ իր «վերքը բոլորովին առողջացել է»—«ես էլի մեքենայի վրա եմ, այնպես որ իմ մասին չանհանգստանաս»,—ավելացնում է նա: Վիրավորվելու լուրը նամակում ջնջված է զգայուն, բայց միամիտ քրոջ ձեռքով: Նա վախեցել էր, որ այդ բառերը կարող են հանկարծակիի բերել մայրիկին, որը ոչինչ չգիտե որդու վիրավորվելու մասին ու հանկարծ «վերքս առողջացել է»: Հետագայում միայն, երբ ստացվեցին նոր նամակներ, Մինուշը հայտնեց մորն իր արած «խորամանկությունը»:

Անցնում է ևս մի ամիս, այս անգամ Համլիկը նույն թերթիկի վրա գրում է երկու նամակ,— առաջին նամակը ուղղում է քրոջը, և ինչպես միշտ նման դեպքերում գրում է ռուսերեն, որպեսզի հայկական դպրոցում սովորող փոքրիկ քույրը մի ավելորդ առիթ ունենա ռուսերենին վարժվելու, որի կարևորությունն այնքան ընդգծում է եղբայրը: Համլիկը լավ է գրում ռուսերեն, նա ունի հիանալի ձեռագիր, վարժ, սահուն, անսխալ: Այս նամակով նա դարձյալ հետաքրքրվում է քրոջ ուսման հարցով, խնդրում է հաղորդել ունեցած հաջողությունները:

Քրոջն ուղղած նամակի վերջում Համլիկը հայտնում է միայն, որ ինքը այժմ հնարավորություն ունի հարազատներին օգնելու, ուղարկելով ամսական որոշ գումար: Նշանակում է նա ստացել է հրամանատարական կոչում:

Անցնում են էլի ամիսներ: Համլիկն իր նամակներում շարունակ մտահոգված է հարազատներով, ոչ մի խոսք չասելով իրեն սպառնացող վտանգի, ահավոր ցրտերի ու սառնամանիքների մասին, որոնք մոլեգնում են հյուսիսում. միայն նամակներից մեկում կա այս համառոտ տեղեկանքը. «ապրում եմ կամ անտառում կամ սառույցի վրա», իսկ մի այլ նամակում կարդում ենք «հրամանատարությունն ինձ շքանշանի է ներկայացրել, տեսնենք ինչով կվերջանա»:

Մենք միայն հետագայում իմացանք, թե ինչ սառած լիճ է եղել այդ, որի սառույցի վրա ապրել է Համլիկը հյուսիսային դաժան ձմեռվա ամիսներին և թե ինչով վերջացավ շքանշանի ներկայացվելը, երբ ստացանք «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերի 1942 թվի մայիսի 9-ի համարները:

Երկար ժամանակ Համլիկը ժամանակ չէր ունեցել գրելու. մի անգամ միայն նա կարողացել էր մի հեռագիր ուղարկել, խիստ հակիրճ, «Вырвался, жив, здоров, целую, Гамлет».

Այս մի քանի բառի մեջ կարելի է կարդալ մի ամբողջ ողբերգություն, որը սակայն արտահայտված է կայտառ, կենսախինդ, լավատեսական տոնով: Դեռ ողջ է սովետական երիտասարդը, միլիոններից մեկը իր նման միլիոնների հետ միասին: Թերևս նա ապրել է ահավոր, մահացու վտանգի րոպեներ, երբ արյունն սառչում է երակներում:

Այդ բոլորի մասին ոչինչ չի ասում Համլիկը, քաջ ու համեստ սովետական հայրենասերը, նա միայն նամակներից մեկում գրում է հետևյալ բնորոշ խոսքերը. «պատմելու շատ բան կա ի հարկե, բայց այդ բոլորը պատերազմից հետո: Կնստենք սեղանի շուրջն ու հեքիաթի նման կվերհիշենք այն բոլորը, ինչ որ հիմա ապրում ենք»: Հեքիաթի նմա՛ն:

Մի՞թե իրոք առասպելական ու դյուցազնական չէ այն մեծ էպոպեն, որի վեհ ու հեքիաթային դրվագներից մեկն է Լենինգրադի հերոսապատումը:

Բաց ենք անում 1942 թվի մայիսի 9-ի «Պրավդան» և «Իզվեստիան»: Այնտեղ մենք կարդում ենք այդ հերոսապատումի ամենից դյուցազնական դրվագներից մեկի, Լադոգա լճի ճանապարհի մասին, Լենինի քաղաքը սովի ահավոր ճիրաններից փրկող այն կենսատու երակի մասին, որի պաշտպաններից է հայաստանցի կրտսեր լեյտենանտ Մաքսապետյանը:

Երբ Լենինգրադը գրոհով վերցնելու հույսերը խորտակվե-

ցին, ֆաշիստական հրամանատարությունը փորձեց այն շրջապատել սովամահության օղակով: Սակայն հիտլերականների այդ փորձերն ևս ապարդյուն անցան: Լադոգա լճի վրայով անվերջ քարավանով գալիս էին նավերն ու բարժաները՝ բեռնավորված կենսամթերքով–ռազմամթերքով: Հայրենիքը օգնում էր Լենինգրադին, ջրային և օդային ճանապարհներով հասցնելով նրան պարեն և զենք: Նոյեմբեր ամսին սառեց Լադոգա լիճը: Թշնամին մի պահ ցնծաց: Նա կարծում էր, թե սառած լճի վրայով անհնար է պարենավորել միլիոնավոր ազգաբնակությունը և բանակը:

«Բայց այն, ինչ թվում է անհնար ֆաշիստների համար,— գրում է «Պրավդան»,— իրագործվեց սովետական մարդկանց ձեռքով: Նոյեմբերի վերջերին Լադոգայի լճի սառցե ծածկույթի վրայով անց կացվեց հռչակավոր ավտոմեքենային մագիստրալը: Դա մի վիթխարի կառուցում էր, որ չուներ իր նմանը քաղաքացիական և ռազմական շինարարության պատմության մեջ»:

Ահավոր ցրտերին, բուք ու բորանին, թնդանոթաձգության և օդային ռմբակոծության տակ սովետական մարդիկ օգնություն էին հասցնում պաշարված քաղաքին: Սառնամանիքը հասնում էր քառասուն աստիճանի: Նրանց վրա դիշատիչների նման սավառնում էին «Մեսերշմիտները» և գնդակի տարափ թափում գնդացիրներից: Այդ մարտիկներից շատերը զոհեցին իրենց կյանքը, շատերն էլ վիրավորվեցին, բայց երբեք չլքեցին իրենց դիրքերը հարազատ Լենինգրադի կյանքն ապահովելու համար:

«Երբևիցե բանաստեղծները և գրողները երգեր կհյուսեն Լենինգրադի կենսատու ճանապարհի մասին,— գրում է «Պրավդան»: Նրանք կհիշեն, թե ինչպես սառույցի վրայով գնում էին բեռնավորված մեքենաների էշելոնները Մոսկվայից, Սվերդլովսկից, Գորկուց, Ստալինգրադից, ինչպես նրանով փոխադրում էին նվերներ Միջին Ասիայից, ինչպես էին ձգվում պարտիզանների կարմիր գումակները Լենինգրադի մարզի օկուպացիայի ենթարկված շրջաններից: Երկիրը խորին երախտագիտությամբ կհիշի այս սխրագործությունը, որ կատարել է ճանապարհը բացող պաշտպանող աշխատավորներից և ռազմիկներից յուրաքանչյուրը, այն հսկայական ուշադրությունը, որ նվիրեցին Լենինգրադի պարտիական կազմակերպությունները սառցե մագիստրալին»:

Լենինգրադի բոլշևիկների ղեկավար ընկեր Ժդանովը դի-

մելով ճանապարհի հերոսական պաշտպաններին՝ ասել է. «Դուք դրված եք մի մեծ և պատասխանատու գործի վրա և կատարում եք պետական և ռազմական առաջնակարգ կարևորություն ունեցող մի խնդիր... Ձեր աշխատանքը հայրենիքն ու Լենինգրադը երբեք չեն մոռանա»:

«Պրավդա»-ի և «Իզվեստիա»-ի նույն օրվա համարներում տպագրված է ՍՍՌՄ Գերագույն Սովետի Հրամանագիրը Կարմիր Բանակի պետկազմն ու շարքային կազմը շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին՝ Լենինգրադը և Լենինգրադի ռազմաճակատը պարենավորելու կառավարության առաջադրանքը օրինակելի կերպով կատարելու համար:

«Կարմիր Աստղի» շքանշանով պարգևատրվածների թվում տրակտորիստ մայրն ու քույրիկը կարդացին նաև կրտսեր լեյտենանտ Համլետ Վարդանի Մաքսապետյանի անունը, իրենց Համլիկի անունը: Հետո նրանք ստացան մի հեռագիր Լադոգայից, որով Համլիկը շատ ուշացած հայտնում էր իր պարգևատրվելը:

Վերջապես ստացվեց և նամակ: Այդ նամակում թերևս առաջին անգամ խախտելով իր համեստության սկզբունքը, 22-ամյա հրամանատարը հպարտորեն հայտնում է մորն ու քրոջը, որ ինքն այլևս թեկնածու չէ, այլ արդեն պարտիայի անդամ, ինչպես նաև ոչ թե կրտսեր լեյտենանտ, այլ արդեն լեյտենանտ: Համլիկը խնդրում է գրել իրեն, թե ինչպես է սովորում քույրը, ինչ գնահատականներով է անցել իններորդ դասարանը. «դու արդեն չափահաս աղջիկ ես, ինչքան կուզեի տեսնել քեզ, ուղարկիր ինձ անպայման քո լուսանկարը... Ես կուզենայի, որ դու լինեիր ակտիվ հասարակական աշխատող, ֆիզկուլտուրնիկուհի և ուսման գերազանցիկ—դա լավագույն օգնությունն է մեզ—ճակատայիններիս»:

Այդպես կարող է գրել միայն հերոսական Կարմիր Բանակի ռազմիկը, Լենին—Ստալինի մեծ պարտիայի անձնվեր սանը, մեկն այն միլիոններից, որոնք պաշտպանում են մարդկության արդար գործը:

Ու կարոտով սպասում են մայրն ու քույրը իրենց Համլիկին, որը հաղթական կվերադառնա իր մարտական մեքենայի վրա, և ձմռան երկար գիշերներին կպատմի սովետական ժողովրդի հեքիաթի նման մեծ դյուցազնավեպը:

ԿԱՊԱՎՈՐ ԿԱՍՊԱՐՈՎԸ

Պատմության դասատու Ալեքսանդր Ղազարովիչ Կասպարովին լավ են ճանաչում Տաշքենդի 119-րդ դպրոցում: Դեռ մինչև վերջերս Ալեքսանդր Ղազարովիչը պատմության դասերին դրավիչ կերպով պատմում էր երեխաներին Լենինի քաղաքի մասին, որտեղ առաջին անգամ ծագեց պրոլետարական Մեծ ռևոլյուցիան:

Եվ այժմ ահա, երբ գերմանացի բարբարոսները սպառնում են ներս խուժել Լենինգրադ, ուսուցիչ Կասպարովը հեռավոր Տաշքենդից Լենինգրադ է եկել:

Ժողովրդական ուսուցիչը ծառայում է Կարմիր Բանակում իբրև հրետանային մարտկոցի կապավոր:

Գնդապետ Բոնդարևի զորամասը պատրաստվում էր գրոհի: Լեյտենանտ Նարիշկինի մարտկոցը հրաման ստացավ՝ ոչնչացնել հակառակորդի կրակային կետերը:

Երբ հրետանավորները հասան առաջավոր դիրքերը՝ արագ կերպով մարտկոցը տեղավորեցին և քողարկեցին անտառի ծայրում:

Մինչև զինվորներն իրենց համար խրամատներ կփորեին, մարտկոցի հրամանատար լեյտենանտ Նարիշկինը մի քանի կիլոմետր առաջացավ անտառի խորքը: Հրամանատարի ետևից

գնում էր կապավոր Գասպարյանը, ուսին դցած հեռախոսալարի կոճը:

— Գիծը պատրաստ է: Կապը սեղծված է,—շատ չանցած զեկուցեց նա հրամանատարին:

Լեյտենանտն իր դիտակետից ուշադիր կերպով նայում էր ծավալաղիտակով: Նա պարզ կերպով նկատեց հակառակորդի մարտկոցը:

Հրամանատարը հրաման տվեց:

Հերթապահ հեռախոսավարը արագ և պարզ կերպով հրամանը հաղորդեց մարտկոցին և իսկույն լսվեց մի խլացուցիչ պայթյուն: Օդը թռան թշնամու հրանոթների փողերը, անիվները, փայտի կտորներ:

Սակայն հակառակորդի մյուս մարտկոցները պատասխան կրակ բացին: Եվ հանկարծ, ամենաթեժ մոմենտին հրետանային արկը դիպավ մեր հեռախոսալարին: Կապն ընդհատվեց, մարտկոցը չէր ստանում հրամանատարի կարգադրությունները:

Կասպարովը դուրս թռավ դեպի գիծը: Մրրկային կրակի ներքո նա հասավ հեռախոսալարի փչացման վայրը: Լարի մի ծայրը կտրվել ընկել էր, իսկ մյուս ծայրը չկար: Կասպարովը լարի ծայրը կապեց կոճին և սողալով առաջ անցավ՝ գտնելու մյուս ծայրը: Շատ չանցած նա գիծը միացրեց նորից և կարգի բերեց:

Պատերազմը պահանջում է մարտիկներից նախաձեռնություն, հնարամտություն, ուշիմություն: Կապավոր Կասպարովն օժտված է հենց այդ հատկություններով:

Վերջերս հարկ եղավ գիծ անցկացնել բաց տարածության վրա: Շուրջն ամենուրեք ոչ բլրակ կար, ոչ թուփ: Ամեն կողմից բաց այդ տարածությունը գնդակոծում էր թշնամին:

Այս անգամ Կասպարովը կոճը ամրացնելով ծառին՝ թողեց մարտկոցի մոտ: Լարի մյուս ծայրը կապեց գոտուց, գոտին կապեց չինելի մեջքակապից և սողալով առաջ անցավ՝ քողարկվելով կանաչ թիկնոց-վրանով:

Սողում էր նա մի ամբողջ ժամ և քաշում հեռախոսալարը: Նրա գլխի վրայով սուլում էին գնդակները, բայց Կասպարովը առաջ էր շարժվում:

Հանկարծ նա կանգ առավ. առաջ սողալ այլևս չէր կարելի, քարը պահել էր նրան: Ուրեմն, ամբողջ կոճը արձակվել է:

— Ո՞րտեղից լար ճարեմ: Հո չի՞ կարելի մեկ էլ հետ դառնալ:

Կապարովը քանդեց գոտին, որի ծայրին ամրացրել էր լարը և սողաց առաջ: Հակառակորդի զորքերի դասավորման վայրում Կապարովը շոշափելով գտավ թշնամու հեռախոսալարը, կտրեց, վերցրեց երեք կիլոմետր հեռախոսալար, ետ դարձավ և կապը վերականգնեց:

Այսպիսով քաջարի և հնարագետ կապավոր Կապարովը ոչ միայն հաջողությամբ կատարեց մարտական հրամանը, այլ և վնասեց թշնամու կապը: Հերոսության և հնարամտության համար հայրենիքը նրան պարգևատրեց Կարմիր Աստղի շքանշանով:

Կվերջանա պատերազմը և պատմության դասատուն նորից կվերադառնա իր աշակերտների մոտ: Նրանք նորից կլսեն իրենց ուսուցչի գրավիչ զրույցները: Նա կպատմի Հայրենական մեծ պատերազմից, որին անմիջական մասնակցություն է ունեցել ինքը՝ պատմության դասատուն:

(«Պիոներսկայա Պրավդա»)

«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԿՐՏՍԵՐ ԵՂԲԱՅՐԸ»

— Սասունցի Դավթի կրտսեր եղբայրը,— այսպես է կատակով կոչում զորամասի կոմիսարը կոմերիտական-մարտիկ Սերգեյ Գրիգորյանին:

Այդ կատակի մեջ մեծ իմաստ կա:

Բարձրահասակ, ատլետիկ կազմվածքով այդ պատանին արիաբար ու անվեհեր պաշտպանում է հայրենի հողը ֆաշիստական բարբարոսների հարձակումից:

Բազմաճակատ Հյուսիս-Արևմտյան հատվածում, կատաղի կռվի ժամանակ թշնամու գնդակը վնասեց Սերգեյ Գրիգորյանի հրացանը: Սակայն Գրիգորյանը չթողեց կռվի դաշտը: Դուրս քաշելով գոտկից սակրավորի կացինը՝ նա հարձակվեց թշնամու վրա:

Համարձակ կոմերիտականից ոչ այնքան հեռու կանգ առավ ֆաշիստական մի տանկ: Սերգեյ Գրիգորյանը սողալով մոտեցավ տանկին և բարձրացավ նրա վրա: Լսելով ոտնաձայն՝ ֆաշիստական բանդիտները բացեցին տանկի լյուկը, իսկ հետո երևաց գերմանացի տանկիստի գլուխը: Կացնի մի ուժեղ հարված և ֆաշիստն անշնչացած վայր ընկավ տանկի մեջ:

Այդ ձևով երիտասարդ կարմիրբանակայինը ոչնչացրեց տանկի ողջ անձնակազմը:

Հրամանատարն իր մոտ կանչեց Գրիգորյանին: Քաջալերելով նրան իր համարձակության համար, հրամանատարը նրան ուղարկեց կապի մեկ ուրիշ տեղամաս՝ օգնելու մի խումբ բանակայինների թնդանոթը նոր գիծ փոխադրելու համար:

Ճամփով քողարկվելով՝ Գրիգորյանը խճուղու կողքի փոսերի միջով սկսեց առաջ սողալ՝ առաջադրանքը կատարելու համար: Հեռվից լսվեց մոտորի աղմուկ: Սլանում էր գերմանացի մի մոտոցիկլիստ՝ զինված ավտոմատ հրացանով: Բարձրանալով առվի միջից իր դյուցազնական ողջ հասակով՝ Սերգոն ցատկեց թշնամու վրա: Մոտոցիկլիստը անշնչացած փռվեց գետին:

Մնացած ավարը Գրիգորյանին մի փոքր մտահոգության մեջ գցեց: Նա ափսոսում էր թողնել մոտոցիկլն ու ավտոմատ հրացանը, իսկ մեքենան վարել չէր իմանում:

Անվախ կոմերիտականը որոշեց ձեռք բերած ավարը հասցնել իր զորամասը: Ուսին գցելով ավտոմատը՝ նա գնդակների տարափի տակ իր ետևից քաշ տվեց մոտոցիկլը:

Մարտկոցի հրամանատարը սեղմեց համարձակ մարտիկի ձեռքը և ասաց.

— Մոտոցիկլի համար շնորհակալություն: Ավտոմատը կարող ես վերցնել քեզ:

Գերմանական ավտոմատը Գրիգորյանը հաջողությամբ գործադրում է ֆաշիստական «քաջերի» դեմ:

... Թշնամու ականի բեկորը վիրավորեց երիտասարդ մարտիկի ուսը:

— Ինձ թվաց, թե մորակով խփեցին,— պատմում էր Գրիգորյանը,— բայց ես շարունակում էի կրակել և կռիվը վերջանալուց հետո միայն ես հասկացա, որ վիրավորվել եմ:

Մի քանի օրից հետո Գրիգորյանը դուրս գրվեց հիվանդանոցից և հիմա նորից մասնակցում է կռիվներին:

(«Կոմսոմոլսկայա Պրավդա»)

ԱՆՎԵՀԵՐ ՄԱՐՏԻԿԸ

Մառախլապատ առավոտ է, ցրտաշունչ ու կիսալույս առավոտ: Կաթնագույն մշուշը ծանր քողով իջել է ֆիննական հողի վրա ու լռության մեջ պահել կյանքն ու բնությունը: Թվում է, թե Սելմա Լագերլյոֆի հեքյաթները շունչ են առել ու միահյուսվել են ֆինն ժողովրդի «Կալեվալա» էպոսում նկարագրված հյուսիսային պեյզաժի հետ:

Այդ լռությունը, սակայն, խաբուսիկ է: Քիչ անց կորոտան հրանոթները, սառն օդի մեջ կսուրան գնդակները և թեժ կռիվը հիմնապես կփոխի մեռած բնության պատկերը:

Ֆինլանդիայի հողում պատերազմ է: Կարմիր զորագնդերը մահացու հարվածներ են հասցնում սպիտակ—ֆիններին, քշում նրանց մեր սահմաններից հեռու: Եվ այդ դյուցազնական պայքարի ընթացքում ծնվում, ուժ են առնում հերոսներ, հնաշխարհիկ փյունիկներ, որոնք երկրից—երկիր են տանում մեր հայրենիքի փառքը:

Այդ հերոսներից մեկի մասին է լինելու մեր խոսքը:

Ձյունապատ դաշտերի հետևից դուրս եկան երեք տանկ: Նրանց ծանր ընթացքից դողում էր գետինը, կռանում և պառկում էին մատղաշ ծառերը: Սովետական հետախուզիչ տանկեր էին դրանք: Խորանալով թշնամու դասավորման տերիտորիան, մերոնք հաջողությամբ կատարեցին առաջադրված խնդիրը, բայց վերադարձին նրանց ճանապարհը կտրել էր հակառակորդը

դերակշռող ուժը։ Անձնատուր լինելու միտքը մի վայրկյան անգամ չպղտորեց սովետական ժողովրդի զավակներին։

— Կռվե՛լ,— որոշեցին 15 դյուցազունները և նրանց սիրտն ու հոգին լցվեց սրբազան ատելությամբ։

— Հարվածենք մինչև վերջի՛ն գնդակը, ընկերներ,— ասաց տանկային այդ փոքրիկ զորասյան հրամանատարն ու սաղավարտը քաշեց ճակատին։

Արամայիս Բոսոյանն էր այդ հրամանատարը։

Նա մի պահ հիշեց հարազատ Երևանը, հորն ու մորը, եղբայրներին, քրոջը։ Աչքերի առաջ պատկերացավ Ս. Մ. Կիրովի անվան կոմբինատը, որտեղ նա խառատ էր, հիշեց իր դազգյահը։ Եվ ահա այդ խաղաղ կյանքի վրա ձեռք էր բարձրացրել թշնամին, ձգտում էր սովետական ժողովրդի երջանկությունը ջնջել պատմությունից։

— Կռվի՛ր սրտով, անվա՛խ, ու դու կհաղթես թշնամուն,— մտաբերեց նա իր հոր՝ Հովհաննես Բոսոյանի պատգամը։

Ու նոր ուժ առավ Արամայիսը, նա իր ամրակուռ բազուկներով սեղմեց գնդացիրը։ Ահեղ ցասմամբ նետվեցին տանկերը սպիտակ—ֆինների վրա ու սկսվեց մարտը՝ անողո՛ք, անհա՛շտ անզիջո՛ւմ։ Թշնամին արյունաքամ էր լինում, կոտորվում, բայց նրան օգնության էին գալիս նորանոր ուժեր։

Արամայիսի տանկը բոցավառվեց ու կանգ առավ։ Կրակե լեզուներն այրում էին մարդկանց, մեքենայի զրահը հետզհետե շիկանում էր։ Հերոսական մահը փակել էր նրա ընկերներից շատերի աչքերը։ Արամայիսի վիրավոր ձեռքից հոսում էր թանձր արյունը։ Նա դուրս եկավ տանկից, սողաց մի քանի քայլ առաջ ու պառկեց ձյան վրա։ Թվում էր, թե թշնամին հաղթանակում է։ Տասնյակ ֆիններ բորենիների նման քայլ առ քայլ մոտենում էին, սկզբում զգույշ ու երկչոտ, ապա ավելի համարձակ, ու երբ անճոռնի աղաղակներով մոտեցան վառվող տանկերին, Արամայիսը բարձրացավ տեղից, պարզեց առողջ ձեռքն ու ատրճանակի դիպուկ զարկերով գետին տապալեց երեք ֆինի։ Գայլի ոռնոցով հետ գլորվեցին մնացածները։ Երկար չանցած, հերոսի գլխին տեղաց մրրկային կրակ։ Արամայիսը լավ գիտակցում էր դրության լրջությունը։ Պետք էր ելք գտնել... Այդ նեղ պահին նրան օգնության եկավ հմուտ ռազմիկի բնազդը։ Նա ներկելով իր ամբողջ դեմքը ձեռքից հոսող արյունով, քարի պես ընկավ գետնին ու մնաց անշարժ։ Ֆինները սիրտ ա-

ռած մոտեցան։ Նրանց ոտքերի տակ ընկած էր արնաներկ մարմինը՝ անշունչ, անկենդան։ Հրում, հրմշտում էին նրան այս ու այն կողմը, շուռ էին տալիս մեկ փորի վրա, մեկ մեջքին։ Կյանքի ո՛չ մի նշան։ Եվ հանկարծ կատարվեց այն, ինչին կարոտով սպասում էր Արամայիսը. բլուրներից մեկի վրա երևացին օգնության հասած կարմիրբանակայինները և հուժկու «ուռա» չառաչեց մարտադաշտով մեկ։ Ֆիններն ահաբեկ ճիչերով հետ գլորվեցին, բայց հաջողվեց փախչել և ազատվել նրանցից հույժ արագավազներին։ Լսելով հարազատ ու սովոր «ուռան», Արամայիսը մեկ անգամ ևս բարձրացավ, դուրս բերեց ձյան մեջ թաղած ատրճանակն ու վերջին անգամ արճիճե նախաճաշով հյուրասիրեց դեպի մոտակա պուրակը սլացող «քաջերին»։

Կարմիրբանակայինները գրկեցին արյունաքամ եղած ընկերոջը։

* * *

Վերջացավ ֆինների դեմ մղվող պատերազմը, լռեց թնդանոթի որոտը, գնդակի սուլոցը։ Ջախջախված թշնամին ծունկի եկավ։ Բայց երկար ժամանակ չանցած՝ մեր երկրի Արևմուտքում կուտակվեցին սև ամպեր ու ֆաշիստական հորդաները կատաղի մոլեգնությամբ դուրս եկան մեր դեմ։

Արամայիս Բոսոյանը միլիոնավոր հայրենասերների հետ միասին իր փորձված ձեռքերով զենք վերցրեց ու կանգնեց հայրենիքը պաշտպանողների կողքին։ Անվրեպ ու դիպուկ էր նրա գնդակը, ցասումնալից ու ահեղ սրտի վրդովմունքը։ Տասնյակ ու տասնյակ հիտլերականներ ջնջվեցին երկրի երեսից Արամայիսի դյուցազնական զարկից։ Ռազմաճակատում նա ընդունվեց Լենինի—Ստալինի մեծ պարտիայի շարքերը։ Այդ օրվանից է՛լ ավելի ուժգին դարձան թշնամու գլխին տեղացող նրա հարվածները։ Նա իր զորամասում վաստակել էր ամենաճարտար հետախույզի համբավը։ Հետախուզական դժվարին խնդիրները, իբրև կանոն, հանձնարարվում էին Արամայիսին, վստահ լինելով, որ նա իր հերթական արշավից կվերադառնա հաղթանակով։ Հրամանատարությունը հիացմունքով էր խոսում խիզախ մարտիկի մասին և հաճախ հիշեցնում բոլորին.

— Կռվեցեք Արամայիսի պես, Արամայիսի ոճով։

Իսկ այդ ոճը պարզ էր ու որոշակի՝ արհամարհելով մահը, հարվածե՛լ, հարվածե՛լ ու հարվածե՛լ թշնամուն, մինչև նրա

վերջնական բնաջնջումը: Կառավարությունը գնահատեց նշանավոր մարտիկին և մի օր ավագ սերժանտ Արամայիս Բոսոյանի կրծքին շողշողաց Լենինի շքանշանը:

Ծնողներին ուղարկած բարեւագիր-նամակներից մեկում Արամայիսը հպարտությամբ գրում է շքանշանի մասին, իր ռազմական հաջողությունների մասին: Նրա նամակները շնչում են երկու աշխարհ՝ ռազմաճակատն ու հարազատները, այլ կերպ ասած՝ պատերազմ և խաղաղություն: Նա քնքուշ կարոտով խոսում է ծնողների, եղբայրների ու մեկ քրոջ մասին, խորհուրդ է տալիս նրանց աշխատել և սովորել, մինչև մնալ հանգիստ և ուրախ, որովհետև նա «ողջ ու առողջ է, իրեն ոչինչ չի պատահել»: Փոխվում է նրա լեզուն, դառնում առնական ու խրոխտ, երբ սկսում է խոսել ռազմաճակատի անցուդարձից: «Հայրիկ ջան,— գրում է նա,— ես մինչև վերջը կկռվեմ, կպաշտպանեմ մեր հայրենիքը, մենք խփում, ջարդում ենք նեմեցկի ֆաշիստին մեր հզոր պողպատե տանկերով»:

Շատ կուզեի, որ հենց այսքանով վերջանար Արամայիսի պատմությունը, սիրով ու կարոտով դիմավորեինք նրան մեզ մոտ՝ Երևանում, երբ պատերազմից հետո վերադառնար նա հաղթական ժպիտը դեմքին, շքանշանը կրծքին: Դժբախտաբար, մեր խոսքը ստիպված ենք վերջացնել այլ կերպ... Արամայիսը չկա: Զազիր թշնամու գնդակը կասեցրել է հայ ժողովրդի դյուցազուն զավակի կյանքը:

Ծնողներին հասցեագրած նամակում հերոսի մարտական ընկերներն ու հրամանատարները գրում են.

«Ողջույն ձեզ՝ սքանչելի Արամայիսի մեծարգո ծնողներ: Վշտով հայտնում ենք, որ Արամայիսն ընկավ հերոսի մահով: Ձեզ հետ միասին սգում ենք նրա կորուստը: Մեր սրտերում միշտ վառ կմնա նրա հիշատակը և վայրագ թշնամուց վրեժ լուծելու կամքը: Զգում ենք՝ ծանր է ձեր կորուստը, բայց պետք է հպարտանաք, որ ծնել ու դաստիարակել եք մի հերոս զավակ: Պետրովկա գյուղում կա մի բլուր, որտեղ հողին ենք հանձնել Արամայիսի մարմինը: Մենք բոլորս՝ նրա հրամանատարներն ու մարտական ընկերները հերոսի գերեզմանաթմբի վրա ուխտեցինք կռվել ու ջախջախել ֆաշիստներին այնպես, ինչպես կռվում ու ջախջախում էր Արամայիսը»:

ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Երբ նրան անվանում էին կաղզվանցի, ինքնագոհ ժպտում էր: Ոչ մի օր չէր մոռանում իր ծննդավայրը՝ ծառաշատ ու ծաղկառատ Կաղզվանը: Փռվել էր այդ փոքրիկ քաղաքը բլուրի վրա, իսկ ներքևում, այդ բարձրության կողքով գիշեր ու ցերեկ հոսում էր Արաքսը դեպի իր քրոջ գիրկը՝ Կուր գետը:

Մանկությունից Հայկը սիրում էր ձի հեծնել: Անսահման հաճույքով թռչում էր նա չթամբած ձիու մեջքին ու սլանում քաղաքից դուրս՝ դեպ «Ջրի աղբյուրը»: Ընկերները հաճախ ասում էին.

— Նշանավոր հեծյալ է դառնալու Հայկ Ղազարյանը:

Այդ գուշակությունը, տարիներ անց, դարձավ իրականություն:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց մի քանի ամիս հետո հարկ եղավ զենքը ձեռքին երկրից դուրս վռնդել քաղաքական ավանտյուրիստներին՝ դաշնակներին: Հայ ժողովրդի ազատության համար պայքարողների շարքերում էր նաև կոմունիստական պարտիայի քսաներկու տարեկան անդամ՝ կաղզվանցի Հայկը: Նա իր ձիուց չիջավ, մինչև որ

փետրվարյան ավանտյուրայի հետևանքով խախտված կյանքը չմտավ իր նորմալ հունի մեջ:

Հայկ Ղազարյանը սրտով սիրեց զինվորական պրոֆեսիան: Ավարտելով հայկական առաջին ռազմական դպրոցը, նա դարձավ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի լավագույն հրամանատարներից մեկը: Հետագայում նա իր զինվորական գիտելիքներն ավելի խորացրեց Թբիլիսիում, Լենինգրադում, Մոսկվայում: Տեսական պաշարին զուգընթաց, նա ուներ նաև մարտական գործերի փորձ:

Կարմիր Բանակի զորամասերին արդեն հայտնի էր դարձել նշանավոր հեծելակ, մայոր Հայկ Ղազարյանի անունը:

***

Հայրենական պատերազմի հենց առաջին օրերից մայոր Ղազարյանը մեկնեց ռազմաճակատ: Հայրենիքը վստահել էր նրան մի խոշոր զորամասի հրամանատարությունը ճակատի արևմտյան հատվածներից մեկում:

Մարտ ամիսն էր արդեն, բայց Օկա գետը դեռևս կաշկանդված էր սառույցի հաստ շերտով: Ղազարյանի զորամասից դեպի արևմուտք, Ս. բնակավայրում ամրացել էր թշնամին: Ստրատեգիական նշանակություն ունեցող այդ կետն իր դիրքով իշխում էր տվյալ հատվածում: Որոշվեց ինչ գնով էլ լինի— դուրս մղել թշնամուն այդ բնակավայրից: Խնդրի լուծումը հանձնարարվեց փորձված ռազմիկ Ղազարյանի զորամասին:

Գրոհից առաջ Ղազարյանը քարտեզի վրա վերջին անգամ ստուգեց տեղանքը, մանրամասն ուսումնասիրեց հակառակորդի պաշտպանության դիրքերն ու դարձավ հետախուզությունից նոր վերադարձած կրտսեր լեյտենանտ Գորոխովին.

— Պավել Սերգեևիչ, ձեր տվյալները վերջնակա՞ն են, ստուգվա՞ծ:

— Անշուշտ, ընկեր մայոր: Մեր դիմացն է կանգնած գերմանական մոտո-հետևակային գունդը: Հակառակորդն իր տրամադրության տակ ունի...

— Բարի՛, այդ բոլորն ինձ հայտնի է,— ընդհատեց Ղազարյանն ու մեկ անգամ ևս կռացավ քարտեզի վրա:

Խոր լռության մեջ նա մշակում էր առաջիկա գրոհի մանրամասնությունները: Նա որոշել էր նշված կետում վճռական հարված տալ թշնամուն, ջախջախել նրա ամրացված բունգքը և հետ շպրտել Ս. բնակավայրից:

— Այժմ գնացեք քնելու,— ասաց նա իր քաջ հետախույզին:

— Քնել չեմ ուզում, ընկեր հրամանատար:

— Հրամայում եմ ձեզ իսկույն անցնել բլինդաժ ու հանգստանալ: Վաղ առավոտյան շարժվում ենք թշնամու վրա: Առաջին գումարտակը գրոհի եք տանում դուք:

— Լսո՛ւմ եմ,— ժպտաց Գորոխովն ու, պատիվ առնելով, հեռացավ:

Լույսը դեռ չբացված, սկսեց գործել Ղազարյանի հրետանին: Տասնյակ հրանոթներ բոց ու կրակ էին ուղարկում թըշնամուն: Թնդանոթների համազարկերը կայծակի նման փայլատակում էին գիշերվա խավարի մեջ ու խուլ շառաչելով պայթում հեռո՜ւ, հեռո՜ւ: Գրոհի համար կազմ ու պատրաստ մարտիկները տանկերի ուղեկցությամբ շարժվեցին առաջ: Լույսն արդեն բացվել էր: Դիմացը՝ գերմանական գնդի դիրքերի վրա փռվել էր փոշու, ծխի և բոցերի մի անթափանց շերտ: Դա կարմիր հրետանավորների ավերիչ հարվածների ահեղ պատկերն էր:

Երկար չանցած, Գորոխովի տանկային զորամասը մոտեցավ թշնամուն, հրաբուխից դուրս ժայթքող լավայի նման ճեղքեց նրա պաշտպանական գիծն ու իր տակն առավ ճանապարհին հանդիպող ամեն ինչ: Գերմանական գունդը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս և որոշ կետերում նույնիսկ անցնում էր հակագրոհի, բայց ոչ մի ուժ չէր կարող կասեցնել մեր մարտիկների հարձակողական թափը: Հնչեց միաձույլ, հուժկու «ուռան» և հետևակի ամրակուռ շարքերը նետվեցին առաջ: Հորիզոնից բարձրացող արևի ճառագայթների տակ պսպղում էին սվինները, շողշողում հեծելակների սուսերը: Մայոր Ղազարյանն անձամբ էր ղեկավարում գրոհը: Գորոխովի գումարտակն առաջինն էր, որ մտավ Ս. գյուղը: Թշնամին ամրացել էր տների մեջ ու տեղատարափ կրակով էր դիմավորում մեր հարձակվող մարտիկներին: Քայլ առ քայլ առաջ էր շարժ-

վում Գորոխովի գումարտակը և դուրս մղում պիծակի բների մեջ ամրացված դարչնագույն մորեխներին:

Գյուղի ծայրում թշնամու բազմաթիվ ուժեր շրջապատեցին Գորոխովի ստորաբաժանումը: Նա անցավ պաշտպանության և սկսեց մեկը մյուսի հետևից դիպուկ հարվածներով շարքից դուրս բերել հակառակորդի զինվորներին: Սակայն օղակն հետզհետե սեղմվում էր:

— Մի՞թե վերջացավ ամեն բան,— մրմնջաց Գորոխովն ու դառնությամբ նայեց շուրջը:

Մայոր Ղազարյանի աչքից ոչ մի բան չէր վրիպում: Նա տեսավ ու կռահեց իր արխային զինակցի ծանր վիճակը: Դառնալով թմբի հետևում պատրաստ կանգնած հեծելազորին, նա հրամայեց.

— Հետևել ինձ, գրոհի՛, առա՛ջ:

Ու զգաց իրեն այդ փառաբանված հեծելակն իր տարերքի մեջ: Սրարշավ, կատաղի քամու ուժգնությամբ առաջ սլացավ նա հեծելազորի հետ ու ճեղքեց Գորոխովի շուրջը եղած օղակը: Ահեղ ու անզուսպ կատաղությամբ սրահարում էին Ղազարյանի հեծելազորայինները գերմանացուն, մեկը-մյուսի հետևից գլորում գետնին: Երկար չանցած, Ս. բնակավայրի վրա ծածանվեց կարմիր դրոշը:

Ծխի ու բոցի միջից դուրս եկավ Գորոխովն ու շտապեց դեպի իր հրամանատարը, դեպի այն մարդը, որի շնորհիվ նա փրկվել էր: Մոտ վազեց Գորոխովն ու քարացավ. կանաչ գետնին թևաթափ արծվի նման փռվել էր մայոր Ղազարյանը՝ ծանր վերքը կրծքին: Նրա ադյուտանտը, ավագ լեյտենանտ Դորոֆեևը չոքել էր հրամանատարի առաջ, գուրգուրանքով գրկել նրա գլուխն ու հայացքը չէր հեռացնում հերոսի դեմքից:

Ղազարյանը մի պահ բացեց աչքերը, տեսավ Գորոխովին ու դժվարությամբ ժպտաց.

— Լա՛վ է, Գորոխով, շա՛տ լավ է,— թույլ ձայնով մրմնջաց նա,— գյուղը հետ վերցրինք, բայց ավազակները... կյանքս խլեցին...

Ու լռեց:

Կրտսեր լեյտենանտ Գորոխովը հանեց գլխի սաղավարտն ու մի պահ մնաց անշարժ, հետո բարձրացրեց ձեռքն ու սեղմած բռունցքը թափահարեց օդի մեջ:

— Վրեժդ կլուծե՛մ, իմ սիրելի հրամանատար:

Մի քանի ժամ անց, նա իր գումարտակով սլանում էր առաջ, դեպի արևմուտք:

***

Մայոր Հայկ Ղազարյանի գերեզմանը գտնվում է Օրյոլի մարզի Դեբրի գյուղում: Արագի ջուրը խմած այդ հերոսը պառկել է Օկա գետի ափին ու նրա հողաթմբին են կռացել ստվերախիտ նոճիները: Հայ ժողովրդի զավակը կռվի դուրս եկավ թշնամու դեմ Օրյոլի մարզում և զոհվեց, որովհետև Սովետական Միության ամեն մի թիզ հող թանկ է ու հարազատ մեր մեծ հայրենիքում ապրող բոլո՛ր մարդկանց համար:

ԷՋԵՐ ԼԵՅՏԵՆԱՆՏԻ ՕՐԱԳՐԻՑ

Մի հասարակ, բարակ ծոցատետր է մեր առաջ, շատ սովորական ծոցատետր, որտեղ արված են զանազան դիտողություններ: Գրված է խիտ, շատ մանր ձեռագրով, նախ մատիտով, ապա թանաքով: Վերջում զանազան աղյուսակաձև նշումներ կան իր հեղինակի թռիչքների քանակի և մարշրուտների մասին, որոնցից մենք իմանում ենք, որ օրատետրի հեղինակն իր օդաչուական ողջ կարիերայի ընթացքում 3398 ժամ եղել է օդում, թռիչքի մեջ:

Ոչ մի արտակարգ, արկածալի բան չկա այդ օրատետրում: Հեղինակը գրի է առել այն, ինչ տեղի է ունեցել իր հետ, ինչ զգացել է, ինչով ապրել: Եվ գրի է առել պարզ, անպաճույճ, զինվորականին հատուկ հակիրճ լեզվով: Առանց սենտիմենտալիզմի, առանց պաթետիկ արտահայտությունների: Եվ դրանով էլ հենց օրատետրը խիստ հետաքրքրում է, համակում ընթերցողին:

Դա ավագ լեյտենանտ օդաչու Պատրիկ Գաղաղյանի օրատետրն է:

Իսկ ո՞վ է նա, այդ ավագ լեյտենանտը: Օդաչու: Ռազմիկ: Հայրենասեր: Մենք կամեցանք, թեկուզ համառոտ գծերով կազմել նրա կենսագրությունը: Նրա դառը, անհրապույր և

պաղ մանկությունն ու նույնքան անհրապույր պատանեկությունը ոչ մի կապ չի ունեցել իսկական կյանքի հետ: Հետևապես և այդ կյանքը կենսագրություն չի ունեցել:

Նա ծնվել է 1911 թ. Թյուրքիայում, գյուղացի ծխախոտագործի ընտանիքում: Համաշխարհային պատերազմի տարիներին, երբ գերմանական իմպերիալիզմի ուղղակի ցուցումով սուլթանական Թյուրքիան բնաջինջ էր անում արևմտահայերին, գաղթի անվերջ ճանապարհներից մեկում Պատրիկը կորցրեց իր ծնողներին և ընկավ Հունաստանի որբանոցները: Հինգ տարի հետո հայտնվեց կորած հայրը և հայրն ու ինը տարեկան մանուկն սկսեցին ապրուստ որոնել:

1925 թվին նրանք տեղափոխվեցին Սովետական Հայաստան, որտեղ 14 տարեկան Պատրիկը սկսեց սովորել: Հետո նա դարձավ տրակտորիստ: Բայց երբեք կրթությունը շարունակելու ցանկությունը նրան չէր թողնում: Եվ, չգիտես ինչու, նա անպայման ուզում էր օդաչու լինել: Իսկ օդաչու լինելու համար ռուսերեն պետք էր իմանալ: Նա ոչ միայն ռուսերեն, այլ և հայերեն կանոնավոր չգիտեր: Եվ ահա մի մարդ, որ իր կյանքում ռուսերեն մի բառ անգամ չէր լսել, ձեռնամուխ է լինում այդ լեզուն սովորելու: Եվ մի քանի ամիս հետո սովորում է այնքան, որ կարողանում է քննությամբ ընդունվել օդաչուական դպրոցը:

1934 թ. Գաղաղյանն ավարտում է Օդեսայի ավիադպրոցը որպես զինվորական օդաչու:

1938 թիվը երկու բանով է նշանավոր դառնում նրա կյանքում: Նա ընդունվում է Լենին-Ստալինի պարտիայի շարքերը և ստանում լեյտենանտի կոչում:

Ահա նրա ամբողջ կենսագրությունը:

***

Ավագ լեյտենանտի օրատետրն սկսվում է հետևյալ «կտակով»:

«Իմ մահվան դեպքում, խնդրում եմ այս օրատետրը հանձնել զումարտակային կոմիսար ընկ. Լավրովին, որին իր հերթին խնդրում եմ հանձնել իմ կնոջը՝ Վալենտինա Իվանովնա Դենիսովային, որպեսզի իմ որդին մեծանալիս կարդա և իմանա, թե ինչպես է իր հայրը կռվել սովետական հայրենիքի համար, մեր աճող սերնդի ապահով և երջանիկ կյանքի համար:

Մեր պատերազմը գերմանական ֆաշիզմի դեմ արդարացի է և մեր հաղթանակի նկատմամբ ես չնչին կասկած անգամ չունեմ:

5,VII, 41· Ավ· լտ· Գազազյան»

Այնուհետև կարդում ենք Գազազյանի ամենօրյա գրառումները:

«23 հունիսի: Ստացանք այն ամենը, ինչ անհրաժեշտ է մարտի համար: 24-ին թռանք դեպի Օ· քաղաքը, դեպի ռազմաճակատ:

25 հունիսի: Կատարեցինք առաջին մարտական թռիչքը: Նպատակն էր՝ ռմբակոծել հակառակորդի տանկային և մոտոմեքենայական խոշոր միավորումները Կ· շրջանում: Մեր խմբակը վարում էր գնդի հրամանատարը: Նպատակակետի շրջակայքում թշնամու զենիթային հրանոթները կատաղի կրակ բացեցին: Մեկ-երկու րոպե մենք սավառնում էինք համատարած կրակի մեջ: Ամենուրեք մեր շուրջը պայթում էին արկեր: Բայց գնդի հրամանատարը հմուտ կերպով վարում էր սավառնակները դեպի նպատակակետը: Բոլոր սավառնակներն իրենց տեղումն էին, ոչ ոք շարքը չխախտեց: Մի քանիսը չհասցրին իրենց բեռը վայր նետելու: Այն ժամանակ հրամանատարը որոշեց կրկին դիմել դեպի նպատակակետը և թանկ գնով մինչ այնտեղ հասցված բեռը անպայման նետել ֆաշիստ գազանների գլխին: Այդպես էլ արինք: Զենիթային հրանոթների հարյուրավոր արկերի պայթյունները չխանգարեցին մեզ կատարելու մարտական առաջադրանքը:

Վերադարձանք անփորձ: Միայն ավագ քաղղեկ Ուշակովը նպատակակետի հենց վերևում կտրվեց շարքից և ցած սլացավ: Մենք նրան համարում էինք կորած, բայց մեր վայրէջքից 10 րոպե անց հայտնվեց և նա: Նրա մեքենան 22 տեղից ծակծկված էր և ձախ մոտորը փչացած: Երբեք այնուհետև ես այնպիսի ուժեղ զենիթային կրակի չհանդիպեցի, ինչպես այն օրը: Բոլոր սավառնակներն էլ ծակծկվել էին, բայց մնացել էին անվնաս:

26 հունիսի: Մեր մարտական թռիչքն անցավ առանց որևէ դժվարության:

28 հունիսի: Ռմբակոծեցինք թշնամու տանկերը գետանցքի մոտ: Թշնամու զենիթային հրանոթները շատ թույլ էին գործում:

30 հունիսի: Բ· քաղաքում, գետանցքի մոտ ռմբակոծեցինք

հակառակորդի մոտոմեքենայական զորամասերը: Կռվի բռնվեցինք թշնամու կործանիչների հետ: Սավառնակային թեթև տեսակի հրանոթի արկից փչացավ էլերոնների ղեկավարման սարքը: Իջա Մ· քաղաքը, նորոգեցի և մյուս օրը հասա մերոնց:

5 հուլիսի: Երեկ գնդի հրամանատարությունից առաջադրանք ստացա՝ առաջնորդել սավառնակների մի օղակ ռմբակոծելու համար ֆաշիստների տանկային շարասյունը Կ· կայարանի շրջանում: Իմ օղակը, որի մեջ մտնում էր կրտսեր լեյտենանտ Մեդվեդևը և քաղղեկ Նեպոբեդիմցևը, կազմում էր խմբակի ձախ օղակը: Խմբակը վարում էր ավագ քաղղեկ Ցիլմոնովը:

Նպատակակետին մոտեցանք թիկունքից· շտուրման Կոժուխովը թեքեց սավառնակը և ռումբերը նետեց թշնամու տանկերի ու մոտո-սյունի մի խոշոր խմբի վրա՝ միաժամանակ գնդացրային կրակ բացելով թշնամու վրա:

Այդ ժամանակ թշնամու «Մեսսերշմիտ—109» սիստեմի 15—18 սավառնակ գրոհեցին մեզ վրա: Գրոհը հաջողությամբ ետ մղվեց: Գրոհի հետևանքով իմ սավառնակի ձախ մոտորը շարքից դուրս եկավ: Մնաց մի մոտոր: Լրիվ գազ տվի, սակայն մերոնց հասնել չկարողացա: Ինձ հետապնդում էին երկու «Մեսսերշմիտներ» և գնդակոծում խաչաձև կրակով, ընդ որում գնդակոծում էին հրկիզող գնդակներով: Գնդակները կարկուտի նման դխպչում էին կաբինի ետևի պատին: Մի վայրկյան անգամ մտքիցս չէր հեռանում այն, որ կարող են սպանել իմ ետևը նստած ռադիստին: Եվ իսկապես, մի փոքր անց ես տագնապի ազդանշան ստացա, որ նա վիրավորված է, սակայն օգնել չէի կարող:

Քիչ հետո թշնամու գնդակներից հրկիզվեց սավառնակի աջ թևը: Հնարավոր չէր սավառնակը ղեկավարել: Բարձրությունը 100—150 մետր էր, ցած թռչել չէր կարելի: Բացի վայրէջքից, այրվող սավառնակի մասին այլ որոշում ընդունել չէր կարելի: Ներքևը համատարած խիտ անտառ էր: Եվս մի րոպե թռչելուց հետո իջա անտառի վրա: Ծառեր ջարդվեցին, վերջապես մի ուժեղ ցնցում և սավառնակը կանգ առավ: Բենզինից և այրվող ծառերից առաջացած բոցերը լիզում էին իմ կաբինի ցելլուլոիդե պատուհանները: Ծառերը սղմել էին կաբինի դուռը և նա ոչ մի կերպ չէր բացվում: Կենդանի այրվելու

վտանգը կենտրոնացրեց իմ ամբողջ ուժերը: Վերջին ուժեղ ցնցումով ես բացի լապտերը և դուրս ելա: Հեշտությամբ դուրս եկավ նաև շտուրմանը և հեռանալով այրվող սավառնակից՝ սկսեց կապել վերքերը. վայրէջքից պատռվել էր նրա ճակատն ու քերծվել էին ոտքերը:

Ես անմիջապես վազեցի դեպի ռադիստ, կրտսեր սերժանտ Վասիլկովսկին: Նա մնացել էր կաբինի մեջ, փամփուշտների արկղների արանքում: Նա ծանր վիրավորված էր թշնամու գնդակից: Հազիվ դուրս բերի բոցերի միջից: Խնդրում էր չտանջել և «վերջ տալ» իրեն, բայց խիղճս չէր թույլ տալիս այդ անելու: Ես նրան մխիթարում եմ, խոստանում անմիջապես օգնության ուղարկել կոլխոզնիկներին:

Ամեն կողմից լսվում է տանկային հրանոթների որոտ: Անտառամերձ ճանապարհով ընթանում էին թշնամու տանկերը: Պատրաստում եմ ատրճանակը: Ոչ մի դեպքում թշնամու ձեռքը չընկնել: Վասիլկովսկին խնդրում է թողնել իրեն: Մի բան սեղմում է կոկորդս: Ես գրկում, համբուրում եմ նրան: Նա ես փաթաթվում է վզովս: Օգնեցի շտուրմանին կապելու վերքերը և հեռացանք:

Շտուրմանը կաղում էր երկու ոտքով: Անհնարին էր առաջ գնալ: Ես նրա համար հենակներ պատրաստեցի, մեծ դժվարությամբ նա մի կերպ սկսեց քայլել: Գնում էինք խիտ, անանցանելի, ճահճոտ անտառով, մինչև ծնկները ցեխի մեջ: Վեց ժամում անցանք 4 կիլոմետր: Հասանք մի գյուղ: Անմիջապես մարդիկ ուղարկեցինք Վասիլկովսկու ետևից: Գյուղացիք արդեն գիտեին սավառնակի վայրէջքի տեղը:

Գյուղական սայլով ուղևորվեցինք դեպի արևելք: Ամբողջ գիշեր ճանապարհ էինք գնում: Լուսադեմին հանդիպեցինք մերոնց ավտոշարանին, որի հետ միասին հասանք Պ. քաղաքը, որտեղից սավառնակով թռանք դեպի մեր զորամասը:

Մեր գնդի հրամանատարությունն ու ողջ անձնակազմը խիստ ուրախացան տեսնելով մեզ կենդանի: Շտուրմանին անմիջապես ուղարկեցինք հիվանդանոց:

Այսպես ուրեմն, երկրորդ անգամ մեր հրամանատարությունն իմ ազգանունը ջնջելով կորածների ցուցակից, գրեց կենդանի մնացածների ցուցակում: Երկրորդ անգամ բախտը ժպտաց ինձ:

7 հուլիսի: Առավոտվանից բոլորը քնած են: Իմ քունը չի տանում: Միակ գիշերն էր, որ անխռով քնեցինք:

10 հուլիսի: Ողջ օրը հանգստանում ենք: Ձանձրալի է առանց թռիչքի: Երեկոյան բերին Արևմտյան ճակատի թերթը՝ «Կրասնոարմեյսկայա պրավդա»-ն: Թերթում տպված էր Գերագույն Սովետի հրամանագիրը ինձ և իմ ընկերներին Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրելու մասին: Խոսք չեմ գտնում արտահայտելու իմ շնորհակալության զգացմունքները պարտիայի և սովետական կառավարությանը այդպիսի բարձր պարգևի համար: Ես ուզում եմ կռվել մեր հայրենիքի բարօրության համար:

Ես ոչ մի ցանկություն չունեմ այլևս՝ բացի կռվելուց և թշնամուն հաղթելուց: Հոգ չէ այժմ, թե կմեռնեմ: Կռվում եմ հայրենիքի համար և ուրախ եմ, որ կյանքս անհետ չի կորչի:

Այժմ մի ցանկություն ունեմ միայն, հասարակ մահկանացուի ցանկություն—սեղմել ընկեր Ստալինի ձեռքը, նայել՝ նրա աչքերին, տեսնել նրան անձամբ:

12 հուլիսի: Կարդում եմ «Երեք հրացանակիրները»: Հանգստանում եմ: Ձանձրալի է:

13 հուլիսի: Թռանք մարտական առաջադրանք կատարելու: Գործողությունը հաջող անցավ: Ենթարկվեցինք ուժեղ ռմբակոծության: Զենիթային արկերի պայթյունների միջից դուրս եկանք անփորձ: Առաջին անգամ ես զգացի մահն առերես: Օդում այրվող սավառնակում այդքան լուրջ չէր:

14 հուլիսի: Բ. քաղաքումն ենք: Գտա կնոջս և երեխայիս: Սալրի իմ Վալյան, նա իրեն պահում է առույգ և լավ: Բաժանվեցինք իրարից: Ո՞վ գիտե, գուցե ընդմիշտ: Պատերազմն անողոք է: Գիշերով հենց կրկին վերադարձանք զորամաս: Լավ տեղեկություններ իմացանք գերմանական զորքերի թիկունքում կատարված մեծ ավերածությունների և նրանց զորքերի նեղ վիճակի մասին:

21. հուլիսի: Իմ խմբի հետ միասին Մոսկվայումն եմ. նոր նշանակում ստանալու համար: Որոնում եմ ընկերներիս: Շատերը չկան—ո՛չ Հրաչը, ո՛չ Իլյուշինը: Նամակ գրեցի Կուրսկ՝ կնոջս, հորս ու Հայկուշին:

23 հուլիսի: Մոսկվայից մեկնեցինք դեպի նոր նշանակման վայրը, դեպի հարավ:

26 հուլիսի: Ժամանեցինք նոր վայրը՝ Գ. գյուղաքաղաքը: Ստացանք նոր СБ սավառնակներ:

12 օգոստոսի: 16 օր է այստեղ ենք, մարտական վերապատրաստման համար: Կատարում եմ թռիչքներ զանազան տիպի սավառնակներով: Կարդում եմ թերթերում ֆաշիստների անասելի գազանությունները, արյունս եռում է, ուզում եմ շո՛ւտ, նորից մարտի խոյանալ: Պետք է վրեժ լուծել բոլոր խոշտանգված և անարգված կանանց համար: Այսօր նամակ ստացա Վալյայից: Պատասխանեցի: Նա երևի կզարմանա, թե ես ինչո՞ւ եմ այստեղ և ոչ ճակատում:

18 օգոստոսի: Իմ առաջին ինքնուրույն գիշերային թռիչքը: Դա մի նոր հաղթանակ է ինձ համար: Եվ այդ հաղթանակը ես նվիրում եմ իմ որդուն՝ փոքրիկ Ռուբենին: Նա ուղիղ երեք տարեկան է: Այդ հասակից նա ականատես է պատերազմի: Երանի՛ գիտենայի ինչ է լինելու նրա վիճակը:

Այժմ պատրաստվելով նորանոր թռիչքների՝ ես մտածում եմ մեր հաղթանակի և իմ որդու մասին: Կյանքում ոչ մի բան մարդուն այնքան երջանկություն չի պատճառում, որքան հաղթանակի հպարտ զգացումը: Հաղթանակ ամեն ինչում և ամենուրեք—դա կատարյալ երջանկություն է: Մեր առաջ դեռ շատ դժվարին պայքար կա: Ես վստահ եմ, որ կտեսնեմ մեր կատարյալ հաղթանակը ֆաշիզմի հանդեպ: Կաշխատեմ է՛լ ավելի մեծ եռանդով՝ հանուն մեր հաղթանակի, ընտանիքիս անդորր վիճակում հանդիպելու:

20 օգոստոսի: Գիշերային թռիչքների նախապատրաստումն ավարտեցի: Ինձ լավ եմ զգում: Վստահ եմ գիշերային թռիչքների բարեհաջող վերջավորությանը: Այժմ թռչելու եմ П 4—2-ով:

12 սեպտեմբերի: Այժմ պատրաստ եմ կրկին ճակատ մեկնելու: Այսօր լսեցի, որ մերոնք թողել են Ջերմուկը: Դա ինձ մեծ հուզմունք է պատճառում: Շո՛ւտ՝ դեպի ճակատ: Հոգ չէ մեռնել: Միայն թե մենք հաղթենք:

1 հոկտեմբերի: Տեսնվեցի Վալյայի և որդուս հետ: Որքա՛ն է նա մեծացել: Մոսկվա-Թբիլիսի գնացքով նրանց ուղարկեցի հորս մոտ (Երևան): Այժմ ես ամբողջովին պատրաստ եմ ճակատ մեկնելու:

10 հոկտեմբերի: Երեկ լսեցինք Օրյոլի հանձնումը: Երեկվանից սիրտս ցավում է: Մինչև կես գիշեր չքնեցի, առավոտյան գլուխս ցավում էր: Ե՞րբ պետք է վերջանա այս մարտական պատրաստությունը: Համբերությունս հատնում է: Ե՞րբ պետք է մեկնենք ճակատ: Այնտեղ խիղճս գոնե հանգիստ կլինի, որ հայրենիքիս այս ծանր ժամին ես անմիջականորեն գտնվում եմ կռվի մեջ...»

Այստեղ օրագրությունները ընդհատվում են...

***

Այդ օրատետրը լրիվ չի լինի, եթե մենք մեջ չբերենք և մի երկու հատված նրա նամակներից, որոնք պայծառ կերպով բնորոշում են նրա դեմքը որպես մարտիկի, որպես հայրենասերի և որպես սիրող հոր:

Իր ստացած բարձր պարգևի առթիվ նա հետևյալն էր գրում —«Սովետական Հայաստան» թերթի խմբագրության.

«Հարգելի՛ խմբագիր:

Խնդրում եմ ձեր թերթի միջոցով թույլ տալ հայտնելու սիրելի հայ ժողովրդին իմ սրտագին, ճակատային, բոցավառ ողջույնը: Իմ հոր նամակներից ես անսահման հրճվանքով իմացա, որ ֆաշիստական բանդայի դեմ մղվող պայքարի ճակատում իմ կատարած համեստ ծառայությունն իմ հայրենակիցների սրտերը լցրել է հրճվանքով ու հպարտությամբ: Աշխարհում չկա ավելի բարձր, ավելի ազնիվ նպատակ, քան իր ժողովրդի սիրելին լինելը, իր կրծքով նրա նվիրական շահերը պաշտպանելը: Եվ ես իմ ամբողջ կյանքը մինչև վերջը կնվիրեմ այդ նպատակին:

Մեր հայրենիքը, Լենինի—Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ, կարճ ժամանակամիջոցում մոխրակույտից բարձրացավ մինչև մեր Մեծ Միության ծաղկող ռեսպուբլիկաների մակարդակը: Երկրի հետ միասին աճում էին նաև նրա զավակները: Բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ մեր երկիրը հասավ համաշխարհային պատմական հաղթանակների և հիտլերիզմի դեմ ևս անտարակույս հաղթանակ կտարվի: Այս պայքարի մեջ հայ ժողովուրդը պետք է լինի ամենաառաջավոր շարքերում: Մենք՝ հայ ժողովրդի զավակներս, որ գտնվում ենք գործող բանակում, հիանալի հասկանում ենք այդ, և կկռվենք

առյուծի պես: Թող հայերն էլ ավելի ուժեղացնեն կարմիր բանակին ցույց տրվող իրենց օգնությունը՝ ուղարկելով իրենց լավագույն զավակներին, պարենամթերք, հանդերձանք ու ռազմամթերք: Հաղթանակը մե՛րն է լինելու»:

Սիրող հոր ջերմությամբ ու գորովանքով են համակված նրա նամակները կնոջն ու երեխային:

«Սիրելի՛ Վալյա և Ռուբիկ.

Տխրում եմ առանց ձեզ, բայց հայրենիքի պաշտպանության պարտքը ինձ ստիպում է ժամանակավորապես մոռանալ ձեզ:

Այժմ, թանկագի՛ն Վալյա, կարծում եմ կհասկանաս, թե ինչո՞ւ ես հաճախ խոսում էի պատերազմի անխուսափելիության ու մեր ժամանակավոր բաժանման մասին... Իսկ դու վիրավորվում էիր, որ անտեղի փչացնում եմ տրամադրությունդ: Ոչի՛նչ, սիրելի՛ս, պատերազմը կարող է երկարատև լինել ու պահանջել մեծ զոհեր, սակայն եթե ողջ մնանք, ապա իմացիր, որ առաջվանից ավելի լավ կապրենք:

Պատերազմի առաջացրած դժվարություններից մի՛ վախենա: Իրերը, որ կորցրել ես էվակուացիայի ժամանակ, մտահան արա՛: Գույքը միշտ էլ կարելի է ձեռք բերել, կարևորը կյանքն է:

Աշխատի՛ր ինչ գնով ու ինչ պայմաններում էլ լինի՝ պահպանել ինձ համար իմ սիրելի զավակին... Երբ Ռուբիկը մեծանա, թող անպայման օդաչու դառնա: Նրա ամեն քմահաճույքները մի՛ կատարիր, վարժեցրու չորքաշ կյանքի, դրա համար ես քեզ շնորհակալ կլինեմ:

Այս գիշեր ես բոլորովին ինքնուրույն թռիչք կատարեցի. դա ևս մի հաղթանակ է: Այդ հաղթանակը ես նվիրում եմ Ռուբիկին. չէ՞ որ այսօր լրանում է նրա ծննդյան երրորդ տարին...»:

Այսպես էր գրում Գաղազյանը կնոջն ուղղված իր նամակներից մեկում:

... Ո՞ւր է այժմ այդ խիզախ օդաչուն, որն այնքան շատ է կռվել իր սիրած հայրենիքի համար և այնքան համեստ գրել ու արտահայտվել իր մասին:

Նա կենդանի չէ այլևս: Նա մահացավ իր դիրքում, մարտական առաջադրանքը կատարելու պահին:

Նա մեկն էր մեր հայրենիքի այն բազմաթիվ քաջարի զավակներից, որոնք ոչինչ չեն խնայում անարգ թշնամուն հաղթելու համար: Եվ երբ սովետական ժողովուրդն իր հայրենի երկրից կհալածի վերջին գերմանացուն, այն ժամանակ կիրականացվի մեր բոլորի, այդ թվում նաև հանուն մեր հաղթանակի ընկած քաջակորով մարտիկների սրբազան բաղձանքը:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԴՈՒՍՏՐԸ

Լուսադեմին գերմանացիներն անցան գրոհի։ Ձգտելով գրավել կարևոր մի բնակավայր, հակառակորդը մեր զորամասերի պաշտպանության առաջավոր եզրի վրա կենտրոնացրեց իր կրակային ամբողջ ուժը։ Ահռելի դղրդյունով պայթում էին հրետանային արկերը, որոնց վիթխարի ուժով գետնից փորված հսկայական հողակույտերը ցնդում էին օդում, թողնելով գետնի վրա մռայլ ահավոր փոսեր։ Ոչ մի րոպե չէր դադարում ականանետային ու հրացանային տեղատարափ կրակը։ Թշնամու նպատակն էր իր մրրկային կրակով ահաբեկել, թուլացնել մեր մարտիկներին և ապա նրանց վրա շարժել իր տանկային ու հրետանային զորասյուները։

Բնակավայրի առաջավոր պաշտպանության եզրի մի հատվածում խնամքով խրամատավորված էին մեր N հրաձգային գնդի մարտիկները։ Հայրենիքի անհուն սերը, կրծքներում լեռնացած ատելությունը դեպի թշնամին, մեր մարտիկներին դարձնում էին աներկյուղ, աննկուն, պատրաստ ամեն մի րոպե հետ մղելու հակառակորդի վայրագ գրոհները, ոչնչացնելու նրան։ Եվ նրանք անհամբեր սպասում էին, ուշադիր դիտում, հետևում։ Նրանք գիտեին, որ ահա տեղատարափ կրակից հետո գրոհի է նետվելու թշնամին։ Նրանցից ամեն մեկն իր դիրքում

կանգնած, պատրաստ էր կատարելու այն մեծ գործը, որ հայրենիքը դրել էր իր վրա։ Նրանց հետ էր նաև Հայրենիքի անվեհեր դուստր, քսաներկուամյա բժշկական քույր Գոհարիկ Նազարյանը։

... Միայն մի պահ դադարեց թշնամու մրրկային կրակը։ Խճուղու աջ ու ձախ կողմերից թշնամին շարժեց իր տանկերը, մոտոհետևակը և էլի հետևակային զորասյուները, որոնք դղրդոցով, աղմուկով նետվեցին մեր N գնդի դիրքերի վրա։ Տեղատարափ կրակը բորբոքվեց նոր ուժով։ Մարտադաշտը կրակի, դղրդոցի ահեղ մի ժխոր դարձավ, երբ մեր զորամասերը մոտ թողնելով թշնամուն, նրա վրա թափեցին իրենց ամբողջ կրակային ուժը։ Թեժ ճակատամարտը բորբոքվում էր ավելի ու ավելի։ Թշնամին անասելի կորուստներ կրելով խցկվում էր առաջ։ Նա ձգտում էր խրվել մեր պաշտպանության դասավորության մեջ, բայց հուժկու հակահարվածներ ստանալով հետ էր գլորվում ու նորից նոր ուժերով դիմում գրոհի։

Ճակատամարտի այդ թեժ պահին Գոհարիկը մարտադաշտում էր։ Հուժկու կրակի տակ նա կռացած, կամ ուղղակի սողեսող խիզախորեն մոտենում էր վիրավոր մարտիկին, կապում նրա վերքը, և նրա զենքը վերցրած, դուրս բերում մարտադաշտից։ Գոհարիկը ոչինչ չէր տեսնում, բացի վիրավոր մարտիկներից, որոնց պետք է ինչպես էլ լինի օգներ, հեռացներ այդտեղից։ Նա անուշադրության էր մատնել մրրկային կրակը, գնդակների տարափը։ Ահա ականի բեկորից պոկվեց նրա գլխարկի մի մասը, երկու գնդակ ծակեցին նրա բաճկոնը, բայց նա անուշադրության մատնեց այդ։ Նրա ամբողջ միտքն ու զգացմունքն ուղղված էին մի նպատակի՝ հասնել, ինչ գնով էլ լինի հասնել ահա այն բլրակին, որտեղ պառկած է վիրավոր մարտիկը և անմիջապես օգնել, հեռացնել նրան կրակի տակից։ Եվ նա կռացած վազում է, պառկում գետնին, սողում, սողում է դեպի բլրակը։ Ահա նա բլրակի մոտ է։ Ահռելի դղրդյունով հրետանային մի արկ պայթում է նրա մոտ հենց այն պահին, երբ նա իրեն արդեն նետում էր մի այլ արկից գոյացած փոսի մեջ։

Պայթյունի ճնշման ահեղ ուժը խլացնում է նրան ու մի պահ հետո մի հսկա հողակույտ թափվում է նրա գլխին։ Ուշաթափ ընկած փոսի մեջ, Գոհարիկը ոչինչ չէր տեսնում, չէր զգում. մի երկրորդ արկի ահեղ պայթյունը սթափեցնում է նրան։ Իր վրայից թոթափելով հողակույտը, նա մի կերպ փո-

ից դուրս է սողում: Գլուխը ծանր է, ինչպես կապարը, աչքերը մթնում են, մարմինը ցավում է: Նայում է շուրջը, ահա բլրակը, վիրավոր մարտիկը: Նա նորից մոռանում է ամեն ինչ և նորից սողում դեպի բլրակը: Մոտենում է վիրավորին: Թեքվում է դեպի նա ու ձեռքի ճկուն, վստահ շարժումներով սկսում է կապել նրա կրծքի վերքը:

— Ջո՛ւր, ջո՛ւր... հազիվ շշնջում է մարտիկը:

Գոհարիկը ջուրը մոտեցնում է նրա չորացած, արյունոտ շրթունքներին: Վիրավորը բացում է աչքերը, պղտոր հայացքով մի պահ դիտում է իր շուրջը, տեսնում է աղջկան:

— Գալյա՛...

— Շատ է՞ ցավում: Դու շատ մի մտածիր, սիրելիս, ահա կկապեմ քո վերքը և մենք միասին կգնանք այստեղից: Գոհարիկը կապում է վերքը, վերցնում նրա զենքը, կախում իր ուսին, չէ՞ որ չէր կարելի զենքը թողնել կռվի դաշտում, մարտիկին մի կերպ վերցնում է իր ուսերի վրա և առաջ սողում: Դժվար էր աղջկան տանել մարտիկին, բայց նա մոռացել էր դժվարությունը, նա տանում էր, ավելի շուտ զգուշությամբ քարշ էր տալիս վիրավորին: Նրա մարմինն այրվում էր շոգից, չնայած փչում էր փետրվարյան ծակող քամին:

Վիրավոր մարտիկին դուրս բերելով մարտադաշտից ու նրան սանիտարական կայանը հասցնելով, Գոհարիկը նորից վազում է դեպի մարտադաշտ: Մարտը շարունակվում է ավելի ու ավելի կատաղի ուժգնությամբ: Անձնազոհ աղջկա սիրտը ավելի թեժ էր, քան բորբոքված մարտը: Այն բաբախում էր ջերմ սիրով դեպի հարազատ մարտիկները, որոնց ահեղ ուժից հետ էր շպրտվում թշնամին:

Այդ օրը Գոհարիկը մարտադաշտից դուրս բերեց քառասուն չորս վիրավոր մարտիկ իրենց զենքով: Նա չտեսնված արիությամբ կազմակերպեց իր վիրավորների խնամքը, փոխադրեց նրանց բնակավայրի մի ավերված շենք, տեղավորեց կիսավեր սենյակներից մեկում, պատրաստեց նրանց համար թեյ ու ավելի խնամքով կապեց նրանց վերքերը:

...Գիշեր է: Դրսում ոռնում էր քամին: Գոհարիկը մերթ ընդ մերթ մոտենում էր վիրավորներին, խոսեցնում նրանց, հարցնում նրանց առողջությունը, ուղղում վիրակապերը:

— Անվեհեր, համեստ աղջիկ է,— շշուկով ասում են իրար մարտիկները, երբ նա հեռանում էր նրանց մոտից: Այդ պարզ

բառերի մեջ նրանք դնում էին իրենց ամբողջ սերը, իրենց մեծ գնահատականը հայրենասեր աղջկա մասին, որն անձնազոհ կերպով արիությամբ ու խիզախորեն փրկել էր իրենց կյանքը:

Բայց ահա մարտիկները քնեցին: Գոհարիկն արթուն էր, նա հսկում էր նրանց հանգիստը: Նրա ամբողջ ուշադրությունը հիմա իր զորամասի հետ էր, որը հերոսաբար պաշտպանում էր բնագիծը վայրագ թշնամուց: Գոհարիկը մոտեցավ պատուհանին: Խավար գիշերը տարածվում էր նրա շուրջը: Երկինքը հաճախ փայլատակում էր հրթիռներից, հրետանային արկերի պայթյուններից: Արկերի, ականների պայթյունն ու գնդացրային համազարկերը խանգարում էին գիշերվա խոր հանգիստը:

Գոհարիկը նստեց պատուհանի եզրին: Նրա աչքերը փակվում էին անչափ հոգնածությունից, բայց նա զսպում էր իրեն, նորից թարթում աչքերը: Նա խորապես ապրում էր օրվա փոթորկահույզ իրադարձությունը: Նրա մտքերը միաժամանակ սլանում էին հեռու դեպի հայրենի երկիրը, որտեղ նա ծնվել, մեծացել էր: Տասնյակ հիշողություններ կինոժապավենի նման մեկը մյուսի հետևից աղմկում, անցնում էին նրա մտքով:

...Գոհարիկը մեկ տարեկան էր, երբ մեռավ իր բանվոր հայրը և ինքը մնաց մոր խնամքի տակ: Նա հիշեց իր հեռավոր ու անվրդով մանկությունը: Հիշեց Թբիլիսին, որտեղ ծնվել է, մանկապարտեզը, որտեղ անց է կացրել իր մանկության յոթ տարիները, դպրոցը, որտեղ սովորել ու ավարտել է, Սլավյանսկ քաղաքը, որտեղ փոխադրվեց իր ընտանիքը, նորից դպրոցական կյանքը, պատանեկան գեղեցիկ օրերը սովետական կյանքի խաղաղ ու հիանալի պայմաններում: Բայց ահա նրա աչքերի առջև պատկերացավ Երևանը, այդ գեղեցիկ արևոտ քաղաքը, որի հետ կապված են իր պատանեկական տարիների թարմ հուշերը: Շատ տարիներ չէին անցել այն օրից, երբ իր ընտանիքը Սլավյանսկից փոխադրվեց Երևան: Շատ ժամանակ չի անցել այն օրից, երբ նա անհոգ, բայց սովետական պատանուն հատուկ գիտակցությամբ ավարտեց բժշկական տեխնիկումն ու մտավ ինքնուրույն կյանքի ընդարձակ ասպարեզը: Ահա Բասարգեչարը, որտեղ նա 1939 թվից սկսեց աշխատել որպես բուժկայանի քույր: Բասարգեչարի լեռնային սքանչելի բնությունը, լարված անձնվեր աշխատանքն ամրացրեց նրա առողջությունը, կոփեց նրա ոգին, հայրենիքին հավատարիմ ծառայելու նրա կամքը, սերը: Նա որոշեց իրեն վերջնականապես նվիրել բժըշ-

կուլթյանը, կոմերիտուհու իր ամբողջ ուժերը նվիրաբերել հայրենիքին, նրան ավելի օգտավետ դառնալու համար: Երկու տարի հետո նա Բասարգեչարից վերադարձավ Երևան Բժշկական ինստիտուտում սովորելու համար: Բայց նրան այդ չհաջողվեց: Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Գերմանա-ֆաշիստական հորդաներն ուխտադրուժ կերպով ներխուժեցին սովետական սրբազան հողը: Բոլշևիկների պարտիայի կոչով սովետական ամբողջ ժողովուրդը մի մարդու նման ոտքի ելավ թշնամուն արժանի հակահարված տալու համար: Կարմիր Բանակն իր հուժկու հարվածները տեղաց թշնամու գլխին, հյուծելով, արյունաքամ անելով նրա ուժերը, ոչնչացնելով նրա տեխնիկան: Սովետական ո՞ր քաղաքացու սիրտը չբաբախեց ջերմ հայրենասիրությամբ դեպի իր սիրելի հայրենիքը: Հերոսական Կարմիր Բանակի շարքերում գտնվելու և թշնամու դեմ կռվելու համար տենչացող մեր հայրենասեր երիտասարդների շարքերումն էր նաև Գոհարիկը:

Հենց պատերազմն սկսվելու օրը նա դիմում ներկայացրեց Ստալինյան ռայոնական զինկոմիսարիատին իրեն կամավոր կերպով Կարմիր Բանակի շարքերը վերցնելու համար: Եվ ահա մի քանի օր հետո, հունիսի 25-ին Գոհարիկն արդեն բանակումն էր, որպես բժշկական քույր: Բայց նա թիկունքում չէր ուզում մնալ, նա տենչում էր ռազմաճակատը, կրակի առաջավոր գիծը, որտեղ նա կարող էր գործնականում իր օգնությունը ցույց տալ հայրենիքին: Նրա այդ ջերմ ձգտումն իրականանում է՝ դեկտեմբերի 29-ին նա արդեն գտնվում էր ռազմաճակատում, հենց կրակի առաջավոր գծում: Այստեղից էլ սկսվում է հայրենասեր աղջկա հերոսական առօրյան: Նա խիզախորեն մասնակցում է մարտերին, ամենուրեք ներդնելով իր սրտի ամբողջ ջերմությունը, իր հոգատար խնամքը մարտիկների նկատմամբ:

Այդ սևաչյա, թուխ դեմքով, հրապուրիչ ժպիտով աղջկան կարելի էր տեսնել ամենուրեք: Մարտերի դադարի րոպեներին նա մարտիկների համար երգում էր իր արևաշող հայրենի երգերը, դրանց մեջ դնելով իր ամբողջ սերը դեպի հայրենիքը, դեպի բոլշևիկների պարտիան, դեպի սիրելի Կարմիր Բանակը, որի շարքերում հերոսաբար պայքարում էր նաև ինքը: Շատ շուտով Գոհարիկը դառնում է բոլորի սիրելին: Նրա անունը տալիս են մեծ հարգանքով, սիրով ու հպարտությամբ: Նրա հերոսական, անձնվեր աշխատանքի ու պայքարի մասին գրում

են ճակատային թերթերը: Եվ ահա Գոհարիկի կյանքում կատարվում է մի մեծ իրադարձություն, որը մի նոր, ավելի ուժեղ լիցք է տալիս նրան՝ նա ընդունվում է Լենինի—Ստալինի պարտիայի շարքերը, որպես թեկնածու: Եվ այսօր, այս թեժ մարտում, որին մասնակցել է, նա կատարեց իր առաջին հայրենասիրական պարտքը հայրենիքի հանդեպ:

Ապրած կարճատև կյանքի հուշերը դեռ շարունակում էին խռովել նրա հիշողության դաշտում, նրա սիրտն ալեկոծվում էր ավելի մեծ սխրագործություններ կատարելու ցանկությամբ: Հենց այդ պահին էր, երբ բոլորովին մոտ պայթեց մի արկ և նույն վայրկյանին ներս մտավ մի ռուս մարտիկ:

— Գալյա՛, Գալյա՛, թշնամին թևանցել է մեզ, մենք շուտով նրան դեմ կշպրտենք, բայց դե հիմա, հենց հիմա վիրավորներին պետք է հանենք շրջապատումից:

Գոհարիկը մի պահ միայն մտածեց, նա մոռացել էր իրեն, նրա ուղեղում մեխված էր միայն մի միտք՝ փրկել վիրավոր մարտիկներին: Նա շտապ դուրս եկավ ամայի փողոցը, որտեղ աջ ու ձախ պայթում էին արկերը, ականները, որտեղ մահաբեր գնդակներն էին սուլում: Փողոցում՝ դիմացի ավերված շենքի մոտ նա նկատեց երկու սայլ, նրանց մոտ ոչ ոք չկար, փախել էին երևի: Նա երկու կարմիրբանակայինների օգնությամբ իր վիրավորներին շտապ, բայց խնամքով տեղավորեց սայլերի վրա և գիշերվա մթության քողի ու թշնամու հուժկու կրակի տակ նա վիրավորներին դուրս բերեց շրջապատումից, նրանց անվնաս հանձնելով իր զորամասի սանիտարական կայանին:

... Թշնամու դեմ թեժ մարտ բորբոքվեց մի քանի օր հետո ռազմաճակատի մի այլ հատվածում, Հ. բնակավայրի մոտ: Մեր զորամասը թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ մարտերով հետ էր քաշվում նոր բնագծում ամրանալու համար: Թշնամու ահեղ կրակի տակ Գոհարիկն աներկյուղ, նույն անվեհերությամբ շարունակում էր իր անձնազոհ աշխատանքը: Նա մոտենում էր վիրավոր մարտիկներին, կապում նրանց վերքերը, դուրս բերում նրանց իրենց զենքով մարտադաշտից, հանձնում սանիտարական կայանին ու նորից նետվում տեղատարափ կրակի մեջ:

Բայց ահա ռազմաճակատի այն հատվածը, որտեղ գտնվում էր Գոհարիկը, շրջապատեց գերմանական մի զորամաս: Դրությունն սպառնալից էր, վտանգներով լի: Գոհարիկը գոհ էր, որ

կռվի դաշտից իր դուրս բերած 85 վիրավորները գտնվում էին շրջապատումից դուրս, անվտանգ տեղում: Բայց ահա 86-րդը, մի ռուս հրամանատար, որին նա ծանր վիրավոր վիճակում դուրս էր բերել մարտից, իր մոտ է: Հեռանալ, դուրս գալ շրջապատումից Գոհարիկը կարող էր, բայց ահա թողնել մարտիկին, հանձնել նրան թշնամու գերությանը, նա չէր կարող երբեք:

Դրությունն ավելի վտանգավոր դարձավ, երբ թշնամու գնդակից սպանվեց ստորաբաժանման հրամանատարը: Հապաղումը կարող էր թանկ նստել այդ հատվածում կռվող մարտիկների ու իր համար: Անվեհեր աղջիկն ընդունեց մի խիզախ վճիռ:

— Ընկերնե՛ր,—դիմեց նա մարտիկներին,—պետք է ճեղքել, դուրս գալ շրջապատումից: Ով ուզում է գերի չընկնել թշնամուն, ով ուզում է կռվել, թող գա ինձ հետ:

Նա ծանր վիրավոր հրամանատարին տեղավորեց մի ապահով տեղ ու 160 մարտիկների գլուխն անցած դիմեց հակագրոհի: Կարմիր մարտիկների անսպասելի ու խիզախ գրոհից թշնամին նահանջեց: Մարտիկները ճեղքելով թշնամու օղակը դուրս եկան շրջապատումից:

Գոհարիկը թողեց նրանց ու նորից վերադարձավ ծանր վիրավոր հրամանատարի մոտ: Նրան սարսափելի չէր, որ գտնվում էր թշնամու շրջապատման օղակում, նրան լավ հայտնի էր այն ծանր վիճակը, որ սպասում էր իրեն, եթե գերի ընկներ: Գիտեր և գիտակցաբար մնացել էր իր ամենապատասխանատու պոստում: Նրան միայն հուզում էր մի բան, ինչ գնով էլ լինի ազատել վիրավոր հրամանատարին, ազատել գերությունից նրան ու իրեն:

Եվ շրջապատումից դուրս գալու նրա ուղին լի էր փորձություններով ու հերոսությամբ: Անվեհեր աղջիկը չորս օր շարունակ սողեսող տանում էր վիրավոր հրամանատարին, խնամքով պահելով թշնամուց և երբ արդեն մոտ էր նպատակին, երբ արդեն դուրս էր եկել շրջապատումից, անսպասելիորեն ենթարկվեց թշնամու ռմբակոծման: Ստեղծված ծանր վիճակը, մահն արհամարհելով նա սողում էր առաջ ու առաջ: Արկերի պայթյունի ուժից նրա վրա թափվում էին հողակույտերը, նրան այլևս չէին սարսափեցնում արկերի բեկորները, գնդակները: Նա մոռացել էր և՛ շրջապատը, և՛ վտանգը, և՛ սարսափը, և՛

մահը: Նրան տիրապետողը միայն մի զգացմունք էր, մի միտք՝ արհամարհել, հաղթահարել ամեն բան, հասնել իր զորամասին և հանձնել վիրավոր հրամանատարին կենդանի, անվնաս: Եվ նա սողում էր, սողում:

Հանկարծ բոլորովին մոտ պայթեց մի արկ: Օդի ահեղ ճնշումից Գոհարիկն ուշաթափվեց: Թե որքան ժամանակ էր մնացել այդ վիճակում նա չգիտեր: Երբ աչքերը բացեց, նա իրեն տեսավ անվնաս պառկած սանիտարական կայանում, իսկ իր կողքին, քիչ հեռու՝ իր փրկած վիրավոր հրամանատարին: Նա գտնվում էր իր զորամասում, նրանց փրկել էին հարձակման անցած իր զորամասի մարտիկները:

Մեր սոցիալիստական հայրենիքին անհունորեն նվիրված, գերմանական ֆաշիզմի դեմ մղվող ճակատում հերոսության ու արիության բարձր օրինակներ ցույց տվող հարյուրավոր ու հազարավոր բժշկական քույրերից մեկին, հայ ժողովրդի հավատարիմ դուստր Գոհարիկ Հակոբջանի Նազարյանին բանակի ռազմական խորհուրդն իր հատուկ հրամանով շնորհակալություն է հայտնել, նվիրել է անվանական մի ժամացույց ու նրան ներկայացրել կառավարական պարգևատրման:

ԱՐԳԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայրենական պատերազմի հերոս Արգամ Պետրոսյանը ծնվել է Դարալագյազի Ազատեկ գյուղում, 1919 թվին:

Երկու տարեկան հասակից առանց հայր մեծացած այդ ժիր, կայտառ մանուկը դաստիարակվում էր իր մոր՝ Աննայի խնամքի տակ: Մայրը ոչինչ չխնայեց իր սիրելի որդու կրթության համար, անասելի ծանր պայմաններում պահեց, մեծացրեց նրան: Արգամը «գերազանց» գնահատականով ավարտեց 10-ամյակը:

Ավարտելուց հետո նա մնաց իբրև դասատու նույն դպրոցում: Զբաղվում էր մանուկ սերնդի ֆիզիկական դաստիարակության գործով: Այնուհետև նա աշխատում է որպես կոմերիտմիության Ազիզբեկովի շրջկոմի պիոներական բաժնի վարիչ:

1939 թվին Արգամին կանչում են Կարմիր Բանակ:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից նա գտնվում է ռազմաճակատի ամենապատասխանատու հատվածներում: Միլիոնների հետ միասին նա իր կյանքը նվիրել է մեր սրբազան Հայրենիքի պաշտպանության գործին:

Արգամ Պետրոսյանի սխրագործությունն օրինակ է հանդիսանում շատ շատերի համար: Այդպես են վարվում իսկական սովետական հայրենասերները:

***

Շքանշանակիր գվարդիայի գնդերից մեկի զինվորներն ու հրամանատարները դուրս մղեցին գերմանացիներին գրաված դիրքերից և այդ դահիճների ճանկերից ազատեցին քաղղեկի տեղակալ Արգամ Ալեքսանդրի Պետրոսյանին, որն ամբողջովին հոշոտված էր: Ընկ. Պետրոսյանի այտերի վրա հնգաթև աստղի ձևի կտրվածքներ էին արված, կուրծքն ու մեջքը կտրատված էր ածելիով: Մարմնի վրա կային բազմաթիվ կապույտ բծեր, հարվածի հետքեր և գնդակից գոյացած մի քանի վերքեր:

Երբ ընկ. Պետրոսյանին ցույց տրվեց բժշկական օգնություն և նա մի քիչ հանգստացավ՝ պատմեց հետևյալը.

— Մեր բնակավայրի շրջակայքում հակառակորդը կռվի մեջ մտցրեց իր ռեզերվները: Դրությունը բարդ էր և խիստ լարված:

Վիրավորներին կռվի դաշտից դուրս բերելը շատ դժվար էր: Հրամանատարությունը հանձնարարեց ինձ՝ ինչ գնով էլ լինի դուրս բերել կռվի դաշտից վիրավոր զինվորներին և հրամանատարներին:

Երբ ես սողալով մոտեցա վիրավորներից մեկին, որպեսզի նրան փոխադրեմ մի ապահով տեղ, սողալով ինձ մոտեցան երկու մարդ կարմիրբանակայինի տարազով.—մեկը ավագ-լեյտենանտի, իսկ մյուսը ավագի նշաններով: Անսպասելի կերպով նրանք բռնեցին բերանս և սկսեցին ծեծել: Նրանք հագուստները փոխած գերմանացիներ էին:

Ես երկար դիմադրում էի, բայց նրանք երկու հոգով էին և հաղթեցին ինձ: Ծեծելուց հետո վերցրին ինձանից նագանը, նռնակները, շշերով լի պայուսակը: Հետո ինձ քաշ տվին անտառ և տարան մի հողաշեն խրճիթ: Խրճիթում շատ աղմկալից էր: Այստեղ կային և՛ տղամարդիկ, և՛ կանայք: Ամենքն էլ խոսում էին գերմաներեն:

Կիսահարբած այդ ողջ կամպանիան հարձակվեց ինձ վրա: Նախ կապեցին իմ ձեռքերը, հետո սկսեցին խուզարկել գրպաններս:

Քիչ հետո խրճիթ մտավ ևս մի սպա: Նա ևս խառնեց իմ գրպանները և մի քանի անգամ խփեց երեսիս: Ես ճարպկորեն կծեցի չարագործի ականջը: Սպան հառաչեց, պտտվեց մի քանի անգամ, ապա վերցրեց ածելին և կատաղությամբ մի սաս

անգամ նրանով հարվածեց իմ կրծքին։ Արյուն տեսնելիս բո՛լոր սրիկաները աննկարագրելի կերպով հրճվեցին։ Նրանք ծիծաղում էին և բացականչում․

— Դե կե՛ր, երիտասա՛րդ կոմիսար։

Հետո նորից սկսեցին ինձ խուզարկել։ Բլուզիս փոքրիկ գրպանում նրանք գտան մի աստղ։ Սպան հափշտակելով այն՝ մի բան ասաց կանանց։ Հետո նրանք այդ աստղը դրին իմ աջ այտին և ածելիով աստղաձև կտրտվածքներ արին մաշկիս վրա։

Չնայած ցավին՝ ես ոչ մի ծպտուն չհանեցի։ Այն ժամանակ սպան սկսեց աստղ փորագրել նաև ձախ այտիս։

Այդ ժամանակ խրճիթ մտավ մի ուրիշ սպա։ Իր աստիճանով նա բարձր էր բոլոր ներկա եղողներից։ Նա մոտեցավ ինձ և ծխախոտ առաջարկեց։ Ես հրաժարվեցի։

Սպան ցույց տվեց ինձ մի քանի լուսանկար։ Նա ուզում էր ինձ համոզել, որ նրանց վրա նկարված մարդիկ կամավոր կերպով հանձնվել են գերմանացիներին։

— Սո՛ւտ է,— պատասխանեցի ես։

Ինձ ուզում էին ստիպել ստորագրելու մի թուղթ, որի վերնագիրն էր «Դիմում ռուս զինվորներին»։

Ես հրաժարվեցի՝ ասելով․

— Կմեռնեմ, բայց երբեք չեմ դավաճանի իմ հայրենիքին։

Սպան պահպանելով արտաքին սառնասրտությունը՝ շարունակեց զրույցը։ Հանկարծ նա, կարծես պատահաբար, հարցրեց մեր զորամասի համարը և որտեղ գտնվելը։

Ես ոչինչ չպատասխանեցի։

Այն ժամանակ սպան վեր կացավ, անցավ խրճիթի մի ծայրից մյուսը և հատու ձայնով ասաց․

— Մենք որոշեցինք ձեզ գնդակահարել։

Ներկա եղողներից մի քանիսը մոտեցան ինձ և քաշելով պոկեցին վրայիս հագուստը։ Հանելով նաև սպիտակեղենս՝ նրանք սկսեցին ծեծել ինձ, փետել կրծքիս մազերը։

Անտանելի ցավից գլուխս պտտվեց։ Ես վայր ընկա։ Ամեն տեսակի ծաղրանքից հետո՝ թշնամիներն ինձ դուրս տարան։ Խրճիթի կողքին պառկած էին երկու տանջված կարմիրբանակայիններ։ Նրանց դեմքերը կտրտված էին դանակով։

— Գերեզման փորիր երեք հոգու համար,— գոռաց ինձ գերմանացի եֆրեյտորը։

Ես վերցրի բահը և սկսեցի փորել։

Երկու սպաները և եֆրեյտորը դիտում էին իմ աշխատանքը։ Նրանք բերին, գերեզմանի մոտ դրին ինձնից վերցրած նռնակները և վառելանյութով լի շշերը։

Հանկարծ մեզ մոտեցավ մի մոտոցիկլ։ Հավանաբար նա շտաբից ուղարկված կապավոր էր։ Նա մի կողմ կանչեց սպաներին և մի բան հաղորդեց նրանց։

Ինձ հսկող եֆրեյտորն սկսեց ականջ դնել այդ խոսակցությանը։

Այդ ակնթարթին իմ մեջ միտք ծագեց՝ սպանել ինձ հսկող եֆրեյտորին։ Ես ամբողջ թափով բահով խփեցի նրա գլխին։ Ֆաշիստն ընկավ առանց մի ծպտուն հանելու։ Անմիջապես հափշտակեցի նռնակները և շշերով լի պայուսակը։ Նռնակներից մի կապոց նետեցի դեպի սպաները, իսկ մի նռնակ նետեցի դեպի հրամանատարը։

Լսվեց կրակոց։ Գնդակը դիպավ ոտքիս․ մյուս գնդակը քերծեց գլուխս։ Պարզվեց, որ սպաներից մեկը դեռ կենդանի է։ Սակայն ես վայրկենապես հարձակվեցի այդ բանդիտի վրա և խեղդեցի նրան։ Վերջապես փորսող տալով՝ դիմեցի դեպի ռազմաճակատի գիծը։ Ուժերս դավաճանում էին, դեմքիցս արյուն էր հոսում։

Գերմանացիների պաշտպանական գծի մոտ ես նկատեցի երկու գերմանացի զինվոր։ Նրանք կանգնած էին իմ ճանապարհին։ Շեղվել ճանապարհից այլևս չէի կարող, ուժերս չէին ներում։ Հավաքելով իմ ամբողջ ճիգը՝ ես ոտքի կանգնեցի և մի ակնթարթում ֆաշիստների վրա նետեցի վառելանյութով լի շիշը։ Մածուցիկ, այրվող հեղուկը հասավ գերմանական նռնակներին։ Տեղի ունեցավ մի սոսկալի պայթյուն։ Նռնակի բեկորով վիրավորվեցի նաև ես։

Չեմ հիշում, թե ինչ է տեղի ունեցել այնուհետև։ Ուշքի եկա արդեն N գնդի կարմիրբանակայինների և հրամանատարների ձեռքերի վրա...

***

Վերջերս հերոսի մայրը նամակ ստացավ իր որդուց։ Նա գրել էր հիվանդանոցից, ուր փոխադրել էին նրան բուժվելու համար։

Արգամ Պետրոսյանը գրում էր․

«Մամա՛ ջան։ Սեպտեմբերի 5-ին ես վիրավորվեցի, այդ

պատճառով էլ հիմա գտնվում եմ հիվանդանոցում։ Իմ վերքերը վտանգավոր չեն։ Կրծքիս վրա մի քանի (մոտ 18) վերք ունեմ. երկու գնդակ էլ գլխիս։ Բժիշկներն ինձ շրջապատել են բացառիկ ուշադրությամբ և հոգատարությամբ։ Ազնվությամբ եմ ասում, 20 օրից բոլորովին կառողջանամ։ Տեսնում ես, այնքան լավ եմ զգում, որ քեզ նամակ եմ գրում։

Ընդունիր ջերմ, կարոտալի համբույրներս։ Քո որդի՝

Արգամ»

Արգամի մայրն իրավունք ունի պարծենալու իր դաստիարակած որդով, սովետական մեծ ժողովրդի արժանի զավակով, որն այնքան ազնվորեն ու հերոսաբար կատարեց իր պարտքը Հայրենիքի և ժողովրդի առաջ։

ԼԵՎՈՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Սաստիկ բուք էր։ Ձյունը ծածկել էր բոլոր ճանապարհներն ու կածանները։ Գիշեր էր։ Մեղմ ու հանդարտ վառվում էր շարժական փոքրիկ վառարանը։ Հաճելի ջերմությունը քուն է բերում։ Ուզում ես քնել, բայց ժամանակը չէ։ Այսպիսի գիշեր ավելի հեշտությամբ կարելի է ոչնչացնել դաշմանին իր որջում։ Գունդը թեև հենց առավոտյան էր ավարտել վաթսուն կիլոմետր տարածությամբ օրաչվերթը, սակայն մայորը որոշել էր գործողության անցնել։ Նրա ոսկե կանոնն էր՝ հանկարծակիի բերել թշնամուն և սուվորովյան գրոհով ճնշել նրան։

Իրար ետևից շտապն էին մտնում հետախույզները։ Քարտեզի առաջ կանգնած էր նրանց հրամանատարը։ Պատերազմի ժամանակ նա հաճախ էր նրանց մարտի տարել, նրանց հետ միասին կատաղի գրոհների էր գնացել և ջարդուփշուր արել թշնամու թիկունքը։

Ի՞նչ կասի նա այժմ նրանց։ Հետախույզները սիրում են լսել իրենց հրամանատարի մեղմ, կոկորդային ձայնը, սիրում են տեսնել նրա խիստ դեմքի ժպիտը։

Մայորը վճռականորեն բարձրացրեց գլուխը, թափ տվեց սև մազերը և ասաց.

— Առանց աղմուկի վերացնել պահակախումբը։ Գործել

համարձակությամբ: Համարձակությունը մահից ավելի ուժեղ է: Այս գիշեր մարտական հետախուզության ավտոմատավորները պետք է ուժասպառ անեն թշնամուն: Առավոտյան գունդը կգրոհի գյուղի վրա:

— Հետախուզության անցնել մի ժամ հետո: Մայորը նայեց ժամացույցին: Գիշերվա ճիշտ ժամի 12-ն էր:— Հաղորդեցեք ավտոմատավոր մարտիկներին, որ հաջողություն եմ ցանկանում նրանց:

Կործանիչ խմբի հրամանատարները գնացին: Շտաբի պետը պառկեց քնելու: Շուրջը կարծես ամեն ինչ քնած է: Միայն քամին է ոռնում ծխնելույզի մեջ: Հարկավոր է թեկուզ մի ժամ պառկել ու հանգստանալ. մարտից առաջ քունը հիանալի բան է:

Սակայն հրամանատարի քունը չի տանում: Կռվի աղմուկի մեջ նա չի մտածում ընտանիքի մասին, բայց այդ գիշերվա ժամերին նրա միտքը դանդաղորեն, կարծես ակամայից, կանգ է առնում մի բանի վրա. ի՞նչ է կատարվում այնտեղ, տանը, ինչպե՞ս է իր կինը, իր փոքրիկ տղան: Երևի այժմ քնած են: Շատ լավ է, թող քնեն: Նրանց քունը պաշտպանում է նա ինքը, իր գունդը:

Լևոնն սկսեց մտաբերել, թե վերջին անգամ ե՞րբ է նամակ գրել նրանց: Հիշեց, որ դա դեռ զինվորական հիվանդանոցում եղած ժամանակ էր: Շատ օրեր են անցել այդ ժամանակից: Մայորը անհապաղ մի թերթ պոկեց բլոկնոտից, որոշեց մի երկտող գրել կնոջը և տղային: Էլի նայեց ժամացույցին: Ավտոմատավորները հավանաբար մոտենում են հակառակորդի խրամատներին: Երկու ժամ հետո հարկավոր է ոտքի հանել զորագունդը: Նա սկսեց գրել: Ջերմ ու սրտաբուխ խոսքերն իրար ետևից շարվում են լամպի աղոտ լույսով լուսավորված թղթի վրա:

«Յուլիա ջա՛ն, իմ թանկագին կին, իմ ազիզ զավակս, Բովան ջա՛ն: Գրում եմ կռվից առաջ: Ես գիտեմ, մենք կհաղթենք: Յուլիա ջա՛ն, տուն կվերադառնամ միայն որպես հերոս կամ կզոհվեմ հանուն մեր մայր հայրենիքի: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում երջանիկ համարիր քե՛զ...»:

... Առջևում տարածվում էր ձյունածածկ ընդարձակ դաշտը, ուր կղզյակի նման հազիվ երևում էր փոքրիկ անտառը, որի եզրին գտնվում էր հրամանատարական կայանը: Այստեղից էին տրվում հրամաններն ու կարգադրությունները, այստեղ էին տեղեկություններ հաղորդում վաշտերի և գումարտակների՝ հարձակմանը պատրաստ լինելու մասին: Բամբակե բաճկոնակով, վրայից սպիտակ խալաթ հագած, արծվաքիթ, սև, խիտ հոնքերով և ռազմիկի խիստ դեմքով մայորը լարված ուշադրությամբ հետևում էր կռվի դաշտին: Նա գոհ էր գիշերային անակնկալ հարձակման արդյունքից և վստահ էր, որ գրոհն էլ հաջողությամբ կավարտվի:

Օդ սլացավ մի հրթիռ: Դեռ չէին հանգել նրա կապույտ կայծերը, երբ չորս բոլորը ցնցվեց հրանոթային ուժգին որոտից: Ծուխը ծածկեց ցրտաշունչ օդը: Հակառակորդն սկսեց պատասխանել: Երեք ժամ տևեց հրետանային մենամարտը: Ամեն ինչ իրար խառնվեց: Դժվար էր հասկանալ, թե ով է հարձակման պատրաստվում: Մայորն անխռով շարունակում էր ղեկավարել կռիվը: Թվում էր թե թնդանոթաձգությանը վերջ չի լինելու: Բայց հանկարծ ամեն ինչ լռեց և տիրեց գերեզմանային լռություն, որը տևեց միայն մի վայրկյան: Երկու հրթիռ իրար ետևից սլացան վեր, որից անմիջապես հետո լսվեց հրամանատարի խրոխտ ձայնը.

— Արծիվնե՛ր, հանուն հայրենիքի: Դեպի գրո՛հ:

Գունդն անմիջապես ոտքի ելավ: Խլացուցիչ ձայնով պայթում էին ականները, անընդհատ կրակում էին գնդացիրները, խեղդվելու աստիճան ոռնում էին ավտոմատները, բայց մարտիկները առաջ էին շարժվում: Եվ հավանաբար հենց այն պատճառով, որ նրանք իրենց կողքին էին զգում իրենց սիրելի հրամանատարին, աննշմարելիորեն տեսնում էին նրա հանգիստ դեմքը, ոգևորիչ ժպիտը, ապա անդուլ կերպով առաջ էին սլանում: Մետր առ մետր, քայլ առ քայլ նրանք ետ էին վերցնում իրենց հարազատ հողը:

Քիչ բան էր մնացել: Մի հարձակում ևս: Թշնամին համառորեն դիմադրում էր: Նրա հրետանին, ականանետները դանդաղեցնում էին առաջխաղացումը: Կապավոր Ավդեևը նստած էր կամուրջի տակ, սառած գետի սառույցի վրա: Կապ պահպանելով հրամանատարի հետ՝ նա ուղղում էր մարտկոցի կրակը: Թշնամու գնդացրային բներն անձնակազմի հետ միասին իրար ետևից օդ էին թռչում:

Գրոհի էին գնում սանիտարները, կապավորները, ձիապահները, խոհարարները: Ավագ Կրասնոլուցկին գնդացրով միասին

վազելով մոտավ ֆաշիստների թողած մարագը՝ և այնտեղից մի քանի րոպեում սպանեց տասներեք ֆաշիստի։

Գյուղի ծայրամասում լսվում էր կարմիրբանակայինների բարձրաձայն «ուռա»-ն։ Մարտիկները շարունակ առաջ էին շարժվում դեպի գյուղի խորքերը։

Այդ ժամանակ նահանջող ֆաշիստները գյուղի ետևի բլրի վրա տեղավորեցին թնդանոթը՝ այնտեղից ուղիղ նշանառությամբ կրակելու համար։ Հենց որ երևաց ֆաշիստական թնդանոթի սպասակազմը՝ ավագ լեյտենանտ Բարխաշվիլին ձեռքի գնդացրի մի քանի հերթագարկով ոչնչացրեց ամբողջ անձնակազմը։

Գերմանական ականի բեկորից վիրավորվեց գնդացրորդը։ Սանիտար Մելիքյանը արագ կապելով նրա վերքը՝ պառկեց գնդացրի ետևը։ Կռիվն ավելի ևս կատաղի դարձավ։ Թշնամին սկսեց նահանջել։ Լեբյաժյա գյուղը գրավվեց։ Մարտը շարունակվեց ավելի հեռու, հարևան Սոկոլնե գյուղի ուղղությամբ։

— Մի հարվածով քշել բանդիտներին։ Ազատագրենք մի գյուղ ևս։ Արծվինե՛ր, առա՛ջ։

Մայորը երևում էր մերթ այստեղ, մերթ այնտեղ և ուրախ կատակով և աշխույժ խոսքերով ոգևորում էր մարտիկներին։

— Պանծալի բազենե՛ր, փառքը ուղեկցում է ձեզ։ Սովետական մարդիկ ձեզ են սպասում, առա՛ջ։

Եվ մարտիկները գրոհի էին գնում։ Տասը ժամ տևեց կռիվը։ Ձմեռային կարճ ցերեկվան վաղուց արդեն հաջորդել էր ձյունաբեր և բքախառն գիշերը։

Երբ կռիվը վերջացավ, մայորին հարցրին, թե ո՞վ ավելի լավ կռվեց այդ օրը։ Դարբինյանն սկսեց մտածել։ Նրա աչքերը փայլեցին ուրախությունից։

— Բոլորն էլ ցույց տվին իրենց որպես կորյուններ։ Ամեն մի ռազմիկ նման էր դյուցազնի։ Նրանք կայծակի հարվածով ջախջախեցին թշնամուն։

***

Ամրանալով գրավված գյուղում, գունդը համալրումների էր սպասում։ Մարտիկները մաքրում էին հրացանները, ուսումնասիրում թշնամուց խլած ավտոմատները և ականանետները։ Հետախույզները շատ հեռու էին գնում, թափանցում էին թիկունքը և անհանգստացնում թշնամուն։ Սնայպերներն ամեն գիշեր առաջ էին շարժվում, դասավորվում էին հարմար տեղերում և թաքուն դարաններից հակառակորդի սպաներ և զինվորներ էին որսում։

Պարապմունքներից ազատ մարտիկներն ու հրամանատարները սիրում էին հավաքվել բլինդաժում, իրենց հրամանատարի մոտ։ Դարբինյանը հմուտ պատմող է։ Նրա պատմածները լսելիս՝ կարծես տեղափոխվում ես ատամնավոր լեռների և կանաչ հովիտների երկիրը, ուր արևը սիրալիր ջերմացնում է, իսկ մարդիկ կարողանում են ուրախ ծիծաղել և տխուր երգեր երգել։

Բլինդաժ մտան բարդու պես վայելչակազմ Բարխաշվիլին, լեյտենանտ Եվդաշենկոն, որի դեռատի, համարյա կանացի դեմքը ծածկված էր ժպիտով, և նրա անբաժանելի ընկեր Իլջանովը։ Ինչ-որ բանի մասին տաք վեճի բռնվելով՝ նրանք որոշել էին գալ մայորի մոտ, որպեսզի նա որոշի, թե ո՛վ է իրավացի։

Արտասովոր լռությունը նրանց հարկադրեց լռել։ Մայորը նստած գիրք էր կարդում և ցած ձայնով երգում էր։

— Սուս կացեք, տղե՛րք,— ասաց ընկերներին Իլջանովը,— մեր Լևոն ջանը երգում է «Գեղեցիկ աղջիկ»-ը։ Դա նրա սիրած երգն է։

Հրամանատարի կողքին նստած էր կապավոր Նազարեթյանը։ Նա գնդում հռչակված էր որպես հիանալի թառիստ։ Կախարդվածի նման նա լսում էր հրամանատարի երգը և վերհիշում խաղողի կանաչազարդ այգիները և իր ընկերներին։

Երգն աստիճանաբար դադարեց։ Մայորը նայեց կարմիրբանակայինին և սիրալիր հարցրեց.

— Ինչի՞ մասին ես մտածում։

Նազարեթյանը լուռ էր։ Նա երկար նայում էր սիրելի հրամանատարին, որի հետ նա հաճախ էր նետվել կրակի մեջ, հաճախ էր արհամարհել մահը։ Մարտիկի սև արտևանունքից ցած էին գլորվում թափանցիկ արցունքի կաթիլները։

— Ընկե՛ր մայոր,— ցածր ձայնով ասաց նա,— չէ՞ որ կգա այն ժամանակը, երբ դուք կերգեք, իսկ ես թառս կնվագեմ։

Մայորը ջերմ գրկեց մարտիկին, նայեց նրա մի փոքր խոնավ աչքերին ու ասաց.

— Ի հարկե, սիրելի՛ս, և շուտով։ Ջախջախենք չարանենգ

վերադառնամ և այն ժամանակ նորից կերգի մեր հայրենիքը: Տխրելու կարիք չկա:

Եվ արդեն առանց մարտիկին դիմելու՝ բարձր ձայնով ասաց.

— Հայաստան, իմ սիրելի հայրենիք, քեզ համար ենք կռվում, քո դաշտերի երջանկության համար, քո բարձր լեռների, քո արագահոս գետերի, քո այգիների և անտառների համար:

Մայորը հանկարծ լուռ եկավ, կարծես թե ամաչելով իրեն համակած բողեական թուլությունից:

— Ինձ մոտ կանչեցեք այն կրտսեր հրամանատարներին, որոնք եկել են նոր համալրումների հետ միասին: Զրույց եմ անցկացնելու:

***

Գարուն է: Որքա՛ն ուրախություն է բերում նա, նոր կյանքի այդ ավետաբերը: Բացվել են ծառերի բողբոջները: Դաշտերը ծածկվել են կանաչ ծիլերով: Ծառերը խայտաբղետ սավանով ծածկել են գետափը: Ամեն ինչ մեռելային լռության էր մատնված լուսնի լույսի տակ: Որքա՛ն չքնաղ ես դու, Ուկրաինայի գիշեր: Երգում են քո դաշտերը գարնան: Հիանալի է քո աստղազարդ երկինքը: Բայց ոչ ուրախ աղջկա երգն է խանգարում քո անդորրությունը և ոչ էլ երիտասարդի բարձր ծիծաղը: Ո՛չ: Հրթիռներն են ճեղքում քո ջինջ օդը: Արկերն են դղրդոցով հոշոտում քո մարմինը: Քո հզոր կրծքի վրա թաքնվել են աշխարհի հետախույզները:

Ռազմադաշտի վրա բացվեց բոսորագույն լուսածագը: Արևի առաջին ճառագայթների հետ միասին մի հեռու տեղ, անտառի եզրում, պայթեց մի արկ, որին հետևեց երկրորդը, ապա երրորդը: Գնալով մոտենում է մոտորների հռնդյունը: Հինգ ֆաշիստական տանկ բարձրացան բլրի վրա:

— Կանգնեցնել,— դաշտային հեռախոսի լսափողի միջով բղավում է Դարբինյանը, և քաղցկեղի տեղակալ Ֆեոդոսովը բացում է ականանետային կրակ: Լսվում է կրակոց: Առաջին տանկը կանգ առավ: Մյուսները ետ դարձան:

— Այդպես, հիանալի՛ է: Իսկ այժմ հաղորդեցեք՝ սկսե՛լ գրոհը: Հանուն Ուկրաինայի դաշտերի, հանուն Հայաստանի արևի, հանուն ցորենի ոսկե հասկերի և սաթի նման դեղին խաղողի, հանուն անծայրածիր հայրենիքի և հայր Ստալինի—առա՛ջ, դեպի Արևմուտք:

Տասն մեկ ամսից ավելի է, ինչ կռվում է այժմ արդեն փոխգնդապետ Դարբինյանը: Նրա կուրծքը զարդարել են երեք շքանշաններ: Խիզախորեն է քայլում նա ռազմադաշտում: Հերոս ռազմիկը քայլում է դյուցազնի նման: Դեպի իր հայրենի երկիրը, դեպի իր սիրելի Հայաստանը տանող նրա ճանապարհն անցնում է Արևմուտքի ճանապարհով:





ԱՌԱՋԱՎՈՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Զինվորական շրջաններում շատերն են ճանաչում հայ ժողովրդի արժանավոր զավակ Մաթևոս Մաղաթյանին՝ հայրենական պատերազմի հենց առաջին օրերին նրա կատարած հերոսական գործերի համար:

Այդ նա էր, որ մի քանի տեղից վիրավորված՝ հաջող մարտ է մղել թվով գերազանց հակառակորդի դեմ: Այդ նա էր, որ իր մարտիկներով, հակառակ ֆաշիստների կատաղի գրոհների, թշնամու ավազակային հորդաներից հետ վերցրեց Պերեմիշլը և պահեց երկար ժամանակ: Հայտնի են նաև Մաղաթյանի սխրագործությունները Սամբորի համար մղված մարտերում, որտեղ նրա մարտիկները, և անձամբ Մաղաթյանը ջախջախիչ հարված հասցրին հիտլերյան հորդաներին:

Ֆաշիստական գումարտակներից մի քանիսը երբեք չեն մոռանա N բարձունքը: Այդ բարձունքի համար մղված մարտում թշնամին տվեց 300 սպանված, մոտ հազար վիրավոր զինվոր, մարտի դաշտում թողնելով թնդանոթներ, մի քանի ականանետ ու գնդացիր:

Թշնամուն այդ կորուստը պատճառեց Մայոր Մաղաթյանը՝ գնդացրորդներ Լեշինի, Գրիշկայի, Սլեպցովի, պարտբյուրոյի քարտուղար Վասիլենկոյի և ուրիշ 2—3 մարտիկների հետ:

Նրանք ամրացան բարձունքի վրա և պահեցին ավելի քան 60 ժամ: Բլուրը սևացել էր հակառակորդի ականների և արկերի պայթյուններից:

Անամպ երկնակամարում թռչում էին ականանետային արկի բեկորները: Սակայն ավելի ու ավելի ուժեղ էին հարվածում Մաղաթյանի գնդացիրները, որոնց պաշտպանում էին հրետանին ու ականանետները: Ահա երևաց թշնամու 6 մեքենա՝ հետևակով: Ֆաշիստները մեքենաների ընթացքի ժամանակ ցած էին թռչում և ոռնոցով գրոհի վազում: Անցավ երկու, թերևս երեք րոպե և գրոհողներից ոչ մեկը կենդանի չմնաց:

Երևաց մոտորացված հետևակի մի ուրիշ մեծ խումբ: Տեղատարափ կրակի միջով մոտենում էին հակառակորդի ավտոմատավորները: Գնդակներն ավելի ու ավելի սաստիկ էին թափվում բլուրի վրա: Վայրկյանն անգամ ճակատագրական էր: Ոչ մի ակնթարթ չէր կարելի հապաղել: Սովետական մարտիկները բարձր գնահատելով իրենց պարտքը հարազատ հայրենիքի հանդեպ՝ կռվում էին առյուծաբար: Մայորը ոգևորում է իր քաջարի մարտիկներին և նախազգուշացնում—Ռուսաստանը մեծ է, բայց նահանջելու տեղ չկա:

Գնդացրի մոտ հերոսական մահով ընկավ պարտբյուրոյի քարտուղար ընկ. Վասիլենկոն: Տաք արյունը ծորում մայորի մարմնի վրայով, բայց նա երկար ժամանակ գնդացիրը բաց չէր թողնում, նույնիսկ վերքը կապելու համար:

Իսկ ֆաշիստներն ավելի ու ավելի մեծ քանակությամբ էին երևում բնագծի մոտ: Նրանք հակատանկային թնդանոթ բերին: Մայոր Մաղաթյանը վճռեց դրությունը՝ արձակեց երկու համազարկ և թնդանոթի անձնակազմը ոչնչացավ: Հիտլերականները չէին խնայում ո՛չ մարդկանց, ո՛չ զենքը: Նրանք փորձում էին մյուս երեք հակատանկային թնդանոթներով ամրակոծել Մաղաթյանի կրակային կետերը, սակայն այդ թնդանոթներն էլ արժանացան առաջինների բախտին:

N բարձունքը հերոսաբար պաշտպանվում էր՝ փակելով ֆաշիստական երկու գնդերի ճանապարհը: Այդ մարտում ընկած ընկերների արյունն ուժեղացնում էր մեր գնդացրորդների զայրույթը, սաստկացնում կրակի տարափը: Երիտասարդ կապավոր Լեշինը հետ չէր մնում իր զորամասի հրամանատարից: Մաղաթյանի նման Լեշինն էլ սովորեց շարքից հանել թշնամու

թնդանոթները, հարվածելով նշանառության հարմարանքներին։ Լևչինը կրակի միջից դուրս բերեց 7 գնդացիր։

Նա փրկեց շատ վիրավորների կյանքը։

Եվ երբ Լևչինն ասում է՝ ես սիրում եմ մայոր Մաղաթյանին որպես հարազատ հոր, նրա հետևից հպարտությամբ կգնամ դեպի ամենավտանգավոր մարտ,—մենք հավատում ենք հերոս մարտիկին։

Այո՛, հրամանատար Մաղաթյանին ջերմորեն սիրում են մարտիկները, սիրում են հերոսության և անվեհերության համար, իսկական քաջության և թշնամուն հաղթելու վարպետության համար։ Երկիրը խիզախ մայորին մեծարեց և այդ սխրագործության համար նրա կուրծքը զարդարեց Կարմիր Դրոշի շքանշանով։

***

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության կողմից մայոր Մաթևոս Մաղաթյանին Կարմիր Դրոշի շքանշանով պարգևատրվելու լուրն արագությամբ տարածվեց Արթիկի շրջանի Սառնաղբյուր գյուղում՝ մեծ ուրախություն պատճառելով բոլորին և լցնելով նրանց սրտերը հպարտության զգացմունքով, իրենց համագյուղացուն տրված մեծ պարգևի համար։

... Մաղաթյանը տասը տարեկան էր, երբ հորը սպանեցին դաշնակները։ Մայրն օրն ի բուն աշխատելով հազիվ էր կարողանում մի կտոր չոր հաց վաստակել։

Երբ Հայկական Լեռնաշխարհում ճառագեց ազատության արևը, Մաթևոսի մայրը բռնելով որդու թևից՝ տարավ դպրոց։

— Չե՛մ ուզում տղաս տգետ մնա, ասաց նա,— թո՛ղ սովորի, լավ մարդ դառնա, որպեսզի կյանքում խեղճ չմնա։

Մաթևոսը չորս տարի սովորեց Սառնաղբյուրում։ Այնուհետև նա ընդունվեց Թբիլիսիի Անդրկովկասյան հեռակային դպրոցը։ Նա սիրով և ոգևորությամբ էր ուսումնասիրում ռազմական առարկաները և երբ ավարտեց ուսման դասընթացը, ստացավ դասակի հրամանատարի կոչում։ Նա սիրում էր Կարմիր Բանակի կյանքը և պատվով էր կատարում կարմիր հրամանատարի պարտականությունները։

Քաջարի Մաղաթյանն իր դասակի հետ մասնակցեց Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների ազատագրման գործին։ Հենց այստեղ էլ ստացավ կապի-

տանի կոչում։ Սակայն Մաղաթյանն իր փառքը վաստակեց Հայրենական պատերազմի բոցերի մեջ։ Կայուն լենինյանը և հմուտ հրամանատարն աճեց և ստացավ մայորի կոչում, երկրորդ անգամ պարգևատրվեց շքանշանով։

Եվ ահա սառնաղբյուրցիներն ինչպես կարող են չհպարտանալ, չէ՞ որ նրանք պանծալի Կարմիր Բանակի շարքերում ունեն հռչակված ու փառաբանված մայոր։





ՄԱՅՈՐ ՄԱՄԲՐԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երեկո է, ջինջ երկնքում վառվում են աստղերը: Երկնակամարում հանդարտ սահում է լուսինը և իր նուրբ դեմքով նայում Այգեստանի խնկադույն խաղողի այգիներին: Ուշ երեկո է թեև, բայց կոլխոզնիկները դեռ աշխատում են: Ամեն օր լուսաբացից մինչև ուշ երեկո նրանք հավաքում են առատ խաղողն ու դեղձը: Բայց ահա այսօր աշխատանքից հետո «Կարմիր աստղ» կոլխոզի աշխատավորները հավաքվել են ժողովի: Նրանք բոլորն էլ արտակարգ խանդավառության մեջ են: Լուսնի շողերի միջից երևում են նրանց արևավառ դեմքերը: Ընդհանուր հրճվանքի և այդ օրվա ժողովի պատճառն այն է, որ իրենց համագյուղացի Մամբրե Գևորգյանը, գերմանական ֆաշիզմի դեմ մղվող հայրենական մեծ պատերազմում իր ցուցաբերած աչքի ընկնող խիզախության և արիության համար, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով պարգևատրվել է Կարմիր Դրոշի շքանշանով: Կոլխոզնիկները շնորհավորում են քաջարի մայորի բարեկամներին և յուրայիններին՝ նրան տրված բարձր պարգևի համար:

Մայոր Մամբրե Գևորգյանը ծնվել է Ղամարլուի շրջանի Այգեստան գյուղում, 1901 թվականին, փականագործի ընտանիքում: Մամբրեն 10 տարեկան էր, երբ զրկվեց հորից: Որբացած պատանին իր ընտանիքին օգնելու համար սկսեց բատրակություն անել: Աշխատում էր օրն ի բուն: Սակայն երկար չտևեցին այդ սև օրերը: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ազատագրեց Հայաստանը: Բատրակ Մամբրեն մտավ լենինյան-ստալինյան կոմերիտմիության շարքերը: Հետագայում նա ընդունվեց Երևանի Կարմիր Հրամանատարական դպրոցը, որտեղ և անցավ բոլշևիկյան պարտիայի շարքերը: Իր կյանքը կապելով Կարմիր Բանակի հետ՝ հայրենասեր Գևորգյանն իր ողջ կյանքում բարեխիղճ կերպով ուսումնասիրել է ռազմական գործը և սովորեցրել մարտիկներին:

Գևորգյանը մասնակցել է սպիտակ-ֆինների դեմ մղվող կռիվներին: Այդ կռիվներում ցուցաբերած ռազմական հմտության համար ստացել է մայորի կոչում:

***

Այդ օրը «Կարմիր աստղ» կոլխոզի աշխատավորները ջերմ շնորհավորանքների հետ միասին այսպիսի սրտաբուխ նամակ գրեցին իրենց քաջարի համագյուղացուն.

«... Թանկագի՛ն Մամբրե, սրտագին շնորհավորում ենք քեզ բարձր պարգևի համար: Դու քո անունը հավերժացրիր հայրենիքի համար ցուցաբերած անձնվիրության փառքով: Այդ բանով մենք էլ ենք հպարտանում և ցանկանում ենք քեզ առողջություն, նոր ուժ ու կորով՝ մեր երկիրը ներխուժած ստոր թշնամուն ջախջախելու համար: Հավատացած ենք, որ հաղթանակը մերը կլինի, որովհետև հայրենական մեծ պատերազմը վարում է ժողովուրդների սիրելի առաջնորդ մեր մեծ Ստալինը»:

ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ՏԱՆԿԻՍՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 24-րդ տարեդարձի նախօրյակին՝ նոյեմբերի 5-ին՝ հրապարակվեց Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագիրը, որով ի թիվս այլոց, ավագ լեյտենանտ Մամիկոն Հովհաննիսյանը գերմանական ֆաշիզմի դեմ մղվող պայքարում հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելի կերպով կատարելու համար՝ պարգևատրվել է Կարմիր Աստղի շքանշանով:

Այդ օրը մարտից նոր վերադարձած հրամանատարը, իջնելով տանկից, ժամանակ գտավ նամակ գրելու եղբորը—Լենինական:

«Հարգելի եղբայր,— գրում էր նա,— ես կենդանի եմ և առողջ, իմ մասին չանհանգստանաք: Կառավարության այսօրվա Հրամանագրով ես պարգևատրվել եմ Կարմիր Աստղի շքանշանով: Բայց հարգելի եղբայր, սա դեռ սկիզբն է միայն: Առաջիկայում ես իմ տանկով ավելի ուժեղ թափով կոչնչացնեմ ֆաշիստական գազաններին, որպեսզի նրանք այլևս չհանդգնեն ապականել իմ փառապանծ հայրենիքի սրբազան հողը:

Ցանկանում եմ քեզ հաջողություն թիկունքում: Աշխատեցեք է՛լ ավելի լավ, սովորեցեք ռազմական գործը, ավելի լավ կազմակերպեցեք Կարմիր Բանակի մատակարարման և համալրման գործը»:

***

Մամիկոնը ծնվել է 1914 թվականին, Ղարսի շրջանում, աշխատավոր գյուղացու ընտանիքում: 1929 թվականին նա մտնում է Տեքստիլի ֆաբրգործուսում սովորելու: 1932 թվականին Հովհաննիսյանն ընդունվում է Թբիլիսիի ռազմական դպրոցը, իսկ երկու տարուց հետո փոխադրվում Մոսկվա՝ տանկային դպրոցում սովորելու:

Իր լավագույն ծառայության և հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար 1939 թվին Մամիկոնն ընդունվում է ՀամԿ(բ)Պ շարքերը:

Մամիկոն Հովհաննիսյանը հենց նույն թվին իր տանկով և իր զորամասով ակտիվորեն մասնակցեց սպիտակ-ֆինների դեմ մղվող կռվին և հաղթանակով դուրս եկավ:

Այս տարի, երբ գերմանական հրոսակախմբերը ներխուժեցին մեր սրբազան հողը, Մամիկոնը դարձյալ իր տանկով և իր զորամասով առաջինը դուրս եկավ գերմանական զավթիչների դեմ:

Հայրենական պատերազմի ճակատից գրած նրա նամակները լի են թշնամուն ջախջախելու վճռականությամբ. «Ես շատ լավ եմ, մայրիկ ջան,— գրում է նա ճակատից:— Երեկ և այսօր ես մենակ ոչնչացրել եմ ֆաշիստական 3 հրանոթ և 2 ինքնաթիռ: Դու հասկանո՞ւմ ես մայրիկ, որ դա մեծ բան է ինձ համար և երջանկություն քեզ և մեր երկրի ժողովուրդների համար: Իմ մասին մի մտածիր: Ես դեռ պետք է կռվեմ, ինձ մեծ բախտ է վիճակված—մասնակցել ֆաշիզմի բնաջնջման գործին: Քո որդին քո երեսը միշտ պարզ կանի: Համբուրում եմ քեզ, իմ անուշ մայրիկ»:

ՄՈՐ ԱՐՑՈՒՆՔՆԵՐԸ

— Խաղողը հասե՞լ է,— այնպիսի հրճվանքով հարցրեց Սուրենը, որ կարելի էր կարծել, թե նա հարցնում է իր սիրուհու մասին, որին վաղուց է չի տեսել:

Ընկերներն ակամա ծիծաղեցին, թեև Սուրենից պակաս հուզված չէին:

Նրանցից ամեն մեկն ուզում էր որքան կարելի է ավելի շատ բան լսել գյուղակցից, բայց ոչ ոք նրան այնքան հարցեր չէր տալիս, ինչքան Սուրենը: Սուրենը կարճահասակ, նիհար երիտասարդ էր, երևանցի, գանգուր արծաթագույն մազերով, բրոնզե հարաժպիտ դեմքով: Ընկերները նրան անվանում էին Բլոճ, բայց նա չէր վիրավորվում:

— Խաղողը դեռ չի հասել, Բլոճ,— պատասխանեց Բագրատը Սուրենին և սիրելի եղբոր պես գրկեց նրա ուսերը,— բայց ասում են, որ այս տարի Հայաստանում առատ բերք կլինի:

Երկամսյա արձակուրդից հետո Բագրատն այդ օրը վերադարձավ իր զորամասը: Երկու ամիս առաջ կատաղի ձեռնամարտում նա ծանր վերք ստացավ: Նա հիշում էր, թե ինչպես նրան, այդ հաղթամարմին մարդուն փոքրիկ Բլոճը դուրս բերեց

կռվի դաշտից և տանելիս աշխատում էր, որ վիրավորը ցավ չզգա:

— Բլոճ,— ասաց ինքն իրեն Բագրատը և նայեց Սուրենի աչքերին,— «Ազի՛զ ջան» մտքում ասում էր Բագրատը, բայց ամաչում էր բարձր ձայնով ասել: Ապա չդիմացավ, գրկեց, համբուրեց նրան ու ասաց.

— Մայրս խնդրել է ինձ համբուրել իր որդուն փրկողին:

Մոր մասին հիշատակելիս Սուրենի աչքերից արցունք հոսեց և այնքան փայլում էին աչքերը, որ կարծես թե սև մարգարիտները օծեցին վարդագույն յուղով:

Գետնափորում մի վայրկյանի չափ տիրեց դաժան լռություն... Հեռվում որոտում էին թնդանոթները, պայթում էին արկերը: Երևանցի երիտասարդները լուռ նայում էին հեռու մի տեղ: Նրանց մտքերը սլացան դեպի հեռավոր Հայաստանը:

«Երևի դեղձն արդեն հասել է...»

«Երևի արդեն հացը հավաքե՛լ են դաշտերից...», մտածում էին նրանք:

«Երևի ամեն երեկո սաստիկ տոթից հետո Արարատից փչում է Երևանի զով քամին, և քաղաքի խիտ ծառուղիները սոսափելով՝ սիրո հեքիաթներ են պատմում»:

«Երևի...», բայց ով գիտե, ինչքա՛ն սքանչելի պատկերներ կայծակի նման շողալով անցան այդ մռայլ գետնափորից:

— Ի՞նչ ես բերել, Բագրատ,— հարցրեց ընկերներից մեկը՝ մատով ցույց տալով պայուսակը:

— Երևանի ջուր,— ժպտալով պատասխանեց Բագրատը: Նկատելով, որ ընկերները կասկածանքով են նայում իրեն և չեն հավատում, նա արագ բաց արեց պայուսակը, դուրս հանեց ընկերների համար բերած ծանրոցները, բայց ներկա եղողները շարունակում էին նայել պայուսակին... Բագրատը պայուսակից հանեց ջրով լի սպիտակ շիշը:

Երևանի ջուրը շշի մեջ փայլում էր մայրական ջինջ արցունքի պես:

Զգացված տղաները երախտապարտ աչքերով նայում էին Բագրատին: Նրանցից մեկը ձեռքով շոշափեց շիշը և միամտորեն ասաց.— Խաբում ես, Բագրա՛տ, ջուրը տաք է:

— Երդվում եմ, Երևանի ջուր է, ձեզ համար եմ բերե՛լ,— ուրախ-ուրախ պատասխանեց Բագրատը:

Մի փոքր բաժակ լցրին անգական ջրով: Ուրախ Բլոճը

բռնել էր շիշը, ջուրը լցնում բաժակի մեջ և ամեն մի ընկերոջ համար այնպիսի զգուշությամբ էր չափում, որ կարծես վախենում էր թափել կյանքի բալասանը:

Երիտասարդներն ագահաբար խմում էին Երևանի ջուրը՝ առանց մի կաթիլ անգամ թողնելու բաժակում, իսկ Բլոճը թուքն էր կուլ տալիս, այդ հաճելի րոպեն հետաձգելով վերջը: Հերթը շուտով նրան կհասնի, և նա աշխատում էր ինչքան կարելի է շատ ջուր թողնել շշի մեջ:

— Քեզ ջուր չենք տա խմելու, Բագրա՛տ,— ասաց Սուրենը:

— Իմ բաժինը քեզ լինի,— պատասխանեց Բագրատը:

— Լսո՞ւմ եք,— դիմում է Սուրենը ընկերներին,— ուրեմն ես խմելու եմ լիք բաժակ:

Սուրենը վերցրեց բաժակը, խորամանկորեն ժպտաց և նայելով շշին՝ տեսավ, որ նրա մեջ մի բաժակից ավելի ջուր է մնացել:

Ընկերներն ագահաբար նայում էին նրան, բայց ոչ ոք չէր նախանձում, որովհետև բոլորն էլ սիրում էին փոքրիկ Բլոճին:

Սուրենը բաժակը սրբեց և այնպես էր պատրաստվում խմելու, որ կարծես տնազ էր անում ընկերներին:

Նա շիշը բարձրացրեց, որ ջուր լցնի, մեկ էլ հանկարծ վազելով գետնափոր մտավ ջոկի հրամանատարը և բարձր ձայնով ասաց.

— Պատրաստվե՛լ մարտի, իմ եռնե՛ց:

Սուրենն իսկույն ջրի շիշը դրեց իր անկողնի մոտ և դուրս թռավ:

Պայթյունների կրակի ու ծխի միջով մարտի էին գնում հերոսները, գնում էին կռվելու հարձակման անցած գերմանացիների դեմ:

Կեսօրվա մոտ կռիվը թեժացավ: Գերմանացիների տանկային դիվիզիան աշխատում էր ճեղքել մեր պաշտպանության գիծը: Երկինքն ու երկիրը շիկացել էին կրակից: Մինչև իրենց արյան վերջին կաթիլը մարտիկները հերոսաբար պաշտպանում էին հայրենի հողի ամեն մի թիզը:

Սովետական ծանր տանկերը ճակատ առ ճակատ հարվածում էին գերմանական դիվիզիային և սկսվեց շարժիչ զրահապատ ամրոցների խելացնոր գոտեմարտը: Սովետական երկաթե հսկաներն առաջ էին շարժվում և անողոքաբար տրորում հակառակորդի երկաթե շարասյուները:

Գերմանական տանկերը շուռ եկան և գնացին դեպի ձախ թև: Գյուղը պաշտպանում էր այն հետևակային գումարտակը, որի շարքերում գտնվում էր Սուրենը: Նա թշնամուն հարվածում էր դարանից:

Գոռոցով ու դղրդոցով մոտենում էին գերմանական տանկերը: Ավտոմատով կրակելն արդեն անօգուտ էր:

Սուրենը շոշափեց գոտին, վրայից հանեց հակատանկային նռնակը և սողաց դեպի զրահապատ հրեշը:

Սողում էր առանց հուզվելու, մահվան մասին չէր մտածում... Հիշեց Բագրատին և ուրախացավ, որ նա այսօր եկավ... Հիշեց մորը... Երևանի ջուրը, որ առանց խմելու մնաց գետնափորում: Հավանաբար նա դեռ շատ բան կհիշեր, բայց արդեն ժամանակ չկար, տանկը մոտենում էր...

* * *

Կյանքի ու մահվան կռիվը տևեց մինչև երեկո: Գերմանացիների հարձակումը ետ մղվեց: Դաշտում մնացին տասնյակ պայթած տանկեր և մի քանի հազար սպանված և վիրավոր գերմանական զինվոր ու սպա:

Արևը մայր մտավ:

Տիրում էր մեռելային լռություն:

Բագրատը փնտրում էր Սուրենին:

Այնտեղ, ուր վերջանում էր քարուքանդ արված, ծխացող գյուղը, գյուղական ճանապարհի մոտ ընկած էր ջարդված և շուռ եկած գերմանական մի տանկ: Նրա կողքին երեսնիվայր պառկած էր սև ագաթագույն մազերով փոքրիկ մի մարդ, որի մի թևը կտրված էր:

Խելացնորի նման Բագրատը վազեց Սուրենի մոտ և շուռ տվեց նրան:

Բլոճի դեմքի վրա սառել էր առաջվա ժպիտը,— ուրեմն մեռնելուց առաջ նա գոհ և ուրախ է եղել:

— Սուրե՛ն, սիրելի՛ եղբայր,— պոռթկաց Բագրատի սրտից և նա բուռն կերպով իր մարմնին սեղմեց մեռած ընկերոջը:

Երեկոյան գետնափորում լուռ նստած էին ընկերները: Նրանք վրեժի ծարավից պղտորված աչքերով նայում էին Բլոճի շինելին, որը կախված էր գետնափորի պատից:

Անկողնի մոտ գտնվում էր շիշը, որի մեջ ճրագի աղոտ լույսի տակ փայլում էր Երևանի ջուրը, որ ջինջ ու մաքուր էր, ինչպես մայրական արցունքը:



ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

(Հատված)

Հեռվում երևում է տափաստանային մի գերեզմանաթումբ։

Գերեզմանաթմբի գագաթին մի փոքրիկ թումբ է պատրաստված։ Դրա շուրջը կան սևացած պսակներ, որոնք հյուսված են ուշ աճող աշնանային ծաղիկներից։ Թմբի մեջտեղում կանգնած է փոքրիկ մի սյուն։ Սյանը մեխված տախտակի վրա անհամաչափ տառերով գրված է հետևյալը․

«Այստեղ թաղված են
Տասնըվեց հերոս ռազմիկները,
Հավերժ հիշատակ հերոսներին»։

Տափաստանային գերեզմանաթումբը…

Ըստ ավանդության նրա մոտ հին ժամանակներում օտարերկրացիների դեմ կռվում էր կազակական խիզախ ատաման Մաթվեյ Մոնոցկովը։ Կազակների մի փոքրիկ խմբով նա գերեզմանաթմբի մոտ կռվի բռնվեց թշնամու ջոկատի հետ։ Երկու օր և երկու գիշեր շարունակվեց այդ կռիվը։ Թշնամիների ոսկորները դես ու դեն թռան, նրանք չանցան կազակական հողը։

Ու ինչպես հին ժամանակներում, հնադարյան այդ գերեզմանաթմբի մոտ մեր օրերում տեղի ունեցավ մի ճակատամարտ, որը դարերով կհիշվի։

Այստեղից կանցնի սպիտակամորուք կազակը, կկանգնեցնի ձին, կհանի գլխարկը և խոր գլուխ կտա։ Եթե տափաստանով անցնի սևաչյա, երիտասարդ կազակուհին, նա ևս կանգ կառնի, թաշկինակը կմոտեցնի աչքերին, կսրբի արցունքները և իր կուսական սրտում կտանի մի խոր տխրություն։ Պատանին մոտենալով գերեզմանաթմբին, ծունկ կչոքի, կհամբուրի խոնավ հողը, կամացուկ, գրեթե չշնչելով աղոթքի խոսքեր կասի։ Իսկ երբ անցնի երիտասարդ մի կազակ, էլ ավելի ամուր կսեղմվեն նրա բռունցքները, ու նա կերդվի լինել այնպես, ինչպես այն մարդիկ, որոնք կռվեցին ատամանի գերեզմանաթմբի մոտ։

Կազակական ստանիցաներում, փոքրիկ գյուղերում բերանից-բերան է անցնում այն երիտասարդ հերոսների սխրագործության պատմությունը, որոնք թաղված են Դոնի տափաստանում…

***

Հանկարծ մարտկոցով մեկ տարածվեց հետևյալ գոչը․

— Գերմանական տան-կե-ե՛-ր…

Սերգեյ Օգանովը վերցրեց հեռադիտակը։ Այո, ճիշտ է, գերմանական տանկերը գալիս էին դեպի գերեզմանաթումբը։ Պուզիրյովն սկսեց հաշվել․

— Երեք, վեց… տասներկու… տասնութը…

Արդեն պարզ երևում էին պողպատե հրեշները՝ զրահի վրա սև խաչերով։ Նրանք սողում էին տափաստանով և քամին հեռվից բերում էր խուլ, չարագուշակ դղրդոցը։

Մարտկոցի անձնակազմը լարեց իր ուշադրությունը։ Բոլորն սպասում էին հրամանատարի որոշման։ Օգանովը հանգիստ էր, ինչպես միշտ։ Բայց այդ րոպեին նույնիսկ նրա այտերի վրա կարմրություն երևաց։ Մտքերը սլանում էին կայծակի նման։

— Ֆաշիստական հիսուն տանկ գալիս են մեր վրա,— ասաց Օգանովը։— Մենք ունենք մի բուռն մարտիկներ։

Կկարողանանք արդյոք դիմադրել այդ հսկա ուժին,— այս միտքն անհանգստացնում էր Օգանովին։ Այդ մասին էին մտածում նաև մարտկոցի բոլոր մարտիկները։

— Ինչպես պիտի վարվենք,— մի փոքր կերկերվող ձայնով հարցրեց Պուզիրյովը։

Օգանովը վերհիշեց Սասունցի Դավթի ավանդությունը, թե

Նա ինչպես էր կանգնած կողքադինի զորքերի առաջ: Թշնամիները նրան ասում էին:

«Դու մեկ՝ մենք հազար,
Ինչպես կարնաս դու մեզի հետ»...

Բայց Դավիթը—հայ ժողովրդի առասպելական հերոսը—վերցրեց նիզակը, նետվեց կռվի և կոտորեց թշնամու ամբողջ զորքը, որը ձգտում էր տիրանալ նրա հայրենի հողին, ստրկության շղթային մատնել նրա ժողովրդին:

Լեյտենանտը վերհիշեց այդ և նրա աչքերը փայլեցին հաստատուն վճռականությամբ:

— Էհ, ինչ կա որ, կկռվենք մինչև վերջ, մենք մենակ չենք, ընկերներ, մեզ հետ է մեր ամբողջ երկիրը, մեր սրտերում է մեր Ստալինը: Մենք կդիմանանք, մենք կհաղթենք:

Նա հրաման տվեց բոլոր արկերը մոտեցնել մարտկոցին... Պատրաստվել... Տանկերը կհարվածենք ուղղակի նշանառությամբ:

Հրամանատարի հանգստությունը և աներեր վստահությունը հաղորդվում էին բոլոր մարտիկներին: Մարտկոցը պատրաստվում էր ահարկու մենամարտի:

Օգանովը նայեց ժամացույցին: Քամին բերում էր մեքենաների հարաճուն շառաչը: Հրամանատարն իր հայացքը ժամացույցից փոխադրեց մարտիկների վրա: Արդյոք նրանցից յուրաքանչյուրը պատրաստվել է մեռնել այդ մենամարտում, բայց չնահանջել: Արդյոք որևէ մեկը չի վհատվել վտանգի հանդեպ: Բայց որքան էլ նա խորազնին էր նայում մարտիկների դեմքերին, վեհերոտության նշույլ անգամ չնկատեց:

Այդ արդեն առաջին փորձությունը չէր: Քանի-քանի գոտեմարտ էր մղել Օգանովը: Նրա մարտկոցի խիզախ ռազմիկները քանի-քանի հարյուրակ գերմանացիներ էին ուղարկել գրողի ծոցը: Եվ զորամասի հրամանատարությունը միշտ էլ կոմերիտականներին էր վստահում պատասխանատու և վճռական ընագծերի պաշտպանությունը:

Այս անգամ ևս նրանք պետք է փակեին դեպի Ռոստով արշավող գերմանական տանկերի ճանապարհը:

Տանկերը մոտենում էին՝ քաոսային դղրդյունով ցնցելով օդը:

Օգանովը կանգնած էր դիտակետում: Նա իր կողմնացույցի մոնոկուլյարն ուղղել էր դնդակոծման տեղամասի կենտրոնին: Առաջին խաղը (բաժանումը), որի վրա կանգ էր առել մաղնիսի սլաքը, նա հաղորդեց գծին: Եվ երբ տանկերն արդեն հեռու չէին, օդում զրնգաց Օգանովի ձայնը.

— Կրա՛կ:

Ճայթեց առաջին համազարկը...

Մի արկ ընկավ տանկի թրթուրի տակ: Տանկը ցնցվեց, տեղում պտույտ եկավ, կարծես խայթված լիներ: Թնդաց էլի մի համազարկ: Տեղն ու տեղն անշարժացավ երկրորդ տանկը: Ծխի սև քուլաները պատեցին այն, ապա երևացին կրակե լեզուներ:

Գերմանական տանկերն ուժեղ կրակ բացին դիրքերի վրա: Տափաստանը թնդում էր կատաղի դղրդյունից: Մոտորների դղրդոցը, թրթուրների շաչյունը, հրետանային համազարկերը—այս բոլորը խառնվել էր իրար: Դղրդալով պայթում էին արկերը, վեր թռցնելով հողե սյուներ: Թվում էր, թե ամբողջ տափաստանը բոցերի մեջ է:

Տանկերն արդեն մոտեցել էին դիրքերին, բայց հրետանավորներից ոչ ոք չհեռացավ իր տեղից: Արկեր մատուցողները հազիվ էին կարողանում վազելով մոտենալ հրանոթներին: Լավ էին աշխատում հրանոթ լցնողները, ճարպկորեն էին գործում նշանառուները: Ստեպ-ստեպ լսվում էին հաշվարկների հրամանատարների ձայները.

— Աջակողմյան տանկին:

— Նշանառության կետը տեղափոխել կես տանկի չափ:

— Նշանոցը երեսուն...

— Կրա՛կ:

Ու մի փոքր անց նորից լսվում էր հրամանը:

— Երրորդ տանկին:

— Հետ 2:

— Կրա՛կ:

Մարտիկների գլխավերևում սուր ոռնոցով թռչում էին արկերը: Թվում էր, թե մարտում տաքացած մարդիկ չէին նկատում մահացու վտանգը, որն ամեն վայրկյան սպառնում էր նրանց: Վելիևի թնդանոթի մոտ մի արկ պայթեց: Մետաղյա բեկորները կարկտի նման թափվեցին հրանոթի փողի և պատյանի վրա:

Հրանոթի անձնակազմը պառկեց գետնին։ Վելիևը բնազդաբար կռացավ, իջեցնելով գլուխը։

— Հը՛, ո՞նց է,— հարցրեց նա մի քանի վայրկյանից հետո։

— Ամեն ինչ կարգին է,— գոչեց Շահվալիևը և վազեց դեպի արկերով լի արկղները։

Երկու մեքենա, որոնք շուրջանց էին կատարում, ըստ երևույթին մտադիր էին անցնել մեր թիկունքը։

— Երկրորդ հրանոթը դուրս բերել հյուսիս-արևմտյան լանջը,— հրաման տվեց Օգանովը։— Կրա՛կ։

Թնդաց առաջին համազարկը, ապա երկրորդը, երրորդը։ Երկու տանկերը կանգ առան,— նրանք խփված էին։

Ղուլյանը հրճվում էր ուրախությունից։ Նա պատրաստ էր յուրաքանչյուր այդպիսի կրակոցի համար համբուրել Վելիևին։

— Հապա, մեկ էլ, մեկ էլ խփիր նրանց ատամներին,— գոռում էր նա։

Բայց առաջացավ մի նոր վտանգ. գերմանական մի քանի ծանր տանկեր որոշեցին կրկնել երկու մեքենաների մանյովրը և նույնպես սկսեցին շուրջանց կատարել։

Այն թնդանոթի մոտ, ուր կանգնած էր Վելիևը, մի արկ պայթեց։ Ղուլյանը տեսավ, թե ինչպես Վելիևն օրորվեց և ընկավ գետին, անձոռնի կերպով տարածելով ձեռները. «Միթե սպանվել է»,— մտածեց Ղուլյանը։ Նա նետվեց դեպի այն տեղը, ուր ընկել էր Վելիևը։ Վերջինս պառկած էր գլուխը դեպի հետ գցած։ Նա կողքից վիրավորվել էր բեկորով։ Ամբողջովին արյունոտվել էր։ Մովսեսն սկսեց կապել Վելիևի վերքը։ Մոտեցավ Օգանովը։

— Վերքը ծա՞նր է,— արագ հարցրեց նա։

— Կարծես թե։

Վելիևը պառկած էր ատամներն իրար սեղմած։ Վերքը կապելուց հետո նա բացեց աչքերը։

— Հը, ցավդ թեթևացա՞վ,—հարցրեց Օգանովը, կռանալով դեպի վիրավորը։

Վելիևը շարժեց գունատ, արյունոտված շրթունքները։ Նրա աչքերում Օգանովը տանջանք տեսավ։ Նկատելով լեյտենանտին, Վելիևը դանդաղ ասաց.

— Ընկեր հրամանատար, բանն անհաջող անցավ... Վատ...

— Ինչն է անհաջող։ Դու խփում էիր ինչպես սնայպեր,

Վելիև։ Հերոսաբար էիր խփո՜ւմ։ Կեցցե՛ս։ Տանկերը վառվում են,— հանգստացնում էր նրան Օգանովը։

— Հետախուզությունն անհաջող անցավ...

— Ոչինչ, սիրելիս։ Հանգիստ պառկիր։ Ամեն ինչ լավ կլինի,— պատասխանեց Օգանովը։

Փականքի մոտ զբաղված էր Շահվալիևը։

— Վելիևին տանել գետնատուն,— հրամայեց Օգանովը։

Շահվալիևն ընկերոջը խնամքով առնելով իր մեջքին, տարավ բլինդաժ։ Մովսեսը մնաց հրանոթի մոտ։ Օգանովը նրան հրամայեց փոխարինել Վելիևին։ Նշանառու Ֆյոդոր Աբրամենկոն ու ձիավար Վելիխան Վելիխանովն արկեր էին մատուցում։

— Դեռ շա՞տ արկեր են մնացել, հարցրեց Մովսես Ղուլյանը։

— Յոթ արկղ,— պատասխանեց Աբրամենկոն։

Ղուլյանն ամբողջովին լսողություն դարձավ։ Նա բազեի նման հետևում էր իր ոսոխ—թշնամու մեքենաներին։ Գերմանացիներն ըստ երևույթին կատաղեցին. հինգ տանկ շղթա կազմեցին և գերեզմանաթմբի վրա փոթորկալից կրակ բացեցին։ Ղուլյանը պատասխանեց նրանց։

— Հրանոթը տեղափոխել գերեզմանաթմբի ստորոտը—և Օգանովը ձեռքով ցույց տվեց դեպի դաշտը։— Այնտեղից կրակելն ավելի հարմար է...

Երևաց Շահվալիևը։

— Ինչպես է վիրավորը։

— Կենդանի է։ Միայն թե տնքում է...

Մոտեցան Լազարևը և Վավիլովը։ Նրանք թնդանոթն արագությամբ փոխադրեցին ուրիշ տեղ։

Թվում էր, թե մի րոպեից ավելի չի անցել, իսկ Մովսես Ղուլյանը գերեզմանաթմբի ստորոտում, հրանոթի մոտ արդեն սպասում էր գերմանական տանկերին։ Արկերն ընկնում էին գերեզմանաթմբի վրա և նրա կողքին։ Ղուլյանն անձնակազմի մարտիկների հետ միասին հաճախ պառկում էր գետնին, պաշտպանվելով բեկորներից։

Բայց ահա տանկերը տեղից շարժվեցին։ Նրանք այնքան արագ մոտեցան, որ նույնիսկ Օգանովը, որ դիմացկուն էր ու սառնարյուն, անհամբերությամբ գոռաց Մովսեսի վրա.

— Դե՛հ, կրակիր է՛...

Ղուլյանը մեկը մյուսի հետևից մի քանի արկ բաց թողեց։

Եվ ոչ մի անգամ չվրիպեց: Մովսեսն ուղղակի նշանառությամբ ոչնչացրեց ևս երեք տանկ: Մնացած երկու մեքենաները շուռ եկան մի կողմ:

Այս մոմենտին թշնամու մի արկ ընկավ հենց հրանոթի վրա: Հողե սյունից շուրջն ամեն ինչ սևացավ: Իսկ երբ փոշին ցրվեց, Օգանովը տեսավ մի սարսափելի պատկեր. հրանոթը կանգնած էր միայնակ, մարդիկ չէին երևում: Ամբողջ հաշվարկը—Շահվալիևը, Արտամենկոն և Մովսես Ղուլյանը պառկած էին հրանոթի մոտ: Հևիհև մոտ վազեց Տկաչենկոն: Նա նետվեց դեպի Ղուլյանը:

— Մովսես, սիրելիս, բաց արա աչքերդ,— թախանձարում էր նրան Տկաչենկոն: Նա բարձրացրեց ընկերոջ գլուխը, ջրով լի ջրամանը մոտեցրեց նրա բերանին: Ղուլյանն ուշքի եկավ, ճանաչեց հավատարիմ ընկերոջը:

— Տղայիս գրիր...— նրա ձայնը ընդհատվեց: Նա ծանր շնչում էր: Կրծքից խռխռացնում էր:— Արեգին էլ...—Տնքաց Ղուլյանը...— Իսկ գերմանացիների, այդ լիրբերի գլուխը ջարդեցեք:

Գերեզմանաթմբի մոտ երեք ճանապարհներ էին խաչաձևվում, բայց երիտասարդ հրետանավորները չէին թողնում, որ գերմանացիները մոտենան դրանցից որևէ մեկին: Գերեզմանաթումբը տափաստանի ամրոցն էր դարձել: Արդեն առաջին գրոհից հետո թշնամին կորցրել էր վեց տանկ:

Կրտսեր քաղղեկ Սերգեյ Վավիլովը դեռ ուշքի չէր եկել տաք կռվից, երբ արկի մի բեկոր խփեց հրանոթի նշանառու Դենիս Բախիշչևին, Վավիլովը սլացավ դեպի նրա թնդանոթը: Գերեզմանաթմբի ուղղությամբ կրկին շարժվում էին հինգ տանկ: Վավիլովը հիմա ինքն էր ղեկավարում անձնակազմը, որին վիճակվել էր մի խնդիր—ամեն գնով փակել հակառակորդի ճանապարհը:

Առաջին անգամը չէր, որ մարտկոցի երիտասարդ կոմիսար Վավիլովը կռվում էր թշնամու դեմ: Իր վարպետությամբ, դիպուկ կրակ վարելու կարողությամբ նա համարվում էր իր զորամասի լավագույն հրետանավորներից մեկը: Նա մարտկոցի հոգին էր, կարողանում էր իր ետևից տանել երիտասարդությանը, և բոլոր մարտիկները պատրաստ էին ամենուրեք գնալ նրա ետևից:

— Հարութլունյան,— ասաց Վավիլովը, տեսնելով ցածրահասակ լայնաթիկունք մի մարտիկի, որն արկեր էր բերում,— դու երրորդ հրանոթի մոտ ես գնում: Կանչիր Բալեսային:

Վավիլովը գլխարկը հանեց, թաշկինակով սրբեց քրտնած ճակատը և հեռադիտակը դրեց աչքերին: Արագ քայլերի ձայնը լսելով, նա հետ նայեց: Նրա հետևում արդեն կանգնած էր Ֆյոդոր Բալեսան:

Վավիլովի հայացքը սահեց գերեզմանաթմբով մեկ, դարձավ դեպի հեռուն, ուր երևում էին գերմանական տանկերը:

— Դրությունը շատ լուրջ է,— ասաց նա,— Ղուլյանը, Շահվալիևը, Արտամենկոն ընկան. Վելկին մեռնում է, Լազարևը վիրավորված է: Մենք մի բուռն մարտիկներ ենք: Երեկոյից շուտ մենք օժանդակ ուժ չենք ստանա, չէ որ այնտեղ նույնպես մարտեր են մղվում, ուժեղ, լարված մարտեր... Իսկ տանկերը գալիս են ու գալիս մեզ վրա: Նրանք ուզում են թևից անցնել դեպի Ռոստով... Գուցե և մեզ էլ կվիճակվի...

Նա թեև իր խոսքը չվերջացրեց, բայց Բալեսան, հասկանալով ամեն ինչ, արագ շուռ եկավ և գոչեց.

— Կոմերիտականներ, ինձ մոտ...

Բոլորը եկան: Նշանառու Ֆագլի Ախմեդովը թևանցուկ բերում էր վիրավորված Լազարևին:

Վավիլովն ասաց.

— Ընկերներ, մեր շարքերից դուրս եկան Մովսես Ղուլյանը և նրա ընկերները: Ահա պառկած են նրանք:

Բոլորը գլխարկները հանեցին և մի րոպե կանգնեցին անշարժ: Նայելով գերեզմանաթմբի մոտ ընկածներին, որոնք ծածկված էին Ղուլյանի և նրա ընկերների վերարկու-վրաններով:

Այդ ժամանակ Բալեսան ասաց.

— Գուցե,— հուժկու ձայնով սկսեց նա,—մենք էլ ընկնենք մարտում... Բայց մենք այստեղից չենք հեռանա, ընկերներ: Այնպես չէ՞:

— Չենք հեռանա,— արձագանքեց տափաստանում:

— Այո՛, չենք հեռանա,— տաքացած ասաց Բալեսան:— Մենք պաշտպանում ենք Ռոստովի մատույցները: Թշնամին կարող է անցնել միայն մեր դիակների վրայով: Չէ՞, որ մենք կոմերիտականներ ենք... Ձեռները վեր բարձրացնելով, Բալեսան այսպես ավարտեց իր խոսքը.

— Մենք պետք է վրեժ առնենք զոհված ընկերների համար: Դեհ, ուրեմն եկեք խոսք տանք միմյանց...

Ու բոլոր կոմերիտականները սեղմեցին միմյանց ձեռները: Այդ երդում էր: Նրանք ասացին իրար.

— Կմեռնենք, բայց մոտ չենք թողնի թշնամուն:

Շուտով նորից բռնկվեց ահեղ ու դաժան ճակատամարտը: Է՛լ ավելի ուժգին գռռացին մոտորները, թնդացին հրանոթները: Շաչում էր տափաստանը, ասես տնքում էր երկիրը:

Տասնըհինգ տանկ սլանում էին դեպի գերեզմանաթումբը: Իսկ մարտկոցում մարդիկ ավելի և ավելի էին պակասում... Ահա արդեն սպանվեց Վելիխան Վելիխանովը: Ընկնելիս նա ինչ-որ բան ասաց: Բայց պայթյունների աղմկում ոչ ոք չլսեց նրա խոսքերը:

Այդ ժամանակ Իսմայիլ Մամեդովը մենակ էր կրակում երկու թնդանոթներից: Մրրկի նման նա մեկ թնդանոթից մյուսն էր նետվում: Կռվից տաքացած, մրից ու ծխից սևացած, նա կարծես ոչինչ չէր նկատում,— ոչ շաչող արկերը, և ոչ էլ մահը, որը դեպի քաջերն էր սողում:

Բանն այնպես պատահեց, որ Մամեդովը, խփելով մի խումբ մեքենաների, չնկատեց, թե ինչպես գերեզմանաթմբի ուղղությամբ, կողմնակի ճանապարհով գաղտագողի սողում էին երկու տանկ, որոնք ուժեղ կրակ բացեցին: Մի արկ պայթեց Մամեդովից մի քանի քայլ հեռու: Արկի բեկորը կտրեց նրա ձախ ձեռքի դաստակը, սաստիկ վիրավորեց կուրծքը: Մամեդովն ընկավ և կորցրեց գիտակցությունը, բայց շուտով ուշքի եկավ, դժվարությամբ վեր կացավ, մոտեցավ հրանոթին, կռթնեց վահանին:

Հրանոթը չէր կրակում: Գերմանացիները կարծում էին, թե ամբողջ անձնակազմն արդեն կոտորված է: Մամեդովը վերցրեց մի արկ: Մեկ ձեռքով լցրեց թնդանոթը: Բայց ուժն սպառվեց... Նա ընկավ գետին, մատներով ջղաձգաբար կառչելով թնդանոթի անիվներից:

Մի ուրիշ հրանոթի նշանառու—Սուրեն Հարությունյանը նկատեց այդ: Նա էլ մենակ էր մնացել իր թնդանոթի մոտ: Նա կրակեց և վազեց Մամեդովին փրկելու: Վերջինիս սառած դիակը նա խնամքով տարավ մի կողմ, դրեց գետնին, ծածկեց շինելով:

Տանկերը մոտենում էին: Նրանք արդեն գտնվում էին հրա-

նոթից հինգ հարյուր մետր հեռավորության վրա: Հարությունյանն այնպես դիպուկ կրակեց հրանոթից, որ տանկը տեղում պտույտ եկավ և մի քանի վայրկյանից հետո բոցավառվեց: Սարսափած գերմանացիներն սկսեցին դուրս թռչել անցքից:

— Ըհը՛,— զարկեցի այդ անիծվածներին,— ծիծաղեց Հարությունյանը:

Նա կռացավ արկղների վրա, ուր մի հրացան էր դրված: Նշան բռնեց և մի քանի գնդակ արձակեց գերմանացիների վրա: Սպանվեց երեք ֆաշիստ:

Հարությունյանն արագությամբ գնաց դեպի իր հրանոթը. այնտեղ արկղներում քսան հատ արկ կար: Աջ կողմում նա նկատեց մի տանկ, որը զիգզագներ էր կատարում, ըստ երևույթին կարծելով, թե այդպես նրան ավելի հեշտությամբ կհաջողվի հասնել գերեզմանաթմբին: Գերմանական տանկիստները կրակ բացին Հարությունյանի և նրա հրանոթի վրա: Երբ ցրվեց արկից առաջացած փոշին, պարզվեց, որ արկը կտոր-կտոր է արել Հարությունյանին:

Հերոս մարտկոցավորներն ավելի ու ավելի էին պակասում, իսկ տանկերը շարունակ սողում էին դեպի գերեզմանաթումբը:

Օզանովն աշխատում էր թե՛ նշանառուի և թե՛ արկեր մատուցողի փոխարեն, ինքն էր լցնում հրանոթը: Տանկային կատաղի գրոհի 8—9 րոպեում նա խփեց ու այրեց երեք մեքենա: Բայց շուտով մահը տարավ նաև Օզանովին: Նա հերոսաբար էր կռվում և իր կյանքը զոհեց այնպես, ինչպես վայել էր քաջ ռազմիկին: Մինչև վերջին րոպեն ղեկավարում էր մարտկոցը: Իսկ երբ ընկավ, նրա տեղը բռնեց լեյտենանտ Պուզիրյովը:

Մարտկոցը չէր լռում, բայց արդեն այնքան հաճախ չէին ճայթում կրակոցները. գերեզմանաթմբի վրա միայն մի քանի մարդ էր մնացել: Գերմանացիներն ուժեղացնում էին գրոհը: Նրանք կռվի նետեցին էլի մի խումբ տանկեր:

Կրտսեր քաղղեկ Վավիլովը կրակեց արկերի ամբողջ պաշարը, նրա հրանոթի մոտ կուտակված էին միայն դատարկ արկղներ: Շուտով նա էլ սպանվեց:

Գերեզմանաթմբի վրա կանգնած էր փոշու և ծխի սև, խիտ ամպը: Հրաձգությունը դադարեց: Այդ չարագուշակ լռություն էր: Գերմանացիները կարծում էին, թե արդեն ամեն ինչ վերջացած է, թե իրենք այլևս դիմադրության չեն հանդիպի... բայց նրանք սխալվեցին:

Լեյտենանտ Պուզիրյովը նայեց ժամացույցին։ Արդեն շատ ժամանակ էր անցել այն մոմենտից, երբ գերմանացիներն սկսել էին գրոհել գերեզմանաթմբի վրա։ Արևը թեքվում էր դեպի արևմուտք և երկնքի ծայրը ծիրանեգույն էր դարձել։

Հեռվում կայծեր էին փայլատակում։ Այնտեղ նույնպես կռիվ էր տեղի ունենում մի շատ կարևոր բնագծի համար։ Հնարավոր չէր այնտեղից արագությամբ օժանդակություն ստանալ։

— Ինչ անել,— հարցրեց լեյտենանտը Բալեստային։

— Մնում է մի բան,— կռվել մինչև վերջ... Բայց ո՞ւր է Լազարևը,— անհանգստությամբ հարցրեց Բալեստան։— Չէ՞, որ նա հենց նոր մեր կողքին էր կանգնած...

— Լա-զա-րև՜վ,— կանչեց Պուզիրյովը։

— Ես այստեղ եմ,— հրանոթի ետևից գլուխը դուրս բերելով պատասխանեց մարտիկը։— Հայտարարություն եմ գրում... Եվ նա մեկնեց բլոկնոտից պոկված թերթիկը։

Բալեստան վերցրեց թերթիկը, կարդաց.

«Պարտիզական բյուրոյին։

Այս տողերը ես գրում եմ իմ ընկերների դիակների վրա։ Ես գիտեմ, որ հենց առաջին կռվում թերևս ես էլ մեռնեմ։ Բայց ես, ինչպես և իմ ընկերները, ոչ մի վայրկյան չենք նահանջի։ Ես ևս պատրաստ եմ մեռնելու մեր երկրի համար, մեր սիրելի հայր ընկեր Ստալինի համար, հայրենիքի պատվի համար։ Խնդրում եմ ինձ համարել Լենինի—Ստալինի մեծ պարտիայի անդամ։

Վասիլիյ Լազարև»։

Սաստիկ հուզված Բալեստան մի անգամ ևս կարդաց այդ անհամաչափ հապճեպորեն գրված տողերը։

— Լավ, Լազարև,— ասաց նա,— առայժմ գնա այն հրանոթի մոտ...

— Մենա՞կ։

— Ոչ։

— Հապա էլ ո՞վ։

— Բոլշևիկների պարտիան։

— Հասկանում եմ,— գլխով արեց Լազարևը և վազեց դեպի հրանոթը։

Նա վրա հասավ իր ժամանակին,— գերմանական տանկերը

վերսկսել էին գրոհը։ Գերեզմանաթմբի վրա մնում էին երեք երիտասարդ հրետանավոր, իսկ նրանց դեմ տափաստանում կային թշնամու իննը մեքենա։

Երեք րոպե էլ չէր անցել, երբ Լազարևը խփեց գերմանական մի տանկ։ Նա արդեն սկսել էր հրանոթով նշան բռնել նորից կրակելու համար, երբ արկի մի բեկոր խփեց նրա մեջքին։ Նա ընկավ և ձեռներն այնպես տարածեց, որ կարծես ուզում էր գրկել հարազատ հողը։

Գերմանական տանկիստները, անհաջողությունից կատաղած՝ արկերի կարկուտ տեղացին գերեզմանաթմբի վրա։

— Կրա՜կ, ըստ սովորության ինքն իրեն հրաման տվեց Պուզիրյովը։

Նրա թնդանոթի կրակոցները կործանարար էին թշնամու համար։ Նա մոտ թողեց մի տանկ և դեմ առ դեմ կրակեց նրա վրա։ Տանկը բռնկվեց։ Մի ուրիշ մեքենա անցավ մի կողմ, նա հետևում էր այդ մեքենային։ Իսկ այդ ժամանակ ճանապարհի թեքման տեղում երևաց էլի մի տանկ, որը երեք անգամ կրակեց։ Երկու արկ ընկան հեռու տեղում։ Երրորդը խփեց Պուզիրյովին։

Մարտկոցում մնաց միայն Ֆյոդոր Բալեստան։ Նա կանգնած էր մահվան շեմքին։ Գիտեր, թե ինչ վիճակ է սպասում իրեն։ Բայց երկյուղի զգացումը միշտ էլ խորթ էր եղել նրան։

Լինում էր այսպես. երբ մարտկոց էին գալիս նոր մարտիկներ, երիտասարդ հրետանավոր, Բալեստան նրանց սովորեցնում էր։

— Հիշեցեք, որ դուք մտել եք Օգանովի մարտիկների շարքը, այստեղ շատ կոմերիտականներ կան... Մեր պատիվը մենք ավելի խնամքով ենք պահպանում, քան մեր կյանքը։ Մենք երբեք չենք արատավորի մեր պատիվը։ Մենք հետևում ենք հետևյալ կանոնին. եթե դու վիրավորված ես ձախ ձեռքից, կրակիր աջ ձեռքով. եթե կորցրել ես մի աչքդ, թշնամուն հետամուտ եղիր մյուս աչքով...

— Մեռիր, բայց կատարիր հրամանը,—միշտ պատվիրում էր Բալեստան կոմերիտականներին։

... Եվ ահա այժմ էլ, կանգնած լինելով հրանոթի մոտ, նա մտածում էր. «արդյոք նրանք կատարեցի՞ն իրենց երդումը։ Իրագործեցի՞ն հրամանը»։ Նա դիտեց ամբողջ գերեզմանաթումբը, ստորոտից մինչև գագաթը։ Նրա կոմերիտականներից ոչ

մեկը մի քայլ չէր նահանջել: Ոչ ոք չէր վախեցել տանկերից:

Բալեստան արագորեն լցրեց թնդանոթը և խփեց թշնամու մի տանկ: Ուրիշ երկու մեքենա ետ դարձան, գնացին տարբեր կողմեր և ուզում էին բարձրանալ գերեզմանաթմբի վրա: Բայց Բալեստան հասկացավ թշնամիների խորամանկությունը: Նա վազեց թնդանոթներից մեկի մոտ. «մի քիչ էլ մոտ կթողնեմ»— որոշեց նա:

Մեքենան մոտեցել էր մինչև 200 մետր, երբ նա արձակեց առաջին արկը: Տանկը շարունակում էր առաջ շարժվել:

— Վրիպեց,— տխուր ասաց Բալեստան: Նա կրակեց էլի մի անգամ, հետո երկրորդ և երրորդ անգամ: Վազեց դեպի արկղները: Դրանք դատարկ էին: Բալեստան նայեց ներքև. տանկը շարունակում էր շարժվել դեպի գերեզմանաթումբը:

— Չես հասնի, սրիկա՛,— գոռաց Բալեստան:

Նա գերեզմանաթմբից իջավ ու պառկեց այն փոսի մոտ, դեպի ուր ընթանում էր տանկը: Բալեստան ձեռքում բռնած ուներ նռնակների մի կապոց: Սիրտը թունդ խփում էր, բայց նրա կամքը հաստատուն էր, անդրդվելի:

Ահա արդեն մոտիկից լսվում էր թրթուրների շառաչը: Մինչև տանկն ընդամենը մի քանի քայլ էր մնացել: Բալեստան պարզ տեսնում էր մեքենայի ուրվագծերը, տեսնում էր թե ինչպես թրթուրները ճզմում են խոնավ հողը: Նա ձեռքում ամուր սեղմել է նռնակների կապոցը: Նա դրանք չի նետել, ո՛չ: Նա կարող է մի կողմ անցնել և թաքնվել: Բայց նա արեց այն, ինչ որ նրան թելադրում էր կոմերիտականի սիրտը. Նա նետվեց տանկի զրահապատ որովայնի տակ: Լսվեց ուժեղ պայթյուն...

Տիրեց լռություն: Տափաստանում այլևս չէր լսվում հրետանային որոտը:

***

Վաղ առավոտ էր. խոնավ երկրի վրա կապտավուն մշուշ էր փռվում:

Արևոտ առավոտվա լռությունը խախտվեց սմբակների դոփյունով, մարդկային ձայներով:

— Օգանով,— լսվեց մի ձայն:

Պատասխան չկար: Մի խումբ ձիավորներ կանգ առան:

— Նրանք պետք է որ այստեղ լինեն,— ասաց մեկը:

Ձիավորները շարունակեցին իրենց ընթացքը:

— Նայեցեք, խփված տանկ է մնացել,— ասաց մեկը: Բոլորը շուռ եկան դեպի աջ և տեսան գերմանական տանկի ածխացած կմախքը:

Մարդիկ իջան ձիերից, գնացին դեպի գերեզմանաթումբը և այստեղ նրանց առաջ բացվեց մահացու մարտի պատկերը:

Գերեզմանաթմբի շուրջն այստեղ ու այնտեղ երևում էին թշնամու խփված տանկերը: Դրանցից մեկի մոտ ընկած էին գերմանական տանկիստների երկու ածխացած դիակներ: Մի ուրիշ տանկի անցքից կախվել էր տանկավարի դիակը,—նա չէր կարողացել դուրս գալ և սպանվել էր արկի բեկորով:

Գերեզմանաթմբի վրա գտնվում էին կիսով չափ ջարդված հրանոթներ, դիակներ: Մայորը և կոմիսարը շրջում էին մարտի վայրում, մոտենում էին սպանվածներին, ճանաչում նրանց: Ահա Պուզիրյովը, Լազարևը, Վավիլովը...

— Ո՞ւր է Օգանովը...

Նրանք մարտկոցի հրամանատարին տեսան միայն այն ժամանակ, երբ իջան գերեզմանաթմբից: Նա ընկած էր երեսն ի վեր: Նրա աչքերը բաց էին և թվում էր, թե նա երազկոտ նայում է դեպի երկինք: Նրա մոտ թանձրացած արյան լճակ էր գոյացել:

Մայորը և գնդի կոմիսարը կռացան Օգանովի վրա:

— Մեռավ... Մեռավ Օգանովը,— սրտաբեկ ասաց մայորը:

Օգանովը նրա սիրելին էր: Մայորը միշտ հայրաբար էր վերաբերվում դեպի երիտասարդ հրամանատարը, հավատում էր նրան, ուղարկում էր ամենադժվարին առաջադրանքներ կատարելու, գիտենալով, որ Օգանովը դրանք ճշտությամբ կկատարի:

Մայորը և կոմիսարը հրանոթների մոտ, գերեզմանաթմբի վրա և դրա ստորոտում գտան տասնչորս զոհված հերոսներ: Կուլի դաշտում թշնամին թողել էր 12 այրված տանկ: Շուռ եկած մի տանկի մոտ կոմիսարը գտավ կոմերիտական տոմսի շապկի մի կտոր, որ արյունոտված էր: Նա զննեց այն: Դժվարությամբ կարելի էր ջոկել երեք տառ... Բալ...

Դա Ֆյոդոր Բալեստայի կոմերիտական տոմսն էր: Դիմավորելով մահը, նա սրտի վրա էր պահում այն ամենաթանկագին բանը, որ ունենում է մեր ժամանակի երիտասարդը— կոմերիտմիության պատկանելու վկայաթուղթը:

— Հերոսը պայթեցրել է տանկը և ինքն էլ զոհվել է,— ասաց կոմիսարը:

Գերեզմանաթմբի հյուսիս-արևմտյան կողմում մայորը և կոմիսարը մի գետնատուն նկատեցին: Իջան այնտեղ: Հողակույտի վրա մի մարդ էր պառկած:

— Մի՞թե սա էլ է մեռել,— մայորը վերցրեց այդ մարդու ձեռքը, շոշափեց զարկերակը: Վերջինը հազիվ-հազ էր բաբախում:

— Կենդանի է:

Այդ Վելիևն էր: Երբ նրա վերքերը կապեցին, նա բացեց աչքերը: Նրա դեմքը մոմի նման դեղնավուն էր: Նա թույլ տնքում էր: Կոմիսարը նստած էր նրա գլխավերևում: Աչքերը բացած՝ Վելիևը սկսեց կցկտուր, անհասկանալի կերպով խոսել, իր մոտ էր կանչում ընկերներին,— Կորսունովին, Շահվալիևին: Անցավ մի քանի րոպե: Նա կրկին ուշագնաց եղավ: Իսկ երբ բացեց աչքերը, կոմիսարը նրան հարցրեց.

— Հը՛, ճանաչո՞ւմ ես ինձ:

— Ես կմեռնեմ, ընկեր կոմիսար,— կամացուկ պատասխանեց Վելիևը,— ծանր է դրությունս...

Կցկտուր ֆրազների միջով կոմիսարը Վելիևից իմացավ, թե ինչպես են զոհվել նրա ընկերները:

Վելիևը մեռավ կոմիսարի ձեռների վրա:

... Գերեզմանաթմբի վրա թաղում էին տասնվեց քաջարի հրետանավորներին: Գերեզմանի մոտ շարք էին կանգնել մարտիկները: Նրանք եկել էին հրաժեշտ տալու իրենց զինակից ընկերներին:

— Դուք մեռաք, ընկերներ,— ասաց կոմիսարը, նայելով գերեզմանին:— Բայց այդ ոչ թե մահ է, այլ անմահություն: Մենք վրեժ կլուծենք ձեզ համար... Մենք չենք մոռանա ձեզ...

Եվ մարտիկների շարքերով մեկ թնդաց հուժկու ձայնը.

— Վրե՛ժ կլուծենք:

— Չե՛նք մոռանա ձեզ:

Լսվեց հրետանային երեք կրակոց,— հրաժեշտի ողջույն էր դա:

Անցնում էին մարտիկները: Ամեն մեկը մի բուռ հող էր վերցնում ու նետում գերեզմանը, ուր թաղված էին սովետական տասնվեց հերոսները:

Ընկեր, հիշիր նրանց անունները.

ՕԳԱՆՈՎ Սերգեյ Անդրեևիչ.
ՊՈՒԶԻՐՅՈՎ Վասիլի Իվանովիչ.
ՎԱՎԻԼՈՎ Սերգեյ Վասիլյեվիչ.
ԲԱԼԵՍՏԱ Ֆյոդոր Զախարովիչ.
ԼԱԶԱՐԵՎ Ստեպան Ստեպանովիչ.
ՎԵԼԻԵՎ Ասլան.
ՄԱՄԵԴՈՎ Իսմայիլ.
ԱԲՐԱՄԵՆԿՈ Ֆյոդոր Կոնստանտինովիչ.
ՇԱՀՎԱԼԻԵՎ Կարո.
ՎԵԼԻԽԱՆՈՎ Վելիխան.
ԴՈՒԼՅԱՆ Մովսես Օգանեսովիչ.
ԱԽՄԵԴՈՎ Ֆազիլ.
ՏԿԱՉԵՆԿՈ Վասիլի Սեմյոնովիչ.
ԿՈՐՍՈՒՆՈՎ Գրիգորի Դեմյանովիչ.
ԲԱԽԻՇՉԵՎ Դենիս Գրիգորևիչ.
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սուրեն Կարապետովիչ.

Հպարտացեք նրանցով, հայրենակիցներ: Հպարտացիր նրանցով, երիտասարդություն: Մարտերում եղիր այնպես, ինչպես 16 անվեհեր կոմերիտականները:

***

Կվերջանա պատերազմը: Կջախջախվի մեր կատաղի, դարավոր թշնամին: Մեր երկրի վրա վերստին կծագի խաղաղության պայծառ արևը: Բայց Ռոստովի մոտ քաջերի մահով ընկած տասնվեց երիտասարդ հրետանավորների հիշատակը երբեք չի մոռացվի: Նրանց հռչակը կտարածվի մեր ամբողջ երկրում:

Ու թվում է, որ նրանց մասին, սովետական պանծալի հերոսների մասին է մի ժամանակ ասել մեծ գրող Գոգոլը.

«Կերգի, կերգի մինչև կուրծքը իջած սպիտակ մորուքով բանդուրիստը, գուցե և հասուն արիությամբ լեցուն, բայց ալեհեր ծերուկը, որ իմաստուն է ոգով, ու նրանց մասին նա կասի իր հզոր խոսքը, ու աշխարհովը մեկ կտարածվի նրանց հռչակը, և այն ամենը, ինչ որ ծնվելու է, հետո կխոսի նրանց մասին, հարկավ, հեռու է տարածվում հզոր խոսքը, նման լինելով զանգի շառաչուն պղնձին, որի վրա շատ է աշխատել թանկարժեք և զուտ արծաթն օգտագործող վարպետը, որպեսզի կարմիր ղողանջը տարածվի հեռու և հեռու»:

Հավերժ հիշատակ ձեզ, հերոսներ:

Ապրիլ—մայիս 1942 թ.
Հարավային ռազմաճակատ



ՄԱՐՏԱԿԱՆ ԷՊԻԶՈԴՆԵՐ

Հատվածներ Սովինֆորմբյուրոյի և Սովինֆորմբյուրոյի թղթակիցների հաղորդագրություններից.

Գերմանական զորքերի մոտոմեքենայացված խմբերի ջախջախումից հետո մայոր Սարգսյանի տանկային գումարտակը վերցրեց 350 գերի և գրավեց 472 մոտոցիկլետ:

***

Կապիտան Սեդոյանի գումարտակի ականանետային վաշտը մի մարտի ժամանակ հաջող կրակով ոչնչացրեց գերմանական մոտավորապես 250 զինվոր ու սպա:

***

Ընկերներ Բաղդասարովի և Կոզլինի զորամասերը գրավեցին 32 գնդացիր, 10 ականանետ և այլ ռազմավար:

***

Մարտիկների մի խումբ, ավագ սերժանտ Ս. Գ. Ոսկանյանի հրամանատարությամբ, ջախջախեց թշնամու մի վաշտ և գրավեց ռազմավար՝ ցուցաբերելով հերոսություն ու հնարամտություն:

***

Երեք ծանր վիրավորների ռազմադաշտից դուրս բերելու ժամանակ, ստորաբաժանման ավագ ընկեր Ա. Ավագյանը բռունցքով սպանեց իր վրա հարձակվող ֆաշիստին: Ընկեր Ավագյանը գերազանց ֆիզկուլտուրնիկ է—ծանր ատլետ:

***

Կարելական պարանոցում կռվի ժամանակ հրաձիգ-ռադիստ, Հայաստանի զավակ ընկեր Կոլույանը վիրավորվել էր: Դուրս գալով տանկից՝ նա նկատեց մի ծանր վիրավորված մարտիկ, որը անծանոթ էր նրան, բայց նա օգնություն ցույց տվեց: Ում որ Կոլույանն օգնեց, ուկրաինացի հետևակային էր: Կոլույանը երկրորդ անգամ վիրավորվեց, բայց չթողեց ընկերոջը:

***

Թող փառաբանվի լեյտենանտ Մելիքյանի սխրագործությունը: Հայաստանի հպարտ որդին սվինամարտի ժամանակ ձեռքից և կրծքից վիրավորվեց, սակայն վերցրեց գնդացիրը և հարմար մոմենտն օգտագործելով՝ անցավ թշնամու թիկունքը: Նա միայնակ ու անվախ նորից գնաց մարտի:

***

Հետախույզները մեկնեցին մարտական գործողության: Շարժվեց զրահապատ ավտոմեքենան: Ճանապարհին զրահապատը հանդիպեց հետախույզ Կիրոյանին: Նա գնում էր մի վիրավոր շալակած: Այո, դա մարտիկ Կիրոյանն էր, ռազմական միավորման լավագույն հետախույզը: Հինգ օր շարունակ նա մարտիկների մի խմբի հետ հետախուզություն էր կատարում:

Վերադարձին նրանք հանդիպեցին գերմանական հեծելակների: Հետախույզները թաքնվելով աշխատեցին հասնել մոտակա գյուղը: Բանջարանոցների և առուների միջով նրանք անցան մինչև գյուղի վերջին տունը և բարձրացան տան չարդախը: Ինչպես երևում էր՝ նրանց հետևում էին: Հանկարծ չարդախի վրա նետեցին մի նռնակ: Կարմիրբանակային Օլեյնիկինը վիրավորվեց: Ներքևից բղավում էին՝ «ռու՛ս, հանձնվի՛ր»: Օլեյնիկինին վիրավորեցին երկրորդ անգամ: Մարտիկ Կիրոյանը նե-

տեց իր մոտ եղած նռնակը և ոչնչացրեց մի քանի ֆաշիստ: Գերմանացիները շենքի շուրջը հավաքեցին ծղոտ ու վրան բենզին լցրին: Երևաց ծուխը: Բոցը բարձրանում էր մինչև տանիքը: Կիրոյանը չալակեց Օլեյնիկովին և մյուս մարտիկների հետ հակառակ կողմից աննկատելիորեն իջավ չարդախից և բաց անելով տան դուռը՝ տեղավորվեցին այնտեղ: Վիրավորին պառկեցրին մի անկյունում, իսկ իրենք՝ Կիրոյանը նռնակով, իսկ մյուս մարտիկները հրացաններով սկսեցին կրակ բաց անել. նրանք դիմադրեցին մինչև երեկո, իսկ երեկոյան աննկատելիորեն տարբեր ուղղությամբ... դուրս եկան տնակից: Եվ ահա Կիրոյանը վերադառնում էր, բերելով վիրավոր ընկերոջը և ստույգ տվյալներ թշնամու մասին:

***

Քաղբաժնի պետը ծանոթացրեց մեզ շոֆեր ընկ. Դանիելյանի հետ: Ֆաշիստական հետախուզիչ ինքնաթիռը մոտակա գյուղի վրա գցում էր թռուցիկներ: Այդտեղ շոֆեր Դանիելյանը նորոգում էր իր ավտոմեքենան: Նկատելով թշնամու ինքնաթիռը՝ նա պառկեց թփուտների մեջ և նշան բռնեց: Արձակած երեք գնդակից թշնամու ինքնաթիռը 200 մետր բարձրությունից ցած ընկավ և խրվեց հողի մեջ: Պարզվեց, որ օդաչուն խփված էր հրացանի գնդակով:

***

Փոխգնդապետ Մկրտիչևի զորամասը ջախջախեց ֆաշիստական մի գունդ: Կռվի ընթացքում ոչնչացված է 300 գերմանական զինվոր և սպա, 4 ավտոմեքենա, մի ռադիոկայան և 4 հրանոթ: Վերցված է 15 ձի և այլ ավար:

***

Արևմտյան ռազմաճակատի հատվածներից մեկում խիզախորեն գործում են ընկ. ընկ. Մոնինի և Ստեփանյանի տանկերի անձնակազմերը: Գերմանացիների դեմ մղված մի մարտի ժամանակ նրանք ոչնչացրել են թշնամու 4 ծանր և 5 հակատանկային հրանոթ, 2 տրանսպորտ, մի ավտոմեքենա և մոտ 100 գերմանական զինվոր:

***

Կուրսկի ուղղությամբ շարունակվում են կատաղի մարտերը: Ոչ-լրիվ տվյալներով, ընկ. Բարսեղովի հրամանատարությամբ գործող զորամասերը մարտական գործողությունների

երեք օրվա ընթացքում ոչնչացրել են հակառակորդի մի քանի հազար զինվոր ու սպա՝ գերազանցապես հունգարական երկրորդ կորպուսից: Նույն ժամանակամիջոցում խփված և հրկիզված է գերմանական 63 տանկ: Մեկ այլ հատվածում ոչնչացված է ևս մի քանի տասնյակ տանկ ու գերմանացիների մեծ թվով կենդանի ուժ: Մեր ավիացիան օդային մարտերում ցած է գցել հակառակորդի 13 ինքնաթիռ:

***

Դասակի հրամանատար Կոստրիցան մեծ սիրով պատմում է իր հրամանատարի՝ ավագ լեյտենանտ Սարգիս Գրիգորյանի մասին: Գրիգորյանը մարտիկների սիրելին է: Հրետանային և գնդացրային ուժեղ կրակի տակ նա մոտենում է մարտիկներին, ոգևորում նրանց իր խոսքերով, կատակներով, խորհուրդներով և անձնական օրինակով:

Մի անգամ Գրիգորյանը հիվանդացավ: Նա բարձր տաքություն ուներ և պառկած էր սանիտարական վրանում, երբ հայտնեցին, որ գերմանացիք սկսել են նրա զորամասը գնդակոծել: Գրիգորյանը մի կողմ նետեց վերմակը, արագ հագնվեց, ներկայացավ իր մարտիկներին և նրանց հետ միասին մարտի դիմեց:

Կոստրիցան հպարտությամբ պատմում է, որ գերմանացիք լսել են խիզախ Գրիգորյանի մասին և ուզում են ինչ գնով էլ լինի սպանել նրան: «... Նրանք հետևում են մեր հրամանատարի բարձրահասակ, սև ֆիգուրին: Ուր որ գնում է՝ ետևից կրակում են: Բայց մեր հրամանատարին ոչ մի ուժ չի կարող հաղթահարել: Այո, մենք մարտիկներս կրծքով կպաշտպանենք մեր հրամանատարներին, որոնք հմուտ և քաջարի կերպով մեզ առաջնորդում են դեպի ճակատ»:

***

Մեր մարտկոցների վրա արշավող գերմանական տանկերի ոչնչացման գործը հանձնարարվեց հաուբիցային N զորամասի հրամանատար մայոր Հարությունյանին: Թույլ տալով, որ ֆաշիստական մեքենաները մոտենան 1—1½ կիլոմետրի վրա՝ մայորը հրամայեց հաուբիցային մարտկոցներին կրակով դիմավորել նրանց: Մեր հաուբիցները կրակում էին ուղղակի նշանառությամբ և բաց դիրքերից: Դա սովետական հրետանավոր-

ներից պահանջում էր մեծ կայունություն, համարձակություն և սառնասրտություն։ Եվ նրանք ցուցաբերեցին այդ հատկությունները։ Մեր հրետանավորները դեմ առ դեմ գնդակոծում էին գերմանական տանկերն այնքան ժամանակ, մինչև նրանց մի մասը ոչնչացվեց, իսկ մյուս մասը ետ դարձավ։

***

Կլետսկայայի շրջանում սովետական մարտիկները հաստատակամորեն պաշտպանում են հայրենի հողի յուրաքանչյուր մետրը։ N զորամասի երկու հրետանային մարտկոց վերջին մարտերում ոչնչացրեց գերմանական 18 տանկ և 12 ավտոմեքենա՝ գերմանական ավտոմատավորներով։ Ընկ. Պետրոսյանի հրամանատարությամբ գործող մարտկոցում շարքից հանվել էին բոլոր հրանոթները։ Մարտիկները զինվեցին նռնակներով ու հրացաններով և, ոչնչացնելով հիտլերականների մոտ մեկ վաշտ, հետ մղեցին հակառակորդի գրոհը։



ԽԻԶԱԽՆԵՐԸ

Ամեն օր հայրենական պատերազմը ծնում է բազմաթիվ նորանոր հերոսներ։ Ամեն օր այս ահեղ պատերազմի վիթխարի թատերաբեմում հանդես են գալիս մարտիկներ, որոնք մինչ այդ. դուցե և ոչնչով աչքի չեն ընկել։ Անսպառ է մեր մարդկանց, սովետական ժողովրդի հերոսության աղբյուրը։ Հայրենիքի համար ծանր այս օրերին ամեն ոք լցված է խիզախությամբ և անսահման ատելությամբ դեպի թշնամին։

Ռուս մեծ ժողովրդի քաջարի զավակների հետ միասին՝ վրացիների, ուզբեկների, ադրբեջանցիների, ղազախների հետ կողք-կողքի անձնվիրաբար կռվում են հայ ժողովրդի զավակները, կռվում հայրենիքի, ազատության, պատվի ու մարդկության լավագույն ապագայի համար։

Լենինգրադի մատույցներում, Մոսկվայի պաշտպանության բնագծերում, Դոնի լայնարձակ տափաստաններում, թե թշնամու հեռավոր թիկունքում գործող պարտիզանական ջոկատներում՝ անձնվիրաբար, չխնայելով իրենց արյան վերջին կաթիլը՝ կռվում են հայ ժողովրդի զավակները, բարձր պահելով իրենց քաջարի նախնիների ռազմի ոգին ու ազատասիրական տենչանքները, կռվում են իրենց հայրենիքի անկախության և բարօրության համար։

Եվ ոչ ոք, ոչ մի ուժ նրանց ետ չի դարձնի այդ ահեղ, կենաց և մահու կռվի դաշտերից, մինչև կատարյալ հաղթանակ չտարվի նենգ ու դաժան թշնամու հանդեպ:

Բազմաթիվ են հայ ժողովրդի այդ խիզախ զավակները: Նրանք տանկիստներ են, օդաչուներ, հրետանավորներ են ու հետևակ, գերազանց սնայպերներ ու լավ հետախույզներ, հմուտ հրամանատարներ ու տոկուն սապյորներ:

Ահա այդ խիզախներից մի քանիսի մոտավոր բնութագիրը, որոնք իրենց քաջագործությունների համար արժանացել են Սովետական Միության բարձր շքանշանների:

***

Մայոր Նիկոլայ Գերասիմի Թումանյանը Կարմիր Բանակի հին և հմուտ հրամանատարական կադրերից է: Նա ծնվել է 1901 թվին, Իջևանում:

Դեռ վաղ հասակից Նիկոլային հուզում էր զինվորական դառնալու միտքը: Երբ նա ավարտեց Թբիլիսիի գիմնազիան, նույն տարին՝ 1921 թվականին մտավ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերը: Անսահման սերն ու արտասովոր ընդունակությունը դեպի ռազմական գործը նրան մղում էր առաջ:

1926 թվականին Նիկոլայն ավարտում է զինվորական դպրոցը և աշխատանքի է ուղարկվում Ուրալ: Հաստատակամ, ընկերասեր, գործում անձնուրաց Նիկոլայը իր շրջապատում վայելում է հեղինակություն: Մայրը՝ 60-ամյա Վարսենիկը նամակներով որդուն խնդրում էր, որ գա իր ծննդավայրը ծառայության, որ ինքը կարոտում է որդուն: Պատասխան-նամակներից մեկում նա գրում էր մորը.

«Դու իրավացի ես մայրիկ. իհարկե ինձ համար միևնույն է այստեղ կամ այդտեղ ծառայելը: Բայց, մայրի՛կ, չեմ կարող, քանի որ սիրում եմ մեծահոգի և անկեղծ ռուս ժողովրդին»:

Խիզախ հրամանատարին մի քանի անգամ վիճակվել է պաշտպանել հայրենի հողը թշնամիների ոտնձգություններից: Նա մասնակցել է սպիտակ-ֆինների դեմ մղվող մարտերին և միշտ էլ դուրս եկել «բաց ճակատով», ինչպես ինքն է գրում: Սպիտակ-ֆինների դեմ մղվող պայքարում նա վիրավորվեց: Առանց վերքի մասին մտածելու՝ նա ընկեր Ստալինի անունը շուրթերին մարտի էր տանում կարմիրբանակայիններին: Մար-

տիկների հետ միասին նա պատվով կատարեց իր պարտքը հայրենիքի հանդեպ: Վերքը խոր էր: Երբ նրան առաջարկեցին տուն վերադառնալ կազդուրվելու՝ նա պատասխանեց.

— Իմ ոսկորներն ամրացել են բանակում, ես այստեղ ավելի շուտ կկազդուրվեմ:

Եվ իրոք, մի քանի շաբաթ հետո նա նորից հրամանատարի պոստում էր: 1941 թվականի հունիսին նա եղբորը գրում էր.

«Սիրելի՛ Արտյուշա, ես որոշել էի այս ամառ գալ ձեզ մոտ, մորս տեսնելու, բայց հայրենիքը կանչում է ինձ: Ես մեկնում եմ ճակատ՝ գերմանական ֆաշիզմի դեմ մարտնչելու: Իմ երակներում եռում է կոմունիստ հայրենասերի արյունը: Իմ մարտիկներին ես առաջնորդում եմ ճակատ՝ լի հաղթանակի հավատով, և երբ հաջողությամբ վերադառնամ, Իջևանի սաղարթախիտ այգիներում, մեր սառնորակ աղբյուրների մոտ մի լավ քեֆ կանենք»:

... Գերմանական ֆաշիզմի դեմ մղվող պայքարում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և միաժամանակ արիություն և խիզախություն ցուցաբերելու համար, ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը մայոր Նիկոլայ Գերասիմի Թումանյանին պարգևատրեց Կարմիր Դրոշի շքանշանով: Երբ այդ բանը գյուղում հայտնեցին մորը, նրա դեմքը փայլեց ներքին հրճվանքից.

— Իմ քա՛ջ բալա,— դուրս թռավ նրա երջանիկ կրծքից:

***

Օդաչու Մամիկոն Գրիգորյանն իր մարտական մկրտությունն ստացավ գերմանական ֆաշիստների դեմ մղվող ահեղ մարտերում:

Պատերազմի հենց սկզբին ստացվեց Մամիկոնի առաջին նամակը, որտեղ նա գրում էր եղբորը.

«Ինչպես գիտես՝ ռուս ժողովրդի ոգին չի կարողացել ընկճել և ո՛չ մի բանակ, չի կարող ընկճել նաև ֆաշիստ Հիտլերը: Մենք բոլորս հավատացած ենք մեր հաղթանակին: Հիմա ինձ վրա դրված է մի պատվավոր պարտականություն, ես այժմ աշխատում եմ որպես ինքնաթիռի շտուրման: Ոչ մի ջանք չեմ խնայում մարտական առաջադրանքները գերազանց կատարելու համար»:

Հաջորդ նամակում նա գրում էր. «Ես այժմ կռվում եմ

Հարավ-Արևմտյան ուղղությամբ: Ատելություն և հրճվանք— ահա' իմ աշխատանքային առօրյան: Վրեժխնդրության թույնը սրտումս նետվում եմ ֆաշիստական սրիկաների վրա: Հրճվում եմ, երբ տեսնում եմ ֆաշիստների լեշերը փռված, նրանց մարտական մեքենաները ոչնչացված»:

Խիզախ օդաչուին վիճակվել է մի քանի անգամ անցնել թշնամու թիկունքը, կատարել հրամանատարության կարևոր առաջադրանքները և վերադառնալ անվնաս: Եվ այդ խիզախության ու արիության համար Մամիկոն Գրիգորյանը ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով պարգևատրվել է Կարմիր Աստղի շքանշանով:

Երբ պարգևատրման ուրախալի լուրն ստացվեց Լենինականում, Մամիկոնի ծերունի մայրն ու նրա մեքենավար եղբայրը շտապեցին նամակ գրել իրենց հարազատին և շնորհավորել նրան բարձր պարգևի համար:

«Մեր թանկագի'ն Մամիկոն,— գրում էին մայրն ու եղբայրը,— մեր ուրախությանն ու բերկրանքին չափ չկա: Դու դառար մեր օջախի պարծանքը: Ցանկանում ենք քեզ առողջություն և ուժ բազուկներիդ: Պաշտպանիր հայրենիքիդ փառքն ու պատիվը, կռվիր է'լ ավելի խիզախորեն»:

***

Ռուբեն Հակոբյանը ծնվել էր Խաչուրի շրջանի Վախա գյուղում: Նա սովորում էր Գորկու պետական Մանկավարժական ինստիտուտում: 1939 թվականին կանչվեց Կարմիր Բանակ: Նրան ռազմական ուսուցման ուղարկեցին: 22-ամյա պատանին դարձավ լեյտենանտ: Բոլշևիկյան պարտիայի երիտասարդ անդամին, քաղաքական և մարտական ուսուցման գերազանցիկ, լեյտենանտ Ռուբեն Հակոբյանին հայրենական պատերազմի ճակատում հանձնեցին հրաձգային գնդի մի վաշտ: Հայրենասեր երիտասարդը վաշտի հրամանատարի պոստում հերոսաբար կատարում է իր պարտքը հայրենիքի հանդեպ: Անցյալ տարի օգոստոսի վերջերին հրաձգային գունդը կատաղի կռվի բռնվեց հիտլերյան հորդաների հետ: Լեյտենանտ Հակոբյանն իր վաշտով կռվում էր հերոսաբար և մեծ կորուստներ պատճառում թշնամուն: Հենց այդ պահին էր, որ թշնամու գնդակը խոցեց քաջարի հրամանատարին:

Հերոսական մահով ընկած Հակոբյանի հայրը գնդի հրամա-

նատար Պոտապովից և կոմիսար Ագաֆոնովից հետևյալ նամակն ստացավ.

— Ձեր հերոս որդին՝ Ռուբեն Հակոբյանը հայրենական մեծ պատերազմում սոցիալիստական հայրենիքի համար կռվում էր հերոսաբար: Նա ընկավ իր մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ: Թշնամու գնդակը խոցեց նրան: Ռուբենը, այդ կրակոտ կովկասցին, զորամասի պարծանքը՝ այժմ չկա, նա այլևս չի գրոհում թշնամու դեմ: Ռուբենը մի անվեհեր մարտիկ էր, դաստիարակված լենինյան-ստալինյան պարտիայի ուսմունքով:

Ծանր է մեզ համար նրա կորուստը: Սակայն մեր հայրենիքը հերոսների հայրենիքն է. ընկած յուրաքանչյուր հերոսին փոխարինում են նորերը: Մենք՝ զորամասի մարտիկներս, հրամանատարներս ու քաղաշխատողներս երդում տվինք թանկագին ընկեր, մարտական զինակից Ռուբեն Հակոբյանի վրեժը լուծել թշնամուց: Ռուբենի սուրբ արյան փոխարեն ֆաշիստները կհատուցեն հարյուրավոր դիակներով: Վրեժ լուծել ֆաշիզմից—ա'յս է ձեր որդու մարտական ընկերների նվիրական երդումը:

Սիրելի' ծնողներ, դուք կորցրիք ձեր թանկագին որդուն, իսկ մենք՝ պայքարող ընկեր. լաց մի' լինեք: Զինվեցե'ք՝ փոխարենը հատուցելու համար թշնամուն: Սովորեցեք ռազմական գործը, մտեք ժողովրդական աշխարհազորի շարքերը՝ մեր գեղեցիկ հայրենիքի վրա հարձակում գործած գերմանական լկտի ֆաշիստներին բնաջնջելու համար:

Մա'հ հիտլերյան արյունարբու հորդաներին»:

***

Օդաչու լեյտենանտ Հովհաննես Գրիգորյանը գնաց հայրենական պատերազմի ճակատ ֆաշիզմի դեմ լցված անզուսպ ատելությամբ, անհագուրդ վրեժը սրտում: Որպես անձնուրաց հայրենասեր նա կռվի դաշտում հանդես է բերում արիություն և բարձր պահում իր ժողովրդի վաղեմի նախնիների զենքի փառքը, նրա ազատատենչ ոգին:

Իր հերթական նամակներից մեկում նա գրում է.

«Սիրելի' մայրիկ և Շողիկ: Պատվով կատարեցի պարտքս հայրենիքի և մեծ Ստալինի հանդեպ: Օդային մարտում ոչնչացրի թշնամու երկու սավառնակ: Պետությունը գնահատեց իմ

ծառայությունը և պարգևատրեց Կարմիր Աստղի շքանշանով։ Ես լավ եմ։ Ողջ եղեք և լավ աշխատեցեք թիկունքում։ Օգնեցեք ճակատին, ինչով կարող եք։ Ձեր՝ Օնիկ»։

Պարգևատրված օդաչու լեյտենանտ Հովհաննես Գրիգորյանը ծնվել է 1915 թվականին Լենինականում, քարտաշի ընտանիքում։ Գերազանց թվանշաններով ավարտելով օդաչուական դպրոցը՝ ստանում է լեյտենանտի կոչում։ Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերին Հ. Գրիգորյանն իր մարտական մեքենայով օդ բարձրացավ՝ գերմանական ֆաշիստների գլխին ռումբեր թափելու։

***

Վիրավոր մարտիկը թեկն տալով փափուկ բարձերին՝ շարունակեց իր զրույցը.

— Հայրենական պատերազմը շատ հերոսներ է ծնել,— ասաց նա,— այդ հերոսների թվում կան բազմաթիվ հայ մարտիկներ, որոնց հայրենիքը մեծ փառքի է արժանացրել։ Դրանցից մի քանիսին ես անձամբ ճանաչում եմ, սակայն ամենից լավ և մոտիկից ճանաչում եմ կապիտան Նազար Գևորգյանին։ Կապիտան Գևորգյանին ու նրա մի խումբ մարտիկներին վիրավոր վիճակում հանդիպեցի թշնամու խոր թիկունքում։ Գևորգյանը երկարատև ու դաժան մարտերից հետո ճեղքել էր գերմանացիների օղակը և շարժվում էր դեպի արևելք՝ միանալու հարազատ զորամասին։ Երբ ինձ ներկայացրին Գևորգյանին, առաջին իսկ հայացքից զգացի, որ նա կովկասցի է, իսկ հետագայում, զրույցի ժամանակ պարզվեց, որ Գևորգյանը հայ է։

Աշխատասեր, խիզախ, ու վճռական էր կապիտան Գևորգյանը. Նա խիստ հոգատար էր դեպի իր մարտիկները։ Թանկ էր գնահատում նա իր մարդկանց, հոգու ամբողջ ջերմությամբ սիրում էր նրանց։ Վիրավոր կարմիրբանակայիններին նա էր խնամում, կապում նրանց վերքերը։ Ես հուզվում էի տեսնելով այդ բոլորը։ Իսկ կռվի դաշտում նա առյուծ է, թշնամուն խնայել չգիտե։ Նրա մարտիկները լիովին ընդօրինակել են իրենց հարազատ հրամանատարի հատկությունները։

Թշնամու թիկունքում մղած մարտերից մեկի ժամանակ Գևորգյանի ջոկատը լիովին շրջապատվեց թշնամու սեղմ օղակով։ Ծանր էր մարտիկների վիճակը։ Հակառակորդը հրե

անձրև էր տեղում ամեն կողմից, սակայն ամեն անգամ հետ էր շպրտվում, զարնվելով մերոնց կործանիչ կրակին։

Չնայած ծանր կորուստներին, այնուամենայնիվ ֆաշիստները շարունակում էին իրենց գրոհները, նպատակ ունենալով ընկճել մեր մարտիկների դիմադրությունը։ Այսպես մարտը շարունակվեց ամբողջ ցերեկը։ Երբ վրա հասավ գիշերը, Գևորգյանը որոշեց ճեղքել թշնամու օղակը։ Գերմանացիները, որ մեզնից այդպիսի համարձակ գործողություն չէին սպասում, շփոթվեցին։ Մեր մարտիկները իրար ետևից ոչնչացնելով թշնամու դիմադրության կետերը՝ հաջողությամբ դուրս եկան շրջապատումից։ Այդ մարտում գերմանացիները ծանր կորուստներ ունեցան։

Այդպես անընդհատ մարտեր մղելով՝ Գևորգյանի ջոկատը չնչին կորուստով և լրիվ սպառազինությամբ միացավ հարազատ Կարմիր Բանակի զորամասերին։

Կապիտան Գևորգյանն իր պանծալի մարտիկների հետ միասին հերոսական ռեյդ կատարեց թշնամու թիկունքում։ Սովետական կառավարությունը թանկ գնահատեց հայ ժողովրդի սիրելի զավակ Նազար Գևորգյանի մատուցած ծառայությունը հայրենիքի հանդեպ։

Եվ վիրավոր մարտիկը, հանկարծ զրույցն ընդհատելով, բարձրացավ տեղից, զինվորական պայուսակից հանեց «Պրավդա»-ի համարներից մեկը և հայրենական պատերազմի պարգևատրվածների թվում ցույց տվեց նաև Նազար Գևորգյանի անունը։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը հայրենիքի այդ պանծալի զավակին պարգևատրել է Կարմիր Դրոշի շքանշանով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է	9
Մ. Ա. Բարսեղով ***	12
Գեներալ—մայոր Աշոտ Սարգսյան—Վ. Թերզիբաշյան	17
Հերոսը—Հր. Քոչար	24
Հեռավոր թռիչքների վարպետը—Հ. Սաֆարյան	31
Հերոսական կոմդիվը—Արազի	35
Կամային հրամանատարը—Դ. Դեմիրճյան	41
Կոմիսարը—Հ. Սաֆարյան	48
Մերոնք—Ն. Զարյան	54
Մալխասյան եղբայրները—Ն. Զարյան	60
Օջախի պարծանքը—Սիրաս	67
Կապիտան Խաչատրյան—Գ. Աբով	73
Վաղարշակը—Գ. Աբով	79
Ապրես Սարոյան—Գ. Աբով	82
Հերոսների ծնունդը—Հր. Քոչար	89
Սնայպերը—Գ. Բորյան	111
Վերջին նռնակը—Քր. Թափալցյան	117
Փառք հերոսին—Քր. Թափալցյան	124
Արտ. Հակոբյանի հաշիվը—Բ. Գարբասով	127
Հայաստանի զավակը—Գ. Ֆիշ	129
Սերժանտ Մանուկյանը—Արաքս	131
Կարմիրբանակային Սարգսյան—Ս. Գալիշև	143
Ճակատային գիշերներ—Կոսենկո	145
Ստալինյան բազեն—Ս. Բարսեղյան	147
Կապիտան Լեոն Թաթյան—Ստաֆֆի	152
Լեյտենանտ Մաքսապետյան—Վ. Թերզիբաշյան	158
Կապավոր Կասպարովը—Լիպկին	166
«Սասունցի Դավթի կրտսեր եղբայրը»—Ա. Ֆինոգենով, Ա. Լիպատով	169
Անվեհեր մարտիկը—Ա. Փալանջյան	171
Հայկ Ղազարյան—Ա. Փալանջյան	175
Էջեր լեյտենանտի օրագրից—Հ. Առաքելյան	180
Հայրենիքի դուստրը—Գուր. Սարյան	190
Արգամ Պետրոսյան—Հ. Սաֆարյան	198
Լեոն Դարբինյան—Լ. Բոռոդեցկի	203
Առաջավոր դիրքերում—Խ. Բարսեղյան	210
Մայոր Մամբրե Գևորգյան—Խ. Բարսեղյան	214
Շքանշանակիր տանկիստ Հովհաննիսյանը—***	216
Մոր արցունքները—Գ. Մդիվանի	218
Անմահություն (հատված)—Վլ. Լյասկովսկի, Միխ. Կոտով	222
Մարտական էպիզոդներ—	238
Խիզախները—Խ. Բարսեղյան	243

ОТВАЖНЫЕ

Сины армянского народа в отечественной войне

Книга первая

Армгиз—1942—Ереван

Կազմեց՝ Հ. Գ. Առաքելյան

ՎՖ 4360 Պատվեր № 591. Տիրաժ 4000. Տպագրական $15^{3}/_{4}$ մամուլ.
Մեկ մամուլում 36480 նշան. Հեղինակային 11 մամուլ.
Ստորագրված է տպագրության համար 26/X 42 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան

ՀՀ Ազգային գրադարան
NL0389435

71.956